

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բաբաջանյան Աստղիկ Ալեքսանդրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ XIV – XVII ԴԴ. ԽԵՑԵՂԵՆԸ

Ատենախոսություն

Է. 00.03. „Հնագիտություն” մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝

պ. գ. թ. Ն. Գ. Հակոբյան

ԵՐԵՎԱՆ - 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	16
XIV-XVII ԴԴ. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ (ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)	16
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	43
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԵՅԵՂԵՆԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ	
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	43
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	65
ԱՆՋՆԱՐԱԿ՝ ԱՆՋԱՐԴ ԵՎ ՋԱՐԴԱՐՈՒՆ ԽԵՅԵՂԵՆ	65
ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ	103
ՋՆԱՐԱԿԱԾ ԽԵՅԵՂԵՆ	103
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	144
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	147
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	150
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ	171
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ	175

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի XIV – XVII դդ. նյութական մշակույթի բնագավառներից մեկի՝ խեցեգործության զարգացման տարբեր փուլերի, նախորդող ժամանակաշրջանների ավանդույթների հետ ունեցած կապերի, Մերձավոր ու Միջին Արևելքի, Միջին Ասիայի երկրների խեցեգործական խոշոր կենտրոնների հետ ունեցած առնչությունների պարզաբանմանը:

XIV – XVII դդ. Հայաստանի խեցեգործության ուսումնասիրությունը միջնադարյան ողջ ժամանակաշրջանի նյութական մշակույթի պատմության պակաս ուշադրության արժանացած բնագավառներից է: XIV – XVII դդ. խորհրդային և հետխորհրդային պատմագրության կողմից ներկայացվել են որպես թույլ, անգործուն, անկումային շրջան՝ բացառելով նյութական մշակույթի շարունակական զարգացումը ժամանակի արժեքային, տեխնիկական և ոճական նորույթներին գուզընթաց:

Չաքարյանների տիրապետության շրջանում (XII – XIII դդ.) սկսված տնտեսական, հասարակական ու մշակութային կյանքի բնականոն զարգացումը միանգամից չէ, որ անկում ապրեց մոնղոլական ավերիչ արշավանքներից հետո: Հաշվի չառնելով մի քանի տարվա ռազմական բախումների արդյունքում առաջացած ավերածությունները, տնտեսական ու մշակութային կյանքում նույնիսկ նշանակալից վերելք է նկատվում¹: Իրավիճակը փոխվում է XIII դարի երկրորդ կեսից, երբ Հայաստանն ընկնում է Հուլավյան իլխանության տիրապետության տակ: Հետագա շրջանում՝ XIV – XVII դդ. տեղի ունեցող իրադարձությունները, գերեվարություններն ու արտագաղթը մեծ հարված հասցրեցին նյութական մշակույթի զարգացմանը, որի ընդհանուր վիճակն ու զարգացման ընթացքը բնորոշելիս, պետք է նշել, սակայն, որ անկումային երևույթները հավասարաչափ չեն տարածվում բոլոր բնագավառների վրա:

Քննարկու ժամանակաշրջանի Հայաստանի պատմությունն արտացոլող գրավոր աղբյուրները բավարար չեն լիովին վերականգնելու XIV – XVII դդ. պատմության ու մշակույթի ողջ պատկերը: Նյութական մշակույթի, մասնավորապես խեցեղենի ուսումնասիրության համար սկզբնաղբյուր են ծառայում հնագիտական գտածոները, որոնց

¹ Якубовский А., К вопросу о происхождении ремесленной промышленности Сарая-Берке, ИГАИМК, 1931, т. VIII, в. 2-3, с. 4-5; Манандян А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э. – XV в. н. э.), Ереван, Изд. ЕУ, 1954, с. 283-284.

վերլուծությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ու լրացնելու հասարակական, տնտեսական, արհեստագործական կյանքի և նյութական մշակույթի կարևորագույն բնագավառներից մեկը՝ խեցեգործական արհեստն իր բոլոր դրսևորումներով, որն արտացոլված չէ գրավոր աղբյուրներում: Դարաշրջանի խեցեգործության զարգացման մակարդակը ներկայացնող գտածոները (պեղածո և պատահական) հայտնի են Հայաստանի միջնադարյան (և ոչ միայն միջնադարյան) բոլոր հնագիտական հուշարձաններից, որոնք առանց գիտական մանրակրկիտ վերլուծության ու պատշաճ գնահատման կուտակվել են Հայաստանի տարբեր թանգարաններում (ԵԹ, ՇԵԹ, ԷՊԱԹ, ԵՊԹ, Շնողի համայնքային թանգարան) և ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Պետք է նշել նաև այն իրողությունը, որ տվյալ ժամանակաշրջանը հնագիտական նյութական արժեքների ժամանակագրական փուլաբաժանման մեջ չի ունեցել իր պատշաճ տեղը: Սկզբնավորվելով նախորդ դարաշրջանի մշակույթի ակունքներում, այն միաժամանակ հանդես է գալիս իբրև վերոբերյալ մշակույթի զարգացման շարունակության, ապա և օրինաչափ անկումային դրսևորումների կրող:

XX դարի կեսերից հնագիտական կանոնավոր պեղումները, հնագիտական գտածոների կուտակումը թելադրեցին պարբերացման ենթարկել ողջ միջնադարյան ժամանակաշրջանը՝ այն բաժանելով վաղ (IV – IX դդ.), զարգացած (IX – XIV դդ.) և ուշմիջնադարյան (XV – XVII դդ.) շրջափուլերի:

XIV – XVII դդ. նյութական մշակույթն իբրև առանձին ուսումնասիրության առարկա, արդիական դարձավ միայն վերջին ժամանակներս, երբ սկսեցին պեղել այդ շրջանի հուշարձաններն իբրև առանձին հնագիտական միավոր և ոչ բազմաշերտ հուշարձանի մշակութային վերին շերտ, թեև ուշմիջնադարյան գտածո-հավաքածուները հրապարակում հայտնվել էին շատ ավելի վաղ: Միջնադարյան հուշարձաններում փաստագրված ուշ շրջանի հնագիտական նյութը մասամբ արտացոլվեց այդ հուշարձանների և դրանց պեղումների արդյունքներն ամփոփող ընդհանուր աշխատություններում²: Այդ

² Աբրահամյան Վ., Արհեստները Հայաստանում IV – XVIII դդ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956; Բաբայան Ֆ., Ուշի Սուրբ Սարգիս վանքը, Երևան, ՀՀ ԳԱԱ „Գիտություն“, 2005; նույնի՝ Ուշի Ս. Սարգիս վանքից հայտնաբերված հախճապակին, ՀՀմ XII, Երևան, 2002, էջ 103-106; Бабамян Ф., Корхмазян Э., Монастырь Сурб Хач как центр армянской культуры в Крыму, Ереван – Симферополь, Изд. Наапет, 2008; Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., ՀՀմ 10, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981; Հարությունյան Ս., Անբերդ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978; Ղարիբյան Բ., Բջնի միջնադարյան ամրոցի պեղումները, Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, Միջ. համաժողովի գեկ. ժող., Երևան, 2003, էջ 228-236; նույնի՝ Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, Երևան, „Գիտություն“, 2009;

իսկ պատճառով անհրաժեշտություն առաջացավ XIV – XVII դդ. խեցեղենը ներկայացնել մեկ համալիր աշխատանքում:

Մեր ուսումնասիրության հիմքը խեցեգործական արտադրանքն է, որը հայտնի է Հայաստանում վաղնջական ժամանակներից, սակայն IX – X դդ., արտադրողական ուժերի քաղաքներում կենտրոնանալու պատճառով այն մասամբ բնորոշվում է որպես քաղաքային մշակույթ, թեև գյուղական վայրերում ևս գործում էին խեցեգործական արհեստանոցներ: Խեցեղենի համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել միջնադարյան Հայաստանի բնակչության կենցաղի, սոցիալ-տնտեսական կյանքի որոշ կողմեր, վեր հանել նրա և հարևան երկրների միջև գոյություն ունեցող առևտրա-տնտեսական ու մշակութային կապերը: Խեցեգործական արտադրանքը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Հայաստանի կիրառական արվեստների շարքում, քանի որ բացի կիրառական գործառույթից ունի նաև գեղարվեստական բարձր արժեք: Առավել հատկանշական է ջնարակած խեցեղենը, որը բացառիկ հնարավորություններ է ընձեռում այդ դարաշրջանի խեցեղենի ուսումնասիրության գործում: Այն վեր է հանում ոչ միայն տեխնոլոգիական գործընթացի առաջընթացը, այլև գեղարվեստական ձևավորման, հարդարման սկզբունքները: Հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերված խեցեղենն արժեքավոր է նաև նրանով, որ ամենագանգվածայինն է. թեև բեկորային վիճակում, բայց հնարավորություն է ընձեռում հետևելու արտադրության այդ տեսակի զարգացման հաջորդական փուլերին: XIV – XVII դդ. խեցեղենի ոչ բավարար ուսումնասիրված լինելը առաջադրեցրին հավաքված նյութի դասակարգման և ընդհանրացման առաջին փորձը կատարելու, որով և պայմանավորված է սույն աշխատության արդիականությունը:

Գիտական ուսումնասիրության համար իբրև առաջնային խնդիր հնագիտական աղբյուրների պատմա-հնագիտական վերլուծությունն է, ինչպես և դարաշրջանի պատմությանը վերաբերող պատմագիտական գրականության ու սկզբնաղբյուրների հետազոտումն ու քննությունը: Խեցեգործության զարգացման ընթացքն ու անցած փուլերը որոշելու, մշակութային կապերն ու փոխառնչությունները ճշգրտելու տեսանկյունից անհրաժեշտ է քաջատեղյակ լինել միջնադարի վաղ, զարգացած և ուշ փուլերի խեցե-

Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1988; Есаян Г., Материальная культура бассейна реки Агстев в развитом средневековье, Ереван, Изд. ЕУ, 1992:

գործական արտադրանքին, խեցեգործական արհեստի նվաճումներին ու տեխնոլոգիական առաջընթացին ինչպես Հայաստանում, այնպես էլ ժամանակի բարձրակարգ խեցեգործական կենտրոններում՝ Իրան, Սիրիա, Եգիպտոս, Միջին Ասիա, Չինաստան, Թուրքիա, նաև Վրաստան ու Ադրբեջան:

Սկսած XX դարի 20-30-ական թթ. ասպարեզում հայտնվում են խեցեգործական արհեստի վերաբերյալ առաջին գիտական հոդվածներն ու մենագրությունները:

XIV – XVII դդ. Հայաստանի քաղաքական պատմության ուսումնասիրության գործում բացառիկ է սկզբնաղբյուրների նշանակությունը: Առաջնային են ժամանակակից պատմիչների (Թովմա Մեծոփեցի³, Առաքել Դավրիժեցի⁴) պատմական երկերն ու ձեռագրերի հիշատակարանները, որոնք ամփոփված են Լ. Խաչիկյանի կազմած „ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ“, „ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ“ եռահատորյակում⁵: Առաջաբաններում Խաչիկյանը ներկայացնում է Հայաստանի քաղաքական պատմությունը՝ անդրադառնալով նաև ներքին կյանքի բազմաբևեռ ընդգրկումներին:

Աղբյուրագիտական կարևոր տեղեկություններ են հաղորդում և վիմական արձանագրությունները, որոնք հարուստ փաստական նյութ են պարունակում ոչ միայն Հայաստանի հասարակական-տնտեսական, քաղաքական պատմության, այլև տնտեսության որևէ կոնկրետ ոլորտի զարգացման, նյութական մշակույթի տարատեսակ դրսևորումների վերաբերյալ: Վիմական արձանագրությունները հիմնականում ամփոփված են „Դիվան հայ վիմագրության“ բազմահատորյակում⁶:

XIV – XVII դդ. պատմությանը վերաբերող առկա մեծաքանակ գրականությունից հարկ ենք համարում առանձնացնել մեծավաստակ հայագետ Ղ. Ալիշանի „Այրարատ“,

³ Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երևան, „Մագադաթ“, 1999, 310 էջ:

⁴ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմ., առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, Երևան, „Սովետական գրող“, 1988, 592 էջ:

⁵ Խաչիկյան Լ., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1950, 757 էջ, նույնի՝ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450 թթ.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1955, 819 էջ, մասն Բ (1451 – 1480 թթ.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, 600 էջ, մասն Գ, (1481 – 1500 թթ.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1967, 712 էջ:

⁶ ԴՀՎ, պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ ՀԱԻ, 1966, 139 էջ; պրակ II, Գորիսի, Միսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ ՀԱԻ, 1960, 240 էջ; պրակ III, Վայոց ձոր, Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Բարխուդարյան Ս., Երևան, ՀՍՍՀ ԳԱ ՀԱԻ, 1967, 427 էջ; պրակ IV, Գեղարքունիք: Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց Բարխուդարյան Ս., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, 526 էջ; պրակ IX, Լոռու մարզ, կազմ. Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երևան, ՀՀ ԳԱԱ „Գիտություն“ հրատ., 2012, 611 էջ:

„Սիսական”, „Շիրակ”, „Հայապատում” աշխատությունները⁷: Հեղինակը սկզբնաղբյուրների բանիմաց օգտագործմամբ շարադրել է քննարկու ժամանակաշրջանի քաղաքական ճշգրիտ, սակայն համառոտ պատմությունը:

Անգնահատելի են և Գ. Հովսեփյանի ուսումնասիրությունները⁸՝ նվիրված հայ իշխանական տների պատմությանը, մշակութային ձեռքբերումներին, քաղաքական-տնտեսական կյանքի անցուղարձին:

Հայաստանի այդ շրջանի պատմության ուսումնասիրության ուղղությամբ հաջորդ և լուրջ քայլը կատարեց ակադեմիկոս Հ. Մանանդյանը իր „Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության” աշխատության երրորդ հատորում⁹: Արժեքավոր են նրա „О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э. – XV в. н. э.)”¹⁰, „Հայաստանի գլխավոր ճանապարհներն ըստ Պևտինգերյան քարտեզի”¹¹ հայտնի աշխատությունները, որոնցում ցույց են տրված Հայաստանի գլխավոր և երկրորդական առևտրական ճանապարհները, քաղաքների դերը համաշխարհային տարանցիկ առևտրի ոլորտում, մասամբ և Հայաստանի արտադրության զարգացած ճյուղերն ու արհեստները և սեփական արտադրանքով մասնակցությունը միջազգային առևտրին:

Հ. Մանանդյանի ուսումնասիրությունների շարունակությունը կարելի է համարել Վ. Հ. Փափազյանի „Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI – XVII դարերում” աշխատությունը¹², որտեղ օտարալեզու աղբյուրների հաղորդումների օգտագործմամբ լրացվում և մանրակրկիտ քննարկման են ենթարկվում առևտրական ճանապարհները և դրանցով պայմանավորված տարանցիկ առևտրի դերը երկրի տնտեսական կյանքի համատեքստում: Հարկավ, Հ. Մանանդյանի և Վ. Փափազյանի մենագրություններում քննարկվում են ավելի շատ քաղաքների ու առևտրի,

⁷ Ալիշան Դ., Այրարատ, Բնաշխարհ Հայաստանյաց, Վենետիկ, Ս. Ղազար, 1890, 590 էջ; նույնի՝ Հայապատում, Պատմություն հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1901, հատ. Ա, 560 էջ, հատ. Բ, 559 էջ; նույնի՝ Սիսական: Տեղագրություն Սիւնեաց աշխարհի, վերահրատ. Վենետիկ 1893 հրատ.-ից, Երևան, 2009, Հայգիտակ, 562 էջ; նույնի՝ Շիրակ: Տեղագր. Պատկերացոյց, վերահրատ. Վենետիկ 1881 հրատ.-ից, Երևան, Հայգիտակ, 2010, 192 էջ:

⁸ Հովսեփյան Գ., Խաղբակյանք կամ Պոռոջանք հայոց պատմության մեջ (պատմագիտական ուսումնասիրություն), մասն Ա, Վաղարշապատ, Պետհրատի առաջին տպարան, 1928, 298 էջ:

⁹ Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության (Մեյլունկյան շրջանից մինչև Սեֆյանների հաստատումը Իրանում), XI – XV դդ., հատ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, 506 էջ:

¹⁰ Манандян А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э. – XV в. н. э.), Ереван, Изд. ЕУ, 1954, 346 с.

¹¹ Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Երևան, Գիտհրատի տպարան, 1936, 231 էջ:

¹² Փափազյան Վ., Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI – XVII դարերում, Երևան, ՀԽՍՀ հրատ., 1990, 195 էջ:

քան արհեստների զարգացման ու արհեստագործական արտադրանքի բնույթին վերաբերող խնդիրները:

XIV – XVII դդ. պատմության լուսաբանման հարցում կարևոր է Գ. Ե. Կիրակոսյանի „Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386 – 1500 թթ.)” աշխատությունը¹³: Հեղինակը հայ և օտարալեզու սկզբնաղբյուրների հաղորդած կցկտուր տեղեկությունների հիման վրա շարադրել է դեպի Հայաստան Լենկ-Թեմուրի, կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական ցեղերի արշավանքների, դրանց ծանր հետևանքների ու դաժան հարկային քաղաքականության պատմությունը: Աշխատանքի երրորդ բաժնում հեղինակը մանրակրկիտ հետազոտության է ենթարկել տվյալ ժամանակաշրջանի իշխանական տների (Օրբելյան, Պռոշյան, Ազիզբեկյան, Դոփյան, Հասան-Ջալալյան) պատմությունը և նվաճողներին անհավասար դիմադրություն ցույց տալու պայմաններում ծագող ազատագրական գաղափարների սաղմնավորման հարցերը:

Մեր թեմայի ուսումնասիրության գործում առավել քան մեծ նշանակություն ունի սկզբնաղբյուրների և դրանց ուսումնասիրման հետ կապված գիտական աշխատությունների քննությունը, սակայն դրանք համալիր և ամբողջական չեն և չեն կարող լիովին սպառել նյութական մշակույթի հետ կապված բոլոր հարցադրումները: Այդ տեսանկյունից բացառիկ են հնագիտական հայտնագործությունները, որոնք Հ. Մանանդյանի դիպուկ բնորոշմամբ լոկոմոտիվի դեր ունեն պատմության խնդիրները վերլուծելիս. „Գիտական լրիվ ուսումնասիրությունն այս դարերի պատմության հնարավոր կլինի, անշուշտ, այն ժամանակ, երբ հրատարակված կլինեն այս ժամանակներին վերաբերող բոլոր վիմական արձանագրությունները, հայերեն ձեռագրերի հիշատակարանները, հայ և օտար չհրատարակված սկզբնաղբյուրները ու նաև նյութական կուլտուրայի անհայտ մնացած հուշարձանները”¹⁴:

Նյութական մշակույթի հետազոտման ուղղությամբ առաջին լուրջ քայլերը կատարվեցին դեռևս XX դարի սկզբներին, երբ սկսվեցին Հայաստանի միջնադարյան հուշարձանների պեղումները: Բացառիկ էին Անի քաղաքի պեղումները, որոնց վերաբերյալ հրատարակությունները գիտական հանրության ու հասարակության ուշադրության դի-

¹³ Կիրակոսյան Գ., Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386 – 1500 թթ.), Երևան, „Գիտություն” հրատ., 1997, 369 էջ:

¹⁴ Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, էջ 12:

տակետում հայտնվեցին դեռևս պեղումների տարիներին: Անիի պեղումների արդյունքներն ու հնագիտական նյութերի ուսումնասիրությունները ամփոփվեցին ակադեմիկոս Ն. Մառի „Ани. Книжная история города и его раскопки” աշխատությունում¹⁵: Աշխատանքը կարևորվում է նրանով, որ հեղինակը փորձում է վերանայել տիրող տեսակետը, թե քաղաքը երկրաշարժից հետո (1319) դուրս է եկել պատմության ասպարեզից՝ ընդգծելով, որ Անիի անկումը տեղի է ունեցել աստիճանաբար: Հնագիտական նյութերը և դրամական գյուտերը մեկ անգամ ևս փաստում են, որ քաղաքում կյանքը շարունակվել է ընդհուպ մինչև XV դարի կեսերը:

Նյութական մշակույթի հետազոտման գործում պակաս արժեքավոր չէ Հ. Օրբելու „Каталог Анийского музея древностей” աշխատությունը¹⁶, որտեղ նկարագրված է Անիի հնագիտական զետեղարանում պահվող գտածոների հարուստ հավաքածուն՝ բացառությամբ քանդակագարդ ու արձանագիր քարերի:

Հայաստանի նյութական մշակույթի, արհեստների ու քաղաքների զարգացման գործում մնայուն է Բ. Առաքելյանի՝ „Քաղաքները և արհեստները Հայաստանում IX – XIII դդ.” երկհատոր մենագրությունը¹⁷, որտեղ ավելի քան բազմակողմանի են ներկայացված արհեստների տարբեր ճյուղերն ու քաղաքային կյանքի զարգացման փուլերը: Մատենագիտական և հնագիտական հարուստ նյութի հիման վրա հեղինակը վեր է հանել արհեստագործության առանձին բնագավառները Հայաստանում, արհեստային արտադրանքի բնույթը, արհեստների մեջ ձևավորված ենթաբաժանումները, եղբայրական համայնքների ձևավորումը: Խեցեգործությանը նվիրված բաժնում հեղինակը ներկայացնում է խեցեղենի պատրաստման եղանակները, օգտագործված կավատեսակներն իրենց աչքի ընկնող որակական հատկանիշներով: Բ. Առաքելյանը մեծ աշխատանք է կատարել նաև խեցեղենի դասակարգման ուղղությամբ: Օգտագործված են Դվինի ու Անիի պեղումներով հայտնաբերված հնագիտական գտածոների հարուստ հավաքածուները, որոնք գերազանցապես վերաբերում են IX – XIII դդ.:

Միջնադարյան Հայաստանի նյութական մշակույթի, արհեստների և քաղաքային կյանքի զարգացման հարցերն ուսումնասիրելու գործում խոշոր ավանդ է ներդրել Կ. Գ.

¹⁵ Март Н., Ани. Книжная история города и раскопки на месте городища, Ереван, Изд. „Гитутюн”, 2011, 133 с.

¹⁶ Орбели И., Каталог Анийского музея древностей, ИТ, Ереван, Изд. АН АрмССР, 1963, с. 23-102.

¹⁷ Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX – XIII դդ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., հատ. I, 1958, 376 էջ, հատ. II, 1964, 320 էջ:

Ղաֆադարյանը իր „Դվին քաղաքը և նրա պեղումները” երկհատոր մենագրությամբ¹⁸, որում մանրագնին ուսումնասիրված են կանոնավոր պեղումների միջոցով ձեռք բերված նյութական մշակույթի մնացորդները, որոնք ինքնին կարևոր հիմք են միջնադարյան Հայաստանի խեցեգործական, ապակեգործական, մետաղամշակության զարգացման օրինաչափությունները, ինչպես և տնտեսական, արհեստագործական, առևտրական, մշակութային փոխադարձ կապերը Հայաստանի մյուս քաղաքների ու հարևան երկրների հետ վերհանելու տեսանկյունից: Դվինի միջնադարյան նյութական մշակույթի ուսումնասիրությունը շարունակում են Ա. Քալանթարյանը, Ն. Հակոբյանը, Ա. Ժամկոչյանը, Ֆ. Բաբայանը: Թեև գիտական գրականության մեջ հայտնի է, որ Դվինը որպես միջնադարյան քաղաք գոյատևել է IV – XIII դդ. կեսերը, սակայն վերջին տարիների պեղումներով Դվինի միջնաբերդի տարածքից հայտնաբերվել են XIII դարի վերջով թվագրվող ջնարակապատ անոթներ (ամբողջական և բեկորային վիճակում):

Հայաստանի միջնադարյան խեցեգործական արտադրանքի քննության ոլորտում մեծաթեք են Բ. Շելկովնիկովի աշխատությունները՝ Անի և Դվին խեցեգործական կենտրոնների նյութական մնացորդների մանրամասն քննությամբ¹⁹:

XIV – XVII դդ. խեցեգործության ուսումնասիրությունը բավական սահմանափակ է: Այս առումով արժեքավոր է 2009 թ. հրատարակված „Armenia in the cultural context of East and West. Ceramics and glass (IVth – XIVth centuries)” հեղինակային կոլեկտիվ աշխատությունը²⁰, որտեղ առանձին-առանձին ներկայացված են խեցեգործության հիմնական խմբերը՝ ըստ կավե հիմքի: Մանրագնին քննության են ենթարկվել յուրաքանչյուր փուլի խեցեգործական արտադրանքի ձևաբանական հորինվածքների ժամանակագրական փոփոխություններն ու հարդարման հնարներն իրենց բոլոր արտահայտչամիջոցներով: Աշխատության վերջին բաժնում ներկայացված են XIII – XIV դդ.

¹⁸ Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., հատ. I, 1952, 299 էջ, հատ. II, ՀՍՍՀ ԳԱ հնագիտական արշավախմբի 1951 – 1972 թթ. աշխատանքների արդյունքները, 1982, 166 էջ:

¹⁹ Шелковников Б., Поливная керамика из раскопок города Ани, Ереван, Изд. АН АрмССР, 1957, 101с; նույնի՝ Художественная керамика двинских раскопок, Известия АрмФАН, N 4-5, 1940, с. 181-199; նույնի՝ Китайская керамика из раскопок средневековых городов и поселений Закавказья, СА, N 21, Москва-Ленинград, 1954, с. 368-378, նույնի՝ Средневековая художественная керамика Ближнего и Дальнего Востока, Известия АрмФАН, 1942, N 6, с. 3-32, նույնի՝ Художественная керамическая промышленность средневековой Армении, Известия АрмФАН, 1942, N 3-4, с. 9-36.

²⁰ Kalantaryan A. etc., Armenia in the cultural context of East and West. Ceramics and glass (IV – XIVth centuries), Yerevan, „Gitutyun”, 2009, 191p.

ջնարակած խեցեղենի որակական փոփոխությամբ պայմանավորված նկարագարման նոր սկզբունքների երևան գալը և XIII – XIV դդ. հախճապակին:

Միջնադարյան հախճապակու համալիր ուսումնասիրությունն առաջին անգամ իրականացրել է Ա. Ժամկոչյանը՝ „Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ.” մենագրությամբ²¹, որտեղ փուլ առ փուլ քննվում են հախճապակե անոթների տիպերն ու հարդարման սկզբունքները: Առանձին ներկայացված են նաև հախճասալերը, որոնք թեև հայկական ճարտարապետական հարդարվեստում օտարամուտ երևույթ են, բայց սկսած XIII – XIV դդ. որոշակի տարածում են գտնում:

XIV – XVII դդ. խեցեղենն առանձին քննության չի ենթարկվել: Հրապարակում կան մենագրություններ ու հոդվածներ, որոնք մասամբ են արծարծում այդ շրջանի խեցեղենը: Քիչ թե շատ ուսումնասիրված են ճարտարապետությունը, քանդակային արվեստը, մանրանկարչությունը, մետաղագործությունը: Արհեստագործության տարբեր ոլորտների, հատկապես խեցեգործության բնագավառին վերաբերող ուսումնասիրությունները սահմանափակվում են նախորդող ժամանակաշրջանի բարձր մակարդակի հասած ավանդույթների շարունակությունը քննարկու ժամանակաշրջանում տեսնելով՝ առանձնացնելով ջնարակած խեցեղենի մեջ որակական փոփոխությունները, նոր որակի ջնարակի ու դրա հետ կապված տեխնիկական նոր միջոցների կիրառման համառոտ նկարագիրը:

XIV – XVII դդ. նյութական մշակույթի ուսումնասիրությունն արդիական և անհրաժեշտ է դառնում հնագիտական հուշարձանների պեղումներից հայտնաբերված այդ շրջանին վերաբերող գտածոների մեծաքանակությամբ: Հիշատակության է արժանի Հ. Պետրոսյանի „Գառնին IX – XIV դդ.” մենագրությունը²², որտեղ հեղինակը մանրամասն անդրադարձել է Գառնիի միջնադարյան բոլոր հուշարձաններին: Առանձին գլուխ նվիրված է Գառնիից հայտնաբերված հնագիտական նյութերին, որոնք բարեխղճորեն նկարագրվել, դասակարգվել ու թվագրվել են: Այդ նյութերի քննությունը հնարավորություն է տալիս վերհանել Գառնի գյուղաքաղաքում արհեստների տարբեր ճյուղերն ու դրանց զարգացման օրինաչափությունները:

Անբերդի պեղումներով հայտնաբերված ուշ շրջանի խեցեղենը հետազոտել և գիտական շրջանառության մեջ է դրել Տ. Իզմայլովան²³: Հեղինակը ողջ նյութը դասակար-

²¹ Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., ՀՀՀ 10, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 81-148:

²² Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 163 էջ:

²³ Измайлова Т., Керамика из раскопок Анберда, ТОВЭ, т. 4, Ленинград, 1947, с. 181-204.

գել է, թվագրել և տարագատել տեղականը ներմուծվածից: Նյութի վերլուծությունը հնարավորություն է ընձեռել հեղինակին Անբերդի խեցեղենը կապել Հայաստանի խոշոր խեցեգործական կենտրոնների՝ Անիի ու Դվինի հետ:

Հայաստանի ուշմիջնադարյան խեցեղենի արտադրության փուլային զարգացման ողջ գործընթացը պատկերացնելու և բացահայտելու համար բացառիկ է Ի. Ղարիբյանի՝ „Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները” մենագրությունը²⁴, որտեղ առանձին բաժնով ներկայացված է նյութական մշակույթը: Դասակարգելով խեցեղեն տեսականին ըստ կիրառության, հեղինակը մեծ ուշադրություն է հատկացնում ծխամորճերին, որոնց քննությունը հնարավորություն է տալիս հեղինակին ենթադրելու, թե Լոռե քաղաքն, ամենայն հավանականությամբ, ունեցել է կավե ծխամորճների տեղական արտադրության արհեստանոց:

Ուշմիջնադարյան հնագիտական գտածոները գիտական շրջանառության մեջ են մտնում նաև Հայաստանի վանական համալիրների ու փոքր բնակավայրերի պեղումներով, որոնք, սակայն, լույս են տեսել միայն դրանց փաստագրմամբ, այն էլ այդ հուշարձանների պեղումներին վերաբերող հոդվածներում ու թեզերում: Այդ տեսանկյունից կարևոր են Ֆ. Բաբայանի „Ուշիի Սուրբ Սարգիս վանքը” և „Монастырь Сурб Хач как центр армянской культуры в Крыму” մենագրությունները²⁵, ինչպես նաև „Հառիճի վանական համալիրը՝ իբրև պատմահնագիտական հուշարձան” հոդվածը, որոնցում հուշարձանների պատմության, պեղումների արդյունքների լուսաբանմանը զուգահեռ ներկայացված է ուշմիջնադարյան խեցեղենը:

Հայաստանը, Մերձավոր Արևելքի երկրների բաղկացուցիչ օղակը լինելով, արհեստագործական արտադրության մեջ ուներ իր ուրույն տեղը: Մեր աշխատանքի համար անգնահատելի են արտասահմանյան հեղինակների մի շարք մենագրություններն ու հոդվածները Առաջավոր Ասիայի, Միջին Ասիայի, Չինաստանի, Իրանի, Թուրքիայի խեցեգործական արտադրանքի վերաբերյալ: Բազմաթիվ հրապարակումների շարքում պետք է առանձնացնել Ա. Պոպի²⁶, Ա. Լեյնի²⁷, Ֆ. Զարեի²⁸, Ռ. Հոբսոնի²⁹, Զ. Քարսվելի և Ս.

²⁴ Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, Երևան, „Գիտություն”, 2009, 283 էջ:

²⁵ Բաբայան Ֆ., Ուշիի Սուրբ Սարգիս վանքը, Երևան, ՀՀ ԳԱԱ „Գիտություն”, 2005, 47 էջ; նույնի՝ Ուշիի Սարգիս վանքից հայտնաբերված հախճապակին, ՀՀմ XII, Երևան, 2002, էջ 103-106; Бабалян Ф., Корхмязян Э., Монастырь Сурб Хач как центр армянской культуры в Крыму, Ереван – Симферополь, Изд. Наапет, 2008, 88 с; նույնի՝ Հառիճի վանական համալիրը՝ իբրև պատմահնագիտական հուշարձան, ՀՀՄ - 3, Երևան, „Մուլնի” հրատ., 2003, էջ 135-144:

²⁶ Pope A., An introduction to Persian Art since the seventh century A. D., London, Peter Davies, 1930, p. 61-98; Pope A., Ackerman Ph., A survey of Persian art from prehistoric times to the present, vol. 2, 3, London-New York, Oxford University press, 1938-1939.

Դոուլերի³⁰, Յու. Միլերի³¹, Է. Սայկոյի³², Է. Կվերֆելդտի³³, Ն. Վակտուրսկայայի³⁴ և ուրիշների աշխատությունները³⁵:

Հատուկ կարևորություն ունեն նաև հարևան Վրաստանի և Ադրբեջանի ուշմիջնադարյան խեցեղենին նվիրված աշխատությունները: Այդ առումով առանձնանում է Ն. Մամաիաշվիլիի „Фаянс в средневековой Грузии” և Վ. Լևիատովի „Керамика Старой Ганджи” աշխատությունները³⁶:

Խեցեղենի դասակարգման ուղղությամբ օգտակար աշխատանք է կատարել Վ. Կոպալը իր „Керамика Востока на Руси IX – XVII вв.” մեծածավալ մենագրության մեջ³⁷: Խեցեղենի դասակարգման նրա մեթոդները մեզ բավականին կօգնեն XIV – XVII դդ. հայաստանյան խեցեղենի դասակարգման հարցում:

Շնորհիվ վերոհիշյալ ուսումնասիրությունների մենք հստակ պատկերացում ենք կազմում Հայաստանի և մերձավորարևելյան, միջինասիական, չինական հայտնի կենտրոնների խեցեգործական արտադրության զարգացման, անցած ուղիների, նորամուծությունների ու ձեռքբերումների վերաբերյալ:

Թեև բավական մեծ աշխատանքներ են տարվել միջնադարյան նյութական մշակույթի, հատկապես խեցեգործության ուսումնասիրման ուղղությամբ, այնուամենայնիվ դրանք ամբողջական չեն և ժամանակագրորեն ավարտվում են հիմնականում XIV դարով: Չնայած մեծաքանակ գիտական գրականության առկայության, XIV – XVII դդ նյութական մշակույթի վերաբերյալ չկան լիարժեք համալիր աշխատանքներ: Մեր ատենա-

²⁷ Lane A., Later Islamic pottery. Persia, Syria, Egypt, Turkey, London, Faber and Faber, 1957, 151p.; նույնի՝ Islamic pottery IX – XIVth cc. London, Faber and Faber limited, 1957, 37 p..

²⁸ Sarre F., Die Keramik von Samarra. In Die Ausgrabungen von Samarra, Bd. II, Berlin, Verlag von Dietrich Reimer, 1925, 103 s.

²⁹ Hobson R., A Guide to the Islamic pottery of the Near East, London, Oxford university press, 1932, 102 p.

³⁰ Carswell J. and Dowsett C., Kütahya tiles and pottery from the Armenian cathedral of St. James, Jerusalem, vol. I 111 p., II 106 p., Oxford, 1972.

³¹ Миллер Ю., Художественная керамика Турции, Ленинград, Изд. „Аврора”, 1972, 183 с.

³² Сайко Э., Техника и технология керамического производства Средней Азии в историческом развитии, М. Изд. „Наука”, 1982, 211 с.; Среднеазиатская глазурованная керамика XII – XV вв., Душанбе, Изд. „Дониш”, 1969, 186с.

³³ Кверфельдт Э., Керамика Ближнего Востока, Ленинград, 1947, 144 с.

³⁴ Вактурская Н., Хронологическая классификация средневековой керамики Хорезма (IX-XVII вв.), ТХАЭЭ, т. 4, Керамика Хорезма, Москва, Изд. АН СССР, 1959, с. 261-342.

³⁵ Soustiel J., La céramique islamique (le guide de connaisseur), Paris, editions Vilo, 1985, 428 p.; Migeon G., Bey-Sakisyanyan A., La céramique d’Asie-Mineure et de Constantinople, Paris, Librairie Orientaliste Paul Geuthner, 1923; Wilkinson Ch., Fashion and technique in Persian pottery, Bulletin the Metropolitan Museum of Art, November, 1947, v.6, N 3, pp. 99-104; Wilson R. P., Islamic art, New York, The Macmillan company, 1957.

³⁶ Мамаиашвили Н., Фаянс в средневековой Грузии, Тбилиси, „Мецниереба”, 1976, 127с., 31 таб.; Левиатов В., Керамика Старой Ганджи, Баку, Изд. АЗФАН, 1940, 44 с.

³⁷ Коваль В., Керамика Востока на Руси IX – XVII вв., Москва, Изд. „Наука”, 2010, 269с.

խոսությունը ևս չի հավակնում լինելու համալիր ուսումնասիրություն: Ատենախոսության շարադրանքում, առաջին անգամ փորձ է կատարվում դասակարգել ու միավորել Հայաստանի տարբեր շրջաններից գտնված XIV – XVII դդ. վերաբերող խեցեղեն նյութերը՝ դիտարկելով կոնկրետ ժամանակահատվածում:

Ատենախոսությունը շարադրված է հնագիտական հուշարձաններից հայտնաբերված, ինչպես նաև թանգարաններում կուտակված ու մեզ համար մատչելի նյութերի հիման վրա: XIV – XVII դդ. խեցեղենի ուսումնասիրության գործում կարևոր նշանակություն ունեն միջնադարյան հուշարձանների պեղումներից հայտնի հնագիտական գտածոները: Աշխատանքում օգտագործել ենք մոտ երեք տասնյակ միջնադարյան հուշարձանների խեցեղեն հավաքածուները, որոնց մի մասը հրատարկված է (Դվին, Անի, Անբերդ, Գառնի, Լոռե բերդաքաղաք), իսկ մյուս մասը արդյունք է վերջին տասնամյակներում իրականացված պեղումների և դեռևս գիտական գրականության մեջ շրջանառված չէ (Ոստինք, Շատիվանք, Նորավանք, Սելիմի քարավանատուն, Արայի քարավանատուն, Արտաշատ, Էջմիածին, Թեղենյաց վանք, Միրաք, Դաշտադեմ, Հայկաձոր, Քոբայր, Թեղուտ և այլն): Գտածո տեսականիները ներկայացնում են ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերից, վանական համալիրներից, քարավանատներից հայտնաբերված նյութը՝ հիմնականում արտացոլելով ՀՀ ողջ տարածքի խեցեղածական արտադրության ընդհանուր պատկերը XIV – XVII դդ.:

Խեցեղեն նյութի ուսումնասիրությունը կատարվել է պատմահնագիտական աղբյուրների համեմատական վերլուծության, դասակարգման և մանրակրկիտ նկարագրության միջոցով³⁸:

Հիմնվելով վերը շարադրվածի վրա նպատակահարմար ենք գտնում ատենախոսությունը բաժանել հետևյալ կերպ՝ ներածություն, չորս գլուխներ, եզրակացություններ՝ համալրված գրականության ցանկով, ծանոթագրություններով, հապավումների ցանկով և աղյուսակներով:

Ներածությունն արտահայտում է թեմայի նպատակը, նորույթը, արդիականությունը, ուսումնասիրվածության աստիճանը:

³⁸ Աշխատանքն ավելի համալիր ու անթերի կլիներ քիմիական, լուսապատկերային (սպեկտրալ), պետրոգրաֆիական անալիզների արդյունքների առկայության դեպքում, որոնք, ցավոք, տեխնիկական դժվարությունների պատճառով բացակայում են:

Առաջին գլխում ներկայացված են պեղված հնագիտական այն հուշարձանները, որոնց խեցեղեն հավաքածուները մատչելի են եղել մեզ՝ օգտագործելու ատենախոսության մեջ: Հուշարձանները ներկայացնելիս շեշտը դրել ենք այն հանգամանքի վրա, թե որքանով են դրանք մասնակցություն ունեցել խեցեգործական արտադրության զարգացման ընթացքի վրա:

Երկրորդ գլխում անդրադարձել ենք ընդհանրապես միջնադարյան խեցեղենի դասակարգման սկզբունքներին: Ցույց տալով գիտական գրականության մեջ ընդունված բազմազան մեթոդները, փորձել ենք կազմել միջնադարյան խեցեղենի դասակարգման սխեմաներ, որոնք և կիրառել ենք ընդհանուր աշխատանքի ու հաջորդ երկու գլուխների կառուցվածքի մեջ:

Երրորդ գլուխը նվիրված է անջնարակ՝ անգարդ և զարդարուն խեցեղենին, որտեղ, ըստ գործածության, ներկայացված են XIV – XVII դդ. տարածված տեսականիները: Ցույց են տրված ժառանգական կապերը նախորդ դարաշրջանի նույնատիպ անոթների հետ, նրանց ձևաբանական հորինվածքների փոփոխությունները:

Չորրորդ գլուխը նվիրված է ջնարակապատ խեցեղենին, որի ուսումնասիրությունը անջնարակ խեցեղենի համեմատ, թույլ է տալիս XIV – XVII դարերի մեջ ավելի նեղ փուլաբաժանում կատարել՝ կապված տեխնոլոգիական միջոցների արագ փոփոխություններով: Ջնարակած խեցեղենի քննությամբ հնարավոր է հետևել և մշակութային փոխառնչություններին հարևան երկրների, Առաջավոր Ասիայի, Իրանի, Միջին Ասիայի, Չինաստանի, Թուրքիայի հետ, որոնք աշխարհաքաղաքական, առևտրա-տնտեսական շարժերի հետևանք են:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

XIV – XVII ԴԱՐԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

(ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

Պատմական համառոտ ակնարկ:

XIV – XVII դարերը հայ ժողովրդի պատմության կնճռոտ և քիչ լուսաբանված ժամանակահատվածն են, երբ երկրում տիրում էր քաղաքական և տնտեսական անկայուն իրավիճակ: Նախորդ ժամանակաշրջանում (IX – XIII դդ.՝ սկզբում Բագրատունիների, ապա Ջաքարյանների տիրապետության շրջանում) սկսած քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքի զարգացումն ընթանում էր բնականոն հունով, որը հանգեցրեց մշակութային ակնառու վերելքի: Տնտեսական վերելքը, քաղաքների ձևավորումն ու հետագա աճը նպաստեցին արհեստագործության լայնածավալ արտադրությանը, ներքին ու արտաքին առևտրի զարգացմանը, որոնք երկրի տնտեսության առաջընթացի հիմնական գործոններն էին: Ջաքարյանների տիրապետության շրջանում սկսված պատմական օրինաչափ առաջընթացը, սակայն, ընդհատվեց մոնղոլական քոչվոր ցեղերի արշավանքներից հետո: Հայաստանը, ներքին որոշակի շարժերով պայմանավորված թուլանալով, խոցելի էր դարձել մոնղոլական արշավանքների նախօրեին:

XIII դ. սկզբին մոնղոլ-թաթարական ցեղերը, համախմբվելով առաջնորդ Չինգիզ խանի շուրջ (1206), շատ կարճ ժամանակամիջոցում ստեղծեցին աշխարհակալ մի պետություն՝ իրենց նվաճումների աշխարհագրությունը տարածելով Չինաստանից մինչև Սև ու Միջերկրական ծովերի ափերը: Հայաստանը մոտ մեկ դար (1256 – 1344) ընդգրկվեց մոնղոլական հսկայածավալ պետության կուսակալություններից մեկի՝ Հուլավյան մոնղոլա-իրանական պետության կազմում³⁹ և ինչպես մոնղոլական կայսրությանը բռնի ուժով միացած Մերձավոր ու Հեռավոր Արևելքի մյուս երկրները, ենթարկվեց մոնղոլական քաղաքական ու մշակութային ազդեցությանը: Թեև քաղաքական ու տնտեսական տեսանկյունից դա բացասական հետևանքներ ունեցավ առաջադեմ երկրների համար, սակայն որոշ չափով նպաստեց նաև դրանց միջև (ընդգրկելով և Ռուսաստանը) առևտրական ու մշակութային հարաբերությունների աշխուժացմանը, որը սկսել էր մեծ թափով ծավալվել դեռևս Ջաքարյանների իշխանության շրջանում:

³⁹ Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս, Երևան, Մակմիլան Արմենիա ՀՀ ՓԲԸ, 2005, էջ 82-83:

Հուլավյան իլխանության թուլացումից ու կազմալուծումից հետո մեկը մյուսի հետևից Հայաստանն ու հարևան երկրներն ասպատակեցին Ոսկե հորդայի խան Թողթամիշը (1384 – 1385), ապա Չաղատայան երբեմնի հզոր պետության մաս կազմող Մավերանահրի տիրակալ Լենկ Թեմուրը (1385 – 1386), որը 1399 – 1403 թթ. դարձավ Կենտրոնական Ասիայի պատմական Մավերանահրի, Իրանի, Իրաքի, Աֆղանստանի, Հարավային Կովկասի, Փոքր Ասիայի, Միջագետքի ու Սիրիայի տիրակալ⁴⁰: Նրա մահից հետո այդ հսկայածավալ պետությունը շուտով տրոհվեց առանձին մասերի, քանզի կազմավորվել էր բռնությունների ու ահաբեկումների ճանապարհով:

Լենկ Թեմուրի արշավանքներին նախորդող տարիներին արդեն Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում որոշակի դեր էին խաղում օսմանյան թուրքերը, կարակոյունլու և ալ-կոյունլու համադաշնությունները, որոնք XIII դարի կեսերին գաղթելով Թուրքեստանից, բնակություն էին հաստատել պատմական Հայաստանի հարավում և Փոքր Ասիայի արևմուտքում: Հայկական լեռնաշխարհում թեմուրյանների թուլացումից առաջինը օգտվեցին կարա-կոյունլուները, որոնք տիրեցին „Հուլավուի թախթին” (Ասոր-պատական, Հայաստան, Իրաք) 1410 – 1468 թթ.⁴¹: Ի տարբերություն մյուս տիրակալների, միայն կարա-կոյունլուներն էին, որ տիրում էին հիմնականում Հայաստանում (գլխավոր կայանը՝ Վաղարշակերտ) և ալ-կոյունլուների ու Չաղաթայան Շահրուխի (Լենկ Թեմուրի որդու) դեմ պայքարում նույնիսկ հենվում հայ ֆեոդալների ու ազգաբնակչության աջակցության վրա⁴²: Կարա-կոյունլուները և պատմական Աղձնիքում հաստատված ալ-կոյունլուները XIV – XV դդ. ընթացքում փոփոխական հաջողություններով իշխում էին Հայաստանում մինչև XVI դարի սկիզբ, երբ Հայաստանը ռազմական թատերաբեմ դարձավ հակառակորդ երկու կողմերի՝ Օսմանյան Թուրքիայի և Առաջավոր Ասիայում քաղաքական առաջնության ձգտող Սեֆյան Իրանի միջև⁴³:

Քաղաքական բուռն անցուղարձերի ու սեփական տարածքում անընդմեջ տեղի ունեցող ռազմական գործողությունների հետևանքով հայ ժողովուրդն այլևս անկարող էր հավասարապես պայքարել ասպարեզ եկած նոր ու հզոր ուժերի դեմ: Միացյալ պե-

⁴⁰ Հայոց պատմություն, հատ II, գիրք երկրորդ (IX դ. կես-XVII դ. առաջին կես), Երևան, „Զանգակ”, 2014, էջ 525-538:

⁴¹ Նույն տեղում, էջ 84-85:

⁴² Փափագյան Հ., Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (Հասարակական գիտություններ), 1955, N 8, էջ 84-85:

⁴³ Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս, էջ 88-89:

տության բացակայության պայմաններում տեղի ունեցավ վարչատարածքային մասնատում: XIV – XV դդ. իրենց գոյությունը պահպանող հայ իշխանական տներից մի քանիսը, սահմանափակվելով իրենց տիրույթներում, փորձում էին ինչ-որ ձևով պահպանել ներքին կայուն իրավիճակը: Սյունիքի առանձին տարածքներում իշխում էին Օրբելյան, Խաչենում՝ Հասան-Ջալալյան, Ծարում՝ Դոփյան, Արագածոտնում՝ Վաչուտյան, Վայոց ձորի որոշ տարածքներում՝ Պռոշյան, Անիի ու Բջնիի շրջակայքում՝ Ջաքարյան (մինչև 1350-ական թթ.) իշխանական տների ժառանգները: XV դարը, փաստորեն, հայ ավատատիրության եզրափակիչ շրջանն է, երբ պատմության ասպարեզից դուրս են մղվում հայ իշխանական խոշոր տների վերջին ներկայացուցիչները⁴⁴: XVI – XVII դդ. Հայաստանի միայն լեռնային գոտիներում էին տեղ-տեղ պահպանվել հայկական մանր իշխանությունների մնացորդները, որոնց միջև, սակայն, բացակայում էր ներքին կապը⁴⁵:

XV – XVII դդ. հայ իշխանական տների աստիճանաբար վերացմանն ու նրանց տիրույթների բռնագրավմանը զուգընթաց հայ ժողովրդի ներքին գործերի տնօրինումը ստանձնեց Հայոց եկեղեցին (հատկապես 1441 թ. հետո, երբ Կաթողիկոսական աթոռը վերահաստատվեց Էջմիածնում), մի հանգամանք, որի հետ հաշվի էին նստում անգամ օտար նվաճողները: Եկեղեցական կալվածատիրության համար ստեղծված համեմատաբար նպաստավոր պայմաններում հայ ավատատիրական տների որոշ ներկայացուցիչներ վանքերի տնօրինությանը հանձնեցին իրենց ժառանգական կալվածքները՝ իրենք էլ դառնալով այդ վանքերի հոգևոր առաջնորդներ:

XIV – XVII դդ. արտաքին քաղաքական շարժերի հետևանքով փոխվեց Հայաստանի ներքին սոցիալ-տնտեսական դրությունը: Մոնղոլական և հետմոնղոլական արշավանքներից հետո երկրի արտադրողական ուժերի աստիճանական արտահոսքի հետևանքով հետզհետե անկում ապրեցին քաղաքները, արհեստներն ու առևտուրը: Արտաքին ներխուժումներից մեծապես տուժած քաղաքներն այլևս չվերականգնվեցին, լավագույն դեպքում վերածվեցին գյուղական բնակավայրերի, որտեղ սեփական կարիքները բավարարելու համար քաղաքային կամ ապրանքային արտադրանքը մեծ մասամբ փոխարինվեց տեղում ստեղծված գյուղական տնայնագործական արտադրանքով:

Քաղաքների և քաղաքատիպ բնակավայրերի աստիճանական անկման արդյունքում մշակութային կյանքն աշխուժացավ վանական համալիրներում, որոնք հետզհետե

⁴⁴ Փափագյան Հ., Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, էջ 83:

⁴⁵ Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս, էջ 88-89:

դարձան մշակութային կյանքի կատալիզատորներ: Մշակութային, կրթական ոլորտների առաջատար դարձան այն վանքերը, ուր տեղափոխվեցին եպիսկոպոսական աթոռները:

Քաղաքների անկմամբ պայմանավորված տեղաշարժվեցին նաև քարավանային ճանապարհները: Հայաստանի արտաքին առևտրի զարգացման համար խոշոր նշանակություն ունեցող Մետաքսի ճանապարհի՝ Հայաստանի հյուսիսային և կենտրոնական շրջաններով անցնող ուղեգծի տեղափոխումը դեպի հարավ միջազգային առևտրից դուրս մղեց Դվինը, Անին, Կարսը: Զրկվելով տարանցիկ առևտրից ստացվող եկամտից, դրանք կորցրեցին նաև իրենց առևտրա-արհեստագործական կենտրոնների կարգավիճակը: Գլխավոր առևտրական ճանապարհի ճյուղավորումների հանգուցակետերում քարավանային կանգառների համար հանգրվան դարձան գյուղական բնակավայրերը, տեղական նշանակության քաղաքային ավանները, քարավանատները: Այս առումով առանձնակի կարևորություն ունեին նախորդ դարերում աշխույժ գործող Դվին-Պարտավ և Սյունիքի տարածքով դեպի Նախիջևան, ապա Թավրիզ անցնող մայրուղիները, որոնք իրենց դերը որոշ չափով պահպանեցին նաև հետագայում: XV դարից աստիճանաբար բարձրացավ Երևանի նշանակությունը, որը սկզբում լինելով Արևելյան Հայաստանի վարչական կենտրոնը, հետագա դարերում սկսեց առաջատար դեր կատարել առևտրա-տնտեսական ու մշակութային կյանքում:

Այնուամենայնիվ, մեր թեմայի առանցքը՝ խեցեգործական արտադրանքը, երկրի տնտեսական կյանքի հետադիմության, արհեստագործության ու առևտրի ընդհանուր անկման պայմաններում, շարունակում էր դանդաղ զարգացում ապրել ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան: Միաժամանակ քննվող ժամանակաշրջանի Հայաստանի տարբեր տարածաշրջանների պատմությունն ու հնագիտական աղբյուրներն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում Հայաստանի քաղաքական, վարչական մասնատվածության ազդեցությունը նյութական մշակույթի վրա, որն իր արտահայտությունն է գտնում և խեցեղեն արտադրանքում:

Խեցեգործական արհեստի զարգացումը ուշ միջնադարում՝ ՀՀ տարածքում

պեղված հուշարձանների գտածոների հիման վրա (Տես նկ. 1)

Դվինը, որ դարեր շարունակ (IV – XIII դդ.) եղել է Հայաստանի վարչա-քաղաքական (մինչ 930 թ.), առևտրա-տնտեսական, մշակութային կենտրոնը, հայտնի էր նաև իր արհեստագործական արտադրությամբ: IX – XIII դդ. Դվինն իր խեցեգործական արտադ-

քանքով պատկանելի մասնաբաժին ուներ Մերձավոր Արևելքի երկրների մշակութային փոխհարաբերությունների համույթում: XIII դ. 30-50-ական թթ. քաղաքը ծանր հարված է ստանում: Դվին են արշավում մոնղոլական հորդաները, ավերի մատնելով ամեն ինչ, բայց քաղաքը մասնակիորեն պահպանում է իր կենսագործունեությունը մինչև XIV դարի սկիզբը, թեև պատմիչներն այդ մասին լռում են⁴⁶: Դվինը XIII – XIV դդ. պատկանել է Օրբելյաններին, ինչը վկայում են վիմագիր արձանագրությունները, որտեղ Տաբասայիճ Օրբելյանն իրեն հռչակում է «...կողմնակալ այսմ (Սյունյաց) նահանգի... ի Բարկուշատայ մինչև ի դաշտն Դնայ...»⁴⁷: Դվինում այդ ժամանակաշրջանի սոցիալ-հասարակական կյանքի շարունակականության մասին են փաստում և վերջին տասնամյակների պեղումներով միջնաբերդի վերին շերտերում հայտնաբերված XIII դ. վ.– XIV դ. սկ. թվագրվող ջնարակած անոթները և Ուլու Դավիթ թագավորի (1247 – 1274) դրամը⁴⁸:

Դվինի քաղաքային կյանքի վերջին փուլի վերաբերյալ (XIII դ. կես – XIV դ. վերջ) որոշակի պատկերացում են տալիս նրանից 4 կմ հյուսիս գտնվող Տիկնունի ամրոցի մասնակի պեղումները⁴⁹: Ամրոցը կառուցվել է IV դ., իսկ մոնղոլական շրջանում վերակառուցվել՝ հավանաբար որպես նստոց ծառայելով մոնղոլական վերնախավի ներկայացուցչի համար⁵⁰: Այդ են վկայում 1984 թ. իրականացված պեղումներից (ղեկ.՝ Հ. Եսայան) հայտնաբերված լուսամուտի ապակիների, գիպսե ճարտարապետական հարդարանքի և հախճաասալերի բազմաթիվ բեկորները, որոնք XII դարից սկսած Մերձավոր Արևելքի և միջինասիական երկրների ճարտարապետական հարդարանքի ամենահարգի հարդարատարրերից են: Հայաստանում դրանց կիրառումը ճարտարապետական հարդարանքում խոսում վկայությունն է օտար տարրերի, ճաշակի թելադրանքի մասին:

Հայաստանի ծաղկուն ու խոշոր առևտրա-արհեստագործական մյուս կենտրոնը Անին էր (X – XV դդ.), որը X դարի կեսերից Հայաստանի հանրահռչակ մայրաքաղաքն

⁴⁶ Քալանթարյան Ա., Դվինի ուսումնասիրության պատմությունից, ՊԲՀ, Երևան, 1995, N 2, էջ 195-204:

⁴⁷ Костяниц К., Летопись на камнях, Собрание-указатель армянских надписей, Санкт Петербург, 1913, с. 114, 1272a.

⁴⁸ N 19301/26, Հարավային բուրգ, -a-24 քառակուսու վերին շերտերից: Տես՝ Двин IV, Город Двин и его раскопки (1981-1985 гг.), АРА N 24, Ереван, Изд. „Гитутюн“, 2008, с. 170.

⁴⁹ 2014 թ. մեր կողմից այցելություն է կատարվել Տիկնունի և GPS սարքով տեղորոշվել է ամրոցն ընդգրկող բլուրի կոորդինատները՝ արևելյան՝ UTM E: 0464304, UTM N: 4432435, արևմտյան՝ UTM E: 0464187 UTM N: 4432402. <https://www.google.com/maps/place/Dvin,+Armenia/@40.0398494,44.5801457,1038m/data=!3m1!1e3!4m2!3m1!1s0x406ab606b527ef47:0x7aa013a9af981390>

⁵⁰ Двин IV, с. 182-183; Ժամկոչյան Ա., Ճարտարապետական հարդարանքի նմուշներ Տիկնունի ամրոցից, ԼՀԳ, Երևան, 1990, N 12, էջ 66-75:

էր: Վերջինս առաջատար էր ոչ միայն Հայաստանի, այլև ողջ տարածաշրջանի համար, ինչպես քաղաքական ու մշակութային կյանքում, այնպես էլ տարանցիկ առևտրում: Մելջուկ-թուրքերի պատճառած արհավիրքներից մեծապես տուժած քաղաքը կրկին վերականգնվեց XII դ. վերջերին XIII դ. առաջին քառորդում: Անիի նոր վերելքը կապված էր Մերձավոր Արևելքում արհեստագործության, ապրանքային արտադրության, առևտրի և քաղաքային կյանքի ընդհանուր զարգացման հետ: XI դարից Անին առաջ է անցնում Դվինից, դառնալով արհեստագործության, առևտրի ու մշակույթի խոշորագույն կենտրոն⁵¹ և վերջինիս գուգահեռ՝ սեփական արտադրանքով մասնակցում միջազգային առևտրին: Անին Հայաստանի խեցեգործության հայտնի կենտրոններից մեկն էր: Այդ մասին Ն. Մառը գրել է, որ իրեն հայտնի չէ այնպիսի մի վայր, որն իր հասարակ և գունավոր կավե իրերով կարողանար մրցել Անիի հետ⁵²: Մոնղոլական արշավանքներից հետո⁵³ Անին թեև չպահպանեց իր նախկին հռչակը, բայց շարունակում էր ապրել քաղաքային աշխույժ կյանքով մինչև XV դ.⁵⁴: Անիի ուշ շրջանի վերաբերյալ մատենագիտական ու վիմագրական աղբյուրների սակավությունը լրացնում են դրամական գյուտերը: Անիում դրամներ են հատել իլխանական շրջանում⁵⁵, շարունակվել անգամ հետիլխանական շրջանում (ընդհուպ մինչև XV դարի վերջ), երբ քաղաքն անցել էր թուրքմենական կարակոյունլու և ակ-կոյունլու համադաշնություններին⁵⁶: Անիի վերջին շրջանի քաղաքաշինության մասին որոշակի պատկերացում են տալիս կառուցված վաճառատները⁵⁷: Քաղաքը շարունակեց պահպանել և խեցեղենի տեղական արտադրությունը⁵⁸, որը ոչ միայն սեփական սպառմանն էր ուղղված, այլև բավարարում էր Հայաստանի մյուս շրջանների պահանջարկը: Անիի պեղումներով հայտնաբերված ուշ շրջանի խեցեղենն ընդգրկում է և ներմուծված հախճապակի, որը վերագրվում է սուլթանաբադյան դպրոցին ու թվա-

⁵¹ Առաքելյան Բ. Քաղաքները և արհեստները..., հատ. II, էջ 79:

⁵² Հակոբյան Թ., Անի մայրաքաղաք, Երևան, ԵՊՀ հրատ., 1988, էջ 196:

⁵³ Մինչև XIV դ. 50-ական թթ. Անին գտնվում էր Զաքարյանների տիրապետության տակ, որից հետո Մելիք Աշրաֆի բռնությունների հետևանքով նրանք վերջնականապես կորցնում են այն: Տես՝ Մաթևոսյան Կ., Անի քաղաքը և Օառաքար-Մաղաբերդը, Անի-Շիրակի պատմության էջեր (հոդվածների ժողովածու), Երևան, Հեղ. հրատ., 2010, էջ 233:

⁵⁴ Орбели И., Развалины Ани, ИТ, Ереван, Изд. АН АрмССР, 1963, с. 10.

⁵⁵ Հայտնի է, որ Ղազան խանի կառավարման շրջանում (1295-1304) Անին մոնղոլական դրամահատության կենտրոններից մեկն էր: Տես՝ Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 278:

⁵⁶ Vardanyan A., The evidence of coins on the history of Ani in the 14th – 15th centuries, Journal of Armenian studies, International review of Armenian studies, Yerevan, 2013, N 2-3, pp. 202-237.

⁵⁷ Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., էջ 125:

⁵⁸ Ժամկոչյան Ա., Հայաստանի XIII դարի վերջի և XIV դարի հախճապակին, ՊԲՀ, Երևան, 1975, N 1, էջ 233:

գրվում XIV դ.⁵⁹: Պայմանավորված առևտրական ուղիների շեղմամբ, արտաքին ագրեսիայով ու տնտեսական կյանքի անկմամբ, Անին XIV դ. կեսերից աստիճանաբար ամալանում է, իսկ առևտրա-արհեստավորական ներուժը լքելով քաղաքը՝ տեղափոխվում է Ջուղա և հայկական գաղթօջախներ: XVI դարում Անին պարզապես գյուղ էր⁶⁰: XVII դ. թուրք ուղևոր Էվլիյա Չելեբիի „Ուղեգրություն”-ում հիշատակվում է Անիի բերդը „.....որ Կարսի իշխանության մեջ է: Մի ժայռի վրա ընկած, քառանկյունի, ավերված փոքրիկ մի բերդ է”⁶¹:

Երևանը որպես միջնադարյան քաղաք ձևավորվել է XII – XIII դդ.⁶²: Տերտեր Երեվանցի գրչի կողմից Սուրխաթում և Ազակում ընդօրինակած „Քարոզգիրք Վարդան Այգեկցոյ” հիշատակարանում (1376) Երևանն անվանվում է.

Ի քաղաքէն այն պատուական,

Որ իր անունն է Երևան,

Խոր Վիրապին ու Էջմիածնին է հարևան...⁶³:

XV դարի կեսերին Երևանի նշանակությունը բարձրանում է՝ կապված Արարատյան աշխարհի կուսակալության կենտրոն դառնալու հետ, երբ արդեն հիշատակվում է որպես „Արարատյան երկրի մայրաքաղաք”⁶⁴: XV դարում կառուցվում է Երևանի բերդը, որը հետագայում բազմիցս վերակառուցվում է: „Շարդենի ասելով, վոր յեղել է Յերեվանում 1673 թվին, բերդում յեղել է 800 տուն, վորոնց բնակիչները բացառապես կազմել են թուրքերը. Հայերն այդտեղ ունեցել են միայն խանութներ, վորոնց մեջ նրանք ցերեկները առևտուր են արել, իսկ յերեկոները փակել են խանութները և գնացել քաղաք իրենց տները”⁶⁵: Իսպանիայի թագավորի դեսպանության պատվիրակ Անտոնիո դե Գուվեայի հուշագրությունում կարդում ենք. „Երևան քաղաքը հանդիսանում է ամբողջ Մեծ Հայքի կարևորագույն քաղաքը ու մայրաքաղաքը,.... որ ամբողջովին բնակեցված է հայերով.

⁵⁹ Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., էջ 126-128:

⁶⁰ Манандян А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, с. 303-304.

⁶¹ Թուրքական աղբյուրներ, հ. Գ, Էվլիյա Չելեբի, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Սաֆրաստյանի, (ՕԱՀՀՄ, հ. 4), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 120:

⁶² Թովմա Մեծոփեցին XV դարի սկզբին (1416) Երևանն անվանում է գեղաքաղաք: Տես՝ Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, էջ 245, 287:

⁶³ Խաչիկյան Լ., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 287-288, 329:

⁶⁴ Վարդանյան Ս., Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, „Ապոլոն”, 1995, էջ 194:

⁶⁵ Երվանդ Շահազիզ, Հին Երևան, Երևան, 1931, էջ 34:

Հողը մշակելի ու բերրի է և հարուստ ամեն տեսակի մթերքներով”⁶⁶: Ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Բ. Տավերնիեի վկայությամբ ևս „Երևանը բնակեցված է բացառապես հայերով”⁶⁷:

Հետագա դարերում Երևանը կռվախնձոր է դառնում թուրքերի ու պարսիկների միջև: XVI դարի թուրք պատմիչներ Իբրահիմ Փեչևին և Սուլաք Ջադեն Երևանի վրա թուրքերի կատարած արշավանքները նկարագրելիս պատմում են. „Երևան քաղաքը իսկապես Իրան երկրի մարմնի հոգին էր համարվում: Այստեղ, շահի որդու և նշանավոր խաների ու սուլթանների շքեղագարդ, ոսկեզօծ պալատները կրակի մատնվեցին, այգիներն ու պարտեզները հողին հավասարվեցին....”⁶⁸: Պարսիկների կողմից Երևանի պաշարումը նկարագրելիս Անտոնիո դե Գուվեան գրում է. „ Երևանն այդ ժամանակվա ռազմական տեխնիկայի համար բավականին ամրացված քաղաք էր: Ուներ երկու ամրոց: Մեկը՝ Հին բերդը (Կալա-ի ատիկ) և նորը (Կալա-ի ջեդիդ), որ կառուցվել էր 1583 թ. Ֆեր-հադ փաշայի կողմից”⁶⁹:

Ուշ միջնադարում կարևոր նշանակություն ունենալով հանդերձ, Երևանի նյութական մշակույթի վերաբերյալ վկայությունները սակավաթիվ են: Դրանք պատահական գտածոներ են, որ այժմ պահվում են Երևանի պատմության թանգարանում⁷⁰: Այդ տեսանկյունից բացառիկ նշանակություն ունի 2001 թ. Աբովյան փողոցի վրա գտնվող „Երևան” հյուրանոցի դիմացի շենքի նկուղային մասում հայտնաբերված խաչաձև հատակագծով ստորգետնյա կառույցը, որն իր ծավալատարածական հորինվածքով XIII – XIV դդ. բնորոշ մահմեդական դամբարան է: Մուտքի վերնամասում, ներքուստ փորագրված երկլեզվյան արձանագրության համաձայն, կառուցվել է 1319 թ.: Պեղումներով գտնված հախճասալերի հավաքածուն իրանական խոշոր խեցեգործական կենտրոններից մեկի՝ Քաշանի արտադրանք է:

⁶⁶ Զուլայյան Մ., Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, XIII – XVIII դդ, գիրք Ա, քաղաքական պատմություն, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1990, էջ 139:

⁶⁷ Օրբելյան Գ., Երևանի նկարագրությունը ըստ եվրոպացի ճանապարհորդների (17-րդ դ. – 19-րդ դարի I քառորդ), „Երևան” գիտական հոդվածների ժողովածու նվիրված Երևանի պատմության հարցերին, Երևան, 2006, էջ 249: Կարապետյան Մ., Երևանի բնակչության էթնիկական կազմը և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ, ՊԲՀ, Երևան, 1986, N 2, էջ 100-101:

⁶⁸ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ.Ա., կազմեց Ա. Մաֆրաստյան, (ՕԱՀՀՄ, հ. 1), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961, էջ 33: հ. Բ- (ՕԱՀՀՄ, հ. 2), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, էջ 146:

⁶⁹ Զուլայյան Մ., նշվ. աշխ., էջ 139:

⁷⁰ Կատարվող Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի, գիրք 1, կազմ. Ս. Եսայան, Երևան, 1964, էջ 34-35, 39-40:

XIII – XV դդ. քաղաքային մշակույթը որոշակի զարգացում էր ապրում Գառնիում, որը դեռևս IX դարում դարձել էր գյուղաքաղաք և իբրև այդպիսին շարունակեց գոյատևել մինչև XV դարի առաջին քառորդը: Աղբյուրներում Գառնին անվանվում է քաղաքացյուղ կամ գյուղաքաղաք⁷¹: Միքայել Ասորին և արաբ աշխարհագիր Յակուտ ալ-Համավին Գառնին նույնիսկ քաղաք են անվանում⁷²: XIII դարում Գառնին պատկանում էր Վասակ Խաղբակյանին և նրա հաջորդներին, որը վկայված է Արատեսի վանքի գմբեթավոր եկեղեցու արևմտյան պատին փորագրված արձանագրության մեջ. „ՈԿԹ (1220). Ի թագաւորութեան Վրաց Լաշայի և յաշխարհակալութեան Իվանէի Աթաբեկի, ես Վասակ, որդի Խաղբակա, կողմնապահ ի Գառնոյ մինչև ի Բարգուշատ....”⁷³: XIII դարի երկրորդ կեսից մինչև XIV դ. Գառնին Զաքարյանների տիրույթն էր, իսկ արդեն XIV դարի կեսերին անցնում է Օրբելյաններին. „Այս գիր ճշմարիտ յուսոյ յիշատակ հոգո անջնջելի առաջն տեղի Տարսաիճի իշխանաց իշխանի, որդի մեծի Լիպարիտի, եղբայր Սմայատա արքաի, կողմնակալի այսմ նահանգի, որ իշխեցող էի Բարգուշատա մինչ ցԳառնի. սահմանքս մեր Երասխա...”⁷⁴: Լենկ Թեմուրի արշավանքներից հետո Գառնին ավերվում և լքվում է, ինչը փաստում են և պեղումները⁷⁵: XVII դ. սկզբին Շահ Աբասի կողմից իրականացված գաղթը նկարագրելիս Գառնին հիշատակում է որպես գյուղ⁷⁶:

Միջին դարերում, ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի, առևտուր թույլատրվում էր նաև ավաններում, որն, անշուշտ, նպաստում էր և արհեստագործության զարգացմանը: Գառնիում, որն ուներ գյուղաքաղաքի կարգավիճակ⁷⁷, կազմակերպվում է բարձրորակ խեցեղենի արտադրություն⁷⁸: Գառնիի խեցեղենում առկա են XIII – XIV դդ. ներմուծված հախճապակե և ճենապակե անոթներ, ինչը բացակայում է Դվինում: Սա խոսում է Գառնիի դերի բարձրացման և առևտրական աշխույժ հարաբերությունների մասին:

⁷¹ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, էջ 131; Խաչիկյան Լ., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 351; նույնի՝ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450 թթ.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1955, էջ 304:

⁷² Միքայել Ասորի, Ժամանակագրութիւն տեառն Միխայելի Ասորոյ պատրիարքի, Յերուսաղէմ, ի տպարանի Սրբոյ Յակովբեանց, 1871, էջ 520; Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965, էջ 48:

⁷³ ԴՀՎ պրակ III, էջ 123, արձ. 357:

⁷⁴ Նույն տեղում, էջ 149, արձ. 451:

⁷⁵ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., էջ 23:

⁷⁶ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 48:

⁷⁷ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., էջ 5, 99: Առաքելյան Բ., Կարախանյան Գ., Գառնի III, 1946-1956 թթ. պեղումների արդյունքները (Միջին դարեր), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1962, էջ 15:

⁷⁸ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., էջ 63, 76:

XIV դարում որպես գյուղաքաղաք հիշատակվում է նաև Վաղարշապատը (Էջմիածինը)⁷⁹: 1321 թ. վարքաբանական մի գրվածքում Վաղարշապատը հիշատակվում է իբրև քաղաք⁸⁰: Այն քաղաք է անվանվում և 1450 թ. ընդօրինակված ավետարանի հիշատակարանում⁸¹, սակայն ինչպես գրում է Ղ. Ալիշանը, Մայր տաճարի վերականգնման ժամանակ (1441) „Վաղարշապատը հազիվ թե արժանի էր գյուղաքաղաք կոչվելու”⁸²: XV դարի սկզբին Վաղարշապատը թուրքմենական կարա-կոյունլու և ակ-կոյունլու քոչվորական ցեղերի տիրապետության տակ էր: 1441 թ., երբ Հայրապետական աթոռը կրկին հաստատվեց Վաղարշապատում „...Գրիգոր Ժ-րդ Կաթողիկոս Մակունցի Ջալալբեկեանց կոչեցեալ, յաջորդ Կիրակոս Կաթողիկոսի, կգնէ այս գիւղը ի սեպհականութիւն Էջմիածնի՝ Սէյիդ բէկ անուն Պարսիկ իշխանէն....Հիճրեթի 832 թուին, որ է 1454 ամի Փրկչին”⁸³: 1604 թ. Վաղարշապատի բնակչությունը նույնպես գերեվարվում է Շահ Աբասի կողմից. „...շատ սակաւ Մահմետական կրնակէր անդ. յորոց ոմանք ճանապարհորդներէ ողորմութիւն առնելու համար, Կաթողիկէ Եկեղեցւոյ տաճարի մեջ ճրագ կվառէին, որ բովանդակ ամայութեան մէջ էր...”⁸⁴: Վաղարշապատ գյուղը Էջմիածնի վանքից առանձնանում է Սիմեոն կաթողիկոսի օրոք, որն առանձին եկեղեցի է կառուցում „...յանուն սուրբ Աստուածածնի՝ փայտածածկ՝ ի գիւղամիջին... իսկ Վաղարշապատայ բնակիչ ժողովուրդը ... հետզհետէ դարձան ի տարագրութենէ, մանաւանդ երբ որ Մովսէս Կաթողիկոս սկսաւ նորոգել տաճարը և շրջապատ շինութիւնները հիմնել (յամին 1629)”⁸⁵:

Էջմիածին քաղաքի տարածքից պատահական, ապա և վերջին տարիներին Մայր տաճարի շրջակայքում իրականացվող պեղումներով հայտնաբերվում է ուշմիջնադարյան խեցեղեն⁸⁶: Հնարավոր է, որ Վաղարշապատը XIII դարից սկսած ունեցել է խեցեղենի սեփական արտադրություն⁸⁷:

⁷⁹ Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները..., հատ II, էջ 88:

⁸⁰ Նույն տեղում, էջ 97:

⁸¹ Խաչիկյան Լ., ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450 թթ.), էջ 644:

⁸² Ալիշան Ղ., Այրարատ, էջ 178:

⁸³ Վաղարշապատ քաղաքամայր Հայաստանի, հանդերձ աշխարհագրությամբ Արարատեան նահանգի, աշխատասիրեաց Աբել արքեպիսկոպոս, հ. Ա, Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1874, էջ 69:

⁸⁴ Նույն տեղում, էջ 70:

⁸⁵ Նույն տեղում, էջ 72-73:

⁸⁶ Ատենախոսության մեջ օգտագործված են Էջմիածնի Ղազարաշեն հին վեհարանի 2010 թ. և Մայր տաճարի հարևանությամբ՝ Տրդատա կամարից հյուսիս ընկած տարածքի 2014 թ. պեղումներով հայտնաբերված նյութերը, որոնք մեզ սիրով տրամադրել է պ. գ. թ. Ն. Հակոբյանը, ով ղեկավարել է պեղումները: Տես՝

XIII – XV դդ. Վայոց ձորի առևտրա-տնտեսական կյանքում կարևոր դեր է խաղում Եղեգիս գյուղաքաղաքը, որը Օրբելյան իշխանական տան նստոցն էր: X դ. Եղեգիսը կոչվում է գյուղաքաղաք, իսկ XIV – XV դդ. ժամանակակիցներն անվանում են քաղաք⁸⁸, անգամ մայրաքաղաք⁸⁹: Եղեգիսը կամ Եղեգիքը Վայոց ձորի հնագույն բնակավայրերից է: Մինչև IX դարը Եղեգիսի մասին մատենագիտական տեղեկություններ չեն պահպանվել: IX դարի առաջին քառորդում այն դառնում է Սյունիքի Վասակյան տոհմի գահերեց իշխանի նստավայրը⁹⁰: XIII դարի առաջին քառորդում, Սյունիքը սելջուկներից ազատագրելուց հետո, Օրբելյանները Եղեգիսը դարձնում են իրենց վարչական կենտրոնը, որը նրանց տիրապետության շրջանում ծաղկում է ապրում: Այստեղ կառուցվում են վանքեր, եկեղեցիներ և Տառսայիճ Օրբելյանի պալատ-դարպասը: XVI դ. երկրորդ կեսին Եղեգիսը ավերվում է, վերջին վիմագիր արձանագրությունը 1703 թ. է⁹¹:

Եղեգիսի միջնադարյան բնակատեղիում պեղումներ են իրականացվել 2001 թ., որի արդյունքում հայտնաբերված հնագիտական գտածոները (ուղեկցվում է Արդուն խանի (1280 – 1291) մեկ և Աբու-Մայիդի (1317 – 1335) երկու դրամներով) թույլ են տալիս փաստագրել, որ IX – XV դդ. տեղում կազմակերպվել է խեցեղենի արտադրություն՝ բավարարելու տեղական բնակչության պահանջները⁹²:

XIV – XV դդ., ապա և հետագա երկու դարերում հյուսիսային Հայաստանի կարևորագույն կենտրոններից էր Լոռե բերդաքաղաքը⁹³, որը նշանակալից դերակատարություն ուներ Լոռու տարածաշրջանի քաղաքական, տնտեսական կյանքի կազմակերպման գործում: Ի տարբերություն Հայաստանի այլ քաղաքների ու քաղաքատիպ ավանների, Լոռեն եզակիներից է, որ անընդմեջ ապրել է բուռն տնտեսական կյանքով սկսած հիմնադրումից (XI դ. առաջին տասնամյակից) մինչև XVIII դ. կեսերը:

Հակոբյան Ն., Նորաբաց հնագիտական հուշարձան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարածքում, „Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը”, միջ. գիտ. նյութ. Ժող., Երևան, 2012, էջ 138-139:

⁸⁷ Առաքելյան Բ., Կարախանյան Գ., Գառնի III, էջ 90:

⁸⁸ Խաչիկյան Լ., ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 117, 377; նույնի՝ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450 թթ.), էջ 383:

⁸⁹ Խաչիկյան Լ., ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450 թթ.), էջ 42:

⁹⁰ Ալիշան Ղ., Միսական, էջ 146; Ստեփաննոսի Միլենաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Միսական, էջ 145, 189:

⁹¹ Եղիազարյան Հ., Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, Հայպետհրատ, 1955, էջ 57-58:

⁹² Մելքոնյան Հ., Հակոբյան Ն., Եղեգիսի 2001 թ. պեղումները, ՀՀմ XII, Երևան, 2002, էջ 97-102:

⁹³ Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, էջ 42-48:

XI դ. կեսերից Լոռեն հռչակվում է Կյուրիկյան թագավորության մայրաքաղաք (մինչ այդ Սամշուդեն էր)՝ օժտված բնական անառիկությամբ: Այն միաժամանակ ռազմավարական կարևոր հենակետ էր: Գտնվում էր Հայաստանի հարավային շրջաններից դեպի Վրաստան ու Ատրպատական գնացող տարանցիկ ճանապարհի վրա: XII դարի սկզբներին սելջուկներից վերանվաճված Լոռեն որպես կալվածք տրվում է վրաց Օրբելիներին: Ըստ հայ ժամանակագիրների, պատմիչների ու վրացական աղբյուրների, վրաց Գեորգի Գ թագավորի (1156-1184) դեմ բարձրացած Իվանե Օրբելու և Դեմետրեի գլխավորած ապստամբության կենտրոնը դառնում է Լոռե բերդաքաղաքը⁹⁴: Գեորգիի մահից հետո Թամար թագուհին Օրբելիների փոխարեն վրաց ամիրսպասալարի պաշտոնում նշանակում է Սարգիս Ջաքարյանի որդիներից Ջաքարեին՝ նրան հանձնելով նաև Օրբելիների Լոռե տիրույթը⁹⁵: Այսպիսով, մինչ 1261 թ., երբ մոնղոլները սպանում են Շահնշահի որդի Ջաքարեին, Լոռե բերդաքաղաքը ժառանգաբար մնում է Ջաքարյանների ձեռքում, որոնք ձեռնամուխ են լինում լայնածավալ շինարարական աշխատանքների և քաղաքի բարգավաճմանը:

Ջաքարեի դուստր Գոնցայի՝ Տարսայիժ Օրբելյանի որդի Ջալալի հետ ամուսնությամբ⁹⁶ Լոռեն և Ջաքարյան այդ ճյուղին պատկանող հողերը անցնում են այս անգամ հայ Օրբելյաններին, որոնք մինչև XV դարի կեսերը մեկընդմեջ տիրում են Լոռեին⁹⁷: Դրանից հետո, Լոռեն հայտնվում է մեկ ակ-կոյունլուների, մեկ վրացիների, իսկ XVI – XVII դդ. արդեն Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո:

Լոռե բերդաքաղաքի պեղումներն իրականացվել են 1966 – 1974 թթ. (ղեկ.՝ պ.գ.դ. Ի. Ղարիբյան), վերսկսվել 2009 թ. և շարունակվում են առայսօր (ղեկ. Ի. Ղարիբյան, Հ. Սիմոնյան): Լոռեի պեղումները բացառիկ հնարավորություն են ընձեռում հետևելու Հայաստանի պատմական այդ շրջափուլի առևտրա-տնտեսական, արհեստագործական կենսագործունեության առաջընթացի բոլոր փոփոխություններին: Լոռե բերդաքաղաքը Լոռու տարածաշրջանի ոչ միայն վարչական կենտրոնն էր, այլև առևտրատնտեսական կապերը համակարգողը: Մեզ հետաքրքրող թեմայի շրջանակներում պետք է նշենք, որ Լոռեում կազմակերպվել է ժամանակի բարձրակարգ խեցեգործական արտադրություն: Հնագիտական գտածոների հարուստ և բազմատեսակ հավաքածուների ուսումնասիրու-

⁹⁴ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, էջ 282:

⁹⁵ Նույն տեղում, էջ 287:

⁹⁶ Մելքոնեան Յ., Սուրբ Յովհաննու Կարապետի վանքը, Հանդես Ամսօրեայ, Հայագիտական ուսումնաթերթ, Վիեննա, 2003 (ՃԺԷ), թիւ 1-12, էջ 192:

⁹⁷ Թովմա Մեծովեցի, Պատմագրություն, էջ 203-204:

թյունը թույլ է տալիս հետևելու նախորդ ավանդույթների շարունակականությանը, փոփոխությանն ու զարգացման ընթացքին, ինչպես և առանձնացնելու տեղական ու ներմուծած արտադրանքը՝ որոշելով ներմուծման ուղիները: Լոռե բերդի XV – XVII դդ. խեցեղենի, հատկապես հախճապակու ուսումնասիրությունը փաստում է նրա առևտրական կապերի մասին ավելի շատ Արևելյան Վրաստանի, քան Հայաստանի մյուս տարածաշրջանների հետ⁹⁸:

Խեցեգործական արհեստը զարգանում էր Հայաստանի ոչ միայն քաղաքներում ու գյուղաքաղաքներում, այլև ամրոցներում, գյուղական բնակավայրերում ու վանքերում՝ կոչված բավարարելու տեղի բնակչության կարիքները, թեև մրցունակ չէր ներքին և արտաքին շուկայում:

Հայաստանի Միջնաշխարհը՝ Արագածոտնը, XII – XIV դդ. գտնվում էր Զաքարյանների, ապա նրանց վասալ Վաչուտյան տոհմի տիրապետության տակ, որոնց ռազմական ու վարչական կենտրոնը Անբերդն էր⁹⁹: XII – XIII դդ. հայ-վրացական միացյալ զորքերը Անբերդը սելջուկներից ազատագրելուց հետո հանձնում են վերջիններիս, որոնք ձեռնամուխ են լինում ամրոցի ամրացմանը: Աճող ամրոց-բնակավայրը շրջափակվում է նոր, ավելի ընդարձակ պարիսպներով, որոնք իրենց մեջ ներառում են ողջ հրվանդանը: Մոնղոլական արշավանքներից հետո Անբերդը ավերվում է, իսկ Վաչուտյանները ստիպված հեռանում են և իրենց վարչական կենտրոնը հաստատում Վարդենիս գյուղում: XIII դարի վերջերին Վաչուտյաններին հաջողվում է վերադարձնել Անբերդը մինչև Լենկ Թեմուրի արշավանքները: Այդ շրջանում ամրոցն ամփոփվում էր միջնաբերդի և նրան հարող փոքր տարածքի սահմաններում: XVI – XVII դդ., երբ ամրոցն այլևս գոյություն չունեի, նրա փոխարեն տարածվում է սովորական բնակավայր:

Ամրոցում տարբեր ժամանակաշրջաններում կառուցվել են միջնաբերդը, պարբապատերը, Արխաշանի և Անբերդաձորի դարպասները, Կաթողիկե եկեղեցին, մատուռը, բաղնիքը, մեծ ու փոքր ջրամբարները, գաղտնուղիները, բնակելի համալիրներ, ջրա-

⁹⁸ Լոռեի պեղումներով հայտնաբերված XV – XVII դդ. ներմուծած խեցեղենը լիովին համընկնում է Թիֆլիսի միջնաբերդի, Դմանիսիի, Ախալքալաքի, Կարազաջիի, Բաթումիի, Ծալկայի Նարդևանի միջնաբերդի պեղումներով հայտնաբերված չինական, իրանական, թուրքական (վերջինս բացի Լոռե բերդաքաղաքից, Հայաստանի մյուս տարածաշրջաններում առայժմ չի հանդիպում) ներմուծած խեցեղենին: Նշանակում է՝ տվյալ խեցեղենը նույն ճանապարհով ներմուծվել է Արևելյան Վրաստան և Հայաստանի հյուսիսային շրջաններ:

⁹⁹ Հարությունյան Ս., Անբերդ, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1978:

դաց՝ Անբերդաձորում: Ամրոցից դուրս, հյուսիսային կողմում, մոտ 200 մ հեռավորության վրա գտնվում է Անբերդի գերեզմանոցներից մեկը՝ օրորոցաձև տապանաքարերով և XII – XIV դդ. խաչքարերով: Մյուս գերեզմանոցը, որտեղ թաղումներ կատարվել են դեռևս X – XI դդ., գտնվում է Արխաշանի ձորի հակառակ եզրին՝ Բյուրական տանող ճանապարհի ձախ կողմում:

Անբերդի հնագիտական պեղումները սկսվել են 1936 թ. (արշավախմբի ղեկավար՝ Հ. Օրբելի) և շարունակվել 1963-1972 թթ. (ղեկ.՝ Ն. Տոկարսկի, Ս. Հարությունյան): Հայտնաբերված հնագիտական նյութերում մեծաթիվ է խեցեղենը, որը հիմնականում վերաբերում է XII – XV դդ.: Խեցեղեն հավաքածուի ուսումնասիրությունը մատնանշում է տեղում կազմակերպված խեցեգործական արհեստանոցի¹⁰⁰, ինչպես նաև Ոսկե հորդայի, Հուլավյան Իրանի, Մամլուքյան Եգիպտոսի խեցեգործական կենտրոններից ներմուծած անոթների և դրանց ընդօրինակումների առկայությունը¹⁰¹:

Դաշտադեմի ամրոցը կարևոր տեղ է զբաղեցնում Անի քաղաքի պաշտպանական համակարգում: Գտնվելով Արագածոտնի մարզի Դաշտադեմ գյուղում¹⁰² և իշխող դիրք ունենալով Արարատյան դաշտի նկատմամբ, այն Անիի արևելյան մատույցները պաշտպանող ամրություններից մեկն էր, որն ի տարբերություն մյուս բերդ-ամրոցների զուրկ էր բնական անառիկությունից, այդ պատճառով էլ օղակվել էր բարձր պարսպապատով: Ամրոցը հիմնվել է X դարում՝ Բագրատունիների կողմից¹⁰³, ապա XII դարում անցել Շեղադյաններին¹⁰⁴, որոնք քառակուսի շինությունը համալրել են բոլորաձև աշտարակներ-

¹⁰⁰ Պեղումներով հայտնաբերվել են մեծ քանակության խոտանված անոթներ: Ջնարակած խեցեղենի քննությունը ցույց է տալիս, որ Անբերդի ջնարակի վառ երանգավորումը նրա բնորոշ հատկանիշն է: Դա պայմանավորված է տեղական կավի որակական հատկանիշներով, որը թրծվում էր ավելի ցածր ջերմաստիճանում՝ թույլ չտալով ջնարակի ավելորդ այրում: Տես՝ Измайлова Т., Керамика из раскопок Анберда, ТОВЭ, т. 4, Ленинград, 1947, с. 188.

¹⁰¹ Измайлова Т., ук. соч., с. 190-191.

¹⁰² Դա Ներքին Թալինն է, որն 1979 թ. անվանափոխվել է Դաշտադեմի: Տես՝ Մաթևոսյան Կ., Դվին-Անի ճանապարհի Արուճ և Թալին հանգրվանները, *Անի-Շիրակի պատմության էջեր (հոդվածների ժողովածու)*, Երևան, Հեղ. Հրատ., 2010, էջ 247:

¹⁰³ Սկզբնական շրջանում եղել է միայն քառակուսի հատակագծով թաղածածկ շինություն: 2005 թ. Պեղումների արդյունքում պարզվեց, որ ներկայիս քառակուսի շինությունը ևս ամենավաղ կառույցը չէ: V-VII դդ. ուղղանկյուն շինությունը հետագայում ներքուստ և արտաքուստ երեսպատվել է՝ ստանալով ներկայիս տեսքը: Տես՝ Սարգսյան Գ., Դաշտադեմի ամրոցը: Հայ ամրոցաշինական եզակի կառույցի զարգացման փուլերը, „Հայ արվեստ“, 2007, թիվ 3-4, էջ 36:

¹⁰⁴ 1174 թ. վրաց Գեորգի Գ թագավորի կողմից Անին գրավելուց հետո գահի իրավահաջորդ Սուլթան Շաղդադյանը ապաստանում է Դաշտադեմի ամրոցում և նույն թվականի սեպտեմբերին հիմնովին վերանորոգում այն, ինչի վերաբերյալ թողել է արաբերեն արձանագրություն. „Да возвеличит его Аллах! {месяца} сафар пятьсот семидесятого года {сентябрь 1174}. Возведший это укрепление – эмир, великий исфахсалар, ‘Адуд ад-дин, возвеличивающий ислам – Сул{тан} б. Махмуд б. Ша{хур}: Տես՝ Хачатрян А., Корпус арабских надписей Армении, VIII – XVI вв., Ереван, Изд. АН АрмССР, 1987, с. 46.

րով: XII – XIII դդ. ամրոցն անցնում է Ջաքարյաններին, որոնք լայնածավալ վերակառուցումներ են անում միջնաբերդում: Դա է վկայում Իվանե Ջաքարյանի թոռ Աղաուղայի հատվածաբար պահպանված արձանագրությունը¹⁰⁵: Մոնղոլական արշավանքների հետևանքով ամրոցը կործանվում է և վերականգնվում միայն 1812 թ., երբ Երևանի պարսիկ խան Հուսեյինը ձեռնարկում է հսկայածավալ պարիսպապատերի կառուցումը՝ իրենցում ներառելով միջնադարյան ողջ համալիրը¹⁰⁶:

Թեև ընդունված է այն տեսակետը, որ ամրոցը մոնղոլական արշավանքներից հետո կործանվել է, սակայն տարբեր տարիներին իրականացված տարաբնույթ հնագիտական աշխատանքների արդյունքում հայտնաբերված խեցեղենն ունի X – XVI դդ. պատկանելություն¹⁰⁷: Նշանակում է, որ XIII դարից հետո ամրոցը դադարել է պաշտպանական գործառույթ կատարելուց և վերածվել է սովորական բնակավայրի, ինչի մասին վկայում են նաև տնտեսական և բնակելի շինության հետքերը¹⁰⁸:

Պատմական Այրարատ նահանգի Նիգ-Ապարան գավառում է գտնվում Թեղենյաց վանքը, որը միջնադարյան Հայաստանի հոգևոր, մշակութային ու գրչության կարևոր կենտրոններից էր: Այն գտնվում է Բուժական գյուղից 3 կմ հյուսիս՝ անտառածածկ տարածքում: Վանական համալիրը բաղկացած է զույգ որմնամույթերով „գմբեթավոր դահլիճ” տիպին պատկանող Կաթողիկե եկեղեցուց, գավթից, սեղանատնից, գրչատնից և գավթին հյուսիսից հարող կառույցից, հիմնական հուշահամալիրից 30 մ արևելք գտնվող V – VII դդ. քառախորան փոքր եկեղեցուց, համակառույցից հյուսիս գտնվող գերեզմանատնից: Թեղենյաց վանքը գրավոր աղբյուրներում հիշատակվում է դեռևս VIII դ., սակայն վանքի ծաղկուն շրջանը սկսվում է XII – XIII դդ., երբ այն անցնում է Վաչուտյանների հովանավորության տակ: Վանքի համբավը մեծանում է XIII – XIV դդ., երբ այստեղ գործում էր մեծ միաբանություն: Մշակութային հզոր օջախի դերը Թեղենյաց վանքը կորցնում է XIV դարի կեսերին, թեև շարունակում է գործել ընդհուպ մինչև XVII դ., որից

¹⁰⁵ Սարգսյան Գ., Դաշտաղեմի ամրոցը, էջ 35:

¹⁰⁶ Ասատրյան Ե., Դաշտաղեմի ամրոցի 1989 – 1990 թթ. պեղումների արդյունքները, ԴՀԱԱԳՆ 1989-1990, Երևան, 1991, էջ 113-114; Ալեքսանյան Ս., Միրիջանյան Դ., Դաշտաղեմի 2011 թ. պեղումները (նախնական հաղորդում), Էջմիածին, 2012, Ը, էջ 102-106:

¹⁰⁷ Դաշտաղեմի ամրոցի խեցեղեն հավաքածուն մեզ են տրամադրել Ս. Ալեքսանյանը և Դ. Միրիջանյանը 2011 թ. և 2012 թ. պեղումներից, որի համար շնորհակալություն ենք հայտնում:

¹⁰⁸ Սարգսյան Գ., Դաշտաղեմի ամրոցը, էջ 36-37; Augé I. etc, Mission archeologique d’Ani-Pemza. Rapport sur les operations effectuées au cours de la campagne août 2011; Augé I. etc, Rapport sur la campagne de fouilles de la mission française d’Ani-Pemza, août-septembre 2012; Ալեքսանյան Ս., Միրիջանյան Դ., Դաշտաղեմի 2011 թ. պեղումները (նախնական հաղորդում), Էջմիածին, 2012, Ը, էջ 103-104.

հետո վանքը մատենագիտական և վիմագրական աղբյուրներում հիշատակվում է, սակայն ոչ որպես գործող վանք¹⁰⁹:

Թեղենյաց վանքում պեղման աշխատանքներ իրականացվել են 1979 – 1986 թթ. Գ. Սարգսյանի կողմից և որոշ ընդհատումներով շարունակվում են մինչ օրս: Թեղենյաց վանքի պեղումներով հայտնաբերված գտածոները վկայում են վանքի՝ Հայաստանի տարբեր արհեստագործական կենտրոնների հետ ունեցած ակտիվ կապերի մասին: Անջնարակ և ջնարակապատ խեցեղենի, ինչպես նաև արտադրական խոտանի առկայությունը վկայում է տեղում կազմակերպված խեցեղենի արտադրության մասին, որը բավարարել է վանքում գործող մեծ միաբանությանը, գուցե և շրջակա գյուղերի ներքին պահանջմունքները: Տարբեր տարիների պեղումներով հայտնաբերված խեցեղեն հավաքածուն լրացնում է մատենագիտական և վիմագրական աղբյուրներով հավաստված իրողությունը, որ Թեղենյաց վանքը շարունակաբար գործել է ընդհուպ XVII դարը:

Ուշմիջնադարյան մյուս կարևոր հոգևոր ու մշակութային կենտրոնը Արագածոտնում Ուշիի Ս. Սարգիս վանքն է, որն շարունակաբար գործել է V – XVIII դդ. և կործանվել 1827 թ. երկրաշարժից¹¹⁰: 1999 – 2001 թթ. ձեռնարկած պեղումների շնորհիվ (ղեկ.՝ պ. գ. թ. Ֆ. Բաբայան) հողի թանձր շերտի տակից բացվել են վանքի բոլոր կառույցները՝ Ս. Սարգիս եկեղեցի-վկայարանը, Ս. Աստվածածին եկեղեցին, գավիթը, զանգակատունը, արտաքին սրահը, վանական խցերը, հասարակական, բնակելի և տնտեսական շինությունները և պարսպապատը՝ հինգ աշտարակներով, վանքի մուտքերը: Վանքի տարածքից հայտնաբերված խեցեղեն տեսականին հիմնականում վերաբերում է միջնադարի զարգացած և ուշ փուլերին, որի մեջ առանձնանում են ինչպես տեղական օրինակները, որոնց զուգահեռները տեսնում ենք Հայաստանի ուշմիջնադարյան մյուս հուշարձաններից հայտնաբերված խեցեղեն գտածոներում, այնպես էլ ներմուծված նմուշներ, որոնք մեկ անգամ ևս վկայում են այս տարածաշրջանի բանուկ առևտրական ճանապարհների ուրվագծում Ուշիի գրաված կարևոր տեղի մասին:

Միրաքի եկեղեցին գտնվում է պատմական Նիգ-Ապարան գավառում: Գյուղի պատմական անունը հայտնի չէ, Միրաք անունը հիշատակվում է XIX դ. 10-ական թթ.:

¹⁰⁹ Պետրոսյանց Վ., Նիգ-Ապարանի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, „Հայաստան“, 1988, էջ 68-77; Սարգսյան Գ., Թեղենյաց վանքի պեղումները (1979-1989 թթ. պեղումների արդյունքները), ՊԲՀ, Երևան, 1990, N 2, էջ 174-190; Բաբայանյան Ա., Միրիջանյան Դ., Թեղենյաց վանքի խեցեղենը, ՊԲՀ, Երևան, 2013, N 1, էջ 134-150:

¹¹⁰ Բաբայան Ֆ., Ուշիի Սուրբ Սարգիս վանքը, էջ 3; նույնի՝ Ուշիի Ս. Սարգիս վանքից հայտնաբերված հախճապակին, էջ 103-106:

Գյուղի կենտրոնական մասում գտնվում է միանավ բազիլիկ եկեղեցին, որի պեղումներն իրականացրել է հնագետ-վիմագրագետ պ. գ. թ. Գ. Սարգսյանը 2012-2013 թթ.¹¹¹: Եկեղեցին կառուցված է տեղական որձաքարից: Ճարտարապետական հորինվածքից ու հարդարանքի մանրամասներից, ինչպես նաև եկեղեցու պեղման-մաքրման աշխատանքների արդյունքում հայտնաբերված խեցեղենի վաղմիջնադարյան ժամանակաշրջանով թվագրվող խմբից դատելով, կառույցը թվագրվում է IV – V դդ.: Ուշ միջնադարում եկեղեցին ծառայել է տնտեսական նպատակների, որին կցակառուցվել է օժանդակ շինություն: Հայտնաբերված խեցեղեն հավաքածուի երկրորդ խումբը XV – XVII դդ. թվագրվող խոհանոցային ամանեղենն է և մոտ երկու տասնյակ ջնարակած ու ձեռածեփ անջնարակ ճրագները:

Հյուսիսային Հայաստանում XIII – XIV դդ. և հետագա դարաշրջաններում կարևորվում են և միջնադարյան փոքրիկ բնակավայրերը, որոնց ուսումնասիրությունը որոշակի տեղեկություն է հաղորդում ոչ քաղաքային մշակույթի և քաղաք-գյուղ տնտեսական ու մշակութային փոխառնչությունների վերաբերյալ: Առանձնանում են հատկապես Հայկաձորի և Սպիտակի ժայռափոր բնակավայրերը, որոնք գտնվում էին Անիի տնտեսական ու մշակութային ազդեցության շառավղում: Գտածո խեցեղենի վրա նկատելի է Անիի խեցեգործական դպրոցի դրոշմը:

Հայկաձորի միջնադարյան բնակավայրը¹¹² բաղկացած է բնական և արհեստական միահարկ և երկհարկ քարայրային կառույցներից: Դրանք անկանոն հատակագծով համալիրներ են, մշակված ճարտարապետական մանրամասներով՝ սյուներ, կամարներ, գմբեթարդ առաստաղներ, պատերի մեջ խորշեր, պատրիհաններ, բուխարիներ: Գտնված նյութերը թվագրվում են IX – XVII դդ.: XI – XIV դդ. բնակավայրը մտել է Անիի համա-

¹¹¹ Պետրոսյան Գ., Նիգ-Ապարանի պատմաճարտարապետական հուշարձանները, էջ 66; Տեր-Մինասյան Լ., Հնագույն եկեղեցու նոր հայտնությունը, Ճարտարապետություն և շինարարություն, 2013, 12 (94), դեկտեմբեր, էջ 24-27; Sargsyan G., Harutyunyan A., Excavations of the single-nave church of Mirak, 2012-2013, „Aramazd” Armenian journal of Near Eastern studies, vol. IX, issue 1, 2015, p. 177-193.

¹¹² Գտնվում է Անիից 3 կմ հյուսիս՝ մայրաքաղաքի և նրա հյուսիսային դարպասի՝ Հաղթակամարի միջև, ուղիղ Հռոմոսի վանքի դիմաց, Ախուրյանի աջ ափին, ներկայիս Հայկաձոր գյուղի վարչական տարածքում: Տես՝ Եզանյան Լ., Խաչատրյան Հ., Նորահայտ հուշարձանախումբ Հայկաձորում, ՀՀմ XII, Երևան, 2002, էջ 119-122; Խաչատրյան Հ., Եզանյան Լ., Անիի նորահայտ արվարձանի 2003 թ. պեղումները, ՇՀՀԿ ԳԱ VI, Գյումրի, „Գիտություն”, 2003, էջ 134-140; Խաչատրյան Հ., Հայկաձորի քարանձավային բնակավայրի 2005 թ. պեղումները, ՇՀՀԿ ԳԱ IX, Գյումրի, „Գիտություն”, 2006, էջ 76-80; նույնի՝ Հայկաձորի քարանձավային բնակավայրի 2007 թվականի պեղումները, ՇՀՀԿ ԳԱ X, Գյումրի, „Գիտություն”, 2007, էջ 26-31; նույնի՝ Հայկաձորի քարանձավային բնակավայրի 2008 թվականի պեղումները, ՇՀՀԿ ԳԱ XI, Գյումրի, „Գիտություն”, 2008, էջ 167-174; Եզանյան Լ., Ախուրյանի կիրճի Ջրաձոր-Անի հատվածի քարանձավներն ու քարանձավային բնակավայրերը, ՇՀՀԿ ԳԱ X, Գյումրի, „Գիտություն”, 2007, էջ 15-18:

կարգի մեջ և Հոռոմոսի վանքի մասն է կազմել: Պեղումները սկսվել են 2003 թ. և շարունակվում են առայսօր¹¹³:

Սպիտակի ժայռափոր բնակավայրը գտնվում է Փամբակ գետի վերին հոսանքներում, ներկայիս Գեղասար գյուղի տարածքում: Պեղումներն իրականացվել են 1977 – 1979 թթ.: Համալիրը բաղկացած է տարբեր նշանակության կառույցներից (պաշտամունքային, հասարակական, արտադրական և բնակելի), որոնք հիմնականում միահարկ են: Հանդիպում են և երկհարկ ու եռահարկ քարայրներ, որոնք միմյանց հետ հաղորդակցվում են աստիճաններով ու գաղտնուղիներով: Արտադրական և բնակելի հատվածները շատ հաճախ հանդես են գալիս համատեղ: Տեղում խեցեղենի արտադրության մասին վկայում են բացված հորերից մեկում հայտնաբերված կավագնդերը, ինչպես նաև խոտանված ջնարակած անոթների բեկորները: Հայտնաբերված խեցեղեն տեսականին թվագրվում է XIII – XIV դդ. և կատարման ոճով հարում է Անիի խեցեգործական դպրոցին¹¹⁴:

Զարգացած միջնադարում հյուսիսային Հայաստանի հոգևոր, մշակութային և գրչության հայտնի կենտրոններից էր Քոբայրի վանքը, որը հիմնադրվել է Բագրատունյաց տան Կյուրիկյան ճյուղի Կյուրիկե Բ թագավորի դուստր Մարիամի կողմից 1171թ.¹¹⁵: Քոբայրի վանական համալիրի կառույցների ընդարձակումը սկսվում է XII դարի վերջից XIII դարի սկզբին, երբ վանքը Կյուրիկյաններից անցնում է Զաքարյաններին: Այդ ժամանակ են կառուցվում գլխավոր եկեղեցին, մատուռ-ավանդատունը, նրան արևմուտքից կից բաց սրահը, սեղանատունը, զանգակատուն-տապանատունը, մատուռներն ու ամրաշինական կառույցները: XIV – XVI դդ. Քոբայրի վանքի գործունեությանը վերաբերող վկայությունները սակավաթիվ են: Դրանք մի քանի տապանաքարերի հիշատակագրեր են, որոնք հայտնաբերվել են վանքի տարածքում¹¹⁶:

XVII դարում Քոբայրը հիշատակվում է Շմաւոն Աբեղենց Դսեղեցու ընդօրինակած ձեռագրում (Մատ. 1473), արդեն որպես „...յանապատս Քոպայրոյ Բարձրաբերձ

¹¹³ Ատենախոսության մեջ օգտագործված են Հայկաձորի 2007 թ. պեղումներից հայտնաբերված խեցեղենը: Նյութը մեզ տրամադրել է ՇԵԹ տնօրեն և Հայկաձորի հնագիտական արշավախմբի ղեկավար Հ. Խաչատրյանը, որին մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում:

¹¹⁴ Քալանթարյան Ա., Սարգսյան Գ., Սպիտակի վիմափոր բնակավայրը, Գիտություն և տեխնիկա, Երևան, 1980, N 4 (200), Երևան, ՀՍՍՀ պետականի գիտատեխնիկական ինֆորմացիայի և տեխնիկա-տնտեսական հետազոտությունների գիտահետազոտական ինստիտուտ, էջ 21-26:

¹¹⁵ ԴՀՎ, պրակ IX, էջ 352:

¹¹⁶ Մանրամասն տես՝ Միրիջանյան Դ., Բաբաջանյան Ա., Քոբայր վանական համալիրի զանգակատան պեղման աշխատանքների արդյունքները, ՊԲՀ, Երևան, 2014, N 1, էջ 155-163:

Աստուածածինիս, որ է Լօռի”¹¹⁷: XVIII դարի կեսերին, ըստ Վախուշտի արքայազնի տեղեկության, այնտեղ եղել է գործող եկեղեցի, այն էլ միաբնակ դավանության¹¹⁸:

Վերականգնվող զանգակատուն-տապանատան շուրջ 2012 թ. ձեռնարկած պեղման-մաքրման աշխատանքների արդյունքում գտնված վրացերեն արձանագրությամբ նորահայտ տապանաքարերը, ուշ շրջանում զանգակատան հյուսիսային պատին կըցված կառույցը, ինչպես նաև XIII – XVII դդ. խեցեղեն հավաքածուն վկայում են ուշ միջնադարում ևս վանքի գործունեության մասին¹¹⁹:

Հայաստանի հյուսիսում՝ Լոռու մարզում, վերջին տարիներին պեղումներ են իրականացվել Թեղուտ և Շնող գյուղերի հարևանությամբ գտնվող պղնձամոլիբդենի հանքավայրի տարածքում: Գյուղերի տարբեր հանդամասերում հայտնաբերվել են միջնադարյան տարաբնույթ հուշարձաններ (գյուղատեղիներ՝ Դուքանաձորում, Ձորիգեղում, գերեզմանոցներ՝ Բովերում, Ղարաքոթուկում, եկեղեցի՝ Ղարաքոթուկում, մատուռ՝ Բովերում, հնձաններ՝ Ղարաքոթուկում, Բաղերի ճալայում)¹²⁰: Պեղումների արդյունքում հայտնաբերված խեցեղեն հավաքածուն վերաբերում է հիմնականում XIII – XVII դդ.: Այն ձևաբանական հորինվածքով, հարդարատարրերով համադրելի է Հայաստանի մյուս տարածաշրջանների նմանատիպ խեցեղենի հետ, թեև կան օրինակներ, որոնք առավել քան բնորոշ են այս տարածաշրջանին և հազվադեպ են հանդիպում մյուս շրջաններում¹²¹:

Նորատուսի Ս. Աստվածածին եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնում: Կառուցվել է IX դարում Գեղարքունիքի Սահակ իշխանի կողմից¹²²: Եկեղեցին ունի պարսպափակ բակ, ուր պահպանվել են բազմաթիվ խաչքարեր ու տապանաքարեր: 2010 թ. պեղման-մաքրման աշխատանքներ են իրականացվել եկեղեցու շրջակայքում, որոնց արդյունքում

¹¹⁷ Մայր ցուցակ հայերեն Ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Հտ. Դ, Երևան, „Նաիրի” հրատ., ԵՊՀ հրատ., 2008, էջ 1342:

¹¹⁸ Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, ԵՊՀ հրատ., 1977, էջ 166:

¹¹⁹ Միրիջանյան Դ., Բաբաջանյան Ա., նշվ. աշխ., էջ 155-163:

¹²⁰ Հոբոսյան Ս., Թեղուտի 2009-2010 թթ. հնագիտական պեղումների նախնական արդյունքները, ՊԲՀ, Երևան, 2011, N 2, էջ 199-211; Բաբաջանյան Ա., Նորահայտ հոգևոր կառույց Թեղուտում, Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը, Միջ. գիտ. նյութերի ժողովածու, Երևան, 2012, էջ 109-111:

¹²¹ Թեղուտի պեղումներից հայտնաբերված միջնադարյան խեցեղենը մեզ սիրով տրամադրել է Թեղուտի արշավախմբի ղեկավար պ. գ. թ. Ս. Հոբոսյանը, որի համար մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում:

¹²² ԴՀՎ, պրակ IV, էջ 11:

հայտնաբերված խեցեղեն հավաքածուն ներկայացնում է XIII – XV դդ. թվագրվող տեղական խոհանոցային և սեղանի սպասք¹²³:

Այժմյան Հայաստանի հարավային շրջաններում (Վայոց ձոր, Սյունիք) մշակութային կյանքն ավելի բուռն է զարգանում՝ կապված Օրբելյանների ազդեցության ոլորտում գտնվելու հետ: Նրանք մոնղոլական արքունիքի նկատմամբ վարած ճկուն քաղաքականության շնորհիվ աստիճանաբար ընդլայնում են իրենց տիրույթները¹²⁴: XIV դ. սկզբին „...լաւագոյն կացութիւն մը կը տիրէր Սիւնիքի կողմերը, որ Արևելեան հայութեան կեդրոն դարձած էր Օրբելեանց իշխանութեանց ներքեւ”¹²⁵, որը նպաստեց լայնածավալ շինարարությանը: Վայոց ձորում հետագայում էլ պահպանվում է համեմատաբար կայուն վիճակ, որը քիչ թե շատ ապահովում է տնտեսական ու մշակութային բնականոն զարգացում: Այս տարածաշրջանում կարևորվում է Մետաքսի ճանապարհի հյուսիսային մայրուղու ճյուղավորումների բանուկ գործունեությունը նաև ուշ միջնադարում: Այդ առումով առանձնահատուկ նշանակություն ունի Ոստինք գյուղատեղին, որն ընկած էր Դվին-Պարտավ ճանապարհի Արփա-Կոթ գծամասից ոչ հեռու:

Եղեգիս գետի և Ժայռերի միջև գտնվող նեղ ու սահմանափակ տարածության վրա, ուր ժամանակակից Շատին գյուղն է, հնում եղել են երկու գյուղեր՝ Ոստինքը (Շատին գյուղից մոտ 4 կմ հյուսիս) և Անգեղը: Գյուղի մասին Ոստին ձևով հիշատակություն պահպանվել է Ցաղաց քարի արևմտյան հուշարձանախմբի Ս. Հովհաննես եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի վրա. „ԹՎ. :ՈԿ: (1211) ԵՍ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴԻ ՍՄՊԱՏԱ, ՈՍՏՆԻ ՏԵՐ, ԶԵՐԿՈՒ ԴՌՆԻՍ ՏՆԿԵՅԻ ԵՏՈՒ Ի ՍԲ. ՅՈՎԱՆԷՍ. ...”¹²⁶ և Արատեսի վանքի արևմտյան գավթի արևմտյան պատի վերևի մասում, մուտքի կամարից վեր, ներքուստ փորագրված արձանագրության մեջ. „Ի ԹՎ. :ՉԺԹ: (1270) Ի ՏԵՐՈՒԹԵ. ՓԱՌԱԻՈՐ

¹²³ Նորատուսի Ս. Աստվածածին եկեղեցու շրջակայքում պեղման մաքրման աշխատանքներ է իրականացրել պ. գ. թ. Գ. Սարգսյանը, որոնց արդյունքում հայտնաբերված նյութն այժմ պահվում է ՀԱԻ-ում: Նյութը մեզ սիրով տրամադրել է արշավախմբի ղեկավար Գ. Սարգսյանը, որին մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում:

¹²⁴ Ասլան նոյինի հետ կնքած դաշնագրով Ելիկում Օրբելյանը ոչ միայն ավերածություններից փրկեց Սյունիքը, այլև դարձավ „...կողմնակալ այսմ Սյունյաց նահանգի իշխեցեալ ի Բարկուշատայ մինչև ցԳառնի”: Տես՝ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծաւեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, Տպարան Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուայ, 1861, էջ 296; ԴՀՎ պրակ III, էջ 149, արձ. 451:

¹²⁵ Օրմանյան Մ., Ազգապատում, հատ. Բ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2001, էջ 2016:

¹²⁶ ԴՀՎ, պրակ III, էջ 142, արձ. 432:

ԻՇԽԱՆԻՆ ՍՄՊԱՏԱ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԻԻՐՈ ՏԱՐՍԱԻՃԻՆ. ԵՍ ՆՎԱՍՏ ԱԲԵՂԱ ՀԱՅՐԱՊԵՏ ԱՆՈՒՆ, ԱՊԱՍԱԻՈՐ ԲԱՆԻ, ԿՐԿԻՆ ՇԻՆԵՑԻ ԶՎԱՆՔՍ ԵՒ ՆՈՐՈԳԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՔՍ, ՇԻՆԵՑԻ ԶԳԱԻԹՍ ԵՒ ԶԱՅԼ ԻՆՉ ՈՐ ԵՐԵԻԵՆ ԱՇԽԱՏՈՒԹԻ ԵՒ ԶԳՈԶՈՑ ԱՅԳԻՆ ՅՈՍՏԻՆ ԵՒ ԶԹԵՂՈՒՏՆ Ի ՄՃՌԿԱԶՈՐ ԻՄ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՄՔ ԳՆԵՑԻ ԵՒ ՏՎԻ ՍԲ ՍԻՈՆԱ....”¹²⁷:

Ոստինքի մասին ամենավաղ հիշատակությունը վերաբերում է Ավարայրի ճակատամարտից հետո պարսիկների կողմից հետապնդվող Վարդանանց զորքերի մի ջոկատի Վայոց ձորով դեպի Արցախ նահանջին, երբ Անգեղաձորում երկրորդ մարտի ժամանակ պարտված ապստամբներից 300 զինվոր փորձում են փրկվել՝ նահանջելով Արտաբույնք և Ոստինք¹²⁸:

2005 – 2006 թթ. Ոստինք գյուղատեղիում իրականացված պեղումների արդյունքում հայտնաբերված խեցեղենի մանրակրկիտ քննությունը փաստում է, որ այն բնակեցված է եղել XIII – XVIII դդ.: Գտածո հավաքածուում առանձնանում են տեղական անջնարակ և ջնարակած խեցեղենի օրինակներ, ինչպես նաև միջինասիական հախճապակու, չինական սելադոնի նմուշներ¹²⁹: Գտնվելով Դվին-Պարտավ ճանապարհի Արփա-Կոթուղեզի վրա¹³⁰, Ոստինքում հայտնաբերված ներմուծված խեցեղենը տարանցիկ առևտրական հարաբերությունների արտահայտություն է: Հայտնաբերված խեցեղենի մեծաքանակությունը, ինչպես և խոտանված օրինակները վկայում են տեղում կազմակերպված խեցեղենի արտադրության մասին:

Շատիվանքը կամ Շատիկ անապատը գտնվում է ժամանակակից Շատին գյուղից մոտ 4 կմ արևելք, Բարձրաղիբ մի գոգավորության մեջ: Համաձայն Ստեփանոս Օրբելյանի, վանքը հիմնադրվել է Բագրատունի Աբաս Ա թագավորի, Սյունյաց իշխան Սմբատի և նրա եղբայրների ու որդիների տիրապետության շրջանում եպիսկոպոս Հակոբը. „ի թուականութեանն Հայոց 378 (929) երանելի եպիսկոպոսն Սիւնեաց պատահեալ ի տեղի մի յԵղեգեաց ձորի ի վերոյ Ոստին գեղջ...”¹³¹: Շատիկի անապատ անունն առաջին անգամ Վայոց ձորի գրիչների կողմից հիշատակվում է XV դարի վերջին, իսկ վիմագիր

¹²⁷ Նույն տեղում, էջ 124, արձ. 359:

¹²⁸ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, էջ 49-50:

¹²⁹ Ոստինքում իրականացված պեղումների (ղեկ.՝ պ. գ. դ. Ա. Փիլիպոսյանը) արդյունքում հայտնաբերված միջնադարյան խեցեղենը 2011 թ. ցուցադրվել է Երեբունի թանգարանում, այժմ նյութերը տեղափոխվել են Եղեգնաձորի թանգարան: Ոստինքի խեցեղենը դիտարկել ենք իբրև համադրելի նյութ՝ առանց աշխատանքում օգտագործելու:

¹³⁰ Հարությունյան Բ., Դվին – Պարտավ ճանապարհի Sisajan – Gēlakūnī գծամասը, ՊԲՀ, Երևան, 1968, N 1, էջ 214:

¹³¹ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, էջ 188; ԴՀՎ, պրակ III, էջ 155:

արձանագրություններում՝ 1666 թ.¹³²: Ամենայն հավանականությամբ Շատիվանքի անունը կապվում է Վայոց ձորի հոչակավոր մենաստաններից մեկի՝ Վերին Նորավանքի առաջնորդ Շատիկ Միայնակեցու անվան հետ: Շատիվանքը XVII դարում Սյունիքի կրոնական խոշոր կենտրոններից էր, ուներ 70 հոգանոց միաբանություն, դպրոց և գրատուն: Լինելով Սելիմ-Սևանի ափեր տանող բանուկ ճանապարհի վրա, կապված էր Նոր Ջուղայի, Նախիջևանի և Գողթանի վաճառականության հետ: 1671-1674 թթ. Ջուղայեցի գրասեր վաճառական Մահտեսի Հակոբը հիմնովին վերակառուցել է վանքը:

Շատիվանքն ունեցել է կառուցման երկու շրջան՝ X-XIII դդ. և XVI-XVIII դդ.: Վանական համալիրը բաղկացած է Ս. Սիոն եկեղեցուց, մոտ 35 բնակելի և տնտեսական քարաշեն շինություններից, որոնք կառուցված են պարսպի ներսում, նրա ամբողջ երկայնքով: Բոլոր շինություններն երկհարկ են, վերինները ծառայել են իբրև բնակարան և հյուրանոց, ներքինները՝ սեղանատուն, խոհանոց, ամբարներ և այլն: Սենյակների մի մասը շինված են տաշված քարերով և կրաբետոնով (XIII – XIV դդ.), մնացածները՝ անտաշ քարերով (XVII – XVIII դդ.): Վանքի բակում գտնվում են մեծ ջրամբարներ և հացահատիկի հորեր:

Քառակուսի բարձր պարիսպը շարված է լեռնաքարով, թույլ կրաբետոնով: Հարավային կողմում ունի երեք բրգաձև աշտարակ: Սրահաձև դարպասն արևմտյան կողմում է, շարված սրբատաշ քարերով: Դարպասի առջև պահպանվել է, այժմ ցամաքած, ջրմուղի ծորակը:

Երկու բաժանմունքից բաղկացած ավերակված ձիթհանը գտնվում է պարսպից դուրս, արևմտյան կողմում: Ջրաղացի ավերված շենքը հարավարևելյան կողմում է: Պահպանվել է քարերից փորված նավը՝ տրամագիծը վերին մասում 1.5 մ, ստորին մասում՝ 0.5մ: Դրված էր համարյա ուղղաձիգ դիրքով, հավանաբար ջրի սակավության պատճառով՝ անկումն ուժեղացնելու նպատակով:

1983 թ. Շատինի վանքում պեղումներ է իրականացրել երկրաբան Կ. Մկրտչյանը: Մաքրման աշխատանքների և վանքի ավերակների դիտելի մասի չափագրությունների շնորհիվ ի հայտ են եկել նոր տվյալներ վանական համալիրի հիմնադրման, զարգացման ու քայքայման պատմության հանրահայտ պատկերացումներից սկզբունքորեն տարբերվող նոր լուսաբանություններով: Հայտնաբերվել են նոր արձանագիր քարեր (20),

¹³² Խաչիկյան Լ., ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ (1481 – 1500 թթ.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1967, էջ 522; ԴՀՎ, պրակ III, էջ 163, արձ. 494:

որոնք նախկինում հրատարակված վիմագրերի հետ ժամանակագրական հաստատուն նիշեր են վանական համալիրի հիմնադրման և ակտիվ գործունեության (X – XII դդ.), ավերման ու լքման մեծ շրջանի (1330 – 1634), ներկայումս կանգուն բազիլիկ եկեղեցու կառուցման և Շատիկի անապատի վերաշինության ու գործուն տարիների վերաբերյալ (1634 – 1739), որից հետո վանական հաստատությունը քայքայվել է: Ըստ ներկայումս կանգուն բազիլիկ եկեղեցու կառուցման ընթացքում օգտագործված սրբատաշ, արձանագրված, քանդակագարդ քարերի, վանական համալիրում կարելի է ենթադրել երեք առանձին եկեղեցու գոյություն, որոնցից միայն մեկի անունն է հաստատապես վերականգնվում՝ Ս. Գրիգոր (1210 – 1223), համաձայն նոր ընթերցված վերանորոգչական մեծ արձանագրության: Մաքրման աշխատանքների արդյունքում վանքի արևմտակողմի դարավանդում հայտնաբերված երկաթաձուլական խարամների, ջնարակած խեցեղենի բեկորների և դրանց արտադրական խոտանի առկայությունը փաստում է տեղում կազմակերպված խեցեգործական արտադրության մասին, ինչը և հաստատվեց պարսպափակի հյուսիսարևմտյան հատվածում բացված արհեստանոցային երկու շինությունների հայտնաբերմամբ, ուր հատակի մոխրաշերտի կուտակումներում գտնվեցին ջնարակած խեցեղենի ու ապակու խոտանի կտորներ, ինչպես նաև երկաթաձուլական երկու հնոցի մնացորդներ՝ կռելի երկաթի բլիթներով՝ իրենց նախնական տեղում¹³³: Պեղումներով հայտնաբերված նյութերը վերաբերում են XIV-XV դդ.: Ի պահ են տրված ԵԳԹ-ին:

Նորավանքը XIV դարից Սյունիքի հոգևոր թեմի կենտրոնն էր, ինչպես և Օրբելյան իշխանների տոհմական հանգստարանը: Նորավանքը մեծ տնտեսություն ունեցող վանք էր, որին որպես սեփականություն նվիրաբերվում էին բազմաթիվ գյուղեր, ագարակներ, այգիներ, ջրաղացներ, նույնիսկ բերդեր ու վանքեր¹³⁴: Նորավանքի հուշարձանախումբը կառուցվել է XIII – XIV դդ. Սիրանես և Մոմիկ ճարտարապետների կողմից: Բաղկացած է Ս. Կարապետ անվամբ երկու եկեղեցիներից, ժամատնից, Ս. Գրիգոր եկեղեցի-դամբարանից, Բուրթելաշեն Ս. Աստվածածին եկեղեցուց, շրջափակված պարիսպներից, դրանցից դուրս գտնվող մատուռներից, հյուրատնից, ձիթհանից: Նորավանքի Բուրթելա-

¹³³ Մկրտչյան Կ., Հաշվետվություն Շատիկի վանքի տարածքում կատարված փլատակների ու հողալիցքի մաքրման ու հարակից ուսումնասիրությունների, 22.01.1983:

¹³⁴ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, էջ 264-269, 358-360; ԴՀՎ պրակ III, էջ 216, արձ. 685, էջ 223-224, արձ. 709, էջ 242, արձ. 790:

շեն եկեղեցու վերականգնման աշխատանքների կապակցությամբ 1996-1998 թթ. ձեռնարկվել են մաքրման աշխատանքներ եկեղեցու շրջակայքում, որի արդյունքում հավաքված խեցեղեն գտածոները հանձնվել են ԵԳԹ¹³⁵:

Գնդեվանքը Սյունիքի նշանավոր վանքերից է, որ հիմնել է Սյունյաց տիկին Սոփիան, X դարում. „Ես Սոփի տիկնանց տիկին, Դերանկին դուստր, կին Սմբատայ, որդի Աշոտի, շինեցի զեկեղեցիս Մատանի էր անակն, եղեր Սոփի Սիւնեաց տիկին”¹³⁶: Միաբանության շենքերը կառուցվել են հավանաբար XIII – XIV դդ. և վերանորոգվել XVII դարում: 1875 թ. վանքի բակում՝ տնտեսական շենքերի առջև բացված հոր-թաքստոցից հայտնաբերվել են XVII դարով թվագրվող հոգևոր սպասքի զանազան պարագաներ և կավե կարասի մեջ լցված կազմած զրքեր¹³⁷: 1981 թ. ձեռնարկած մաքրման աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է թաքցրած ևս մի կարաս՝ դարձյալ լեցուն եկեղեցական սպասքով և չինական XV դարով թվագրվող ճենապակե փիալաներով¹³⁸:

Ագարակի Ս. Ամենափրկիչ եկեղեցին ուշ միջնադարին բնորոշ՝ ուղղանկյուն հատակագծով, 11x18 մ չափերով, միանավ թաղածածկ սրահ է, որի հորինվածքը հանդիպում է Սյունիքում, իսկ ավարտուն տեսքով՝ միայն Մեղրու տարածաշրջանում¹³⁹: Գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու ենթատարածքի Կուրիս գյուղից մոտ 1,5 կմ դեպի հարավ-արևելք՝ «Ագարակ» հին գյուղատեղիում: Տարածքը համապատասխանում է պատմական Սյունիքի Արևիք գավառին: Պեղման աշխատանքներն իրականացրել է „Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի” արշավախումբը, 2012 թ.¹⁴⁰: Հայտնաբերվել են բազմաթիվ քանդակազարդ ու արձանագիր քարեր, խաչքարեր, մետաղե և խեցեղեն գտածոներ: Խեցեղեն տեսականիում առկա են գունա-

¹³⁵ Գասպարեան Հ., Նորավանքի Ս. Աստուածածին եկեղեցի-դամբարանի յօրինուածքը, ծագումնաբանութիւնը եւ վերականգնումը, Նորավանք հրատարակութիւն նուիրուած Նորավանքի համալիրի Բուրթելաշէն Ս. Աստուածածին եկեղեցու վերանորոգութեան եւ վերընթացման, Ս. Էջմիածին – Մոնթրէալ, 1999, էջ 68-76:

¹³⁶ ԴՀՎ պրակ III, էջ 13, արձ.1, 2:

¹³⁷ Նույն տեղում:

¹³⁸ Մեշիկյան Ա., Գնդեվանքի եկեղեցական հավաքածուն, „Թանգարան” գիտատեսական և մեթոդական հանդես, Երևան, 2009, N 1, էջ 105-112; Ժամկոչյան Ա., Մեշիկյան Ա., Զինական ճենապակու նմուշներ Գնդեվանքից, ՊԲՀ, Երևան, 1996, N 1-2, էջ 382-385:

¹³⁹ Հասրաթյան Մ., Մեղրու շրջանի հուշարձանները, Երևան, „Հայաստան”, 1987, էջ 14-17:

¹⁴⁰ Նալբանդյան Ա., Վարդանյան Խ., Ագարակի Ամենափրկիչ եկեղեցու ուսումնասիրությունը, Հուշարձան տարեգիրք, N 9, Երևան, 2014, էջ 49-66:

գարդ օրինակներ, որոնք բնորոշ են XVII – XVIII դդ. և ի հայտ են գալիս մեծ մասամբ Արցախի հուշարձաններից:

XIII – XIV դդ. հետո խեցեգործության մակարդակի, առևտրա-տնտեսական հարաբերությունների մասին որոշակի պատկերացում են տալիս վերջին տարիներին պեղված երկու քարավանատներից (Սելիմ, Արայի) հայտնաբերված խեցեղեն գտածոները:

Մեզ հասած միակ կանգուն քարավանատունը գտնվում է Սելիմի լեռնանցքում, որը քարավանային կարևոր կանգառ էր Դվինից Պարտավ գնացող երկու հին ճանապարհներից մեկի՝ Գեղարքունիք-Սյունիք գծամասի վրա¹⁴¹: Համաձայն նախասրահի երկլեզվյան (հայերեն և պարսկերեն) արձանագրության, Սելիմի քարավանատունը կառուցել է Չեսար Օրբելյանը 1332 թ. „ՅԱՆՈՒՆ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ՀԶԱԻՐԻՆ ԱՅ Ի ԹՎ ՉԶԱ (1332) ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵ ԲՈՒՍԱԻԴ ՂԱՆԻՆ, ԵՍ ՉԵՍԱՐ, ՈՐԴԻ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆ ԼԻՊԱՐՏԻ ՅԱԶԳԷ ԱԻՐՊԷԼԷՆՑ ԵՒ ԿԵՆԱԿԻՑ ԻՄ ԽՈՐԻՇԱՀ, ՇԻՆԵՑԱՔ ԶՀՈԳԵՏՈՒՆՍ Ի ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳՈՑ ՄԵՐ Ի ԹՎԻՍ ՉԶԱ (1332)“¹⁴²:

2012 թ. հետախուզական պեղումներ են իրականացվել Սելիմի քարավանատան հիմնական մասնաշենքի շուրջ և նախասրահին արևելքից կից թաղածածկ շինության հարավային պատի արտաքին և ներքին կողմերում¹⁴³: Պեղման աշխատանքների արդյունքում հայտնաբերված խեցեղենում գերակշռում է տեղականը, որի զուգահեռները տեսնում ենք Հայաստանի բազմաթիվ հուշարձաններից հայտնաբերված XIII դարի կեսերից XIV դ. դարի վերջը թվագրվող գտածոներում¹⁴⁴:

2011 – 2014 թթ. թ. մասնակի հետախուզական պեղումներ են իրականացվել Արայի քարավանատանը, որը կառուցել է Վաչե Վաչուտյանը 1213 թ. և նրա հարևանությամբ

¹⁴¹ Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, էջ 194-197:

¹⁴² Ալիշան Ղ., Սիսական, էջ 164-165; ԴՀՎ, պրակ III, էջ 177-178, արձ. 545:

¹⁴³ Բաբաջանյան Ա., Զաքյան Ա., Սելիմի քարավանատան պեղումների նախնական արդյունքները, ՎԷՄ համահայկական հանդես, Երևան, 2014, թիվ 4 (48), էջ 125-134:

¹⁴⁴ Պետրոսյան Հ., Գառնին IX-XIV դդ.: Հարությունյան Ս., Անբերդ; Шелковников Б., Китайская керамика из раскопок средневековых городов и поселений Закавказья, СА; Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ.: Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, Բաբաջանյան Ա., Միրիջանյան Դ., Թեղենյաց վանքի խեցեղենը, ՊԲՀ, 2013, էջ 134-150; Բաբաջանյան Ա., Հայաստանի ԺԴ. – ԺԷ. դդ. ջնարակած խեցեղենը, Էջմիածին, 2014, էջ 106-123:

գտնվող Ամբրոյի բնակավայրում¹⁴⁵: Գտնվելով միջնադարյան Դվինից Անի գնացող հին ճանապարհի հետագծի վրա Արայի քարավանատունն ու Ամբրոյի բնակավայրը ներգրավված էին քաղաքների ու գյուղերի միջև իրականացվող առևտրական հարաբերություններում: Քարավանատան ու հարակից բնակավայրի պեղածո առարկաները, այդ թվում և խեցեղենն ամբողջությամբ համապատասխանում են Հայաստանի քաղաքային և Մերձավոր Արևելքի ռեգիոնալ նյութին և թվագրվում է XII – XV դդ., ընդհուպ մինչև XVII դ.¹⁴⁶:

Հայաստանի երբեմնի մայրաքաղաք Արտաշատի պատմական տարածքում 2003 – 2004 թթ. պեղումներ են իրականացվել հարավարևմտյան հատվածում, ուր բացվել են քաղաքացիական կառույցի ավերակներ (հավանաբար քարավանատուն)¹⁴⁷: Տարբեր դարաշրջաններ ընդգրկող հնագիտական նյութի մեջ մեծ տոկոս է կազմում միջնադարյան խեցեղենը, որն իր պատմամշակութային արժեքով կարող է լրացնել Արտաշատի՝ միջնադարի զարգացած և ուշ փուլերում փոքրիկ բնակավայրի վերածվելու և որպես այդպիսին գոյություն ունենալու փաստը:

Թվարկված հուշարձանների պեղումների և պատահական գտածոների շնորհիվ շրջանառության մեջ են մտնում XIV – XVII դդ. խեցեգործական արտադրության վկայություններ, որոնց քննությունը կօգնի առանձնացնել Հայաստանի տարբեր տարածաշրջանների խեցեգործական արտադրանքի ընդհանրություններն ու տարբերությունները:

Հնավայրերը տեղաբաշխված են ՀՀ ողջ տարածքում և նրանց պեղումներով հայտնաբերված խեցեղենի ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի ամբողջացնելու, ճշգրտելու մեր պատկերացումները ՀՀ տարբեր տարածաշրջանների արտադրության տվյալ ոլորտի զարգացման մակարդակն ու առանձնահատկությունները:

Այսպիսով, այժմյան Հայաստանի տարածքը քննարկու ժամանակաշրջանում բաժանված էր ավատատիրական տների ազդեցության գոտիների միջև: Նրանց քաղաքա-

¹⁴⁵ Franklin K. J., A house for trade, a space for politics: Excavations at Arai-Bazarjugh late medieval caravanatun, Armenia, *Anatolica* XL, 2014, p. 1-21. Ամբրոյի բնակավայրում պեղումներն իրականացրել են Ֆ. Բաբայանը, Ք. Ֆրանկլինը, Տ. Վորդերշտրասսը և Ա. Բաբաջանյանը:

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 7-8:

¹⁴⁷ Հակոբյան Ն., Արտաշատը միջին դարերում (ըստ հնագիտական նոր հայտնագործությունների), Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն, (Միջ. գիտ. զեկ. թեզեր), Երևան, 2013, էջ 35-38:

կան դիրքորոշմամբ պայմանավորված, տարբեր տարածաշրջանների տնտեսական, մշակութային կյանքը զարգացման տարբեր մակարդակներով էր առաջ ընթանում: Նյութական մշակույթի, մասնավորապես խեցեղենի ուսումնասիրությունը մասնակիորեն ցույց է տալիս Հայաստանի ընդհանուր իրավիճակը, միաժամանակ վեր հանելով քաղաքական մասնատվածության հետ կապված մշակութային նմանություններն ու տարբերությունները: Ընդհանուր պատկերի հենքում առանձնանում են Վայոց ձոր, Լոռի և Արագածոտն գավառները, որոնց հնագիտական տարբեր հուշարձաններից հայտնաբերված խեցեղենի զարգացումը համընթաց էր Արևելքի տարբեր խեցեգործական կենտրոնների արտադրանքի փոփոխություններին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԵՑԵՂԵՆԻ
ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

XIX-XX դդ. սահմանագլխին որպես օրակարգի առաջնային խնդիր առաջադրվում է հնագիտական աշխատանքների արդյունքում կուտակված նյութական մշակութային արժեքների դասակարգման սկզբունքների մշակում ժամանակակից մեթոդներով: Վերջինս առավել արդիական է խեցեղենի պարագայում, որը պեղումներով հայտնաբերված ոչ միայն ամենազանգվածային նյութն է, այլև տվյալ մշակութային հուշարձանի ճշգրիտ թվագրման բնորոշիչ տարրերից մեկը (դրամներից ու վիմագիր արձանագրություններից հետո): Այդ պատճառով խեցեղենի ուսումնասիրությամբ զբաղվող բազմաթիվ մասնագետներ թե՛ Հայաստանում, թե՛ ողջ աշխարհում փորձել են գտնել դրա դասակարգման սկզբունքները՝ ելնելով տարբեր՝ ժամանակագրական, տեխնոլոգիական, ոճական, հարդարման մոտեցումներից:

Խեցեգործությունը միջնադարյան Հայաստանի բնակչության կենցաղում մշտապես կարևորագույն տեղ է զբաղեցրել: Նրա ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել բնակչության հասարակական-տնտեսական կյանքի մի շարք կողմեր: Քաղաքների աճմանն ու զարգացմանը զուգընթաց խեցեգործությունը կենտրոնանում է քաղաքներում՝ չնայած խեցեգործական արհեստանոցներ են ի հայտ գալիս թե՛ գյուղական բնակավայրերում, թե՛ վանական համալիրներում: Խեցեգործական արտադրանքի տարբեր տեսակների համար քաղաքներում ձևավորվում են հատուկ արհեստավորական թաղամասեր՝ արտադրության կազմակերպման համար նախատեսված անհրաժեշտ միջոցներով: Հայաստանում խեցեգործության տեղական արտադրության մեջ տակավին հնագույն ժամանակներից օգտագործվում էր տեղական կավահանքերի հումքը: Բարձրորակ կարմիր կավատեսակներից մեկը հայտնի էր Արևելքի բոլոր երկրներում որպես „հայկական կավ” (պարսկական ու արաբական գրավոր աղբյուրներում „թին արմանի”), որը կիրառվում էր նաև բժշկական նպատակներով¹⁴⁸: Խեցեգործական

¹⁴⁸ Абу Али Ибн Сина Авиценна. Канон вачебной науки. кн. II, Ташкент, изд. „ФАН” УзССР, 1982, с. 305; Մելքունյան Ա., Հայաստանի քարերի աշխարհում, Երևան, „Սովետական գրող”, 1986, էջ 108:

արտադրանքի ուսումնասիրությամբ վեր են հանվում Հայաստանի բնակչության կենցաղի ոչ միայն հասարակական-տնտեսական կողմերը, այլև հարևան երկրների հետ ունեցած առևտրական ու մշակութային կապերը:

Հայաստանում միջնադարյան խեցեղենի ուսումնասիրության և դասակարգման առաջին փորձը կատարել է Բ. Առաքելյանը իր մնայուն „Քաղաքները և արհեստները Հայաստանում IX – XIII դդ.“ երկհատոր մենագրության առաջին հատորի կավագործությանը նվիրված գլխում¹⁴⁹: Հեղինակը միջնադարյան Հայաստանի խեցեգործությունը բաժանել է չորս հիմնական ճյուղերի՝ հասարակ կամ անջնարակ, ջնարակած խեցեղենի, հախճապակու և շինարարական խեցեղենի (աղյուս, կղմինդր, ջրատար փողրակներ, շքաղյուս) արտադրություն: Թեև դասակարգման այդ մեթոդը տարիների ընթացքում կիրառվել է և այլ գիտնականների կողմից, այնուհանդերձ խեցեղեն արտադրանքի ներքին տեսականու ճյուղային բաժանման սկզբունքում կան որոշակի բացթողումներ: Ինչպես Բ. Առաքելյանը, այնպես էլ խեցեղենի դասակարգմամբ զբաղվող մյուս մասնագետներն իրենց աշխատանքների հիմքում չեն դրել կանոնավոր դասակարգման մեթոդը. մի դեպքում բաժանումը կատարվել է համաձայն տեխնոլոգիական սկզբունքի, մեկ այլ դեպքում ըստ գործածության, չնայած բոլոր դեպքերում խեցեղենի բնութագրումն ամբողջական է, պահպանված չէ միայն դասակարգման փուլերի հաջորդականությունը: Խեցեղենի դասակարգման նույն սկզբունքը տեսնում ենք և Կ. Ղաֆադարյանի „Դվին քաղաքը և նրա պեղումները“ երկհատոր մենագրության խեցեղենի բաժնում¹⁵⁰: Կիրառելով խառը դասակարգման մեթոդը, հեղինակն, առաջին հերթին, ուշադրությունը բևեռել է հարդարման հատկանիշների վրա:

Դասակարգման Բ. Առաքելյանի առաջարկած մեթոդը տեսնում ենք և Ս. Հարությունյանի „Անբերդ“¹⁵¹, Հ. Պետրոսյանի „Գառնին IX – XIV դդ.“¹⁵², Ի. Ղարիբյանի „Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները“¹⁵³ աշխատությունների խեցեղենին նվիրված բաժիններում, որոնք թերևս առավելապես սահմանափակվում են IX – XIV դդ.:

¹⁴⁹ Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները..., հատ. I, էջ 211-256:

¹⁵⁰ Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հատ. I, էջ 182-237:

¹⁵¹ Հարությունյան Ս., Անբերդ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978:

¹⁵² Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., էջ 49-85:

¹⁵³ Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, էջ 175-236:

XIV – XVII դդ. խեցեղենը գիտական հրապարակումներում անհամեմատ սակավ է ներկայացված, ուստի նրա դասակարգման վերաբերյալ խոսք լինել չէր կարող: Այդ ժամանակաշրջանի խեցեղեն առարկաներն առանձին, լավագույն օրինակներով ներկայացված են ուշմիջնադարյան հուշարձանների պեղումներին ու դրանց արդյունքներին վերաբերող ընդհանուր աշխատություններում և հաշվետվական բնույթի հոդվածներում, այն էլ չափազանց թռուցիկ՝ փաստելով միայն դրանց առկայությունը տվյալ հուշարձանում: IX – XIV դդ. միջնադարյան խեցեղենի խմբավորման սկզբունքները բոլոր վերը նշված ուսումնասիրողների մոտ կրկնվում են և կազմում երեք մեծ խումբ՝ հասարակ, ջնարակած և շինարարական խեցեղեն՝ իրենց առանձին ենթախմբերով: Առաջին հերթին հաշվի է առնված զարդանկարման սկզբունքը:

Բազմաբևեռ է Մերձավոր և Միջին Արևելքի խեցեղենի դասակարգման օտար ուսումնասիրողների մոտեցումը: Ամենատարածված մեթոդը ժամանակագրական փուլաբաժանումն է, երբ ստորաբաժանումը կատարվում է ըստ խեցեղենի այս կամ այն տեսակի: Փուլաբաժանման մեթոդում ևս նկատելի է երկու սկզբունք: Առաջինի դեպքում օգտագործվում են մշակութային տերմիններ՝ սասանյան, բյուզանդական, մամլուքյան, մոնղոլական, իլխանական, թեմուրյան և այլն, իսկ երկրորդի դեպքում՝ ուղղակի բաժանում ժամանակագրական ընդգրկումներով՝ IX – X դդ., XI դ., որը յուրօրինակ ցատկահարթակ է նախորդող և հաջորդող փուլերի միջև, XII – XIII դդ., XIV – XV դդ., XVI – XVII դդ.՝ նշելով խեցեգործական առանձին դպրոցներ՝ միջինասիական, սիրիական, եգիպտական, հայկական, Իրանում՝ քաշանյան, Ռեյ քաղաքի, սուլթանաբադյան, Թուրքիայում՝ իզնիկյան, Քյոթահիայի և այլն: Արտասահմանյան գրականության մեջ այս մեթոդը խեցեղենի խմբավորման ամենատարածված եղանակն է (Է. Կվերֆելդտ¹⁵⁴, Ա. Պոպ¹⁵⁵, Ա. Լեյն¹⁵⁶ և այլն): Հայաստանում, համաձայն դասակարգման այդ մեթոդի, գործել են խեցեգործական երկու խոշոր դպրոցներ՝ Դվին և Անի, որոնք համաշխարհային գիտական գրականության մեջ ընդհանուր գծերով բնորոշվում են հայկական, թեև հումքի, որակի, առանձին մանրամասների տարբերակման և նույնիսկ ապրանքա-

¹⁵⁴ Кверфельдт Э., Керамика Ближнего Востока.

¹⁵⁵ Pope A., A survey of Persian art from prehistoric times to the present, vol. 3, Oxford, 1964.

¹⁵⁶ Lane A., Later Islamic pottery.

շրջանառության տեսակետից ունեն որոշակի տարբերություններ: Դվինը սպասարկում էր Հայաստանի հարավային շրջանները, Անին՝ հյուսիսային, որը և տարանցիկ հանգուցակետ էր դեպի Սև և Միջերկրական ծովերի ափերը հասնող ճանապարհների վրա: Մշակութային այդ երկու հզոր օջախների հանդիպման եզրագիծն, ըստ երևույթին, Հայաստանի Միջնաշխարհն էր, որը XIII – XV դդ. Վաչուտյան իշխանական տան տիրույթն էր¹⁵⁷:

Դվինի ու Անիի ասպարեզից դուրս գալուց հետո, դրանց խեցեգործական դպրոցների ստեղծած ավանդույթների հիման վրա տեղական նշանակության գյուղաքաղաքներում ու ավաններում ձևավորվում են նոր խեցեգործական կենտրոններ:

Հայաստանում ժամանակագրական հատվածների բաժանման սկզբունքին հետևել է Ա. Ժամկոչյանն իր „Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ.“ մենագրությունում, որտեղ ըստ ժամանակագրական փուլերի, մանրագին վերլուծության է ենթարկել Հայաստանի հախճապակին՝ առանձնացնելով տեղական և ներմուծած օրինակները: Հեղինակի դասակարգման հիմքը նույնպես զարդահարդարման սկզբունքն է:

Խեցեղենի դասակարգման տարածված մեթոդներից է բաժանումն ըստ տեխնոլոգիական և զարդարման եղանակների, որոնց ուղղությամբ աշխատանքներ են տարել Բ. Շելկովնիկովը¹⁵⁸, Ա. Ժամկոչյանը¹⁵⁹՝ ջնարակած խեցեղենի բնագավառում: Զուտ զարդահարդարման առանձնահատկությունների հիման վրա դասակարգման օրինակ է Ֆ. Զարեի աշխատությունը¹⁶⁰: Առաջնահերթությունը Բ. Շելկովնիկովի մոտ խեցու հումքի ուսումնասիրությունն էր, իսկ Ա. Ժամկոչյանն անդրադարձել է ջնարակած խեցեղենի մի տարատեսակին՝ հախճապակուն, այն էլ ժամանակագրական որոշակի շրջանակներում՝ IX – XIV դդ.:

Ջնարակած խեցեղենի դասակարգման առաջին սկզբունքը բաժանումն է համաձայն խեցու հիմքերի՝ իրենց ենթաբաժանումներով՝ (սովորական՝ կարմիր և դեղնաշի-

¹⁵⁷ Պատմական Նիզ-Ապարան, Արագածոտն գավառների միջնադարյան պեղված հուշարձանների մեր տրամադրության տակ եղած խեցեղեն հավաքածուներում հանդիպում են երկու խեցեգործական կենտրոններից բերված արտադրատեսակներ, ինչպես նաև նկատվում են դրանց բնորոշ կողմերը տեղում արտադրված խեցեղենի հարդարման սկզբունքների մեջ:

¹⁵⁸ Шелковников Б., Художественная керамика двинских раскопок; նույնի՝ Поливная керамика из раскопок города Ани.

¹⁵⁹ Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ.:

¹⁶⁰ Sarre F., Die Keramik von Samarra.

կավուն խեցի, քաշին, կառլին): Ջնարակած խեցեղենի տեսակավորման մեջ առկա է մեկ այլ մոտեցում ևս՝ պայմանավորված ջնարակի բաղադրությամբ, գույնով և որակով:

Հայաստանում խեցեղենի դասակարգման ընդունված և առավել կիրառելի մեթոդը տեխնոլոգիական բաժանումն է, համաձայն որի խեցեղենում առանձնանում են երկու մեծ խումբ՝ հասարակ և ջնարակած խեցեղեն: Մենք, ելնելով տեխնոլոգիական հատկանիշներից (հումքի բաղադրություն, թրծման գործընթաց, հարդարման եղանակներ և մի շարք այլ տարբերություններ) առաջարկում ենք հասարակ խեցեղենն այսուհետ անվանել անջնարակ խեցեղեն՝ ստորաբաժանելով անգարդ և զարդարուն տարատեսակների¹⁶¹: Այդ հարցն առաջին անգամ առաջ է քաշել Բ. Առաքելյանը իր վերոբերյալ աշխատությունում՝ գործածելով անջնարակ խեցեղեն եզրը, թեև հետագա ուսումնասիրողներից շատերը շարունակում են գործածել հասարակ խեցեղեն անվանումը:

Հայաստանում դասակարգման առավել տարածված և արդյունավետ եղանակներից է խառը դասակարգումը՝ ժամանակագրական փուլաբաժանումներում տեխնոլոգիական զարգացումներով: Խառը դասակարգումն ընդունված է նաև արտասահմանյան գիտական աշխատություններում: Նման մեթոդ կիրառել են Ն. Վակտուրսակյան¹⁶², Ա. Յակոբսոնը¹⁶³ և ուրիշներ:

Փորձը ցույց է տալիս, որ խեցեղենի ուսումնասիրության բնագավառում համեմատաբար համակարգված տարբերակ է ժամանակագրական դասակարգումը, որում կարող են ընդգրկվել դասակարգման մյուս բոլոր սկզբունքները: Այդպիսի աշխատանք կատարվել է IX – XIV դդ. խեցեղենը դասակարգելիս, իսկ XIV – XVII դարերը ընդհանրապես չեն ընդգրկվել դասակարգման որևէ սկզբունքային սանդղակում:

Սույն ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է կատարվում դասակարգել XIV – XVII դդ. խեցեղենը: Հարկավ, ներկայացվող աշխատանքը չի հավակնում ամբողջական և անթերի լինելու, քանզի դասակարգման որոշ սկզբունքների կիրառումն առայժմ իրականացնել հնարավոր չէ՝ գտածոների խիստ բեկորային լինելու (ձևաբանական կերտվածքի առումով), երբեմն հստակ շերտագրական միջավայր չունենալու

¹⁶¹ Վերջինս նույնպես տեխնոլոգիական բարդ գործընթացի արդյունքում է ստեղծվում, հատկապես կաղապարակերտ, դրոշմագարդ տարատեսակները, սակայն համախմբվում է հասարակ խեցեղենի հետ՝ ջնարակ չունենալու կարևոր հատկանիշի բացակայության դեպքում:

¹⁶² Вактурская Н., Хронологическая классификация средневековой керамики Хорезма (IX-XVII вв.).

¹⁶³ Якобсон А., Художественная керамика Байлакана (Орен-кала), Труды Азербайджанской (Оренкалинской) археологической экспедиции, т. I, в МИА N 67, Москва- Ленинград, Изд. АН СССР, 1959, с. 228-302.

(ժամանակագրական առումով), թանգարաններից լաբորատորիա տանելու տեխնիկական խոչընդոտների առկայությամբ պայմանավորված քիմիական անալիզների բացակայության պատճառով: Աշխատանքը շահեկան է նրանով, որ խեցեգործական արտադրության զարգացման այս շրջափուլի նյութը մեր կողմից հավաքագրելու, նկարագրելու, այլ երկրների նյութի հետ համեմատության մեջ դնելու միջոցով հնարավոր է դառնում բնութագրել ու ներկայացնել տվյալ ժամանակաշրջանի նյութական մշակույթի ընդհանուր պատկերի մեջ: Նյութական մշակույթի այդ ոլորտի ուսումնասիրությունը և լայն շրջանառությունը կնպաստի Հայաստանի պատմության ու մշակույթի նորովի գնահատմանը:

Մենք հիմնականում հետևել ենք դասակարգման խառը մեթոդին, քանի որ շատ հաճախ դասակարգման միակողմանի սկզբունքը չի տալիս ամբողջական բնութագիր և անհրաժեշտություն է առաջանում կիրառել դասակարգման մյուս սկզբունքները ևս: Մի օրինակի քննությունը որևէ կոնկրետ խմբում անհնար է առանց երկրորդական հատկանիշների ուսումնասիրության: Պետք է նշել նաև, որ աշխատանքում կիրառված խառը դասակարգման որոշ սկզբունքներ մեր կողմից քննարկվող թեմայի ընդհանուր կառուցվածքի համար գործածական են, սակայն ջնարակած և անջնարակ խեցեղենի պարագայում, որոնք կազմում են մեր աշխատանքի հիմնական բաժինները, ցուցաբերել ենք տարբեր մոտեցումներ: Ջնարակած խեցեղենը վերլուծում ենք ժամանակագրական փուլաբաժանման մեջ՝ ելնելով տեխնոլոգիական, նկարագրողման, ներմուծված, թե տեղական լինելու հանգամանքներից, իսկ անջնարակ խեցեղենը հաջորդաբար՝ ըստ կիրառության, ապա տեխնոլոգիական, տեխնիկական, հարդարանքի սկզբունքներով: Հարկ է նշել նաև, որ այլ երկրների ջնարակած խեցեղենի բավականին խոր և համակողմանի ուսումնասիրված լինելու շնորհիվ, որը համեմատական լայն դաշտ է ստեղծում, Հայաստանի ջնարակած խեցեղենը առավել հեշտ է բնութագրել և ենթարկել նեղ փուլաբաժանման, քան անջնարակ խեցեղենը, որն առավելապես տեղական տնայնագործական արտադրություն է, դարերի ընթացքում փոփոխության քիչ է ենթարկվել, ուստի և դժվարացնում է նրա նեղ փուլաբաժանումը: Հուշարձանների շերտագրական-մշակութային միջավայրի բացակայությունը ևս խիստ բարդացնում է այդ աշխատանքը: Չնայած այդ ամենին՝ որոշակի հատկանիշներով հնարավոր է նյութը դասակարգել ժա-

մանակագրորեն (եթե, իհարկե, պահպանված բեկորի վրա առկա է այդ տարբերակիչ հատկանիշը):

Մեր թեմայի շրջանակներում քննարկվող խեցեղենի ժամանակագրական սանդղակն իջեցրել ենք մինչև XIII դարի կեսերը, քանզի անմիջապես այդ շրջանից (որը նաև նոր պատմաշրջանի սկիզբն է) սկսվում է խեցեղենի զարգացման հաջորդ փուլը և հարկ ենք համարում չառանձնացնել կես դարը XIV – XVII դդ. խեցեղենի ընդհանուր բնութագիրը ներկայացնելիս:

Սույն աշխատանքում դասակարգման ընդհանուր սկզբունքներին զուգահեռ կփորձենք առանձնացնել տեղական և ներմուծված խեցեղենը: Իրանական, միջինասիական, չինական, թուրքական խեցեգործական կենտրոնների արտադրանքի նմուշների գյուտերը Հայաստանի միջնադարյան հուշարձաններում փաստում են այդ երկրների հետ առևտրա-տնտեսական ու մշակութային կապերի իրողությունը:

Դասակարգման բնագավառում համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեծաքանակ ու բազմատեսակ նյութեր մշակելիս անհրաժեշտ է դրանք դասակարգել ըստ առաջնահերթ հատկանիշների¹⁶⁴: Առաջին փուլում ուշադրությունը պետք է կենտրոնացվի խեցեղենի արտադրության տեխնոլոգիական կողմի վրա, որն ակնառու է նույնիսկ ամենափոքր բեկորի վրա: Երկրորդ փուլում կարևորվում է հարդարանքը, որն ամենաբնորոշ հատկանիշներից է և հանդես է գալիս բազմահնար տարբերակներով: Ինչ վերաբերում է խեցեղենի կիրառական նշանակությանն ու ձևաբանական կերտվածքին, ապա դրանք նյութի բեկորային լինելու պատճառով հանդես են գալիս ընդհանուր գծերով: Երկրորդական հատկանիշների միջոցով ևս հնարավոր է վերականգնել ներկայացվող բեկորի կիրառական նշանակությունը: Զորօրինակ, մրոտված լինելու պարագան հուշում է, որ այն գործածվել է իբրև խոհանոցային սպասք: Նյութի կիրառական նշանակությունը բացահայտելուն օգնում են նաև ազգագրական ու պատկերազրային աղբյուրները: Ձևաբանական հորինվածքի ամբողջական պատկերը վերականգնելու համար կարևոր են ամբողջական գտածոները, իսկ դրանց բացակայության դեպքում պատկերային վերականգնումն անկատար է: Քանի որ անջնարակ խեցեղենն ավելի քիչ փոփոխությունների է ենթարկվել, քան ջնարակածը, խնդրի լուծմանը ինչ-որ չափով օգնում է նախորդ դարաշրջաններից պահպանված ամբողջական գտածոների համադրումը: Առանձին դեպքերում կարելի է վերհանել կիրառական նշանակության

¹⁶⁴ Коваль В., Керамика Востока на Руси IX – XVII вв., с. 16.

այս կամ այն անոթի ձևաբանական կերտվածքի կրած փոփոխությունները, ինչպես օրինակ, քրեղանների ու թասերի պարագայում, որոնք նմանօրինակ մյուս անոթների համեմատ, զանգվածաբար հայտնաբերվում են Հայաստանի տարբեր շրջանների բազմաբնույթ հուշարձաններում: Փոփոխություններն արձանագրելու պարագայում առավել կարևոր են անոթների ձևաստեղծ հատկանիշները՝ հատակները, շուրթերը թասերի, քրեղանների դեպքում, հավելյալ՝ բռնակները՝ կճուճների, սափորների պարագայում: Ուշագրավ այդպիսի բեկորներից առանձնացրել և դասակարգել ենք բռնակները, կանթերը, հատակներն ու շուրթերը: Ճիշտ է անոթի ամբողջական հորինվածքը դասակարգման սույն մեթոդով լիովին չի բացահայտվում, սակայն ակնհայտ է, օրինակ՝ թե ինչպես են կարասների շուրթերի կրած փոփոխություններն ազդում նրանց ձևաբանական հորինվածքի և ընդհանուր ձևապատկերի վրա:

Դասակարգման սկզբունքների ուրույն տարբերակ է առաջ քաշում Վ. Կովալը „Керамика Востока на Руси IX – XVII вв.” մենագրությունում: Հեղինակը, ելնելով ընդհանուրից մասնավորին անցնելու սկզբունքից, կարևորում է խեցեղենի կիրառության տեխնոլոգիական արտադրության հատկանիշների առաջնահերթությունը՝ գործառույթ - տեխնոլոգիա - հարդարանք - ձևաբանական կերտվածք¹⁶⁵: Կարծում ենք՝ ձևաբանական կերտվածքը առաջնահերթ է հարդարանքից, որովհետև շատ հաճախ ձևն է թելադրում հարդարման այս կամ այն կերպը: Ընդհանուր առմամբ ներկայացված համակարգը ընդունելի և կիրառելի է մեր թեմայի շրջանակներում: Ըստ այդմ էլ, դասակարգման այդ սկզբունքների գործնական կիրառմամբ առաջարկում ենք XIV – XVII դդ. Հայաստանի խեցեղենի դասակարգման հետևյալ սխեման:

Առաջնորդվելով կենցաղային գործածության առաջնահերթությամբ, խեցեղենը բաժանում ենք երեք մեծ խմբի:

Խումբ I - Տեսեսական-կենցաղային նշանակության անոթներ, բաժանվում են երեք ենթախմբի:

Առաջին - մեծ և փոքր չափերի տարաներ, որոնք նախատեսված են չոր և հեղուկ մթերքի պահպանման, ինչպես և տեղափոխման համար:

Երկրորդ - խոհանոցային, խոհանոցային արտադրական և սեղանի սպասք: Վերջինս տեխնոլոգիական սկզբունքով բաժանվում է ջնարակապատ և անջնարակ տեսակների:

Երրորդ - լուսավորության միջոցներ՝ ջնարակած և անջնարակ:

¹⁶⁵ Նույն տեղում:

Խումբ II - Կենցաղային նշանակության այլ իրեր: Բաժանվում է երեք ենթախմբի՝
ա. ծխամորճեր,

բ. զարդարանքի կամ պերճանքի առարկաներ, առավելապես ջնարակապատ,

գ. կենցաղային արտադրական գործիքներ- կաղապարներ, եռոտանիներ և այլն:

Խումբ III – Շինարարական խեցեղեն:

ա. ջրատար փողրակներ՝ անջնարակ և ջնարակած:

բ. ճարտարապետական հարդարանքի դեկորատիվ մանրամասներ, աղյուսե սալիկներ՝ անջնարակ և ջնարակած (շքաղյուսներ):

Դասակարգման հաջորդ փուլը խեցեղենի տարանջատումն է համաձայն տեխնոլոգիական հատկանիշների: Այդ տեսանկյունից խեցեղենը երկճյուղվում է ջնարակած և անջնարակ: Ջնարակը խեցեղենի մակերևույթի ոչ միայն լրացուցիչ մշակումն է (եթե համեմատենք օրինակ անգորպապատ, կարմրաներկ, կարմրափայլ մշակման հետ), այլև տեխնոլոգիական այն հատկանիշը, որով ջնարակած խեցեղենն առանձնանում է անջնարակից:

Ջնարակած խեցանոթներն հայկական ալքիմիական ձեռագրերում կոչվում են սալիկած¹⁶⁶ (սալակի բառից): Բարբառներում հայտնի են նաև շիրա տված, սռագոծ, չինի¹⁶⁷, սարած աման, կանաչիկ անվանումներով¹⁶⁸: Ջնարակած խեցեղենն անցնում է թրծման մի քանի փուլ՝ պայմանավորված խեցու հիմնանյութի հետ, համաձայն որի էլ կատարվում է ջնարակած խեցեղենի ստորաբաժանումը՝ սովորական կավ, հախճապակի, ճենապակի, յուրաքանչյուրն իր անցումային փուլերով ու տարատեսակներով: Կիրառական գործառույթով ջնարակած խեցեղեն օգտագործվում է կենցաղում՝ սեղանի սպասք, շինարարության մեջ՝ դեկորատիվ հարդարանք, սալիկապատման պարագայում: Եթե կիրառական և ձևաբանական կերտվածքի պարագայում ջնարակած խեցեղենը չի տարբերակվում անջնարակից (սեղանի սպասք), ապա որակական հատկանիշներով միանգամայն տարբեր է: Հետագա փուլաբաժանումը կատարվում է արդեն այդ երկու ենթաբաժինների ներսում՝ նկատի ունենալով ձևաբանական, տեխնոլոգիական, զարդապատկերային և այլ ասպեկտները:

¹⁶⁶ Ղաֆադարյան Կ., Ալքիմիան պատմական Հայաստանում, Երևան, Արմֆանի հրատ., 1940, էջ 64, 72, 92:


¹⁶⁷ Ժողովրդական բարբառում ջնարակած խեցեղենի „չինի” անվանումը կապվում է Բրանում չինական խեցեղենին *sini (china)* անվանելու հետ:

¹⁶⁸ Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները..., էջ 230; Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, էջ 221-222: Հ. Աճառյանի ՀԱԲ-ում ջնարակ=սանդարաք, որ է ֆրանս. *sandaraque*: Տես՝ Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. Դ, Երևան, ԵՀ հրատ., 1979, էջ 172:

Ջնարակած խեցեղենի դասակարգումը

Ջնարակած խեցեղենի դասակարգման պարագայում կարևորագույն բնորոշիչ հատկանիշը խեցատի բաղադրությունն է, որով պայմանավորվում է և ջնարակած ծածկույթի բնույթը, մակերեսի մշակման և հարդարման առանձնահատկությունները: Քիմիական, լուսապատկերային (սպեկտրալ) և այլ անալիզների բացակայության պարագայում խեցու որակական հատկանիշները տարբերակում ենք բեկորի կոտրվածքի զուտ տեսողական քննությամբ և այդ բնագավառում եղած գրականության օգտագործմամբ:

Ջնարակած խեցեղենի դասակարգման մյուս բնորոշիչ կողմը ջնարակի բաղադրությամբ պայմանավորված նրա որակական հատկանիշներն են, որոնք թելադրում են տարատեսակ հարդարատարրերի կիրարկումը:



Սխեմա 2. Ջնարակած խեցեղենի դասակարգումը

Զնարակած խեցեղենի հիմքի տեսակերը

Գոյություն ունի ջնարակած խեցեղենի հիմնահողի երեք հիմնական տեսակ.

ա. *սովորական կավ*, որում օժանդակ հավելումների (խճավագ, հրակավ, ծեծած խեցի) առկայությամբ պայմանավորվում է խեցատի որակը, թրծման աստիճանը, գույնը, մշակվածքը (ֆակտուրա): Կավի գույնով պայմանավորված առանձնանում են կարմրախեցի (հայտնաբերված ջնարակած խեցեղենի մեջ զգալի տոկոս է կազմում), ինչպես նաև դեղնավուն, շիկավուն, վարդագույն երանգներով խեցատները: Սովորական կավից պատրաստված և թափանցիկ կամ կիսաթափանցիկ ջնարակով պատած խեցեղենը ենթարկվում է երկպատիկ թրծման՝ ջնարակելուց առաջ և հետո: Թրծումն իրականացվում է 700-850° դեպքում¹⁶⁹:

բ. *քաշին* (իրանական ծագման) կամ *հախճապակի*՝ բարձր կայծքարահողային խեցի: Արևմտյան գրականության մեջ այն կոչում են նաև քվարցային, սիլիկատային նյութ: Ամենագործածական անվանումը ֆայանսն է (faience - իտալական Ֆայենցա քաղաքից: Այս տերմինը XIX – XX դդ. արվեստաբանների ու հնագետների կողմից տարածվեց իրանական քաշինների վրա և դարձավ համընդհանուր): Հախճապակու հիմքում քվարցային ավազի մանրափոշին է՝ ապակու փոշու, սպիտակ կավի, կրաքարի, ֆլյուսի, կենդանական կամ բուսական ծագման սոսնձանյութի պարունակությամբ: Թրծումն իրականացվում է 1000-1200° պայմաններում¹⁷⁰: Հախճապակե հիմքով անոթների թրծումը միապատիկ է: Քաշինի մեջ կայծքարի բաղադրությունը ալկալիական ջնարակի համադրությամբ ավելացնում էր բնականից փխրուն խեցատի կարծրությունը¹⁷¹:

Առաջին հախճապակե առարկաները (ոլունքներ) հայտնի են Եգիպտոսից դեռ նախադինաստիական շրջանից¹⁷²: IX դ. հախճապակե հիմքով ջնարակած անոթներ ամենուրեք հայտնվում են Մերձավոր ու Հեռավոր Արևելքի երկրներում¹⁷³: Հախճապակու

¹⁶⁹ Կապարային ջնարակը սովորաբար հալվում է 720°, ալկալիականը՝ 700-850° դեպքում: Гражданкина Н., Архитектурная керамика Узбекистана (Очерк исторического развития и опыт реставрации), Ташкент, „Фан“, 1968, с. 50.

¹⁷⁰ Гражданкина Н., Древние строительные материалы Туркмении, ТЮТАКЭ, Ашхабад, 1958; նույնի՝ Архитектурная керамика Узбекистана, с. 50; Булатов Н., К вопросу о становлении керамического ремесла в золотоордынских городах, Вестник МГУ. История, 1969, N 2, с. 46.

¹⁷¹ Булатов Н., Классификация кашинной поливной керамики золотоордынских городов, СА, Москва-Ленинград, Изд. „Наука“, 1968, N 4, с. 98.

¹⁷² Лукас А., Материалы и ремесленные производства древнего Египта, Москва, 1958, Изд. иностр. лит., с. 254.

¹⁷³ Сайко Э., Среднеазиатская глазурованная керамика XII – XV вв., с. 21.

լայնածավալ արտադրությունը սկսվում է XII դ.: Ամենահայտնի կենտրոնը Իրանի Քաշան քաղաքն էր, որից էլ մասնագետների ենթադրմամբ առաջացել է հախճապակու քաշին անվանումը: Հախճապակու արտադրությունը XII – XIII դդ. զանգվածաբար տարածվում է ոչ միայն Իրանում, այլև Միջին Ասիայում, Մերձավոր Արևելքում, Հայաստանում: Դվինն ու Անին այդ շրջանում ունեին հախճապակու արտադրության սեփական արհեստանոցներ, որոնք բավարարում էին ոչ միայն տեղական շուկայի պահանջարկը, այլև արտահանվում այլ երկրներ¹⁷⁴: Ցավոք, XIII դ. պատմա-քաղաքական անբարենպաստ պայմաններում Դվինի հախճապակու արտադրությունն ընդհատվում է, սակայն Անիում այն շարունակում է մինչև XIV դ.¹⁷⁵: Հատկանշական է, որ դվինյան հախճապակու մի տարբերակ բնորոշ է միայն այդ կենտրոնին և արտադրության վայրի շառավիղը սահմանափակվում է Հարավային Կովկասի երկրներով: Դրանք փափուկ խեցիով, փիրուզագույն ետնախորքով և վերադիր դիմակներով զարդարված անոթներն են: Այդ խնդրով զբաղվող մասնագետների կարծիքով այդօրինակ գտածոները արտադրվել են Դվինում սկսած XII դարից, ապա ընդօրինակվել Վրաստանում և Գանձակում¹⁷⁶: Դվինյան այդ խեցեղենը արտահանվել է նաև Սև և Միջերկրական ծովերի ափեր:

Մասնագիտական գրականության մեջ հախճապակու հիմքը տրոհվում է կարծրախեցի և փխրախեցի տեսակների: Հանդիպում է նաև „փափուկ” կոչվող խեցին: Հախճապակու տարատեսակների մանրամասն ուսումնասիրությունը կատարել է Ա. Ժամկոչյանը¹⁷⁷, առանձնացնելով ոչ միայն հիմքերը, այլև ժամանակի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները հարդարման առումով:

Կարծրախեցի հախճապակին առանձնանում է բաղադրիչների միաձույլ համադրությամբ և արտաքուստ նման է ճենապակուն: Հիմնականում ունի սպիտակ, հազվա-

¹⁷⁴ Դվինի Կենտրոնական թաղամասի IX դարի շերտերում հայտնաբերվել են ներմուծած և տեղական հախճապակե անոթներ: Տես՝ Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի IX – XIV դդ. հախճապակին, էջ 88-98; Ղաֆադարյան Կ., Քալանթարյան Ա., Դվին II, Դվին քաղաքը և նրա պեղումները (1973-1980 թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ „Գիտություն” հրատ., 2002, էջ 94-95, Kalantaryan A. etc., Armenia in the cultural context of East and West, p. 123-125.

¹⁷⁵ Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., էջ 127:

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 101:

¹⁷⁷ Նույն տեղում:

դեպ վարդագույն երանգ: Կարծրախեցի հախճապակին բնորոշ է XI – XII դդ. իրանական, սիրիական, եգիպտական, ինչպես նաև XVI – XVIII դդ. իրանական խեցեղենին:

„Փափուկ” հախճապակին ևս ունի միաձույլ բաղադրություն, սակայն մակերեսի մշակվածքը (ֆակտուրան) քիչ ծակոտկեն է (պեմզայի նման), որը թույլ է տալիս հեղուկի ներծծում: Խեցին հիմնականում սպիտակ է, սակայն հանդիպում են և դեղին, վարդագույն երանգների:

Փխրախեցի հախճապակին աչքի է ընկնում ծակոտկենությամբ, ավազային մակերեսով: Այն բաղադրիչների ցածր համաձուլման, ավազի կուպիտ մանրացման, թրծման անբավարար ջերմաստիճանի հետևանքով շուտ է կոտրվում: Խեցին լինում է սպիտակ, դեղին, վարդագույն, կարմիր և այլ երանգների: Այդպիսի հախճապակի արտադրվել է XIV դ. Մերձվոլգայի ոսկեհորդյան խեցեգործական կենտրոններում, XIV – XV դդ. Իրանում, Սիրիայում, Միջին Ասիայում: Հայաստանում լայնորեն տարածված էր բաց վարդագույն երանգով փխրախեցի հախճապակին: Տարբեր տարածաշրջանների հախճապակին առանձնանում է ըստ քիմիական բաղադրության: Ոսկե Հորդայի և Իրանի հախճապակին ամենաբարձրորակն է կայծքարահողային հիմքի 90-95% պարունակությամբ, իսկ միջինասիականին բնորոշ է կավի և կրաքարի ավելորդ չափաբաժինը: Խեցու գույնը պայմանավորված չէ տարածաշրջանին բնորոշ կավի որակով: Շատ մասնագետներ հակված են այն կարծիքին, թե խեցու վարդագույն երանգը ստացվում է երկաթի օքսիդի խառնուրդով, թեև այն առկա է թե՛ սպիտակ և թե՛ վարդագույն հախճապակու հիմքում¹⁷⁸: Վարդագույն երանգը մասնագետների մի մասն էլ բացատրում է չափազանց բարձր սիլիկատային հիմքի և քիչ քանակության կավի ու կրաքարի համաձուլվածքով: Երանգների փոփոխությունը փորձել են բացատրել նաև թրծման տարբեր ջերմաստիճաններով: Ցածր ջերմաստիճանի դեպքում (1000°) խեցին ստանում է վարդագույն երանգ, իսկ ավելի բարձր ջերմաստիճանի պարագայում՝ դեղին և սպիտակ: Սակայն առաջարկվող կարծիքներից ոչ մեկը փորձերով ապացուցված չէ:

գ. Ճենապակի միջնադարում արտադրվում էր միայն Չինաստանում, որի պատրաստման գաղտնիքը պահպանվեց մինչև XVIII դ.: Ճենապակու բաղադրության

¹⁷⁸ Վարդագույն երանգը պայմանավորված է հիմնանյութի խառնուրդում երկաթի օքսիդի առկայության տոկոսային հարաբերակցությամբ:

հիմքում բարձրորակ սպիտակ կավն է՝ կաոլինը (ճենակավ): Ճենապակու առանձնահատուկ կողմը տեխնոլոգիական բարդ գործընթացներն են՝ անոթների ձևաբանական հորինվածքները ստացված կաղապարի մեջ սեղմումով, երկպատիկ թրծմամբ: Առաջին փուլում թրծումը կատարվում էր 800°-ում, ջնարակվում և ենթարկվում կրկնակի թրծման՝ ավելի բարձր ջերմաստիճանում: Ճենապակու տարատեսակներից առանձնանում են.

ա. կոբալտային նկարազարդմամբ սպիտակ ճենապակի, որը թրծման արդյունքում դառնում է կիսաթափանցիկ,

բ. միագույն մոխրագույն խեցատով ճենապակի, որը բնորոշ է սելադոններին, Չինաստանի ու Կորեայի խեցեղենի վաղ տիպերին:

Կոբալտով ենթաջնարակային նկարազարդմամբ ճենապակին Չինաստանում հայտնի է Մին դինաստիայի սկզբնական շրջանից¹⁷⁹: Մրցակցելով սելադոնների հետ այն արտահանվող խեցեղենում աստիճանաբար առաջնային տեղ է զբաղեցնում: Սելադոններն, իհարկե, միանգամից չէ, որ դուրս են մղվում և հայտնվում են Հարավային Կովկասում նաև XIV դ.: Դա են փաստում Գառնիի պեղումներով հայտնաբերված XIV դ. սելադոնների բեկորները¹⁸⁰:

Կոբալտով նկարազարդված սպիտակ ճենապակի մեծ քանակության ներմուծվել է Առաջավոր Ասիայի երկրներ: Այն լայնորեն տարածվեց XV դարից և դարձավ գերիշխող խեցեղենի արտադրության մեջ: Այն մեծ ազդեցություն ունեցավ առաջավորասիական խեցեգործական կենտրոնների հախճապակե արտադրանքի վրա, որտեղ սկսեցին ընդօրինակել չինական ճենապակուն բնորոշ կոբալտով նկարազարդումը՝ ոչ միայն չինական խեցարվեստին հատուկ զարդամոտիվների առումով, այլև տեխնիկապես ստանալով ճենապակուն նմանվող հիմք և մակերես¹⁸¹: Արևմուտքում ընդունված է այդ խեցեղենն անվանել „սպիտակ և կապույտ“ („blue and white“, չինարեն՝ 青花 - *qīng-huā*¹⁸²): Միրված զարդապատկերներն են լոտոսի ծաղիկները, թռչնապատկերները, թեփուկավոր զարդը:

¹⁷⁹ Шелковников Б., Китайская керамика из раскопок средневековых городов и поселений Закавказья, с. 376.

¹⁸⁰ Պետրոսյան Հ., Գառնի IX – XIV դդ., էջ 82-84:

¹⁸¹ Шелковников Б., Китайская керамика из раскопок средневековых городов и поселений Закавказья, էջ 377.

¹⁸² http://en.wikipedia.org/wiki/Blue_and_white_porcelain

Բ. Շելկովնիկովի համոզմամբ XV – XVI դդ. նման խեցեղեն Հայաստանում հայտնի չէ, քանզի վերջին պեղումների նյութերը նրան չէին կարող հասնել¹⁸³: Նա այդ փաստը բացատրում է տվյալ ժամանակաշրջանում Դվին ու Անի քաղաքների անկմամբ, սակայն Հայաստանի մյուս հուշարձանների հետագա պեղումներով (Գառնի, Արտաշատ, Լոռե, Ոստինք) արձանագրվում է նման խեցեղենի առկայությունը Հայաստանում: Գնդեվանքից գտնված ճենապակե անոթներից մեկի վրա պահպանված արձանագրությունը մատնանշում է այդ անոթների պատրաստման ժամանակն ու վայրը՝ Շենկ-Հուա կայսեր տիրապետության շրջան (1465-1487), Չինկթեշեն խեցեգործական կենտրոն¹⁸⁴: Հախճապակե հիմքով չինական „սպիտակ և կապույտ“ ճենապակու ընդօրինակումները ռուսական ժամանակակից գրականության մեջ հայտնի են „թեմուրյան խեցեղեն“ անվամբ¹⁸⁵ (XV դ.):

Սելադոնը հախճապակու և ճենապակու միջև միջանկյալ օղակ է: Նրա խեցու կարծրությունը մեկ աստիճանով ցածր է ճենապակուց¹⁸⁶: Խեցու և ջնարակի բաղադրության մեջ երկաթի օքսիդի առկայությամբ պայմանավորված թրծելուց հետո ստացվում է նուրբ կանաչավուն երանգ: Շատ հաճախ սելադոնների մակերեսը ծածկվում էր ճաքերով, որն առանձին շուք էր հաղորդում այդ անոթներին¹⁸⁷: Սելադոններ արտադրվում էին X – XVII դդ. Կորեայում, Չինաստանի հարավային նահանգներում՝ հատկապես Չժեցզյան նահանգի Լունցյուան շրջանում, որտեղից էլ առաջացել է սելադոնների չինական „լունցյուան-յաո“ անվանումը¹⁸⁸, որը տարածվում է և Եվրոպայում: Եվրոպայում սելադոն անվանումը կապված է ֆրանսիացի գրող Օնոֆրե դ' Յուրֆեի (1568-1625) վեպի հերոս հովիվ Սելադոնի անվան հետ, որն իր հագուստը զարդարում էր կանաչավուն ժապավեններով¹⁸⁹: Մերձավոր Արևելքում այդ խեցեղենը հայտնի էր „մարտաբանի“ անվամբ՝ Բիրմայի Մարտաբան նավահանգստի անունից, որտեղից այն ար-

¹⁸³ Шелковников Б., Китайская керамика ..., էջ 377.

¹⁸⁴ Ժամկոչյան Ա., Մեշինյան Ա., Չինական ճենապակու նմուշներ Գնդեվանքից, ՊԲՀ, Երևան, 1996, N 1-2, էջ 383:

¹⁸⁵ Булатов Н., Классификация кашинной поливной керамики золотоордынских городов, с. 102.

¹⁸⁶ Ի սկզբանե սելադոնները ստեղծվեցին Չինաստանում տարածված նեֆրիտից՝ կիսաթափանցիկ կապտականաչավուն քարից պատրաստված սպասքին փոխարինելու համար, որը բավական թանկ արժեք: Այդ պատճառով շատ հաճախ սելադոնե անոթները, որոնք կարծրությամբ և ջնարակի գույնով նմանվում էին նեֆրիտին, կոչվում են նաև „քարե անոթներ“:

¹⁸⁷ Սա ավելի շատ բնորոշ է կապտավուն երանգով սելադոններին:

¹⁸⁸ Шелковников Б., Китайская керамика из раскопок средневековых городов и поселений Закавказья, с. 372.

¹⁸⁹ wikipedia.org/wiki/Селадон.

տահանվում էր այլ երկրներ¹⁹⁰: Արևելքի երկրներում սելադոն ներմուծվել է սկսած X դարից և լայնորեն տարածվել XIII – XIV դդ.: Սելադոններն առանձնանում են մոխրագույն, չափազանց կարծր խեցատով և ծածկվում կանաչավուն տարբեր երանգների (երկնագույնից մինչև մուգ դարչնագույն, գերազանցապես նուրբ կանաչ) թափանցիկ ջնարակով: Քիմիական բաղադրությամբ սելադոնները գրեթե չեն տարբերվում սպիտակ ճենապակուց: X – XIII դդ. սելադոններն առանձնանում ջնարակի երկնագույն երանգով: XIII – XIV դդ. տարածված նուրբ կանաչավուն երանգով սելադոններ շարունակեցին արտադրել և Մին դինաստիայի ժամանակներում՝ XVI – XVII դդ.: Վերջինս բնույթով սպիտակ ճենապակի էր՝ ծածկված „սելադոնային” ջնարակով: XIII – XIV դդ. սելադոնի ներմուծումը Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներ հանգեցրեց մերձավորարևելյան խեցեգործական կենտրոններում տեղական հումքով սելադոնների ընդօրինակմանը: Հայաստանում հայտնի են Իրանի խեցեգործական կենտրոններում արտադրված սելադոնների նմանակումներ:

Սելադոններն ամբողջովին ջնարակապատվում էին, բացառությամբ ըմպանակների օղակաձև նստուկների ներքին շրջանակների, որոնք թրծման ժամանակ կարմիր կամ շագանակագույն երանգ էին ստանում՝ շնորհիվ կավի հումքի մեջ երկաթի պարունակության, որը բարձր ջերմաստիճանի դեպքում հալվում էր ու ներկում խեցատը:

Ջնարակի տեսակները

Ջնարակը որակական հատկանիշներով տարբերակվում է թափանցիկ և անթափանց՝ իրենց տարատեսակներով: Ջնարակի որակական հատկանիշն առաջին հերթին պայմանավորվում է ջնարակի բաղադրությամբ, ըստ որի ջնարակները տրոհվում են՝ կապարային և ալկալիական, սակայն թե՛ մեկի, թե՛ մյուսի մեջ պարունակվում է հալադիր բաղադրիչը, տոկոսային ավելի փոքր հարաբերակցությամբ: Ջնարակի անթափանցիկությունը կախված է անագի օքսիդի (SnO_2) պարունակությունից: Անագի օքսիդի քանակի (0.3 - 5 %) փոփոխությամբ ստացվում է կիսաթափանցիկ ջնարակը¹⁹¹:

Ջնարակի որակական հատկանիշները թելադրում են հարդարման այս կամ այն կերպի կիրարկումը: Օրինակ՝ անթափանց ջնարակի պարագայում լայնորեն կիրառ-

¹⁹⁰ Коваль В., Керамика Востока на Руси IX – XVII вв., с. 134.

¹⁹¹ Булатов Н., Классификация кашинной поливной керамики золотоордынских городов, СА, Москва-Ленинград, Изд. „Наука”, 1968, N 4, с. 97.

վում է վերջնարակային նկարագարումը, փորագրագարդն ու անգոբի հեռացման տեխնիկան, ինչպես և ջնարակի ներքին բազմագունությունը: Թափանցիկ ջնարակի հետ հիանալի համադրվում է ենթաջնարակային նկարագարումը:

Այսպիսով, խեցատի և ջնարակի բաղադրության տարբեր որակների համադրմամբ միջնադարյան արևելյան խեցեգործական կենտրոններում ստացել են ջնարակած խեցեղենի հինգ տիպեր՝ մայուիկա՝ սովորական կարմրախեցի հիմք (անթափանց ջնարակով), կիսամայուիկա (թափանցիկ ջնարակով), հախճապակի (անթափանց կամ կիսաթափանց ջնարակով), կիսահախճապակի (թափանցիկ ջնարակով), ճենապակի (անթափանց և թափանցիկ ջնարակով): Պետք է նշել, որ ջնարակի բաղադրության քիմիական անալիզների բացակայության պայմաններում, միայն տեսողական վերլուծությամբ դժվար է առանձնացնել միջանկյալ ենթատիպերը (կիսահախճապակի, կիսամայուիկա, որոնք առանձնանում են ջնարակի որակով), այդ իսկ պատճառով մեր թեմայի շրջանակներում բաժանումները կատարել ենք խեցու հիմքով՝ սովորական կավ, հախճապակի, ճենապակի:

Թեև ջնարակած խեցեղենը դասակարգման մեր աղյուսակում երկրորդ փուլն է ըստ տեխնոլոգիական հատկանիշների, սակայն հարդարման տեսանկյունից այն առանձին փուլ է, քանզի ինքնին հարդարանքի տարր է: Հետևաբար հարդարման մյուս տարրերը (փորագրագարդ, հարթաքանդակ, նկարագարում և այլն) քննարկվում են իբրև զարդարման լրացուցիչ միջոցներ, որոնք կարող են լինել կամ չլինել տվյալ անոթի կերտվածքում: Հարդարման տարրերով պայմանավորված ջնարակած խեցեղենը բաժանվում է չորս ենթախմբի՝

- ա. ենթաջնարակային նկարագարում,
- բ. վերջնարակային նկարագարում,
- գ. ջնարակի ներքին բազմագունությամբ հարդարում,
- դ. առանց լրացուցիչ հարդարման խեցեղեն:

Հարդարման նշված եղանակները վերաբերում են ջնարակած խեցեղենի երեք հիմնական տիպերին՝ սովորական կավ, հախճապակի, ճենապակի: Շատ հաճախ ջնա-

րակի ներքին բազմագունությունը համադրվում է ենթաջնարակային կամ վերջնարակային նկարազարդման հետ:

Հարդարման լրացուցիչ տարրերի կիրառման տեխնոլոգիական հատկանիշներից ելնելով դրանք բաժանվում են.

ա. փորագրություն (sgraffito ware) անմիջապես խեցու կամ անգորփի վրա,

բ. նկարազարդում անգորփով, ներկերով, արծնապակիով,

գ. ռելիեֆ (champlevé կամ elaborate incised ware) - անգորփի հեռացում, սեղմում կամ ճնշում, վերադիր զարդեր,

դ. ցանցկեն կամ լուսաթափանց (grain de riz)

Նույն անոթի վրա շատ հաճախ կարելի է տեսնել տեխնիկական տարբեր միջոցների համատեղում:

Ջնարակած խեցեղենի բաժանման հաջորդ փուլը կազմում են ենթախմբերը, որոնք տարաբաժանվում են ջնարակի գույնով: Գունային լուծումները պայմանավորված են որոշ մետաղական օքսիդների և դրանց խառնուրդների համադրմամբ:

Ջնարակի բաղադրությունը

Ջնարակի բաղադրությունը մշտապես եղել է խեցեղենն ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Դեռ XIX դ. կեսերին լուսապատկերային անալիզների արդյունքում պարզվել է, որ արևելյան խեցեղենի ջնարակի հիմքում սկսած XI դ. գերակա է դառնում կալաքարը, որի ստացման տեխնոլոգիան մոտ էր Առաջավոր և Միջին Արևելքի երկրների ավալիական ապակու ստացման տեխնոլոգիային: Ջնարակի քիմիական բաղադրության վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ են կատարել Ն. Բուլատովը¹⁹², Է. Սայկոն¹⁹³: Ջնարակի բաղադրության հիմքում կայծքա-րահողի օքսիդն է (SiO_2), որից ստանում էին ջնարակի բովախառնուրդի կարևորագույն բաղադրիչը՝ քվարցային ավազը: Այն կազմում էր ընդհանուր զանգվածի 45-84%-ը: Հաջորդ բաղադրիչները նատրիումի կամ կալիումի ($\text{Na}_2\text{O}/\text{K}_2\text{O}$ – 6-20%, միջինը՝ 10%), կալցիումի և մագնեզիումի (CaO/MgO - 4-8%) օքսիդներն են, ինչպես և անագի օքսիդը

¹⁹² Булатов Н., К вопросу о становлении керамического ремесла в золотоордынских городах, с. 45-49; նույնի՝ Классификация кашинной поливной керамики золотоордынских городов, с. 95-109.

¹⁹³ Сайко Э., Среднеазиатская глазурованная керамика XII – XV вв.

(SnO_2 - 2.5-14%), որի առկայությամբ պայմանավորված էր ջնարակի անթափանցիկությունը: Բացառիկ դեպքերում է, թերևս, որ անագի օքսիդի առկայությունը չի ազդում ջնարակի թափանցիկության վրա: Առաջին հերթին, դրանք փիրուզագույն ջնարակներն են, որոնց բաղադրության մեջ առկա պղնձի օքսիդի ազդեցությունը բացառում է ջնարակի թափանցիկությունը: Անագի օքսիդի բավականին մեծ չափաբաժինը չի ազդել XVI – XVII դդ. թուրքական հախճապակու ջնարակի թափանցիկության վրա շնորհիվ կապարի մեծ քանակության: Կապարի օքսիդը (PbO) առկա է թե՛ կապարային, թե՛ ալկալիական ջնարակներում, վերջինում տատանվելով 6-34% սահմաններում: Կապարի օքսիդի մեծ չափաբաժինը ալկալիական ջնարակներում առավել քան բնորոշ է սիրիական խեցեգործությանը XII – XIII դդ.: Կապարի օքսիդի մեծ քանակություն ալկալիական ջնարակներում արձանագրվել է նաև թուրքական XVI – XVII դդ. հախճապակու բաղադրության մեջ: Ջնարակի օժանդակ բաղադրիչներից են և ալյումինի (Al_2O_3 – 0.3-3.5%), տիտանի (TiO_2 – 0.1-0.2%) օքսիդները, որոնք ջնարակը պղտոր են դարձնում: Ջնարակի ստացման գործընթացում երանգավորման համար իբրև ներկանյութ օգտագործվում էին տարատեսակ մետաղական օքսիդներ՝ պղնձի (CuO - սև, Cu_2O - կարմրա-շագանակագույն), կոբալտի (CoO – մուգ կանաչ, Co_2O_3 – սև), մանգանի օքսիդները (MnO – կանաչ, 1780 °C, Mn_3O_4 – շագանակագույն, 1590 °C, Mn_2O_3 – մուգ շագանակագույն, 940 °C, MnO_2 – մուգ դարչնագույն, Mn_2O_7 – մուգ կանաչ, 5,9 °C): Մուգ կանաչ գույնը ստացվում էր նաև քրոմի օքսիդի միջոցով (Cr_2O_3):

Կապարային ջնարակների հիմնական բովախառնուրդը կապարի (PbO – 50-70%) և կայծքարի (SiO_2) օքսիդներն էին՝ հազվադեպ մագնեզիումի (MgO) և կալցիումի (CaO) օքսիդների խառնուրդով: Հիմնական ներկանյութերը կապարային ջնարակի համար պղնձի (CuO – կանաչ), երկաթի (Fe_2O_3 - դեղնա-շագանակագույն) օքսիդներն են:

Ջնարակի գույները

- Անգույն թափանցիկ ջնարակ, որը տարբեր բաղադրիչներով պայմանավորված ունի բաց կանաչավուն, դեղնավուն, երկնագույն երանգներ,
- կաթնագույն անթափանց ջնարակ՝ 1:4 հարաբերությամբ անագի և կապարի օքսիդների խառնուրդից,

- կանաչ (բաց կանաչա-դեղնավունից մինչև ձիթապտղի ու զմրուխտի գույն)՝ 1-6% պղնձի կամ 1-5% քրոմի օքսիդներով: Բաց կանաչավուն երանգը ստացվում էր երկնագույն և դեղին ջնարակների խառնուրդից կամ դրանց շերտերի հաջորդական համադրումից:

- դեղին – 1-3% երկաթի օքսիդով կամ այլ բաղադրիչների խառնուրդից (2-3% սուրմայի օքսիդ, 1-2% մանգանի լեռնային տեսակի օքսիդ), ինչպես նաև երկաթի և քրոմի օքսիդների խառնուրդից,

- շագանակագույն՝ 6-8% երկաթի կամ 6-8% մանգանի օքսիդներով: Կարմրա-շագանակագույն երանգը ստացվում էր երկաթի և ալյումինի օքսիդների միացությունից,

- մանուշակագույն (վարդագույնից մինչև մուգ մանուշակագույն), ստացվում է մանգանի օքսիդով,

- կապույտ - կոբալտի օքսիդով,

- փիրուզագույն (կապտականաչավուն, երկնագույն) - պղնձի օքսիդով: Կանաչավուն երանգները պայմանավորվում են երկաթի կամ կապարի օքսիդի քիչ պարունակությամբ:

Հայաստանի միջնադարյան հուշարձաններից հայտնաբերված ջնարակած խեցեղենի ջնարակի բաղադրության լուսապատկերային անալիզների արդյունքներն ամփոփված են „Armenia in the cultural context of East and West. Ceramics and glass (4-14th cc.)” գրքի համապատասխան բաժնում¹⁹⁴:

Անջնարակ խեցեղենի դասակարգումը

Անջնարակ խեցեղենի դասակարգման համար կիրառվում է ավելի պարզ սխեմա:

ա. չի պահանջում թրծման մի քանի փուլ, իսկ խեցու հիմքը մեկն է՝ սովորական կավը:

բ. առաջնայինը ձևաբանական կերտվածքն է և գործառական նշանակությունը, որով պայմանավորվում են և ձևաբանական հորինվածքի տարբերակներն ու հարդարանքը:

գ. ըստ հարդարման, առանձնանում են հասարակ՝ առանց լրացուցիչ հարդարման և զարդարուն ենթախմբերը:

¹⁹⁴ Kalantaryan A. etc., Armenia in the cultural context of East and West. Ceramics and glass (4-14th cc.), pp. 33-38.

Անջնարակ զարդարուն խեցեղենում տարբերակվում են.

ա. մակերեսի լրացուցիչ մշակում (անգոբապատում, կարմրաներկում, փայլեցում),

բ. հարդարման տարբեր միջոցների կիրառում (փորագրություն, սեղմում, կաղապար, նկարազարդում, դրոշմազարդում, դրվագազարդում, վերադիր զարդեր և այլն) խեցեղեն:

Դասակարգման հաջորդ փուլը վերադարձն է մասնավոր հատկանիշներին՝ հարդարանքի տարրեր, ոճական առանձնահատկություններ, որոնցով կարելի է բնորոշել նաև տարածաշրջանային առանձնահատկությունները, որոնք վերաբերում են կոնկրետ ռեգիոնի, քաղաքի և նույնիսկ արհեստանոցի: Այդ փուլը և նրա առանձին ենթատեսակներն հաջորդիվ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱՆՋՆԱՐԱԿ՝ ԱՆՋԱՐԴ ԵՎ
ԶԱՐԴԱՐՈՒՆ ԽԵՑԵՂԵՆ

Ուշմիջնադարյան նյութական մշակույթի ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունի խեցեգործական արտադրանքը, որը հնագիտական պեղումներով հայտնաբերված ամենագանգվածային ու տարաբնույթ նյութն է: Այն թեև մեզ է հասել հիմնականում բեկորային վիճակում, սակայն հնարավորություն է ընձեռում ոչ միայն հետևել արտադրության այդ տեսակի զարգացմանը, այլև տեղական արտադրության ծավալին: Նրա համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս լուսաբանել միջնադարյան Հայաստանի բնակչության առօրյա կենցաղի, հասարակական, տնտեսական կյանքի մի շարք հարցադրումներ, ինչպես նաև վեր հանել նրա և հարևան երկրների միջև գոյություն ունեցող առևտրական, տնտեսական ու մշակութային կապերը:

Խեցեգործական արհեստը Հայաստանում հայտնի է տակավին վաղնջական ժամանակներից, սակայն միջնադարում (սկսած IX դարից)՝ պայմանավորված տեխնոլոգիական առաջընթացով, արտադրողական ուժերի քաղաքներում կենտրոնանալու գործընթացով, այն արդեն բնորոշվում է իբրև քաղաքային մշակույթ՝ չբացառելով գյուղական բնակավայրերում ու վանական համալիրներին կից գործատներում խեցեգործական արտադրության կազմակերպումը: Հետևելով քաղաքային արտադրանքի կազմակերպման ողջ գործընթացին, տեղական պահանջները բավարարելու նպատակով շարունակում են արտադրել սովորական կավից արհեստագործական, ինչպես նաև տնայնագործական առօրյա գործածական սպասք: Ուշմիջնադարյան Հայաստանում քաղաքների ու քաղաքային մշակույթի անկման պայմաններում գերակա է դառնում տեղական պահանջմունքների բավարարմանը կոչված անջնարակ հասարակ խեցեղենը, որը հնագիտական պեղումներով հայտնաբերված գտածո-հավաքածուներում ամենամեծաքանակն է:

Խեցեգործական արտադրանքը ներառում էր տնտեսական-կենցաղային կարիքները բավարարող ամենաբազմազան առարկաներ, ինչպես նաև արտադրական նշանակության գործիքներ ու հարմարանքներ: Այն լայնորեն կիրառվում էր շինարարության մեջ թե՛ կառուցողական առումով, թե՛ շենքերի ներքին ու արտաքին հարդարանքում:

Խեցեգործական արհեստի կազմակերպման առաջնային նախապայմաններից էր հումքը՝ բնական կավը, որը մշակման բարդ գործընթաց էր պահանջում: Կավը ճկունությամբ, սահունությամբ, թրծվելուց հետո ամրությամբ, հրակայունությամբ, հիմքի փոփոխությամբ օժտված հանքանյութ է, որի քիմիական բաղադրության մեջ մտնում են կայծքարի (SiO_2), տիտանի (TiO_2), ալյումինի (Al_2O_3), երկաթի եռավալենտ (Fe_2O_3), երկաթի երկվալենտ (FeO), մանգանի (MnO), մագնեզիումի (MgO), կալցիումի (CaO), կալիումի (K_2O), նատրիումի (Na_2O) օքսիդներ, ինչպես նաև բյուրեղացված ջուր¹⁹⁵: Կավի բնորոշ հատկանիշներն են գույնի փոփոխությունը թրծելուց առաջ և հետո, խեցու ծակոտկենությունը՝ չորանալուց և թրծվելուց հետո, գծային չափերի փոփոխությունը: Տարբերակվում են դյուրահալ (մինչև 1350°), որից պատրաստվում է շինարարական և խոհանոցային սովորական խեցեղենը և ուշ հալվող կավատեսակներ (1350° բարձր), որոնցից առանձնանում է ճենապակու արտադրության մեջ գործածվող կաուլինը (սպիտակ կավ):

Հայաստանը հարուստ է տարբեր կավատեսակների հանքերով, որոնք ապահովել են ներքին շուկայի պահանջարկը: Կավահանքերը գրավում են ոչ մեծ մակերես՝ մակերեսով 0.1 - 0.5 մ խորությամբ, իսկ շերտի հզորությունը տատանվում է 1.5 – 6 մ միջև¹⁹⁶: Գործածում էին տարբեր երանգավորումներով կավատեսակներ՝ կարմրավուն, դեղին, մոխրագույն, սպիտակ, որոնք տարբերվում են նաև որակապես: Ուշմիջնադարյան ժամանակաշրջանում առավել գործածականը կարմրավուն կավն է՝ ավազի մեծ խառնուրդով¹⁹⁷: Մանրահատիկ կավն օգտագործվում էր սեղանի նրբագեղ սպասք պատրաստելու համար, նաև ծխամորճերի արտադրության մեջ: Միջնադարյան ալքիմիական ձեռագրերում կավն անվանվում է „հող բրտոց” - „Այլ անօթք և նիւթք պատրաստական թոնց լիցի ի կարմիր կամ սպիտակ հողոյ բրտոց....”¹⁹⁸: Հայաստանյան կավատեսակները հայտնի էին և Մերձավոր Արևելքի երկրներում: Արաբական ու պարսկական աղբյուրնե-

¹⁹⁵ Геология Армянской ССР, том 7, Неметаллические полезные ископаемые, Ереван, Изд. АН АрмССР, 1966, с. 90:

¹⁹⁶ Հայաստանում դյուրահալ կավի հանքերը հանդիպում են ամենուրեք, իսկ բարձր հրակայուն կավատեսակների հանքերը տեղակայված են Ալավերդու շրջանում և Սևանա լճի հյուսիս-արևելյան ափերին: Տես՝ Геология Армянской ССР, том 7, с. 91-134, 308-329:

¹⁹⁷ Թոնիրներ պատրաստելու համար կիրառվում էր կարմիր կավի մի տեսակ, որը Տարոնում, Մուշում, Վասպուրականում անվանում էին „կաղճին”: Տես՝ Մելքունյան Ա., Հայաստանի քարերի աշխարհում, էջ 107:

¹⁹⁸ Ղաֆադարյան Կ., Ալքիմիան պատմական Հայաստանում, էջ 63:

րում այն կոչվել է „թին արմանի“՝ „հայկավ“: Իբն Սինայի աշխատություններում „հայկավը“ հիշատակվում է որպես բժշկության մեջ կիրառվող նյութ¹⁹⁹:

Խեցեգործության մեջ բնական կավը մշակելուց հետո կարևորը թրծման գործընթացն է, որից մեծապես կախված է պատրաստի արտադրանքի որակը: Թրծման գործընթացն այնքան կարևոր էր խեցեղենի արտադրության բնագավառում, որ Մխիթար Գոշի Դատաստանագրքում հատուկ տուգանք էր նշանակված թրծող բրուտի համար վատորակ անոթի և դրանից բխող վնասների հատուցման դեպքում - „Իսկ կարաս վաճառեալ և գնեալ հաստատեսցի, յորժամ լցեալ ողջ զարկեալն պահիցէ յինքն զգինին: Ապա թէ կարծիք բեկման ի թրծմանէ իցէ, և զգինին կորուսցէ, միմիայն զկարասն գործողն առնու, այլ և զկէս վնասուն տուժեսցի: Ապա թէ անկարծիս իցէ ի բեկմանէ, և ի թաղելն եղև կարծիսն, անտոյժ լիցի վաճառողն: Այլ եթէ յարդմանէ երկբայեսցի, զամանն միայն վաճառողն տուժեսցի: Այդ ըստ այդմ լիցի ի փոքունսն և ի մեծամեծսն”²⁰⁰:

Հայաստանում տարածված էր թրծման հնոցների ուղղահայաց տարբերակը, բացառյալ Դվինի միջնաբերդում՝ բլրի գագաթին բացված հնոցի, որը հորիզոնական հորինվածքով է²⁰¹: Ուղղահայաց հնոցները եղել են երկհարկ և ունեցել են զմբեթաձև ծածկ՝ ծխնելույզի անցքով²⁰²: Ջանգվածային արտադրության պարագայում թրծման վառարանները տեղակայվում էին քաղաքի առանձին արհեստավորական թաղամասերում՝ սպասարկելով մի քանի բրուտի: Բնակելի թաղամասերում կառուցվում էին փոքր չափերի թրծման վառարաններ, որտեղ թրծում էին փոքր տարողության անոթներ: Սովորական թոնիրները ևս բրուտ-տնայնագործի համար երբեմն ծառայում էին իբրև խոհանոցային հնոց-վառարան²⁰³:

Ուշմիջնադարյան ուղղահայաց հնոց-վառարան բացվել է 2012 թ. Օձուն գյուղում՝ այգեգործական աշխատանքների ժամանակ²⁰⁴: Այն գլանաձև կավակերտ կառույց է՝

¹⁹⁹ Абу Али Ибн Сина. Авиценна. Канон вачебной науки. кн. II, с. 305.

²⁰⁰ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Խ. Թորոսյանի աշխատասիրությամբ, Երևան, ՀՍՍՀ, 1975, էջ 339:

²⁰¹ Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հատ. I, էջ 236-237:

²⁰² Якобсон А., Керамика и керамическое производство средневековой Таврикии, Ленинград, Изд. „Наука“, 1979, рис. 30.

²⁰³ Բաբայան Ֆ., Խեցեղենի թրծման հնոց Դվինից, ՊԲՀ, Երևան, 1979, N 1, էջ 275-280:

²⁰⁴ ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Թեղուտի հնագիտական արշավախմբի մի ջոկատ (Ա. Բաբաջանյան, Գ. Փրվեյան) 2012 թ. հուլիսի 11-15-ը, հետախուզական պեղումներ կատարեց Լոռու մարզի Օձուն գյուղի տարածքում, եկեղեցուց մոտ 0,5 կմ հարավ՝ գյուղի բնակիչ Ասպրամ Հակոբյանի տնամերձ հողամասում, որտեղ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ բացվել էր գետնափոր կավակերտ կառույցի վերին հատվածը: Ցավոք, այդ աշխատանքների ժամանակ շինությունը ենթարկվել էր մասնակի ավերածության:

պահպանված 2 հատակներով: Պատերը վառ աղյուսագույն են (հաստ. 30 սմ)՝ պատած շիկավուն կավե սվաղով (աղ. 1, նկ. 1):

Պեղումներից առաջ կառույցի վերին հատվածն ավերված լինելու պատճառով ծածկի կառուցվածքը հնարավոր չեղավ վերականգնել: Շինության պահպանված բարձրությունը 2.85 մ է, իսկ տրամագիծը՝ 2.10 մ, որը դեպի վեր նեղանում է՝ հասնելով 1.4 մ: Շինության երկրորդ հատակի պարագծով (տրամագիծը՝ 1.75 մ, հաստությունը՝ 0.4 մ) տեղադրված են 25 սմ տրամագծով 6 անցքեր, որոնք գտնվում են միմյանցից մոտավորապես 0.6 մ հեռավորության վրա²⁰⁵: Այդ անցքերում ամրացվում էին թրծվող ամանեղենը պահող ձողերը: Թրծման ավարտից հետո անցքերը փակվել են կավե խցաններով²⁰⁶: Երկրորդ հատակի միջին տրամագիծը 1.75 մ է, իսկ հաստությունը՝ 0.4 մ: Առաջին և երկրորդ հատակների միջև գտնվում էր վառարանի սլաքաձև բացվածքը (աղ. 1, նկ. 2): Արտաքուստ՝ բացվածքի երկու կողմերում, պահպանված էր բազալտե քարերի ուղղահայաց դասավորված շար, տարբեր չափերի փողրակների բազմաթիվ բեկորներ (աղ. 17, նկ. 8): Հնոցում հայտնաբերվել են մեծ քանակության ուշմիջնադարյան խեցատներ, որոնք որպես լիցք օգտագործվել են պատերի և հատակների մեջ: Հետաքրքրական է, որ այդ բեկորների մի մասը թրծված չէր՝ գրեթե հում վիճակում:

Ինչպես նշեցինք աշխատանքի II գլխում մեր տրամադրության տակ եղած ուշմիջնադարյան խեցեղենն ըստ տեխնոլոգիական հատկանիշների բաժանել ենք երկու մեծ ժողովածուների (կորպուսների)՝ անջնարակ և ջնարակած: Սույն գլխում ներկայացվող անջնարակ խեցեղենը հնագիտական պեղումներով հայտնաբերված մեծաքանակ գտածոներից է: Անջնարակ խեցեղենն առավել քան արժանի է ուշադրության, քանզի շեշտում է տեղական խեցեգործական արտադրության զարգացման մակարդակն ու ընդգրկման ծավալները: Ըստ կիրառության, անջնարակ խեցեղենը բաժանվում է տնտեսական-կենցաղային և շինարարական մեծ խմբերի՝ իրենց ստորաբաժանումներով, որոնցում ընդգրկված տեսականիներում առանձնանում են անզարդ և զարդարուն օրինակները:

Տնտեսական-կենցաղային խեցեղենը բաժանվում է երեք ենթախմբի:

Առաջին ենթախումբը մեծ և փոքր չափերի այն անոթներն են, որոնք նախատեսված են չոր և հեղուկ մթերքի պահպանման, ինչպես և տեղափոխման համար: Դրանք գործառնական լայն նշանակության տարատեսակ կարասներ, ծափեր, ամֆորաներ, միջին

²⁰⁵ Գանձ գտնելու մտայնությամբ շինության երկրորդ հատակը նույնպես անխղճորեն ավերվել է:

²⁰⁶ Կավե բազմաթիվ ջարդոնների մեջ պահպանվել է խցանի մի բեկոր:

և խոշոր չափերի սափորատիպ անոթներն են: Չոր և հեղուկ մթերքի տեղափոխման և երկար պահպանման համար նախատեսված կարասներն ունեն երկու կանթ, կլոր կամ հարթ հատակ, բերանի նեղ բացվածք²⁰⁷: Նմանատիպ անոթի մեզ հայտնի միակ օրինակը հայտնաբերվել է Թեղուտից (Զնդանք), որի գուգահեռները տեսնում ենք միջնադարյան Խերսոնեսի խեցեղեն գտածոներում²⁰⁸ (աղ. 1, նկ. 4):

Չոր և հեղուկ մթերքի տեղում պահպանելու համար նախատեսված տարաներն (pithoi) ունեն հաստ պատեր, բերանի լայն բացվածք, սրացող հատակ, բավական ծանր են և խոշորաչափ: Դրանք կիսով չափ թաղվել են հողի մեջ: Հիմնական գործառույթը գինի խմորելն ու պահելն էր²⁰⁹, սակայն գործածվում էին նաև հացահատիկ պահելու համար: Միջնադարյան Հայաստանում չոր մթերք պահպանելու համար բացի խոշոր կարասներից գործածել են թոնիրները, որոնց մեծ քանակությունը XIII – XIV դդ. պեղված բնակարանային համալիրների միևնույն սենյակներում ենթադրել է տալիս այդ գործառույթի մասին²¹⁰:

Հանդիպում են և նրբիրան, բավականին լավ թրծած կարասներ, որոնք տեղադրվել են մատաններում կամ ամբարներում:

Հայաստանում գործածական էր կարասների մի տեսակ ևս, որը նախատեսված էր հանդիսությունների ժամանակ գինի մատուցելու համար: Վերջիններս, ի տարբերություն նախորդ երկու տեսակների, փոքր են, ունեն չափազանց ուռուցիկ փոր և կարճ վիզ: Բերանի բացվածքը լայն է, ունեն հավելյալ 4 կամ 6 ձևավոր կանթ և ներկված են հաճելի կարմիր գույնով (աղ. 1, նկ. 3):

Կարասներն ունեն մեկ այլ գործառույթ ևս: Տեղադրվելով շինությունների ծածկերի տակ՝ շաղախի մեջ, առաջացնում էին դատարկ տարածություն՝ թեթևացնելով թաղի վրա ընկնող ծանրությունն ու ապահովելով ձայնի հնչեղությունը:

Կարասները պատրաստում էին հիմնականում կարմիր կավից՝ ավազի, կրի, հարդի որոշակի խառնուրդով: Խեցին մեծ մասամբ ծակոտկեն է, որը հուշում է երկաթի պարունակության մասին:

²⁰⁷ Հայտնի են ամֆորա (amphorae) անվամբ:

²⁰⁸ Якобсон А., Средневековый Херсонес (XII – XIV вв.), МИА N 17, Москва-Ленинград, Изд. АН СССР, 1950, с. 102, рис. 50.

²⁰⁹ Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX – XIII դդ., հատ. I, էջ 219:

²¹⁰ Նույն տեղում, էջ 220:

Գինու խմորման համար նախատեսված կարասներն ունեն երկարաձիգ իրան, նեղ բերան և կիսով չափ թաղվել են հողի մեջ: Դրանք անգորգապատվում էին՝ անոթին ավելի հաճելի տեսք հաղորդելու և հեղուկ նյութի արտահոսքը կանխելու համար: Գետնի մեջ թաղվող կարասների վերնամասը հաճախ ներկվում էր կարմիր գույնով և, ի տարբերություն XII – XIII դդ. օրինակների, ուշ շրջանի կարասներն ունեն մուգ կարմրավուն երանգ: Այդպիսին է Թեղենյաց վանքի սեղանատան 2008 թ. պեղումներից հայտնաբերված խոշորաչափ, կարմրաներկ կարասի բեկորը՝ զարդարված վերադիր ելնդավոր խաչվող գոտիներով (XIV – XV դդ.): Բեկորն ունի բավական կոպիտ մշակում, ներքուստ նկատելի են կավե ժապավենների միացման տեղերը, որոնք համաչափ չեն հարթեցվել (աղ. 28, նկ. 5)²¹¹:

Ուշմիջնադարյան հուշարձաններից հայտնաբերված կարասները ձևաբանական կերտվածքով ժամանակագրորեն բաժանվում են XIII – XIV դդ., որոնք շարունակում են նախորդ դարաշրջանին բնորոշ ձևաբանական հորինվածքները և XV – XVII դդ.: Առհասարակ, XV – XVII դդ. կարասների ձևաբանական հորինվածքը վերականգնելը բավականին դժվար է, քանզի հնագիտական պեղումներով հայտնաբերված կարասները բեկորային են, իսկ պահպանված իրանների ու շրթնամասերի հատվածները հնարավորություն չեն տալիս ամբողջացնելու կարասների ձևաբանական հորինվածքը: XII – XIII դդ. տարածված կարասները ձևաբանական երկու տեսակներով՝ 1- քիչ երկարաձգված, նեղ նստուկով, ընդգծված վզով, ոչ շատ լայն բերանով և 2- սեղանին դրվող կարմրափայլ, բազմականթ, հարթ նստուկով, դրոշմազարդ գոտիով, որոնք շարունակում են գործածական լինել հետագա դարերում:

XIII – XIV դդ. սկսած կարասները թեն ձևաբանական հորինվածքում էական փոփոխություններ չեն կրում, սակայն դառնում են ավելի զանգվածեղ՝ հատկապես շուրթերի պսակները, որոնք արտաքուստ հարդարված են վերադիր մատնեքազարդ, ալիքազարդ կամ աստամնազարդ գոտիներով (աղ. 1, նկ. 5-8, 10, աղ. 28, նկ. 4, աղ. 36, նկ. 4): Այդ շրջանի հուշարձաններում հայտնաբերված կարասների շրթնամասերի քննությունը հնարավորություն է ընձեռում արձանագրել, որ նրանց պսակներն ունեն բավականին լայն, տափակ ժապավենաձև, կիսակլոր հորինվածքներ՝ արտաքուստ շեշտված, երբեմն

²¹¹ Բաբաջանյան Ա., Միրիջանյան Դ., Թեղենյաց վանքի խեցեղենը, ՊԲՀ, Երևան, 2013, N 1, էջ 137, աղ. I, նկ. 4:

եզերված երկշերտ գոգավոր գոտիով (աղ. 1, նկ. 7-12, աղ. 28, նկ. 1-4): Նմանօրինակ կարասների վզերը գրեթե ընդգծված չեն: Կարասների միակ հարդարանքը վերադիր ժապավենաձև, ելնդավոր կամ փորագիր ուղիղ ձգվող կամ ալիքավոր գոտիներն են, որոնք շրջանակել են իրանի վերին հատվածը:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի դրոշմագարդ կարմրափայլ կարասները, որոնք հանդես են գալիս երկու տարբերակով: Առաջինները համեմատաբար մեծ են (տարողությունը՝ 80-100 լ), նման պահեստներում տեղադրվող, տնտեսական նպատակների ծառայող կարասներին: Ունեն ավելի երկարավուն ձգված իրան, բերանի նեղ բացվածք և փոքր տրամագծով նստուկ²¹²: Երկրորդ տարբերակը լայնափոր, լայնաբերան, ցածրադիր, հարթ նստուկով և կանթավոր կարասներն են: Այդ կարասների շուրթերը դեպի դուրս լայնանում են, պսակի ստորին մասում հանդիպում են ռելիեֆ ատամնավոր կամ սեպաձև խորաքանդակ զարդեր: Երբեմն ձևավորվում են նաև այս կարասների կանթերը (2-6), որոնք հաճախ լրացվում են պարուրաձև հավելումներով: Այս կարասները գործածվել են հանդիսությունների ժամանակ, որպես սեղանի սպասք²¹³:

Զծանրանալով դրոշմագարդ կարասների թվագրության հետ կապված ուսումնասիրողների առաջ քաշած տարբեր վարկածների մեկնաբանությունների վրա²¹⁴, նշենք միայն, որ վերջին տարիների ուշմիջնադարյան հուշարձանների պեղումներով հայտնաբերվում են դրոշմագարդ գոտիով կարասների բեկորներ՝ XIV – XV դդ. մշակութային շերտերում: Բ. Առաքելյանը ևս նշում է, որ այդ կարասների գործածությունը պետք չէ սահմանափակել XIII դարով, քանզի դրանք ավելի երկարատև կյանք են ունեցել²¹⁵: Պահպանելով հիմնական ձևն ու հարդարման մոտեցումները, դրանք XIV դ. որոշակի փոփոխություններ են կրում և գեղարվեստական մշակումներով զիջում նախորդ դարաշրջանում տարածված օրինակներին:

²¹² Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հատ. I, նկ. 166, 167:

²¹³ Նույն տեղում, նկ. 168, 169:

²¹⁴ Чубинов Г., Декоративное убранство Анийских карасов, ХВ, том V, выпуск 1, Перербург, 1916, с. 22-39; Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հատ. I, էջ 197; Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX – XIII դդ., հատ. I, էջ 227; Караханян Г., Неполиванная орнаментированная керамика из раскопок Двина и Ани, Автореферат, Ереван, 1954, с. 6-8; Шелковников Б., Керамика и стекло из раскопок Двина, ТГИМ, Ереван, Изд. АН АрмССР, 1952, N 4, с. 26.

²¹⁵ Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում..., հատ. I, էջ 227:

Դրոշմագարդ կարմրափայլ կարասների բեկորներ հայտնաբերվել են Հայաստանի բոլոր միջնադարյան հուշարձանների պեղումներով (Դվին²¹⁶, Անի²¹⁷, Անբերդ²¹⁸, Գառնի²¹⁹, Լոռե²²⁰, Արմավիր²²¹, Մեծամոր²²², Խամշի վանք²²³, Գլաձորի վանք²²⁴, Մարմաշեն, Կումայրի, Հայկաձոր²²⁵): Այդ շարքը լրացնում են վերջին տասնամյակում միջնադարյան տարբեր հուշարձանների պեղումներով հայտնաբերված գտածոները (աղ. 18, նկ. 5, 6, աղ. 27, նկ. 6, 7): Նմանօրինակ կարասներ հայտնի են և հարևան երկրների միջնադարյան հուշարձանների պեղումներով²²⁶:

Դրոշմագարդ գոտիները (լայնությունը՝ 3-5 սմ) շրջանակել են կարասների ամենալայն հատվածները՝ երկու կողմից եզրափակվելով զուգահեռ ուռուցիկ շրջագծերով: Հարդարվել են կենդանիների, մասնավորապես այծերի, եղնիկների, գայլերի, առյուծների, թռչունների, ուղտերի, երբեմն էլ մարդկային, բուսական ու երկրաչափական պատկերներով: Զարդանկարները ստացվում էին գլանաձև դրոշմիչն անոթի թաց մակերեսին գլորելու միջոցով: Հարդարման նման կերպը տարածված էր և մերձավորարևելյան ու միջինասիական խեցեգործական կենտրոններում²²⁷: Հարկ է նշել, որ Անիի պեղումներով գտնված դրոշմագարդ կարասները ներկված են ամբողջությամբ, իսկ Դվինում դրոշմա-

²¹⁶ Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 186-194, նկ. 166-171; Шелковников Б., Керамика и стекло из раскопок Двина, с.26; Двин IV, Город Двин и его раскопки, таб. XXXI, с. 75, 112-113:

²¹⁷ Чубинов Г., Декоративное убранство Анийских карасов, с. 22-39.

²¹⁸ Հարությունյան Ս., Անբերդ, էջ 97-99; նույնի՝ Անբերդի 1963 թվի պեղումները, Էջմիածին, 1966, է. էջ 40; Измайлова Т., Керамика из раскопок в Анберде, с. 192.

²¹⁹ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., էջ 53-58; Առաքելյան Բ., Կարախանյան Գ., Գառնի III, էջ 79-86, նկ. 31-33; Բաբայան Ֆ., Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարդաձևերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 34-40:

²²⁰ Ղարիբյան Բ., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, էջ 181-182, աղ. XLII:

²²¹ Kalantaryan A. etc., նշվ. աշխ., fig. 38, Միրիջանյան Դ., Դրոշմագարդ կարասի բեկորներ Արմավիրից, ՀՀմ XIV, Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, 2008, էջ 307-311:

²²² Բաբաջանյան Ա., Մեծամորը միջնադարում (ըստ խեցեղեն գտածոների), *Մեծամոր. Կեսդարյա պեղումների տարեգրություն*, Մեծամոր հնավայրի պեղումների 50 և արգելոց-թանգարանի ստեղծման 45-ամյակների նվիրված գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2015, էջ 220-222, աղ. 1, նկ. 3, 5, 6:

²²³ Kalantaryan A. etc., նշվ. աշխ., pl. XLV:

²²⁴ Ղարիբյան Բ., Գլաձոր, Երևան, 1983, էջ 85-90:

²²⁵ Եզանյան Լ., Դրոշմագարդ կարասներ Շիրակից, ՇՀՀԿ ԳԱ VI, Գյումրի, „Գիտություն“, 2003, էջ 88-93:

²²⁶ Шелковников Б., Художественная керамическая промышленность средневековой Армении, Известия АрмФАН, 1942, N 3-4 (17-18), с. 13; Ахмедов. Г., Неполивная керамика Орен-Кала IX – XIII вв. (по материалам раскопок 1953 – 1955 гг.), Труды Азербайджанской (Орен-калинской) археологической экспедиции, т. I, МИА 67, Москва – Ленинград, Изд. АН СССР, 1959, с. 197-205; Левиатов В., Керамика Старой Ганджи, Баку, Изд. АЗФАН, 1940, рис. 1-7; Арчвадзе Т., К истории производства неполивной керамики в средневековой Грузии („Дерги“ из раскопок Кухетского Рустави), АПФГ - I, Тбилиси, „Мецниереба“, 1969, с. 126-135.

²²⁷ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., էջ 53:

զարդ գոտին առանց կարմրաներկի է²²⁸: Երբեմն այն պատած է անգործի շերտով, որով պատկերն ավելի է ընդգծվում: Մյուս հուշարձաններում հայտնաբերված գտածոների հարդարանքում խեցեգործ վարպետները հետևել են Անիի և Դվինի օրինակներին:

Դրոշմազարդ գոտիների զարդապատկերների վերաբերյալ ուսումնասիրողները տարակարծիք են: Կ. Ղաֆադարյանը դրանք համարում է խնջույքի, որսի տեսարաններ²²⁹: Բ. Առաքելյանը կապում է ժողովրդական հավատալիքների հետ՝ կոնկրետ պտղաբերության գաղափարի հետ²³⁰: Գ. Կարախանյանը դիտարկում է որպես առանձին կենցաղային տեսարաններ²³¹: Ֆ. Բաբայանը գտնում է, որ դրանք արտացոլում են հին աշխարհայացքի ու խորհրդաբանության արձագանքները²³²: Հ. Պետրոսյանը կարծում է, որ դրանք արտացոլում են ժողովրդական հանելուկներն, առակներն ու էպիկական զրույցները և ոչ հեթանոսական այլաբանական պատմություններ²³³:

Ինչպես նշեցինք, դրոշմազարդ կարմրափայլ կարասները տարածված էին XII – XIII դդ. և շարունակել են գոյատևել մինչև XV դ.՝ ի հայտ բերելով հարդարման նոր միջոցներ:

Ուշագրավ է Թեղենյաց վանքի պեղումներով հայտնաբերված դրոշմազարդ կարասի բեկորը, որը, դատելով պահպանված հատվածից, ներկված չէ (աղ. 27, նկ. 6): Խեցին դարչնագույն է, խոշոր ավազի խառնուրդով: Առավել հետաքրքիրը դրոշմազարդ գոտին է: Այն զարդապատկերվել է կարասի իրանին վերադիր ագուցած լայն ժապավենաձև գոտու վրա: Եթե կարմրափայլ դրոշմազարդ կարասների գոտին ընդգծվում է իրանի վրա ուռուցիկ շուրջանակի անցնող զուգահեռ շրջագծերով և տեսողական ընկալմամբ դրոշմազարդ հատվածը խորադիր է դիտվում, ապա սրա գոտին բարձրադիր է մակերեսից: Հայաստանի տարբեր հնավայրերից հայտնի դրոշմազարդ կարասների դիտարկումը թույլ է տալիս ենթադրել, թե հարդարման նման կերպը վերաբերում է համեմատաբար ավելի ուշ շրջանի: Ժապավենաձև գոտու վրա դրոշմիչը գլորելու միջոցով ստա-

²²⁸ Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում, հատ. I, էջ 224:

²²⁹ Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հատ. I, էջ 188:

²³⁰ Առաքելյան Բ., նշվ. աշխ., հատ. I, էջ 228:

²³¹ Առաքելյան Բ., Կարախանյան Գ., Գառնի III, էջ 80:

²³² Բաբայան Ֆ., Հայկական դրոշմանիշ գոտիով կարասների զարդաները, ԼՀԳ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, N 7, էջ 60-68; Двин IV, с. 113:

²³³ Պետրոսյան Հ., Գառնի IX – XIV դդ., էջ 57: Ուսումնասիրելով Հին Գանձակից գտնված դրոշմազարդ կարասները Լևիատովը ևս նման տեսակետ է առաջ քաշել: Ску` Левиатов В., Керамика Старой Ганджи, с. 8.

ցել են այծի և թռչնի հաջորդական պատկերների շարք, որը ետնախորքի նկատմամբ գցուն է:

Կարմրափայլ կարասների մեջ հանդիպում են օրինակներ, որոնք չունեն դրոշմազարդ գոտի, փոխարենը զարդարում են ամբողջությամբ: Նմանօրինակ կարաս պահվում է Էջմիածնի պատմաազգագրական թանգարանում (ադ. 1, նկ. 3): Ունի ուռուցիկ գնդաձև իրան՝ վերնամասում գալարաձև հավելումով կանթերով: Կարասի իրանի ամենալայն հատվածով (պարագիծը՝ 120 սմ) անցնում է զուգահեռ ելնդավոր շրջագծերով գոտին: Անոթի վերնամասը հարդարված է հաջորդաբար կրկնվող ելնդավոր խաչազարդերով, որոնց ներքևի թևերը երկձյուղված են: Խաչազարդերին հաջորդում է ռոմբաձև և եռանկյուն պատկերներից կազմված ուղղահայաց զարդագոտին: Եռանկյունիները, լցված մանր կետազարդերով, կարմրաներկ չեն: Կարասի ողջ դաշտը զարդարում են ագուցված փոքր կոճակազարդերը: Շուրթն ուղիղ է՝ հարդարված երկշարք հյուսածո խորադիր գոտիներով:

Նման հարդարմամբ կարասները կարելի է համարել կարմրափայլ դրոշմազարդ կարասների նմանակումը, որոնք գործածական են եղել XII – XIV դդ. իրենց նախօրինակին զուգահեռ:

Տնտեսական-կենցաղային խեցեղենի երկրորդ ենթախմբում ներառված են խոհանոցային առօրյա սպասքը, խոհանոցային արտադրական ամանեղենը և սեղանի սպասքը:

Խոհանոցային սպասքը բաժանվում է.

Կճուճներ - Հնագիտական պեղումներով հայտնաբերված գտածոների թվում մեծաքանակ են՝ պատրաստված շեկ, կարմրավուն և մոխրագույն կավատեսակներից՝ ավազի դրոշակի խառնուրդով: Թրծումը սովորաբար անհամաչափ է, թեև հանդիպում են նրբակերտ, բարձրորակ թրծմամբ կճուճների բեկորներ, որոնք թերևս գործածվել են իբրև սեղանի սպասք: Կճուճներ մեծ մասամբ պատրաստում էին դուրգի վրա, սակայն հանդիպում են և ձեռածեփ օրինակներ: Կճուճներն, ըստ գործածության, բաժանվում են երեք խմբի՝ 1-կերակուր պատրաստելու, 2- չոր կամ հեղուկ մթերք պահելու, 3- սեղանի սպասք:

Կերակուր պատրաստելու համար նախատեսված կճուճները սովորաբար պատրաստվում էին հրակայուն կավատեսակներից, որոնք կրակի ազդեցության նկատմամբ

դիմացկուն էին: Դրանք ունեն հարթ հատակ, գնդաձև իրան, կարճ վիզ, դուրս շեշտված պսակով լայն բերան: Այս կճուճները հիմնականում երկկանթ են, երբեմն ամբողջությամբ մրապատ կամ մրի հետքերով: Ձևաբանական հորինվածքով միանման լինելով հանդերձ, հաճախ հանդես են բերում առանձին մանրամասների տարբերակումներ:

Հայտնաբերված գտածոներում առանձնանում են. 1- կիսագնդաձև սահուն ուրվագծերով անոթներ, որոնք հիմնականում ցածր են, շուրթից իրան և իրանից նստուկ անցումներն աննկատ, 2- համեմատաբար կտրուկ անցումներով անոթներ՝ բազմաթիվ տարբերակներով, որոնք տարածված էին Հայաստանի ուշմիջնադարյան հուշարձաններում:

1. Սահուն անցումներով կիսագնդաձև կճուճների առաջին տարբերակը ներկայացնում է Արտաշատի պեղումներով հայտնի կիսագնդաձև իրանով, դեպի ներս ուղղված շուրթով, կտրվածքում կլոր փոքրիկ կանթով, կլորացող հատակով կճուճը, որն իր որոշ տարբերակներով հանդիպում է Հայաստանի միջնադարյան բոլոր հուշարձաններում (աղ. 2, նկ. 1-5): Կճուճների այդ տեսակը լայնորեն տարածված էր XII – XIII դդ.՝ շարունակելով գոյատևել և հետագա դարերում:

Կիսագնդաձև իրանով և օղակավոր ցածր նստուկով կճուճները ևս գործածական էին ուշ միջնադարում: Նման կճուճի նստուկ հայտնի է Արտաշատի պեղումներից (աղ. 4, նկ. 5):

Լայն բերանով, շեշտված պսակով, քիչ կոր իրանով, գրեթե գլանաձև կճուճները ևս այդ խմբի տարբերակներից են և ամենասովորականը միջնադարյան մարդու կենցաղում (աղ. 2, նկ. 7):

2. Երկրորդ տարբերակի կճուճները ևս ցածրադիր են, սակայն ունեն ուղիղ բարձրացող պատեր, որոնք գլանաձև տեսք են տալիս անոթին: Սրանք առավելապես ձեռածեփ են, ունեն կոպիտ ժապավենաձև կամ կլոր կանթեր (աղ. 2, նկ. 6, աղ. 29, նկ. 3-5, աղ. 31, նկ. 6, 7, աղ. 33, նկ. 1-4): Թվագրվում են XV – XVIII դդ.:

3. Երրորդ տարբերակի կճուճների իրանները մի փոքր բարձր են, կիսագնդաձև, ընդգծված բարձր պարանոցով, դեպի դուրս թեքվող ուղիղ շուրթով, հիմնականում անգարդ (աղ. 3, նկ. 1-4, աղ. 32, նկ. 3): Հանդիպում են և անգոբապատ, ներկած, փայլեցրած կամ փորագրագարդերով հարդարված, լայն ժապավենաձև կանթերով օրինակներ: Թվագրվում են XIII – XVII դդ.:

Մթերքը ժամանակավոր պահելու համար նախատեսված կճուճները ձևաբանական հորինվածքով տարբերակվում են.

1. քիչ ավելի երկարավուն, երբեմն երկկոնաձև իրանով, ընդգծված վզով և բերանի ավելի փոքր բացվածքով: Պսակները կտրվածքում դեպի դուրս ծավլած են, ուղիղ կամ կլոր: Կճուճների շուրթերի եզրով, ներքուստ երբեմն անցնում են հորիզոնական ակունքներ՝ կափարիչը սեղմ փակելու համար: Հիմնականում անկանթ են, թեև հանդիպում են և կանթով օրինակներ: Ի տարբերություն կերակուր պատրաստելու համար նախատեսված կճուճների, սրանց կավն ավելի բարձրորակ է՝ մանրահատիկ, մանր ավազի խառնուրդով: Թրծումը համաչափ է: Անոթները անգոբապատ են, երբեմն ներկած կամ փայլեցրած, զարդարված փորագիր պարզ հարդարատարրերով:

Առաջին տարբերակը խոշորաչափ ծափերն են: Ունեն երկարավուն իրան, փորի մասում ուռուցիկ, դեպի հատակ մեծ թեքությամբ իջնող պատեր: Բերանի բացվածքի և նստուկի տրամագծերը գրեթե նույնն են: Ունեն դեպի դուրս փոկող զանգվածեղ պսակ՝ երբեմն հարդարված վերադիր մատնեքազարդ գոտիով: Թվագրվում են XIII – XIV դդ. (աղ. 3, նկ. 5-7, աղ. 4, նկ. 3, աղ. 31, նկ. 3):

Երկրորդ տարբերակը ուռուցիկ իրանով, դեպի տափակ հատակը սահուն իջնող պատերով, առանց կանթի, ընդգծված կարճ պարանոցով և բերանի հատվածքում կլորավուն, ուղիղ կամ մրճաձև պսակներով տարբեր չափերի ու տարողության կճուճներն են (աղ. 4, նկ. 1, 4, աղ. 38, նկ. 1, աղ. 30, նկ. 5, աղ. 32, նկ. 1, աղ. 36, նկ. 2, 3, 5): Պեղումներով հայտնաբերված գտածոներում հանդիպում են նմանատիպ ձևաբանական հորինվածքով կճուճներ, միայն առանց ընդգծված վզի: Դրանք ամենազանգվածայինն են (աղ. 4, նկ. 2):

Սեղանին դրվող կճուճները փոքրադիր են, ձևաբանական հորինվածքով միակերպ: Ունեն կիսագնդաձև իրան, փոքր տրամագծով նստուկ, դեպի դուրս շեշտված շուրթ (աղ. 4, նկ. 6-9, աղ. 32, նկ. 2): Ուշագրավ է Հայկաձորի բնակավայրի պեղումներով հայտնաբերված կիսագնդաձև իրանով փոքրիկ կճուճը, որի քիչ դեպի դուրս ուղղված շուրթը ձևավորված է ներձկումներով:

Կճուճները հորինվածքով և հարդարման մանրամասներով առավելապես շարունակում են XII – XIII դդ. տարածված ձևերը: Ձևաբանական փոփոխության են ենթարկվում թերևս միայն կանթերը: Դրանք պատրաստվում էին առանձին, ապա ագուցվում կճուճին դեռևս թաց վիճակում՝ միացման կարերն աննկատ դարձնելով քարե կոկիչով

հղկելու միջոցով: Կանթերը սովորաբար դուրս են գալիս անմիջապես շրթի եզրից և միանում իրանի ամենաուռուցիկ հատվածին: Ձևաբանական հորինվածքով լինում են ժապավենաձև և կլորավուն, որոնք տարանջատվում են հարդարման մանրամասներով: XIV – XVII դդ. կլոր և ժապավենաձև կանթերից բացի հանդիպում են կտրվածքում եռանկյուն ձևավորող կլոր կամ քառակուսի կանթեր, ինչպես նաև հորիզոնական բռնակները (աղ. 41, 1, 3, աղ. 5, նկ. 1):

Այս շրջանում կրկին գործածական են կեղծ բռնակները, որոնք թերևս IX – X դդ. բնորոշ դեկորատիվ ականջաձև բռնակների արձագանքն են:

Միջնադարում առավել տարածվածը ժապավենաձև պարզ, առանց հարդարանքի, տափակ կամ քիչ ուռուցիկ կանթերն են, թեև հանդիպում են հարդարման տարբեր տարրերով ձևավորված օրինակներ (ուղղահայաց ակոսագոտի, պայտաձև կամ սրացող ելուստներ, կոճակազարդեր, կանեյուրներ) (աղ. 5, նկ. 2-9): Ժապավենաձև կանթերին զուգահեռ XIV – XVII դդ. գործածական էին կտրվածքում կլոր մեծ ու փոքր կանթերը (աղ. 5, նկ. 8, 9):

Կճուճների արտաքին հարդարանքը XIV – XVII դդ. չափազանց զուսպ է՝ թելադրված խեցեգործական արտադրության մեջ նկատելի անկումային իրավիճակով, երբ տնայնագործ վարպետներն առօրյա կարիքները բավարարելու նպատակով ստիպված էին պատրաստել մեծ քանակության կավե տարատեսակ անոթներ՝ զանց առնելով գեղագիտական մոտեցումները: XIV – XVII դդ. տնայնագործական ձեռածեփ անոթները մեծաքանակ են համեմատ նախորդ դարաշրջանի բարձր մակարդակի հասած արհեստագործական արտադրանքի:

Կճուճների հարդարման միջոցները պարզունակ են՝ սանրաքաշ գծազարդեր, մանր ու խոշոր եղունգազարդեր, ելնդավոր գոտիներ, ալիքազարդեր, երբեմն խաչանշաններ՝ բնորոշ բոլոր ժամանակներին: Կճուճները թրծելուց առաջ երբեմն թաց լաթի օգնությամբ ներկում էին ոսկեգույն հատիկներ պարունակող փայլաներկով, որը հաճելի տեսք էր հաղորդում անոթներին: Առօրյա կենցաղում լայն գործածության ունեցող այս անոթների բազմաթիվ զուգահեռներ հանդիպում են և հարևան երկրներում:

Խփեր - կարասների, կճուճների, ինչպես նաև թոնիրների ու հորերի բաղկացուցիչ տարրերից են, սկավառակաձև՝ թեք կտրված կամ ուղիղ եզրերով: Թոնիրների ու կա-

բասների խփերը հաստապատ են՝ պատրաստված տարբեր խառնուրդներ պարունակող կավից: Թոնիրների խփերը կենտրոնում ունեն միջանցիկ անցքով զանգվածեղ բոնակ (աղ. 6, նկ. 1): Թոնիրների և կարասների խփերի հարդարանքում գերակշռում է եզրերը շրջագծով սեղմելու միջոցով ստացված ակոսագարդը (աղ. 6, նկ. 2): Հաճախ դրանց եզրերը լրացուցիչ ձևավորում են մատով սեղմած ներձկումներով (ֆեստոն):

Ավելի բազմազան են կճուճների խփերը, որոնց տրամագծերը տատանվում են 10-40 սմ՝ համապատասխան կճուճների բերանների բացվածքի տրամագծերին: Հանդիպում են՝ 1- եզրերն ուղիղ կամ դեպի վեր ծալած հարթ սկավառակի տեսքով (աղ. 6, նկ. 3-7), 2- շրջանաձև, մի փոքր բարձրացրած եզրերով, կենտրոնում բարձր կոնաձև հատվածով: Խփերը հղկում, փայլեցնում, ներկում և հարդարում էին փորագիր, դրոշմագարդ, սեղմումով ստացված զարդերով կամ երկնագույն հախճապակե կտորների ընդելուզումներով: Վերջիններս ունեին ոչ միայն գեղագիտական, այլև պահպանիչ նշանակություն:

Խփերը կենտրոնում կրում էին բարձր կոնաձև կամ գլանաձև բոնակներ: Նման բոնակներ պահպանվել են Կարինի հայկական գյուղերում (XIX դ.), որոնց կոչել են „մանչ” և „աղջիկ”²³⁴: Կոնաձև բոնակները լինում էին սուր և կլոր գլխիկներով: Առաջինները, սովորաբար, անգարդ են, երբեմն հարդարված կենտրոնից դուրս եկող ճառագայթաձև կետագարդերով կամ ակոսագծերով (աղ. 5, նկ. 10-12): Կլոր գլխիկով բոնակների վերին եզրն ընդգծվում էր հորիզոնական թույլ ակոսագոտիով (աղ. 5, նկ. 13): Դրանք կապվում են ֆալլոսի պաշտամունքի հետ, որը գաղափարական նույն դրսևորմամբ հասել է մինչև XIX – XX դդ.: Ֆալլոսը ոչ միայն պտղաբերության խորհրդանիշն էր, այլև պահպանակ չար աչքից²³⁵:

Գլանաձև վերնամասով բոնակները երկու տիպի են՝ փոսիկավոր և փակ: Դրանց կողային եզրերն ընդգծվում էին հորիզոնական ակոսագոտիով, թեք գծիկներով հարդարված ելնդավոր գոտիով, ալիքագարդով (աղ. 5, նկ. 14, 15, աղ. 36, նկ. 6): Երբեմն խփերի բոնակներին ագուցվում էին ժապավենաձև կանթեր, որոնք միանում էին սկավառակաձև մակերեսին (աղ. 5, նկ. 16): Խփերի և նրանց բոնակների վրա հատուկ օղամուղ անցքեր են արել՝ գոլորշու հեռացման համար²³⁶:

²³⁴ Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հատ. I, էջ 198:

²³⁵ Լալայան Ե., Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, Հրատ. Մելքոնյան ֆոնդի, 1931, էջ 206-207:

²³⁶ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., էջ 62, աղ. XXVIII/5:

Ուշագրավ է Թեղենյաց վանքի պեղումներով հայտնաբերված խփերը՝ կազմված իրար միացած, երկու տարբեր տրամագծերով սկավառակներից (9-5.5 սմ և 10-7 սմ): Դրանք անոթի մեջ են մտել փոքր տրամագծով հատվածով՝ բերանն ավելի սեղմ փակելու համար (աղ. 6, նկ. 8, 9): Ներկայացված խփերի բոլոր տեսակները հարատևել են բավական երկար ժամանակ՝ XIII – XVIII դդ.:

Կոնքեր կամ տաշտեր- խոշոր ու միջին չափերի լայնաբերան տարողունակ անոթներ են՝ պատրաստված հիմնականում դուրգի վրա: Խեցին խիտ է, կավը՝ մանրահատիկ, երբեմն մանր ավազի խառնուրդով, թրծումը՝ համաչափ: Դրանք ներքուստ և արտաքուստ անգոբապատ են, հակառակ պարագայում ներքուստ լավ հղկում կամ փայլեցնում էին, ինչը վկայում է, որ կոնքերը գործածել են հեղուկ մթերքի համար՝ հաճախ ծառայելով որպես կթոց: Կոնքերի վերին հատվածները, ներքուստ և արտաքուստ հարդարված են ակոսավոր, գծաքաշ գոտիներով, ալիքազարդերով: Գտածո հավաքածուներում, ըստ ձևաբանական հորինվածքի, առանձնանում են տաշտ-կոնքերի երկու տեսակ՝ խորը և համեմատաբար սաղր՝ իրենց տարբերակումներով:

Խորը կոնքերի առաջին տարբերակը լայն բերանով, մրճաձև պսակով, դեպի հատակ փոքր կորությամբ իջնող հաստ պատերով, սկավառակաձև հատակով անոթներն են: Լավագույն օրինակը հայտնի է Գառնիի XIII – XIV դդ. շերտերի պեղումներից²³⁷:

Խորը կոնքերի մեկ այլ տարբերակ է Նորատուսի պեղումներով հայտնաբերված գտածոն է: Ունի հարթ հատակ, թեքությամբ իջնող ուղիղ պատեր, ուղիղ շուրթ, որը ներքուստ և արտաքուստ ընդգծված է լայն ակոսագոտիով: Իրանը կենտրոնում գոտևորում է վերադիր մատնեքազարդ երիզը: Խեցին բաց դարչնագույն է, ավազի խառնուրդով, լավ հղկած, ներքուստ և արտաքուստ կարմիր ներկի ցայտերով: Անոթը թվագրվում է XIII – XV դդ. (աղ. 7, նկ. 1, աղ. 30, նկ. 4): Թեքությամբ իջնող ուղիղ հաստ պատերով կոնքերի մեկ այլ նմուշ հայտնի է Դաշտադեմի պեղումներից: Անոթն ունի փոված տափակ պսակ, կլորավուն կարճ կանթ (աղ. 7, նկ. 2, աղ. 36, նկ. 1): Նմանատիպ կոնք հայտնաբերվել է Միրաքի բազիլիկ եկեղեցու պեղումներով, որն ունի կտրվածքում կլոր, հորիզոնական կանթ (աղ. 7, նկ. 3):

Հանդիպում են նաև ծորակավոր կոնքեր, որոնք գործածվել են ամենուրեք²³⁸:

²³⁷ Նույն տեղում, էջ 58:

²³⁸ Джидди Г., Средневековый город Шемаха IX – XVII века, (Историко-археологическое исследование), Баку, изд. „ЭЛМ“, 1981, с. 88, таб. XVII-7.

Կոնքերի սաղր տեսակը հարթ, փոքր հատակի համեմատ բերանի լայն բացվածքով, թեքությամբ իջնող կարճ պատերով, փռված պսակով անոթներն են, որոնք հարդարվում են փորագիր և վերադիր զարդատարրերով (աղ. 7, նկ. 4-6): Լավագույն օրինակը Արտաշատի պեղումներից հայտնի անոթի շրթնամասն է: Նրա փռված տափակ պսակը ձևավորված է վերադիր հորիզոնական հավելումներով, որն էլ իր հերթին հարդարված է ներձկումներով (աղ. 7, նկ. 4): Սաղր կոնքերի թվին կարելի է դասել և Դաշտադեմում հայտնաբերված ձեռածեփ գլանաձև միջին չափի անոթը (աղ. 7, նկ. 7, աղ. 35, նկ. 13):

Տաշտ-կոնքերը առօրյա կենցաղում լայն գործածություն են ունեցել, թեև գտածոները փոքրաթիվ են: Միջնադարյան հուշարձանների պեղումներով հայտնաբերված չափազանց բեկորային նյութում հնարավոր չէ միանշանակ առանձնացնել վերոնշյալ անոթների տեսակները: Միջնադարյան հուշարձանների պեղումներով տաշտերի գյուտեր հայտնի են Որոտնավանքից (X – XI դդ.)²³⁹, Անբերդից²⁴⁰, Գառնիից (XII – XIV դդ.)²⁴¹:

Ջրամաններ – առանձնանում են խոշոր ու միջին չափերի կժեր, սափորներ, փարչեր: Նախատեսված էին ոչ միայն ջրի, այլև հեղուկ մթերքի ժամանակավոր պահպանման համար: Ջրամանները պատրաստված են դուրգի վրա, հիմնականում մանրահատիկ՝ դեղնաշիկավուն, վարդագույն, աղյուսագույն երանգներով կավատեսակներից, պատած անգորով, իսկ ավելի ուշ շրջանում կաթնագույն կավե թույլ լուծույթով՝ լուծելով ֆունկցիոնալ և գեղագիտական խնդիրներ: Ջրամանները ժամանակի ընթացքում ձևաբանական հորինվածքում էական փոփոխություններ չեն կրել՝ ի հայտ բերելով միայն մանրամասների և հարդարատարրերի նոր լուծումներ: Կրկնում են XII – XIII դդ. տարածված գնդաձև, գլանաձև, երկարաձգված իրանով կժերի ու սափորների հորինվածքները (աղ. 8): XIV դարից տեղական անջնարակ խեցեղենի հետընթացի պայմաններում գործածությունից դուրս են գալիս կարմրափայլ, դրոշմազարդ ու կաղապարանախշ նրբին սափորները, որոնց պատրաստման և հարդարման տեխնիկան ավելի բարդ էր և պահանջում էր անհատական մոտեցում:

Ուշագրավ է Ս. Էջմիածնի Մայր տաճարի հարևանությամբ կառուցվող մոմավառության սրահի տարածքում 2014 թ. իրականացված պեղումների արդյունքում (այսու-

²³⁹ Քալանթարյան Ա., Որոտնավանքի խեցեղենը, ԼՀԳ, Երևան, 1967, N 4, էջ 72, աղ. 115:

²⁴⁰ Հարությունյան Ս., Անբերդ, էջ 101:

²⁴¹ Պետրոսյան Հ., Գառնի IX – XIV դդ., էջ 58-58, աղ. XXIV- 4-7:

հետ՝ Էջմիածնի 2014 թ. պեղումներ) հայտնաբերված ամբողջական սափորը, որն ունի երկար խողովակաձև վիզ՝ ետ ծալած ուռուցիկ պսակով և այն բոլորող ելնդավոր գոտիով: Ուռուցիկ իրանից դեպի հատակ պատերն իջնում են մեծ թեքությամբ՝ երկարաձիգ տեսք հաղորդելով անոթին: Կլոր կանթն ամրացված է խողովակաձև վզի կենտրոնում՝ միանալով ուսին (աղ. 8, նկ. 4): Այդ տիպի անոթները բավական մնայուն ձևեր ունեն և հասել են մինչև XX դար: Դրանք հատկապես տարածված էին XVIII – XIX դդ.:

Ջրամանների կանթերը սովորաբար ագուցվում են վզի հատվածում, երբեմն անմիջապես պսակին: Դրանք կտրվածքում կլոր են կամ ժապավենաձև, երբեմն իրենց վրա կրելով վերադիր պայտաձև ելուստազարդ կամ կոճակազարդ, որը լայն կիրառություն ունեն միջնադարյան խեցեղենի գեղարվեստական հարդարանքում: Հարդարման միջոցները բազմազան են՝ վզի կամ ծորակի եզրերին թույլ փորագիր գծաքաշ կամ քիչ ուռուցիկ գոտեզարդեր, իրանի ուռուցիկ հատվածներում ակոսագոտիներ, թեք խորադիր գծիկների շարեր, կետագծեր, ալիքազարդեր և այլն: XIV – XV դդ. տարածում է գտնում սափորների անգոբապատ մակերեսը կարմիր ցայտերով ներկելը, որը կարելի է կարմրաներկ անոթների հեռավոր արձագանքը համարել: Հարդարման այդ միջոցը բնորոշ էր ոչ միայն սափորներին, այլև առհասարակ խոհանոցային սպասքին:

Առկա նյութերում իր ձևաբանական հորինվածքով աչքի է ընկնում Էջմիածնի 2014թ. պեղումներով հայտնաբերված թերի սափորիկը, որը զինու գավ է հիշեցնում: Ունի գնդաձև իրան, երկար բարակ խողովակաձև վիզ, որը վերնամասում ավարտվում է երկաստիճան ուռուցիկ ելնդավոր զարդագոտիով: Իրանի ողջ դաշտը հարդարված է մանր գծաքաշ զուգահեռ գոտիներով (աղ. 8, նկ. 5):

Ինքնատիպ է Շատինից հայտնի սափորը (աղ. 8, նկ. 7), որի ձվաձև իրանն ու վիզը կարծես միաձույլ լինեն, ի տարբերություն սովորական սափորների, որոնց վզերն ու կանթերն պատրաստվում էին առանձին, ապա ագուցվում իրանին՝ հղկելու միջոցով վերացնելով կարերի հետքերը: Սափորի ողջ դաշտը բաժանված է հորիզոնական գոտիների, որոնք հարդարված են իրար հակառակ ուղղված թեք գծերի շարերով: Վիզն ընդգծված է ուռուցիկ գոտիով, որը նույնպես զարդարված է կարճ թեք գծիկներով:

Նմանատիպ սափոր հայտնի է Նորավանքի պեղումներից: Իրանի ամենաուռուցիկ հատվածը հարդարված է հորիզոնական ակոսագոտիներով պարփակված ռոմբերի կրկնվող շարքով (աղ. 8, նկ. 8):

Սափորների ձևաբանական հորինվածքում միակերպ իրաններին լրացնում են վերնամասերի կերտվածքի տարատեսակ լուծումները.

ա. գլանաձև կարճ վզով՝ բերանի համեմատաբար լայն բացվածքով և ուղիղ պսակով: Նման հորինվածքով կժերը հայտնի են Հայաստանի միջնադարյան բոլոր հուշարձաններից: Կանթերը սկսվում են անմիջապես շուրթից կամ ագուցվում վզի կենտրոնում (աղ. 8, նկ. 3, աղ. 9, նկ. 1, աղ. 27, նկ. 3, աղ. 29, նկ. 1):

բ. խողովակաձև երկար վզով՝ շրթնամասում մի փոքր լայնացող (աղ. 9, նկ. 4, 5, աղ. 29, նկ. 2, աղ. 27, նկ. 4): Հետաքրքիր օրինակ է Թեղուտի Ղարաքոթուկ հանդամասում ուշմիջնադարյան մատուռի 2010 թ. պեղումներով հայտնաբերված սափորի խողովակաձև վիզը, որին երկու կողմից ագուցված են վերադիր՝ կենտրոնում փոսիկով կլորակներ:

գ. երկար վզով, դեպի ներս նեղացող շուրթով (աղ. 9, նկ. 7, աղ. 27, նկ. 2),

դ. երկար վզով, շեփորաձև պսակով (աղ. 9, նկ. 8, 9, աղ. 27, նկ. 1),

ե. երկար վզով, եռատերև պսակով (աղ. 9, նկ. 2, 3, աղ. 27, նկ. 5):

Ինքնատիպ կերտվածք ունի Նորավանքից հայտնի սափորի վիզը՝ հատած կոնի տեսքով (աղ. 9, նկ. 6): Վերին ավելի նեղ հատվածը հարդարված է ուղղահայաց թեք գծերի և հորիզոնական խորադիր կարճ գծիկների շարերով:

Խոհանոցային-արտադրական անոթները հիմնականում նախատեսված են կաթնամթերքի մշակման համար: Այս խումբը բաղկացած է խնոցիներից, կաթնամաններից, քամիչներից:

Խնոցիներ - առկա գտածոներում առանձնանում է Թեղենյաց վանքի 2008 թ. պեղումներով հայտնաբերված բավականին խոշորաչափ կախովի խնոցու եզրային հատվածը (տրամագիծը՝ 26.5սմ), ներքուստ և արտաքուստ պատած կաթնագույն շփոթով: Եզրից 4 սմ հեռավորության վրա ունի բավական լայն ելուստավոր գոտի՝ պարանի շարժումն արգելակելու համար (աղ. 28, նկ. 6): Կախովի խնոցիներն երևան են գալիս վաղ միջնադարում և գործածվում բռնակով խնոցիներին զուգահեռ՝ որպես խեցեգործական արտադրանքի նոր տեսակ²⁴²: Կավե կախովի խնոցիների ձևաբանական հորինվածքն անփոփոխ շարունակում է գոյատևել մինչև XIX դար՝ աստիճանաբար տեղը

²⁴² Асатрян Е., Закари берд (результаты раскопок), АРА N 19, Ереван, Изд. „Гитутюн” НАН РА, 2005, с. 51, таб. XXXII – 4.

զիջելով փայտե խնոցիներին²⁴³: Սովորաբար կախովի խնոցիների եզրային հատվածներն ավարտվում են կոնաձև վերջավորությամբ, սակայն քննարկու օրինակն ունի հարթ կողային հատված:

Ձեռքի խնոցիները (ձձում) ձևաբանական հորինվածքով նման են կժերին կամ կճուճներին՝ վերնում հորիզոնական կանթով և փոքր տրամագիծ ունեցող անցքով, որտեղից հարելու ընթացքում դուրս է մղվել կաթի սերը²⁴⁴: Ձեռքի ձձումի բեկոր՝ անցքի հատվածով, հայտնաբերվել է Հայկաձորի²⁴⁵, Թեղուտի (Բովեր հանդամասի եկեղեցի) պեղումներից (աղ. 15, նկ. 5, աղ. 31, նկ. 8):

Կաթնամաններ - լայնաբերան անոթներ են՝ ներքուստ և արտաքուստ անգոբապատ կամ փայլեցրած: Ունեն բերանի բացվածքի համեմատ փոքր տրամագծով հարթ նստուկ, ուղիղ կամ փոքր կորությամբ բարձրացող պատեր, ուղիղ շուրթ՝ ետ ծալած պսակով: Կաթնամանները ձևով նման են սաղր կոնքերին: Երբեմն դրանք մի կողմի վրա կրում են բաց ծորակ (слив)՝ հեղուկն առանց թափելու դատարկելու համար: Բաց ծորակով սև փայլեցրած մակերեսով կաթնաման հայտնի է Միրաքի 2012 թ. պեղումներից: Ծորակի լայն եզրերը հարդարում են փորագիր ակոսագոտիները, որոնք լրացուցիչ կանխում են հեղուկի արտահոսքը՝ միաժամանակ գեղագիտական տեսք հաղորդելով անոթին (աղ. 15, նկ. 4, աղ. 33, նկ. 5):

Քամիչներ - ձևաբանական տարբեր կերտվածքներով անոթներ են՝ պատերին ու հատակին միջանցիկ բազմաթիվ անցքերով (աղ. 15, նկ. 6): Անցքերը լինում են խոշոր և մանր՝ կապված հավանաբար անոթի կիրառական նշանակության հետ: Առանձնահատուկ ուշադրության են արժանի Դվինի ստորին բերդի պեղումներով հայտնաբերված երկարաձիգ իրանով երկու կճուճները, որոնց պատերին առկա են մանր միջանցիկ անցքեր²⁴⁶: Անոթներն ունեն ուռուցիկ փոր, դեպի հարթ հատակը թեքությամբ իջնող պատեր, ընդգծված կարճ վիզ, դեպի դուրս փռված պսակ: Փորի ուռուցիկ հատվածը շրջանակում են հորիզոնական զուգահեռ գծաքաշ ակոսագոտիները: Քամիչներից առավել ուշագրավ

²⁴³ Саркисян Е., Гончарное искусство Армении, Ереван, Изд. АН АрмССР, 1978, с. 79-80, рис. 14.

²⁴⁴ Նույն տեղում, с. 79, рис. 28а; Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները..., տախտ. XXXVII, նկ. 3:

²⁴⁵ Խաչատրյան Հ., Հայկաձորի քարանձավային բնակավայրի 2008 թվականի պեղումները, ՇՀՀԿ ԳԱ XI, Գյումրի, „Գիտություն”, 2008, էջ 169, տախտակ 5, նկ. 2:

²⁴⁶ Двин IV, с. 110, таб. XVII – 1, 2.

օրինակները թասանման անոթներն են, որոնց անցքերը տեղադրվում են հատակից իրան անցման հատվածում՝ հատակի ողջ պարագծով:

Սաջ-տապակալները երկու կողմից հարթ, մեծ տրամագծով սկավառակներ են՝ բարձրացրած հաստ եզրերով: Դրանց կողերը երբեմն հարդարում են մատնեքազարդ ուռուցիկ գոտիները: Հաճախ սաջերի ներքին կողմը հարդարվում էր թույլ ուռուցիկ զարդերով, որոնք արտատպվում էին թխված խմորեղենի վրա (աղ. 15, նկ. 7, աղ. 34, նկ. 1-3):

Մեղանի սպասքը պեղումներով հայտնաբերված գտածոների թվում ամենասովոր խումբն է: Բաղկացած է տարբեր չափերի ու ձևերի խորը և ծանծաղ թասերից, քրեղաններից, թաս-գավերից, պնակներից, մատուցարաններից, աղաթասերից:

Թասեր - ընդհանուր առմամբ կրկնելով XII – XIII դդ. տարածված ձևաբանական հորինվածքները, ունեն ավելի սահուն կորագծեր ու անցումներ, ավելի կլորավուն ուրվագիծ (աղ. 35, նկ. 1-12): Մեր տրամադրության տակ եղած նյութը հնարավորություն է տալիս դասակարգելու թասերի մի քանի տարբերակ.

ա₁. փոքր-ինչ գոգավոր հատակով, գրեթե գլանաձև ուղիղ պատերով, չընդգծված շուրթերով (աղ. 10, նկ. 1, 2): Խմբում առանձնանում են նրբակերտ կարմրափայլ օրինակները: Թեև փայլեցումով հարդարելը տարածված էր և նախորդ ժամանակաշրջանում²⁴⁷, սակայն XIII – XIV դդ. կարմրափայլ թասերը զարդարվում են նոր հարդարատարրերով: Նորույթ էր զուգահեռ ակոսագոտիների վրա աստամնավոր շրջանաձև անվակի կիրառումը²⁴⁸ (աղ. 10, նկ. 3, 4, աղ. 35, նկ. 3):

ա₂. նույն հորինվածքով, միայն դուրս ծալած կամ մրճաձև պսակով (աղ. 10, նկ. 5, 7, աղ. 30, նկ. 3, աղ. 31, նկ. 1, 2),

ա₃. գոգավոր հատակով, ուղիղ, վերնամասում քիչ դեպի ներս ուղղված պատերով (աղ. 10, նկ. 6, աղ. 32, նկ. 4),

բ₁. օղակավոր նստուկով, կորացող պատերով, մրճաձև պսակով թասեր (աղ. 11, նկ. 1, աղ. 30, նկ. 2): Լավագույն օրինակը Էջմիածնի 2014 թ. պեղումներով հայտնաբերված կարմրափայլ թասն է: Ներքուստ, հատակից պատեր անցնող հատվածում՝ ողջ շրջա-

²⁴⁷Ղաֆադարյան Կ., Քալանթարյան Ա., Դվին II, Դվին քաղաքը և նրա պեղումները 1973 – 1980 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ „Գիտություն” հրատ., 2002, էջ 82:

²⁴⁸ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., էջ 61, աղ. XXVI-8, 9:

գծով կրում է կարմրափայլ աղեղնաշար: Արտաքուստ հատակին առկա է վարպետի նշան՝ փորագիր խաչի տեսքով:

բ. օղակավոր կամ շրջանաձև հարթ նստուկով, հատակից կտրուկ լայնացող և տրամատված ուղղաձիգ պատերով, լայն մրճաձև պսակով²⁴⁹ (աղ. 11, նկ. 2):

Քրեղաններ - ձևաբանական հորինվածքով մոտ են թասերին: Տարբերակվում են. ա. կիսագնդաձև, գոգավոր կամ հարթ հատակներով, դեպի ներս ուղղված շուրթերով, փոված լայն պսակներով՝ երբեմն հարդարված փորագիր ալիքազարդով (աղ. 12, նկ. 1, աղ. 31, նկ. 4, աղ. 32, նկ. 5): Նմանատիպ քրեղանները երբեմն ունեն հորիզոնական տափակ կամ ուղղահայաց ձևավոր խուլ բռնակներ (աղ. 11, նկ. 4):

բ. օղակավոր կամ սկավառակաձև նստուկներով, դեպի դուրս փովող տրամատված պատերով, որոնք հատակի մասում արտաքուստ ուռուցիկ են, կտրվածքում՝ մրճաձև պսակով²⁵⁰ (աղ. 11, նկ. 3):

Պնակներ, մատուցարաններ - ունեն հարթ, քիչ գոգավոր լայն հատակներ՝ եզրերը դեպի վեր փոքր-ինչ բարձրացված, չընդգծված, տափակ կամ դեպի դուրս ծաված պռունկներով (աղ. 12, նկ. 2-6): Պնակները ներկվում են, անգորպապատվում, երբեմն հարդարվում շրջագծով անցնող փորագիր ալիքազարդերով:

Մատուցարաններից հիշատակելի է Թեղենյաց վանքի պեղումներից հայտնաբերված ուղիղ, արտաքուստ անհարթ, բայց ներքուստ հորիզոնական մանր սկոսագծերի մեջ ներառած փորագիր ալիքազարդով հարդարված մատուցարանը, որը թվագրվում է XIV – XV դդ.²⁵¹ (աղ. 12, նկ. 7):

Թաս-գավեր - առօրյա կենցաղում գործածվել են իբրև ջրի, գինու ըմպանակներ: Գտածո հավաքածուներում թեև փոքրաթիվ են, սակայն ձևաբանական հորինվածքով՝ բազմազան: Պատրաստված են դուրգի վրա, մանրահատիկ, մանր ավազի խառնուրդ պարունակող կավից: Անգորպապատ են, երբեմն կարմրաներկ, հարդարված փորագիր զարդերով:

Թաս-գավերի առաջին տարբերակը գոգավոր հատակից կորույթամբ բարձրացող ուղղաձիգ պատերով օրինակներն են, որոնցից առավել ինքնատիպը Հայկաձորի

²⁴⁹ Նույն տեղում, աղ. XXVII-4, 6:

²⁵⁰ Նույն տեղում, աղ. XXVII-5:

²⁵¹ Բաբաջանյան Ա., Միրիջանյան Դ., Թեղենյաց վանքի խեցեղենը, ՊԲՀ, Երևան, 2013, N 1, էջ 143, աղ. IV, նկ. 4:

պեղումներով հայտնաբերված գտածոն է՝ ներքուստ և արտաքուստ հարդարված հորիզոնական կարմրաներկ ժապավեններով (աղ. 13, նկ. 1):

Գավաթների մյուս տարբերակը ոտք-հենակով թասերն են: Ոտք-հենակները սկավառակաձև են՝ կենտրոնից բարձրացող կարճ վզիկի վրա նստած թաս-գավաթներով (աղ. 13, նկ. 2):

Աղաթասեր - հարթ հատակով, ուղիղ, ցածր պատերով, 5-6 սմ տրամագծով փոքրիկ անոթներ են՝ պատրաստված դուրգի վրա, երբեմն՝ ձեռածեփ: Լինում են ջնարակապատ և անջնարակ: Ուշմիջնադարյան հուշարձաններում հայտնաբերված աղաթասերը գերազանցապես ձեռածեփ են, կոպիտ հաստ պատերով (աղ. 13, նկ. 3-6): Հայկաձորի պեղումներով գտնված աղաթասը նրբակերտ է: Ունի հարթ սկավառակաձև հատակ, դեպի դուրս թեքությամբ բարձրացող ցածր պատեր, ուղիղ պսակ՝ հարդարված զուգահեռ ակոսագոտիների մեջ ներառած ուղղահայաց թեք գծերի շարով: Դուրգի վրա պատրաստած աղաթասի օրինակ է Նորատուսի գտածոն: Արտաքուստ ունի գոգավոր հատակ՝ լայն եզրերով, ցածր ուղիղ պատեր և մրճաձև պսակ:

Աղաթասերին զուգահեռ ուշմիջնադարում գործածական էին ձևաբանական բարդ կերտվածքով կանացիակերպ աղամանները: Հայկաձորի միջնադարյան բնակավայրի 2005 թ. պեղումներով հայտնաբերվել է կանացիակերպ աղաման, որը զուգահեռ հայտնաբերված նյութերի և դրամների հետ թվագրվում է XIII – XIV դդ.²⁵²: Աղամանի (բարձրությունը՝ 38 սմ, իրանի տրամագիծը՝ 25.5 սմ, 11.5 սմ) հարթ սկավառակաձև հատակի վրա նստած է հատած կոնի կերտվածքով իրանը՝ կենտրոնում կլոր բացվածքով (պտղաբերության խորհրդանիշ) և աղեղնաձև կանթերով, որոնցից պահպանված է մեկը: Հարդարված է մարդկանց և օձերի վերադիր զարդապատկերներով:

Կանացիակերպ աղամանները գործածական էին և Վրաստանում: Գրեթե նույն ձևաբանական հորինվածքն է կրկնում Թիֆլիսի միջնաբերդի պեղումներով հայտնաբերված օրինակը, որն ունի համաչափ գնդաձև իրան²⁵³:

Տնտեսական-կենցաղային խեցեղենում երրորդ ենթախմբում ընդգրկված են լուսավորության միջոցները՝ ճրագներն ու ջահերը:

²⁵² Խաչատրյան Հ., Հայկաձորի քարանձավային բնակավայրի 2005 թ. պեղումները, ՇՀՀԿ ԳԱ IX, Գյումրի, „Գիտություն”, 2006, էջ 79-80, նկ. 1:

²⁵³ Арчвадзе Т., Ангобированная посуда из Тбилисской цитадели, АПФГ - II, Тбилиси, „Мецниереба”, 1974, с. 174-188, таб. V-2

Ճրագներ - առօրյա կենցաղում ամենագործածական առարկաներն են՝ առավելապես կավակերտ. „հողե շինած ճրագ, որո մեջ պատրոյգ կը դնեն և ձեթ ածեն վառեն”²⁵⁴։ Կավե ճրագները մատչելի էին հասարակության բոլոր խավերի համար։ Գործածական էին և ապակե դամպարներն ու քարե ճրագները։ Կավե ճրագները լինում են ջնարակած և անջնարակ։ Ճրագ բառեզրն առաջին անգամ հիշատակում է Ագաթանգեղոսը. „Եւ մի՛ լիցի պակասութիւն ձիթոյ ի լապտերաց մերոց. և մի՛ շիջցին ճրագունք հաւատոց ուխտի սրբութեան մերոյ”²⁵⁵։ Հայաստանում հայտնի են ճրագների բազմաթիվ տեսակներ՝ թասանման, նավակաձև, թեյնիկանման, տերևաձև։ Ճրագների կենտրոնական մասը, ուր լցվում էր ձեթը, կոչվում էր գունդ, իսկ սրացող հատվածը, ուր դրվում էր պատրույգը՝ պատրկալ։ Պատրույգներ պատրաստում էին բամբակից կամ կտավատի ծեծած թելանյութից, որ կոչվում էր քթիթ²⁵⁶։

Լինելով ամենուրեք գործածվող առարկաներ, դրանց մեջ հանդիպում են ինչպես ձեռածեփ պարզունակ օրինակներ, այնպես էլ բարձրորակ կավից պատրաստված նրբակերտ նմուշներ։

Տերևանման ճրագներն ուշմիջնադարյան հուշարձաններում առավել հաճախակի հանդիպողն են, որոնց պատրույգի տեղը ընդգծված էր սեղմումով²⁵⁷։ Գտածո ճրագները քթիկի հատվածում կամ ամբողջապես մրոտված են։ Պատրաստված են դուրգի վրա, ունեն հարթ, թեթևակի շեշտված շրջանաձև հատակ (աղ. 14, նկ. 1-5)։ Ուշմիջնադարյան տերևաձև ձեռածեփ ճրագների հավաքածու (մոտ երկու տասնյակ) հայտնաբերվել է Միրաք գյուղի վաղմիջնադարյան բազիլիկայի պեղումների ընթացքում՝ խմբված բեմառեջքի մոտ։ Ճրագները մրապատ են, բացառությամբ երկու օրինակի, որոնք հավանաբար չեն օգտագործվել։ Ունեն շրջանաձև հարթ հատակ (տրամագիծը՝ 5.5 – 6 սմ), ցածր պատեր, մի կողմում պատրույգը հարմարեցնելու համար ներձկված քթիկ։ Հավաքածուն լրացնում են դուրգի վրա պատրաստած մի քանի ջնարակած օրինակներ, որոնք պատած են փիրուզագույն և կանաչ ջնարակներով (աղ. 14, նկ. 4)։

²⁵⁴ Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, էջ 342։

²⁵⁵ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս.Կանայանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, էջ 88։

²⁵⁶ Հոբոյան Ս., Հայոց ձիթհանության մշակույթը (XIXդ. – XXդ. առաջին կես). Պատմագագրական ուսումնասիրություն, ՀԱԲ N 23, Երևան, ՀՀ ԳԱԱ „Գիտություն” հրատ., 2007, էջ 71։

²⁵⁷ Կատալոգ Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի, գիրք 1, կազմ. Ս. Եսայան, Երևան, 1964, աղ. XVI, նկ. 3։

Նավակաձև ձիթաճրագներն ունեն օվալաձև հարթ հատակ, թասանման իրան՝ պատրույզի համար նախատեսված սրացող ծայրով (աղ. 14, նկ. 6):

Ուշմիջնադարյան հուշարձաններում հանդիպում են նաև միջնորմային պատով զույգ և բազմաշք ճրագներ (աղ. 15, նկ. 1): Այդպիսին է Անիի պեղումներով հայտնաբերված լայն կճուճը՝ բազմաթիվ կանթերով, որոնցից կախվել են ճրագ-թասերը: Վերևի եզրին ունի փոսիկներ՝ մոմեր տեղադրելու համար²⁵⁸:

Ուշ միջնադարում գործածական էին և գնդաձև իրանով, խողովակաձև վզով (որտեղից լցվել է վառելանյութը), ծորակավոր ձիթաճրագները: Նմանօրինակ ձիթաճրագ հայտնի է Տողի Մելիք Եզանի ընդունարանի պեղումներից²⁵⁹:

Հանդիպում են և բազմաֆունկցիոնալ ճրագներ: Դրանցից մեկը հայտնի է Անիի պեղումներից²⁶⁰, որը սովորական ճրագ լինելով՝ կափարիչ է ծառայել այլ անոթի համար:

Հայերի մոտ սովորություն է եղել Սուրբ Ծնունդի և Մկրտության տոների նախօրեին սննդի անոթների վրա մոմեր վառելը: Մոմերի համար նախատեսված բնիկը ագուցվում էր հիմնականում խփերի կենտրոնում, որը միաժամանակ ծառայում էր իբրև բռնակ: Այդպիսի խփեր մեծ քանակության հայտնաբերվել են Անիի պեղումներով²⁶¹:

ձեռածեփ ճրագները հիմնականում թասանման են՝ կլոր կամ քառակող պատերով (աղ. 14, նկ. 7, աղ. 15, նկ. 2, 3): Քառակող պատերով ձեռածեփ ճրագների մեծաքանակ մի հավաքածու հայտնի է Շատիվանքի պեղումներով: Ճրագների չորս անկյուններում սեղմումով ստացել են փոքրիկ քիթ-ծորակներ՝ պատրույզների համար²⁶²: Թասանման, պատրույզի համար նախատեսված ութ անկյուններով երկաթե ճրագ հայտնաբերվել է Անիի պեղումներով²⁶³:

Զահեր – գործածվել են եկեղեցիների ու մեծ շինությունների լուսավորության համար: Օգտագործվել են ոչ միայն մետաղե, այլև կավակերտ ջահերը: Այդպիսի մի ջահ

²⁵⁸ Орбели И., Каталог Анийского музея древностей, ИТ, Ереван, Изд. АН АрмССР, 1963, с. 66, 05. N 75.

²⁵⁹ Ժամկոչյան Ա., Բաբայան Ֆ., Միրիջանյան Դ., Հնագիտական պեղումները Տողի Մելիք Եզանի ընդունարանի հարավ-արևելյան և հարակից տարածքներում, *Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2010 թթ.*, Ստեփանակերտ, Պոլիգրաֆ, 2011, աղ. 2, նկ. 2:

²⁶⁰ Орбели И., Каталог Анийского музея древностей, с. 65, 09.А. N 24 (234).

²⁶¹ Орбели И., ук. соч., с. 66.

²⁶² Խաչատրյան Հ., Հայկաձորի քարանձավային բնակավայրի 2005 թ. պեղումները, էջ 79, նկ. 2:

²⁶³ Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում..., հատ. II, աղ. XXVII, նկ. 27:

պատահականորեն հայտնաբերվել է Անիում „չորս մույթերով շինության” միջից²⁶⁴։ Այն կարմիր կավից պատրաստված կուժ է, որի ներքևի և վերևի հատվածները շրջանակող ելնդավոր լայն գոտիների վրա ամրացվել են ոչ բարձր նստուկով կլոր թասիկներ։ Կժի ներսում ևս լույս են վառել, որի մասին են վկայում ելնդավոր գոտիների միջակայքում լույսի թափանցման համար արված օվալաձև և կլոր կտրվածքները։ Նման ջահերը թանկարժեք չէին, և պատկանել են միջին կամ չունևոր խավի տնային կարասիին։

Միջնադարում լուսավորության համար իբրև վառելանյութ օգտագործել են ինչպես մոմը, այնպես էլ մշակվող բուսատեսակներից՝ կտավատից, մասամբ և քունջութից ստացվող ձեթը²⁶⁵։ Հայտնի է, որ եկեղեցիներին տրվող նվիրատվությունների թվում, բացի ձիթհաններից, հիշատակվում են նաև ձեթը և ձիթատու բույսերը²⁶⁶։ Միջնադարյան Հայաստանում գոյություն է ունեցել վանքերի կողմից բնակչությունից գանձվող ձեթի ու ձիթամթերքի հարկ²⁶⁷։

Խումբ II - Կենցաղային նշանակության այլ իրեր։

Ծխամորճեր - պատրաստված են մանրահատիկ, առանց հավելումների բարձրորակ կարմիր, սպիտակ, մոխրագույն կավատեսակներից՝ երկփեղկ կաղապարներում։ Կիրառել են ծխամորճերի հարդարման երեք եղանակ՝ փորագիր, զարդարուն կաղապարանախշ և դրոշմազարդ։ Երբեմն կիրառել են հարդարման մի քանի եղանակ միասին։

Հայաստանի թանգարաններում պահվող և Լոռե բերդաքաղաքի պեղումներով հայտնաբերված շուրջ վաթսուն ծխամորճերի ուսումնասիրությամբ զբաղվել է հնագետ Ի. Ղարիբյանը։ ՀՀ տարածքից հայտնի ծխամորճերի ճնշող մեծամասնությունը գտնվել է Լոռեի պեղումներից, որտեղ, ըստ Ի. Ղարիբյանի, գործել է կավե ծխամորճերի սեփական

²⁶⁴ Орбели И., ук. соч., с. 67, 08.н. N 56 (216); Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ II, Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները, աշխատակցությամբ Ե. Մուշեղյանի, Երևան, Հայաստան հրատ., 1982, էջ 27, տախտակ XXXIX:

²⁶⁵ Հայաստանում այս բուսատեսակների մշակության և ձեթի ստացման մասին գրավոր տեղեկություններ հայտնի են դեռևս Ք. ա. VIII դարում՝ Վանի Ագռավաքար ժայռի վրա պահպանված Սարդուրի II-ի արձանագրության մեջ։ Տես՝ Меликишвили Г., Урартские клинообразные надписи, Москва, Изд. АН СССР, 1960, с. 228.

²⁶⁶ Ղաֆաղարյան Կ., Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 189, արձ. 185; Հարությունյան Ս., Անբերդ, էջ 55:

²⁶⁷ Հոբոսյան Ս., Հայոց ձիթհանության մշակույթը, էջ 72:

արտադրության արհեստանոց²⁶⁸: Ի. Ղարիբյանը ծխամորճերը դասակարգել է՝ առանձնացնելով չորս խումբ²⁶⁹:

1. փոքր, ուռուցիկ ներքնամասով և գլանաձև բարձր գլխիկով, կարճ ծխափողով, որոնց առանձնահատկությունը ներքնամասի կանեյուրազարդ ակոսավոր հարդարումն է²⁷⁰:

2. փոքր, ուռուցիկ ներքնամասով գլխիկով և ցածր շուրթերով: Գլխիկի ներքնամասերը դրոշմազարդ են: Նմանօրինակ ծխամորճ գտնվել է Մեծամոր գետի ափամերձ տարածքից՝ Ռանչպար գյուղի մոտ (աղ. 16, նկ. 11): Շուրթը կոտրված է: Պատրաստված է զարդարուն կաղապարի մեջ: Փոքր ուռուցիկ գլխիկի ներքնի հատվածը կազմված է ծաղկաթերթ հիշեցնող յոթ սեգմենտներից, որոնց բաժանարար ակոսագծերը հարդարված են մանր կետազարդերով: Ակոսագոտիներով են հարդարված գլխիկը ծխափողին միացնող սրածայր լեզվակը, ծխափողի եզրն ու միջնամասը: Ծխափողի և գլխիկի միացման հատվածում պահպանված է վարպետի կնքադրոշմը:

Ուշագրավ է Հայկաձորի պեղումներով հայտնաբերված ամբողջական ծխամորճը՝ պատրաստված սպիտակ մանրահատիկ կավից և լրացուցիչ սպիտակեցրած (աղ. 16, նկ. 14): Գլխիկն ուռուցիկ ներքնամասով է, շուրթը՝ կոտրված: Գլխիկի ներքնի հատվածը հարդարված է շեղ լայն ակոսների մեջ աստամնավոր անվակ գլորելու միջոցով ստացված զարդերով: Կանեյուրազարդ հատվածը վերևում ավարտվում է մանր եղունգազարդ հորիզոնական գոտիով: Նմանատիպ ծխամորճ հայտնի է և Մեծամորի պեղումներով (աղ. 16, նկ. 13):

Հայկաձորում հայտնաբերվել են նմանօրինակ ծխամորճի բեկորներ՝ պատրաստված սպիտակ կամ դարչնագույն կավով և լրացուցիչ սպիտակեցրած, որը հավանաբար տեղում կազմակերպված ծխամորճի արտադրության բնորոշ առանձնահատկությունն է (աղ. 16, նկ. 15):

Նմանատիպ հորինվածք ունի Թեղենյաց վանքում հայտնաբերված մուգ կարմրափայլ ծխամորճը (շուրթը կոտրված է): Ծխափողը պատրաստվել է առանձին, ապա ագուցվել գլխիկին: Վարպետն այնքան նրբորեն է մշակել երկու մասերի միացումից առաջացած կարերը, որ ծխամորճը թվում է կատարելապես միաձույլ: Գլխիկը հարդար-

²⁶⁸ Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, էջ 206:

²⁶⁹ Նույն տեղում, էջ 204-206:

²⁷⁰ Նույն տեղում, էջ 204, նկ. 19:

ված է կենտրոնից եկող ճառագայթաձև խորը գծագարդերով անջատված ութ սեգմենտներով, որոնց մեջ ստեղծվել է կետագարդերով ձևավորված V-աձև զարդանկար: Գլխիկի եզրերը գոտևորում է ծաղկաթերթ պսակը: Ծխափողի եզրը հարդարված է զույգ փորագիր գծագարդով: Ծխամորճն առանց մրի հետքերի է (աղ. 16, նկ. 12): Նմանօրինակ ծխամորճերի հավաքածու գտնվել է Ղրիմի Ս. Խաչ եկեղեցու պեղումներով, որոնք թվագրվում են XVI – XVII դդ.²⁷¹:

3. փոքր, տափակ գլխիկով՝ ամբողջությամբ դաջագարդ²⁷²,

4. անգարդ, որոնց միակ հարդարանքը թերևս գլխիկն ու ծխափողը միացնող լեզվակի շուրջ արված մանր կետագարդերն են: Այդպիսին է Թեղենյաց վանքի պեղումներից հայտնաբերված թերի ծխամորճը (աղ. 16, նկ. 6): Պատրաստված է մոխրագույն, մանրահատիկ, բարձրորակ կավից՝ լավ փայլեցրած մակերեսով: Գլխիկը հավանաբար եղել է զանգակաձև:

Կարելի է առանձնացնել ևս մի խումբ, որոնք ունեն զանգակաձև գլխիկ և ի տարբերություն ներկայացված չորս խմբերի ծխամորճերի, որոնց ծխափողերը գլխիկի նկատմամբ հորիզոնական են կամ քիչ են դեպի վեր բարձրացրած, սրանց ծխափողները կտրուկ են բարձրանում դեպի վեր:

Զանգակաձև գլխիկով հինգ ծխամորճ պահվում է Էջմիածնի պատմաազգագրական թանգարանում:

Ծխամորճերից առաջինը պատահական գտածո է՝ Էջմիածին քաղաքի պուրակից (աղ. 16, նկ. 1): Ունի զանգակաձև փոքր գլխիկ, որի շուրթի եզրով անցնում է կետագարդ ակոսագոտի: Գլխիկը ներքուստ հարթ հատակով է, իսկ ծխափողի անցքը՝ չափազանց փոքր: Գլխիկի վրա միակ հարդարանքը սրածայր տերևի դաջվածքն է: Ծխափողը գլխիկին միացած է ուղղահայաց կետագարդային կանեյրներով հարդարված ելնդավոր հովհարաձև լեզվակով: Ծխափողի վրա պահպանված է արաբատառ, դաջագարդ նշան՝ „Մազ” գրությամբ²⁷³: Ծխափողի եզրը պտուտակամերի (гайка) կերտվածք ունի,

²⁷¹ Бабалян Ф., Корхмазян Э., Монастырь Сурб Хач как центр армянской культуры в Крыму, Ереван – Симферополь, Изд. Наапет, 2008, с. 33-34:

²⁷² Ղարիբյան Բ., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, էջ 205-206, աղ. XLIV-1; Կատալոգ Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի, զիւրք 1, կազմ. Ս. Եսայան, Երևան, 1964, աղ. XIV, նկ. 1-4:

²⁷³ Արձանագրությունն ընթերցել է Տ. Միքայելյանը, որին մեր շնորհակալությունն ենք հայտնում: Ծխամորճերի վրա դրոշմված արձանագրությունները վերաբերել են պատրաստման վայրին կամ արհեստանոցին, ինչպես նաև մատնանշել են պատրաստող վարպետի անունը: Արաբատառ արձանագրությամբ

որից ներքև գույգ խորը ակոսագոտիներ են, որոնք ամբողջությամբ չեն գոտկում ծխափողը: Ծխամորճի խեցին դարչնագույն է, լավ փայլեցրած, օգտագործումից՝ սևացած: Գլխիկի չափերն են՝ բարձրությունը 3 սմ, բերանի բացվածքի տրամագիծը՝ 2.5 սմ, ծխափողի երկարությունը՝ 4.5 սմ:

Երկրորդ օրինակը չափերով կրկնում է առաջինին (աղ. 16, նկ. 3): Պահպանվել է գլխիկն ու այն ծխափողին միացնող սրածայր, բավականին խոր ընդգծված լեզվակը, որի եզրերն հարդարված են գույգ կետազարդ ակոսագոտիներով: Հարդարանքն ավարտվում է դաջազարդ եռատերևով: Նույնանման ծխամորճ հայտնի է Մեծամորի, Գառնիի պեղումներով²⁷⁴ (աղ. 16, նկ. 4):

Երրորդը դարձյալ պատահական գտածո է Էջմիածին քաղաքի արհեստական լճից (աղ. 16, նկ. 5): Ձևով և պարզ հարդարմամբ նման է նախորդ երկուսին, միայն եռատերև դաջվածքի փոխարեն կրում է եռամաս գալարազարդ: Ծխամորճը հետաքրքիր է նրանով, որ ծխափողի պահպանված հատվածում օվալաձև խորը մեղալիոնի մեջ հայատառ արձանագրությամբ կնքադրոշմ է: Տառերը հստակ չեն: Թերևս կարելի է ընթերցել ՉԹ կամ ՉԹ: Կնքադրոշմը ծխամորճերի վրա հանդիպող վարպետի նշանների համար սովորական դարձած տեղում է: Չի բացառվում վարպետի նշան լինելը, գուցե և պատրաստման տարեթիվն է՝ ՉԹ ընթերցելու դեպքում (709+551=1260): Կնքադրոշմի մեջ հայատառ արձանագրությամբ ծխամորճեր հայտնի են Հառիճից (Մ.Տ.)²⁷⁵, Կումայրիից (Մ.Տ.)²⁷⁶: Ծխամորճեր, այդ թվում հայատառ արձանագրություններով, հայտնաբերվել են նաև Վրաստանի ուշմիջնադարյան հուշարձաններում՝ Թիֆլիսի միջնաբերդ²⁷⁷, Ախալքալաք²⁷⁸:

ծխամորճեր հայտնաբերվել են միջնադարյան Բաքվի տարածքից, որոնք պատրաստող վարպետների անուններ են մատնանշել (Փարվիզ, Յուսիֆ վա Ասադ): Վարպետի անվան դրոշմումը վկայում է արհեստավորական տարբեր կազմակերպությունների միաժամանակ գոյություն ունենալու մասին: Տես՝ Исмизаде О., Ибрагимов Ф., Художественная штампованная керамика средневекового Баку, Баку, Изд. „ЭЛМ”, 1983, с. 39, таб. XXI А, рис. 1, 2.

²⁷⁴ Առաքելյան Բ., Կարախանյան Գ., Գառնի III, էջ 86-87, նկ. 35:

²⁷⁵ Բաբայան Ֆ., Հառիճի վանքահամալիրում հայտնաբերված ծխամորճերի թվագրության շուրջ, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը (Հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ), Գյումրի, 1996, էջ 33-34; նույնի՝ Հառիճի վանական համալիրը՝ իբրև պատմահնագիտական հուշարձան, ՀՀՄ 3, Երևան, „Մուղնի” հրատ., 2003, էջ 143, աղ. I-2:

²⁷⁶ Խաչատրյան Հ., Գյումրի. Հնագիտական ժառանգություն, ՇՀՀԿ ԳԱ XI, Գյումրի, „Գիտություն”, 2008, էջ 79-80:

²⁷⁷ Арчвадзе Т., Позднесредневековые керамические изделия восточной Грузии, АПФГ- III, Тбилиси, „Мецниереба”, 1978, с. 111-133.

²⁷⁸ Джандиери Е., Ахалкалаки в позднефеодальную эпоху, АПФГ- II, Тбилиси, „Мецниереба”, 1974, с. 49-67.

Չորրորդ ծխամորճն ամբողջական է, բավականին խոշորաչափ (գլխիկի բարձրությունը՝ 4.5 սմ, բերանի բացվածքի տրամագիծը՝ 4 սմ, ծխափողի երկարությունը՝ 5.5սմ): Միակ հարդարանքը ծխափողի կլոր դրոշմն է, որի պատկերը հստակ չէ (աղ. 16, նկ. 7):

Հինգերորդ ծխամորճից պահպանվել է միայն փոված շուրթով զանգակաձև գլխիկը (բարձրությունը՝ 4 սմ, բերանի բացվածքի տրամագիծը՝ 4 սմ): Շուրթի եզրագիծը հարդարված է կամարադեղների մեջ ներառած փորագիր ծաղկային հորինվածքով: Ծխամորճն աղյուսագույն է, լավ փայլեցրած, ներքուստ՝ մրապատ (աղ. 16, նկ. 8):

Ջանգակաձև գլխիկով ծխամորճի բեկոր հայտնաբերվել է Թեղուտի պեղումներով: Ունի մուգ կարմրափայլ մակերես: Եզրը հարդարված է նշաձև տերևների շարով: Պահպանված հատվածի վրա տեսանելի է շրջանակի մեջ ամփոփված արաբատառ զարդ (աղ. 16, նկ. 2):

Ծխամորճերի ծխափողներն ունեն ձևաբանական տարբեր հորինվածքներ: Հանդիպում են ուղիղ, ուռուցիկ, պտուտակամերի տեսքով օրինակներ (աղ. 16, նկ. 1, 7, 9, 10):

Ուշագրավ է Հայկաձորից գտնված նրբակերտ ծխամորճի ծխափողի հատվածը, որի ծայրը նման է տափօղակի: Ծխափողի եզրը խոր ակոսագոտիով առանձնանում է թեք գծիկներով հարդարված մեկ այլ ուռուցիկ հատվածից: Ունի ծխախոտի գլանակի տեղադրման համար նախատեսված ուղիղ գլանաձև շատ փոքր անցք (աղ. 16, նկ. 10):

Ծխամորճերի թվագրմանը վերապահումով ենք մոտենում, քանզի մեր տրամադրության տակ եղած գտածոները հիմնականում պատահական են, իսկ պեղումներով հայտնաբերվածներից ոչ բոլորն ունեն հստակ շերտագրական միջավայր: Համադրելի գուգահեռներով կարելի է թվագրել XVI – XVII դդ.:

Արտադրական և արհեստագործական գործիքներ (կաղապարներ, եռոտանի, ծեծիչ և այլն): Մեր տրամադրության տակ եղած նյութում չկան արտադրական իրեր (կաղապար, եռոտանի), բացառությամբ Շատիվանքի պեղումներով հայտնաբերված հենակոտքի, որը 7 սմ երկարության, 4.5 սմ տրամագծով ավազի խառնուրդ պարունակող դարչնագույն խեցուց պատրաստված գլանաձև իր է (աղ. 17, նկ. 1):

Առօրյա կենցաղում լայնորեն կիրառվել են անուշահոտ բույսերի, խնկի և այլ մթերքի ծեծիչներ: Շատիվանքի պեղումներով հայտնաբերվել է քառակող, ներքևի մասում քառակուսի՝ կլորացող եզրերով և դեպի վեր նեղացող ծեծիչ (տրամագիծը՝ 6.5 սմ, պահպանված բարձրությունը՝ 11 սմ) (աղ. 17, նկ. 2):

Կավակերտ արհեստագործական գործիքներից հնագիտական պեղումներով հայտնաբերվում են առավելապես տափակ կլորավուն իրեր՝ երբեմն միջանցիկ անցքով: Անոթների՝ գործածությունից դուրս գալուց հետո, նրանց կոտրված բեկորները երբեմն ենթարկվում են լրացուցիչ մշակման: Կոդերը տաշելու և կլորացնելու միջոցով ստանում էին 3 – 4 սմ տրամագծով կլոր կամ օվալաձև սկավառակներ, որոնցով հարդարում էին անոթների մակերեսները: Խեցուց պատրաստված նմանատիպ առարկաները ծառայում էին որպես գործիք կաշեգործության մեջ (աղ. 17, նկ. 4, 6):

Միջանցիկ անցքով առարկաները (տրամագիծը՝ 8-10 սմ, հաստությունը՝ 1-1.5 սմ) ծառայել են որպես ծանրոց-կախիչներ՝ իլիկի գլուխ, տնային պայմաններում բրդից թել մանելու համար (աղ. 17, նկ. 5): Կավե ծանրոց-կախիչները գործածվել են դեռևս վաղ բրոնզի ժամանակաշրջանից²⁷⁹: Ջուլիակույթյան մեջ, որը միջնադարում գլխավորապես տնայնագործական զբաղմունք էր, կիրառվում էին ոչ միայն ջնարակած կամ անջնարակ կավե ծանրոց-կախիչներ, այլև թեթև պեմզաքարից, փայտից, ոսկրից, նույնիսկ մետաղից պատրաստված նմանատիպ առարկաներ, որոնք *մակույկի (մագուգ, կկոց կամ կկույս)*²⁸⁰ մաս են կազմել²⁸¹:

Խումբ III – Շինարարական խեցեղեն:

Փողրակներ - Միջնադարյան Հայաստանում բավականին զարգացած էր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը, հատկապես խոշոր քաղաքներում, գյուղաքաղաքներում, ամրոցներում և պալատական համալիրներում²⁸²: Ջրամատակարարման համակարգի կառուցման վերաբերյալ բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել մատենագիտական և վիմագրական աղբյուրներում²⁸³: Ջրատար ցանցը կազմվում էր կավե փողրակներից, որոնք հաջորդաբար ագուցվում էին իրար, ապա ամրացվում կրա-

²⁷⁹ Տեղեկությունը հաղորդել է պ. գ. թ. Ս. Հոբոսյանը, որին մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում: Վաղբրոնզեդարյան ծանրոց - կախիչներ նա հայտնաբերել է Թեղուտի պեղումների ժամանակ:

²⁸⁰ Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում, հատ. I, էջ 268-269; Լիսիցյան Ստ., Զանգեզուրի հայերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 161:

²⁸¹ Двин IV, Город Двин и его раскопки, с. 51, таб. XVIII-7; Գևորգյան Ա., Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, Երևան, „Հայաստան“, 1978, աղ. XXIV:

²⁸² Март Н., Ани, Книжная история города и раскопки на месте городища, таб. XLI – 173, 174; Орбели И., Развалины Ани, История. Современное состояние. Раскопки. ИТ, с. 17; նույնի՝ Бани и скоморох XII в., ИТ, с. 318-319; Հարությունյան Վ., Անի քաղաքը, Երևան, „Հայաստան“, 1964, էջ 26-27, 51-53; Հարությունյան Ս., Անբերդ, էջ 45-48; Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հատ. I, նկ. 53, գծ. 54; Ղաֆադարյան Կ., Քալանթարյան Ա., Դվին II, էջ 48, գծ. 11, նկ. 31; Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, էջ 104, 114-116, գծ. 13, 21, 28:

²⁸³ Մովսես Խորենացի, Պատմագիրք Հայոց, հատոր երկրորդ, գիրք առաջին, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 165; ԴՀՎ, պրակ I, արձ. N 107, N 126, Ալիշան Ղ., Շիրակ, էջ 21:

շաղախով (աղ. 17, նկ. 7-9): Փողրակները տարբեր չափերի էին՝ լայն ու նեղ եզրերով (երկարությունը՝ 40-60 սմ, տրամագիծը լայն հատվածում՝ 11-18 սմ, նեղ մասում՝ 8-13 սմ): Նեղ հատվածում ունեին շրջանաձև, ուռուցիկ գոտի, հաջորդ խողովակին միանալու համար: Փողրակները պատրաստում էին ձեռքի և ոտքի դուրգերի վրա, համեմատաբար մեծ քանակության երկաթ պարունակող կավատեսակներից, որոնք դյուրահալ էին և արագ էին թրծվում: Ինչպես ջրամատակարարումը, այնպես էլ ջրահեռացումը լավ էր կազմակերպված հատկապես բաղնիքների շրջակայքում՝ կապված կեղտաջրերը հեռացնելու հետ²⁸⁴: Բնակելի հատվածներում ջրահեռացման համար փորում էին հատուկ հորեր, ուր խոշոր փողրակներով թափվում էին կեղտաջրերն ու կերակրի մնացորդները²⁸⁵: Ջրահեռացման հետաքրքիր համակարգ է բացվել 2012 թ. Քոբայրում՝ զանգակատան արևմտյան պատի և դրա դիմաց ժայռի միջև բացված մոտ 1,5 մ լայնությամբ միջանցքում, ուր ժայռի մեջ 3.9 մ երկարության առվակուս էր փորված, որի շարունակությունը 7 կավե փողրակներից կազմված խողովակաշարն է՝ 3 մ երկարությամբ: Ջրահեռացման նման համակարգը կիրառվել է բնականից հորդահոս ջրեր ունեցող Քոբայրի վանքի տարածքում ջրի կուտակումներից խուսափելու համար²⁸⁶:

Կավե փողրակները որպես օդամուղ էին ծառայում թոնիրների, հնոց-վառարանների պարագայում: Օդամուղ խողովակաշարի գոյության մասին են վկայում Օձուն գյուղում 2012 թ. մասնակի պեղված հնոց-վառարանի սլաքաձև բացվածքի արտաքին կողմում, բազալտե քարերի ուղղահայաց դասավորված շարքերի միջև հայտնաբերված տարբեր տրամագծեր ունեցող մեծ քանակության փողրակների բեկորները:

Ճարտարապետական հարդարանքի մանրամասներ - աղյուսե թրծած սալիկներ, տանիքի ծածկեր: Վաղ միջնադարում, շինարվեստում լայն գործածություն ունեցող կղմինդրները XII դարում դուրս են մղվում՝ իրենց տեղը զիջելով քարե սալերին, որոնք ավելի դիմացկուն էին և երկարակյաց:

Ուշ միջնադարում շինությունների տանիքները կավե կղմինդրներով ծածկելու ավանդույթը մասամբ վերականգնվում է, սակայն լայն տարածում չի գտնում: Կղմինդրածածկ տանիքներ ուշ միջնադարում գործածվել են հատկապես Արցախի ճարտարապետությունում, իսկ Սյունիքում հիմնականում օգտագործվել են օժանդակ շինություն-

²⁸⁴ Халпахчян О., Гражданское зодчество Армении (Жилые и общественные здания), Москва, Изд. литературы по строительству, 1971, с. 212, 216; Епремян Р., Водоснабжение древней и средневековой Армении, Ереван, изд. ЕрАСИ, 1992, с. 91.

²⁸⁵ Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հատ. I, էջ 54:

²⁸⁶ Միրիջանյան Դ., Բաբաջանյան Ա., Քոբայր վանական համալիրի զանգակատան պեղման աշխատանքների արդյունքները, ՊԲՀ, 2014, N 1, էջ 159-160, գծ. 3, նկ. 6:

ների ծածկերի համար²⁸⁷: XVI դարում կղմինդրը լայնորեն օգտագործվել է Վրաստանում՝ պաշտամունքային և պաշտպանական կառույցների ծածկերում²⁸⁸: XV դարում կղմինդրի օգտագործման մասին արձանագրում է թուրք ուղևոր Էվլիյա Չելեբին Երևանի բերդի կառուցման առիթով. «... Այնուհետև, 815 (1412) թվականին Իրանի Շահ Իսմայիլը իր վեզիրներից մեկին՝ Ռևան Կուլի խանին, հրամայում է մի բերդ կառուցել: Նա էլ 7 տարվա ընթացքում կառուցում և բերդին տալիս է իր անունը: Զանգի գետի (Հրազդան) արևելյան եզերքին ընկած, կղմինդրով և քարով շինված գեղեցիկ բերդ է, սակայն միհարկանի է»²⁸⁹:

Թեղենյաց վանքի 2008 թ. պեղումներով հայտնաբերվել են տանիքի ծածկի հետաքրքիր բեկորներ, որոնց մեջ առանձնանում է երկթեք կառուցվածքով, ուղղահայաց վերադիր ելնդավոր գոտիներով մասը (աղ. 17, նկ. 12): Այն ավարտվում է 1.6 սմ տրամագիծ ունեցող գամի համար նախատեսված անցքով, որով հավանաբար ամրացվել է տանիքին: Նմանատիպ ծածկի մասեր մեզ հայտնի չեն և դրանց թվագրության հարցն առայժմ բաց է:

Հայտնաբերված գտածոներում ճարտարապետական հարդարանքի ուշագրավ մանրամաս է Թեղենյաց վանքի պեղումներով հայտնի լուսամուտի բացվածքը շրջանցող պարակալը, որը շինության արտաքին հարդարանքի գեղարվեստական արտահայտչամիջոցների շարքում հատուկ տեղ է գրավում: Հետաքրքիր է, որ այն կավակերտ է և չի հանդիպում հայկական ճարտարապետական հուշարձանների լուսամուտների բացվածքների ձևավորման մեջ: Պարակալը բաղկացած է երկու բեկորից, որոնք թեև չեն միանում, սակայն լուսամուտի վերին շրջանագիծն ընդգրկող հատվածում ձևավորում են կիսաշրջան: Այն ընդգծված է հյուսածո զարդագոտիով, որը, շրջանցելով բացվածքի կիսաշրջանաձև մասը, թեքվում է հորիզոնական ուղղությամբ աջ և ձախ՝ նմանակելով հայկական եկեղեցական ճարտարապետության մեջ տարածված լուսամուտների կամա-

²⁸⁷ Հասրաթյան Մ., Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Երևան, ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1973, էջ 148:

²⁸⁸ XII դարից սկսած Վրաստանում կիրառվում է և ջնարակապատ կղմինդրը՝ հատուկ նշանակության կառույցների և եկեղեցիների ծածկերում: Տես՝ Джгама Д., Производство строительной керамики феодальной Грузии, АПФГ- I, Тбилиси, „Мецниереба“, 1969, с. 103.

²⁸⁹ Թուրքական աղբյուրներ, հ. Գ, Էվլիյա Չելեբի, էջ 81:

րունքերը: Հակառակ կողմում խոշոր ելուստ է՝ պատի մեջ ամրակայելու համար (աղ. 17, նկ. 10):

Ճարտարապետական հարդարանքի հետաքրքիր մանրամաս է 2013 թ. Թեղուտից պատահականորեն գտնված քառակուսի սալը (երկարությունը՝ 22 սմ, պահպանված լայնությունը՝ 17 սմ, հաստությունը՝ 11 սմ), պատրաստված դեղնաշիկավուն կավից՝ խոշորահատիկ ավազի խառնուրդով (աղ. 17, նկ. 11): Սալի հարթ դաշտը հարդարում է կորացած օձագլուխ եզրերով վերադիր խաչապատկերը (կեռիաչ, սվաստիկա): Այն ամենուրեք հայտնի է սկսած վաղ բրոնզե դարաշրջանից, իբրև բարեբախտության, հաջողության, բարգավաճման, պտղաբերության, չար աչքից պահպանման նշան²⁹⁰: Հայաստանում սվաստիկան առաջին անգամ հայտնվում է Ժայռապատկերներում: Վաղ շրջանի տարբեր հուշարձանների պեղումներով (Արթիկ, Ռեդկին-լագեր, Լոռի-բերդ, Վարդենիս, Մեծամոր և այլն) հայտնաբերված նյութերում սվաստիկա-նշանը հանդիպում է խեցանոթների, զենքերի, գոտիների, կնիքների, պերճանքի պարագաների, հագուստի հարդարանքում²⁹¹: Սվաստիկան հանդիպում է և պատերի շարվածքում²⁹²: Իբրև չար աչքից պահպանակ՝ սվաստիկայի նշանը շարունակում է գոյատևել և միջնադարում՝ խեցանոթների²⁹³, ճարտարապետական կառույցների²⁹⁴, կիրառական արվեստի տարբեր ոլորտների ստեղծագործությունների վրա²⁹⁵:

²⁹⁰ Սվաստիկա բառը ստուգաբանվում է բարի, լավ լինել: Տես՝ Լալայան Ե., Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, էջ 214-216; Բաբայան Ֆ., Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարդաձևերը, էջ 17-18:

²⁹¹ Хачатрян Т., Материальная культура древнего Артика, Ереван, АН АрмССР, 1963, с. 126, таб. 27; Каталог археологических предметов Дилижанского краеведческого музея, сост. С. Есаян, Г. Оганесян, Ереван, 1969, таб. XXXV-5, XXXVII-6; Бадалян Р., Агекян О., Раскопки Оромского некрополя (предварительный отчет о работах 1987 года), Археологические работы на новостройках Армении (Результаты раскопок 1986-1987 гг.) – I, Ереван, Изд. АН Армении, 1993, таб. LXIII; Деведжян С., Лори-Берд I (основные результаты раскопок 1969-1973 гг.), Ереван, Изд. АН АрмССР, 1981, таб. XIV-3; Դևեժյան Ս., Լոռի բերդ II, (Միջին բրոնզ), Երևան, «Գիտություն», 2006, նկ. 76-1; Esayan S., Gürtelbleche der älteren Eisenzeit in Armenian, Beiträge zur allgemeinen und vergleichenden archäologie, Band 6, München, 1984, p. 182, abb. 21/65; Փիլիպոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնիքագործության համակարգում, Երևան, «Արամ», 1998, աղ. 5, նկ. 5, աղ. 8; Нариманов И., Глиняные штампы из Западного Азербайджана, МКА, т. VII, Баку, изд. «ЭЛМ», 1973, с. 119-123; <http://www.shamkir-archeo.az/view/default.php?p=5>.

²⁹² Եսայան Հ., Տավուշ և Այգեձոր ամրոցների պեղումները և շքադրուսների հարցը, ԲԵՀ, 1994, N 1, էջ 165:

²⁹³ Բաբայան Ֆ., Միջնադարյան զարդավոր խեցեղենի նմուշներ, ԼՀԳ, Երևան, ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1973, N 12 (372), էջ 72-75; նույնի՝ Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարդաձևերը, նկ. 1, 2:

²⁹⁴ Սվաստիկայի պատկերներ կան Անիի աշտարակների վրա, Մանուչեի մզկիթի վրա հյուսածո քանդակագործերում, Կարսի դարպասների վրա: Տես՝ Март Н., Ани, Книжная история города и раскопки на

Անջնարակ խեցեղենի հարդարման եղանակները

Անջնարակ կավե գտածոներում մեծաքանակ են անգարդ բեկորները²⁹⁶: Սովորաբար դրանք մեծ չափերի կարասներ են, փոքր ու մեծ ջրամաններ, երբեմն նաև սեղանի առօրյա սպասքի առարկաներ: Միջնադարում լայնորեն կիրառել են անոթների հարդարման տարբեր հնարներ: Դրանց մեջ կան այնպիսիք, որոնք կատարված են բարդ տեխնիկայով և աչքի են ընկնում գեղարվեստական բարձր արժեքով: Միջնադարյան խեցեղենի հարդարանքում կիրառվել են հետևյալ հնարները:

Անգորապատում - այս կերպ հարդարվում էին հիմնականում հեղուկ մթերքի համար նախատեսված անոթները՝ գինու կարասները, կժերը, ջրամանները, սափորները, կոնքերը, կաթնամանները, թասերը: Անգորապատումը ոչ միայն հարթեցնում ու հաճելի տեսք էր տալիս անոթի մակերեսին, այլև ուներ գործառնական նշանակություն. Կանխում էր հեղուկի արտահոսքը: Կիրառվում էր հիմնականում սպիտակավուն անգոր, որն ամբողջովին փոխում է կարմրախեցի անոթների արտաքին տեսքը: Գործածական էին ոչ միայն գունային հավելումներով, անոթի խեցու գույնին համապատասխան կամ մոտ երանգների մանրակավե լուծույթներ (կարմրավուն, կանաչադեղնավուն), այլև ուշմիջնադարյան խեցեղենում անգորին երբեմն փոխարինում էր կաթնագույն կավի թույլ լուծույթը: Անգորով հարդարելու հնարներից մեկը ժապավենաձև նկարագարումն է կարմիր, աղյուսագույն մակերեսի վրա:

Կարմրաներկում – ավելի քան բնորոշ է սեղանի առօրյա սպասքի առարկաներին: Կարմրաներկման համար կարևոր էր անոթների ձևաբանական հորինվածքը, որը թելադրում էր և հարդարման համակենտրոն կամ շառավղային զարդակերպը: Այդ եղանակով հարդարված անոթների մեջ գերակշռում են ամբողջությամբ ներկած օրինակները: Լայնաբերան անոթները, թասերն ու քրեղանները կարմրաներկում էին ներքուստ, իսկ արտաքուստ միայն շուրթերը: Փակ անոթների պարագայում ներկում էին միայն արտաքին մակերևույթը: Ուշմիջնադարյան խեցանոթների հարդարման համար բնորոշ են կարմրաներկ հորիզոնական ժապավենների շրջագծերը, որոնք պարուրաձև գոտե-

месте городища, таб. XXXIX - 166, XL- 169, 262, Անի. Հազարամյա մայրաքաղաք հայոց, ալբոմ-կատալոգ, Երևան, Հայաստանի պատմության թանգարան, 2015, էջ 19:

²⁹⁵ Դավթյան Ս., Հայկական ասեղնագործություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, աղ. LXXXI:

²⁹⁶ Խեցանոթների պահպանված հատվածներում հարդարատարրերի բացակայությունը երբեմն չի խանգարում հասկանալու, որ դրանք պատկանել են անգարդ անոթների:

վորում են անոթները շուրթից մինչև հատակամաս: Հանդիպում են և ուղղահայաց ժապավենների տեսքով, զիգզագաձև²⁹⁷ և կենտրոնից ճառագայթաձև փովող տարբերակներ (աղ. 18, նկ. 2): XV դարից տարածվում և բնորոշ են դառնում բաց կամ մուգ կարմիր ցայտերը (աղ. 18, նկ. 3):

Փայլեցում - այս կերպ հարդարված խեցեղենը գործածվել է բավականին երկար ժամանակ՝ IX – XVI դդ.: Փայլեցրած անոթները բավականին թանկ արժեին, ունեն բարակապատ խեցի: Միջնադարում փայլեցմամբ հարդարվում էին առավելապես կարմրաներկ անոթները, ծխամորճերը (աղ. 10, նկ. 3): Ինչպես կարմրաներկման պարագայում, այնպես էլ փայլեցմամբ ստանում էին հորիզոնական և ուղղահայաց գոտիներ, գալարներ, ճառագայթներ, ցանցեր (աղ. 11, նկ. 1): Ի տարբերություն XII – XIII դդ. նրբախեցի կարմրափայլ անոթների, ուշմիջնադարյան անոթների կարմիր գույնը մուգ է, իսկ անոթները որակով փոքր-ինչ զիջում են նախորդ ժամանակաշրջանի նույնատիպ անոթներին:

Խեցանոթների մակերեսները երբեմն թրծելուց առաջ թաց լաթի օգնությամբ պատում էին ոսկեգույն փայլարով, որը հաճելի տեսք էր հաղորդում:

Նկարագարդում - վերջին տասնամյակում Արցախի, ինչպես և Սյունիքի միջնադարյան հուշարձանների պեղումներով հայտնաբերվում է կարմիր, շագանակագույն, կապույտ և սև ներկերով նկարագարդած խեցեղեն²⁹⁸, որը բնորոշ է XVII – XVIII դդ.: Զարդանկարները երկրաչափական են՝ ուղղահայաց ու հորիզոնական ժապավենների, զիգզագների տեսքով (աղ. 18, նկ. 4): Այդ կերպ հարդարված խեցեղենը նոր երևույթ է խեցեգործական արտադրության մեջ և կարոտ է մանրակրկիտ քննության: Մեր ատենախոսության մեջ այդ աշխատանքը չենք կատարել, քանզի այդ խեցեղենը վերաբերում է XVII – XVIII դդ. և քննարկու ժամանակաշրջանից դուրս է:

Փորագրում - միջնադարյան խեցեղենի մակերեսի հարդարանքի ամենատարածված հնարներից է: Հաճախ հանդես է գալիս հարդարման մյուս հնարների հետ համատեղ: Փորագրումը կատարվում էր փայտե, ոսկրե, մետաղե տարատեսակ գործիքներով, որոնց ուժեղ կամ թույլ սեղմելուց ստացվում էին խորադիր կամ խազի տեսքով գծա-

²⁹⁷ Ժամկոչյան Ա., Բաբայան Ֆ., Միրիջանյան Դ., Հնագիտական պեղումները Տոդի Մելիք Եզանի ընդունաբանի հարավ-արևելյան և հարակից տարածքներում, աղ. 2, նկ. 1:

²⁹⁸ Տեղեկությունը հաղորդել է պ. գ. դ. Ն. Պետրոսյանը, որին մեր շնորհակալությունն ենք հայտնում:

գարդեր (աղ. 17, նկ. 3): Տարածված հարդարատարներից են զուգահեռ զույգ գծերը, սանրաքաշ գծագարդերը, կետագծերը, ուղիղ, ալիքաձև, զիգզագաձև ակոսագարդերը, խաչագարդերը, հասկագարդը, որոնք գոտևորում են անոթի իրանի միջնամասը մեկ կամ մի քանի շարքով (աղ. 4, նկ. 6, աղ. 5, նկ. 8, 12, աղ. 8, նկ. 5, աղ. 18, նկ. 9-11, աղ. 31, նկ. 3-5):

Փորագիր հարդարատարներից ուշ միջնադարում լայնորեն տարածված են դառնում տարբեր գործիքների միջոցով սեղմումով ստացվող զարդանկարները՝ մանր ու խորադիր կետագծեր, շեղ գծեր, եռանկյուններ, քառակուսիներ, փոքր տրամագծով միջանցիկ ձողիկի միջոցով սեղմումով ստեղծված կլորակներ: Վերջիններս ծածկում են հիմնականում խփերի մակերեսները (աղ. 6, նկ. 3, 4, աղ. 18, նկ. 7, 8):

Փորագրման հնարներից է ատամնավոր անվակի կիրառումը՝ բնորոշ XIII– XIV դդ.: Զուգահեռ երկու-երեք ակոսագոտիների վրա պտտեցվում էր ատամնավոր շրջանաձև անվակը՝ հորիզոնական կամ ուղղահայաց ուղղություններով²⁹⁹ (աղ. 10, նկ. 3, 4):

Մակերեսի ռելիեֆային մշակում՝ ներձկումների միջոցով – կիրառվում էր փակ անոթների՝ սափորների, կժերի հարդարանքում: Տարածված էր անոթների մակերեսը ուղղահայաց կամ թեք կանելյուրներով հարդարելը, որը ստացվում էր սեղմելու միջոցով: Ուշ միջնադարում կանելյուրագարդ գոտիներով հարդարում էին սափորների կանթերը, ծխամորձերը (աղ. 5, նկ. 5, 6, աղ. 16, նկ. 13, 15):

Ներձկումներով հարդարում էին և անոթների պսակների եզրերը՝ ձևավորելով սափորների եռատերև հորինվածքը, պնակների ֆեստոնաձև շուրթերը (աղ. 9, նկ. 2, 3):

Վերադիր զարդեր – մեծ տարածում գտած հարդարատարներից է ժապավենաձև գոտին, որը շատ հաճախ լրացվում էր փորագիր զարդանկարներով: Հաճախ լինելով անոթի հարդարանքի միակ տարրը՝ վերադիր գոտին իր վրա էր բևեռում ողջ ուշադրությունը (աղ. 18, նկ. 9): Վերջինս ակնառու է հատկապես դրոշմագարդ կարասների պարագայում:

Վերադիր հարդարատարներից են հորիզոնական և ուղղահայաց ելնդավոր գոտիները՝ հարդարված փորագիր ուղիղ, թեք կամ եղունգով արված կոր գծաշարերով, մատնեքագարդով (աղ. 1, նկ. 5-10, աղ. 18, նկ. 12, 13, աղ. 28, նկ. 4, 5, աղ. 30, նկ. 4):

²⁹⁹ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., էջ 61, աղ. XXVI-8, 9:

Վերադիր առանձին զարդատարրերից են պայտաձև, սուր կոնաձև, բրգաձև ելուստները, կոճակազարդերը, կլոր բլթակազարդերը (աղ. 2, նկ. 4, աղ. 5, նկ. 3, 4, 7-9, աղ. 9, նկ. 5, աղ. 18, նկ. 14): Վերջիններս բավականին տարածված էին ուշմիջնադարյան (հատկապես վայոցձորյան) խեցանոթների հարդարանքում:

Վերադիր առանձին զարդատարրերից առանձնահատուկ ուշադրության են արժանի վերադիր պատկերները, որոնք գտածո հավաքածուներում փոքրաքանակ են: Դրանք հավանաբար X – XI դդ. տարածված վերադիր կենդանիների պատկերներով հարդարված կարասների նմանակումն են³⁰⁰: Մեր տրամադրության տակ եղած գտածոներում առկա են օձի և եղջերուի վերադիր պատկերներով կարասների բեկորներ (աղ. 18, նկ. 15, աղ. 36, նկ. 7): Օձերի մարմինները երբեմն լրացուցիչ հարդարում էին մատնեքազարդով՝ ուլունքաշարի տպավորություն ստեղծելով: Գալարվող օձի պատկերը հյուսածո զարդանախշի ձևով բնորոշ էր նաև շենքերի ճակատների հարդարանքում, որը հատկապես տարածվում է XIII դարի հայկական մոնումենտալ արվեստում³⁰¹:

Դաշտադեմում գտնված կարմրափայլ կարասի վրա ագուցած եղջերուն պատկերված է ցատկի պահին: Պատկերի ողջ հորինվածքը վերականգնել հնարավոր չէ, անոթի բեկորային լինելու պատճառով: Եղջերուի պատկերը հարզի էր արվեստի բոլոր բնագավառներում՝ քանդակ, մանրանկարչություն, գորգագործություն, խեցարվեստ՝ մասնավորապես կարասների դրոշմազարդ գոտիների վրա: Այն ոչ միայն սոսկ հարդարատարր էր, այլ որոշակի խորհրդաբանական իմաստ է կրել: Կապվում է ջրի պաշտամունքի հետ ³⁰²:

Դրոշմում – իրականացվում էր երկու եղանակով՝ 1. կլոր կամ եռանկյունաձև և 2. գլանաձև դրոշմիչների միջոցով (աղ. էր, նկ. 5, 6): Կլոր կամ եռանկյունաձև դրոշմիչի կիրարկման պարագայում պատկերները ստացվում էին միանգամյա սեղմումով, որը կրկնվում էր անոթի տարբեր հատվածներում, իսկ գլանաձև դրոշմիչը թաց կավի վրա

³⁰⁰ X – XI դդ. վերադիր կենդանիների պատկերներով հարդարված կարասներ հայտնաբերվել են Անիի պեղումներից: Տես՝ Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում ..., հատ. I, էջ 224, նկ. 33:

³⁰¹ Անիի պարսպի աշտարակներից մեկի վրա, ինչպես նաև խանապարի մուտքի բարավորի հարթաքանդակներում հանդիպում է օձի պատկեր, որը մուտքը պահպանելու նշանակություն է ունեցել: Տես՝ Якобсон А., Очерк истории зодчества Армении V – XVIII вв., Москва – Ленинград, Гос. Изд. архитектуры и градостроительства, 1950, с. 102-103.

³⁰² Հովսեփյան Գ., Ոսկերչական արվեստի մի նմուշ ԺԳ դարում (Խոտակերաց Ս. Նշան), Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հատ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 112:

զլորելու միջոցով ստանում էին նույնական պատկերների հաջորդական շարեր: Կլոր և գլանաձև դրոշմիչների օգնությամբ հարդարվում էին կարմրափայլ կարասների ուռուցիկ հատվածները բոլորող ժապավենաձև գոտիները:

Դրվագագարդում կաղապարով - հայտնի է դեռևս անտիկ ժամանակաշրջանից և լայնորեն կիրառվել միջնադարում՝ զարգացման բարձրակետին հասնելով XI – XII դդ.: Հարդարվում էին հիմնականում նրբախեցի սափորները, գավերը, սնդկամանները: Ուշ միջնադարում կաղապարակերտ անոթներ չեն հանդիպում: Հնարանքը կիրառվել է միայն ծխամորճերի հարդարանքում:

Այսպիսով, անջնարակ՝ անգարդ և զարդարուն խեցեղենն, ընդհանուր առմամբ, նախորդ ժամանակաշրջանի ժառանգական շարունակությունն է, թեև որակապես և հարդարատարրերի բազմազանությամբ զիջում է վերջինիս: Այն հիմնականում տեղական արտադրանք է, գտածո հավաքածուներում ներմուծած օրինակներ չեն հանդիպում:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՋՆԱՐԱԿԱԾ ԽԵՑԵՂԵՆ

Միջնադարյան Հայաստանի խեցեգործության առաջատար ճյուղը ջնարակած խեցեղենի արտադրությունն է, որը պատմական տարբեր ժամանակաշրջաններում կրել է նշանակալից փոփոխություններ: Քաղաքային մշակույթի զարգացման և հասարակության աճող պահանջմունքներին համապատասխան ջնարակած խեցեղենն աստիճանաբար անհատական պատվերից դառնում է զանգվածային արտադրություն, որը պայմանավորված էր տեխնոլոգիական առաջընթացով ու քաղաքներում արտադրողական ուժերի կենտրոնացմամբ: Ջնարակած խեցեղենի դերը կարևորվում է միջնադարյան Հայաստանի պատմության, նյութական մշակույթի, ինչպես նաև հասարակական, տնտեսական, առևտրա-դրամական հարաբերությունների ուսումնասիրման գործում:

Ջնարակած խեցեղենի արտադրությունը Հայաստանում սկսվում է IX դարի կեսերին, թեև ջնարակապատ գտածոներ հայտնի են տակավին միջինբրոնզեդարյան ժամանակաշրջանում (Վերին Նավեր³⁰³, Քարաշամբ³⁰⁴): Դրանք գերազանցապես հախճապակե ուլունքներ, զարդակախիկներ, ներդիրներ են³⁰⁵: Ք. ա. I հազարամյակի սկզբներին վերաբերող ջնարակած անոթներ հայտնաբերվել են Թեյշեբաինիում³⁰⁶, Լոռի - բերդում³⁰⁷, Մեծամորում³⁰⁸, Օշականում³⁰⁹ և այլ հուշարձաններում³¹⁰: Ջնարակած խեցեղեն մեծ քանակությամբ հայտնի է և Հայաստանի անտիկ հուշարձանների պեղումներով: Դրանցում, անշուշտ, տարբերակվում են տեղական, միջագետքյան և Միջերկրականի արևել-

³⁰³ Симонян А., Новая трактовка социокультурной общности эпохи средней бронзы Армении (по данным погребения N 12 из могильника Верин Навер), ИФЖ, Ереван, 1990, N 1, с. 201, 203.

³⁰⁴ 2013 թ. պեղումների արդյունքում Քարաշամբի միջինբրոնզեդարյան դամբարաններից մեկում հայտնաբերվել են հարյուրի հասնող ջնարակած անոթներ: Melikyan V., Newly found Middle Bronze Age tombs of Karashamb cemetery: Preliminary report, Aramazd vol. IX, issue 1, 2015, p. 224, table VII-1:

³⁰⁵ Հին շրջանի ջնարակն ուսումնասիրողները այն չեն առանձնացնում հախճապակե հիմքից: Стен` Лукас А., Материалы и ремесленные производства древнего Египта, с. 254; Шапова Ю., Очерки истории древнего стеклоделия, Москва, Изд. МГУ, 1983, с. 56-61; նույնի` Из истории древнейшей технологии стекла, в сб. „Очерки технологии древнейших производств“, Москва, Изд. „Наука“, 1975, с. 137-138.

³⁰⁶ Пиотровский Б., Кармир-блур III (Результаты работ археологической экспедиции института истории академии наук Армянской ССР и государственного Эрмитажа 1951-1953 гг.), АРА N 5, Ереван, 1955, с. 21, рис. 15.

³⁰⁷ Деведжян С., Лори-Берд I (основные результаты раскопок 1996-1973 гг.), Ереван, Изд. АН АрмССР 1981, с. 53-55.

³⁰⁸ Խանգաղյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է., Մեծամոր (Ուսումնասիրություն 1965-1966 թթ. պեղումների տվյալներով), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 72-73:

³⁰⁹ Есаян С., Калантарян А., Ошакан I (основные результаты раскопок 1971-1983 гг.), АРА N 18, Ереван, Изд. АН АрмССР, 1988, с. 78-80, 88, 94, рис. 2, таб. LXII -2.

³¹⁰ Караханян Г., Мирзоян В., Древние захоронения с поливной керамикой, ВОИ, Ереван, 1976, N 11, էջ 71-73; Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հատ. II, Երևան, 1982, էջ 118, աղ. XII, նկ. 3, 4.

յան ավերի կենտրոններից ներմուծված օրինակները³¹¹: IV դարի վերջերին ջնարակած խեցեղենի արտադրությունն անկում է ապրում և վերականգնվում IX դարում, արդեն նոր բաղադրությամբ ու որակով: Ի դեպ, ջնարակած խեցեղենի արտադրության վերածնունդը Մերձավոր ու Միջին Արևելքի, ապա և Միջին Ասիայի երկրներում տեղի էր ունենում գրեթե միաժամանակ՝ VIII դարի վերջերին – IX դարի սկզբներին (Աֆրասիաբ (Սամարղանդ)³¹², Սամարրա³¹³): Հարավային Կովկասում³¹⁴, մասնավորապես Հայաստանում ջնարակած խեցեղենը հայտնվում է IX դարի II կեսից ոչ վաղ³¹⁵:

IX դարում ջնարակած խեցեղենի կրկին հայտնվելը մասնագետների կարծիքով պատճառաբանվում է որոշ նախապայմաններով: Առաջին՝ այն ոչ թե տնայնագործական, այլ քաղաքներում կազմակերպված բարձր մակարդակի արհեստագործական արտադրություն էր: Երկրորդ՝ ջնարակած խեցեղենի վերարտադրությունը մասնագետները կապում են սասանյան մետաղե սպասքի արտադրության ընդհատման հետ³¹⁶: Բարձրակարգ շքեղ սպասք պատրասելու համար անհրաժեշտություն է առաջանում որոնել նոր որակի նյութ, որը կփոխարիներ արծաթե սպասքին: Ջնարակած խեցեղենն եղավ այն նոր որակը, որ փոխարինելու եկավ մետաղե սպասքին թե՛ մուսուլմանական Արևելքում, թե՛ Բյուզանդիայում:

Միջնադարյան ջնարակած խեցեղենի արտադրությունն իր գոյության ողջ ընթացքում համընդհանուր էր Արևելքի երկրներում: Արհեստագործական նորամուծություններն ու նրանց զարգացման փուլային հաջորդականությունը պարտադիր էին Մերձավոր ու Միջին Արևելքի, Միջին Ասիայի, Բյուզանդիայի բոլոր խեցեգործական կենտրոնների համար: Այդ իսկ պատճառով ջնարակած խեցեղենի զարգացման գործընթացում տեղի ունեցող փոփոխությունները գրեթե միաժամանակ էին ի հայտ գալիս բոլոր կենտրոններում:

IX – X դդ. ջնարակած անոթների համար գերակա է դառնում եռագույն՝ դեղին, կանաչ, շագանակագույն, երբեմն սև երանգներով, բուսական ու երկրաչափական զարդա-

³¹¹ Խաչատրյան Ժ., Հայաստանի անտիկ շրջանի ջնարակած խեցեղենը, ՊԲՀ, Երևան, 1977, N 3, էջ 184, 192:

³¹² Якобсон А., Средневековая поливная керамика как историческое явление, ВВ, т. 39, М., 1978, с. 149.

³¹³ Sarre F., Die Keramik von Samarra. In Die Ausgrabungen von Samarra, Bd. II, Berlin, 1925.

³¹⁴ Якобсон А., Художественная керамика Байлакана (Орен-кала), с. 228-302.

³¹⁵ Միջնադարյան Դվին քաղաքի Կենտրոնական թաղամասի պեղումներով հայտնաբերվել են բազմաթիվ բազմագույն և միագույն նկարազարդ, առանց փորագրության ջնարակած անոթներ՝ ամբողջական և բեկորային վիճակում, որոնք վերաբերում են շերտագրական հստակ միջավայրի՝ 893 թ. երկրաշարժից ավերված շինություններից: Տես՝ Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. II, էջ 209; Ղաֆադարյան Կ., Քալանթարյան Ա., Դվին II, էջ 89:

³¹⁶ Якобсон А., Средневековая поливная керамика как историческое явление, с. 150.

պատկերներով նկարագրողումն անմիջապես խեցու վրա: X դարի վերջին XI դարում գերակշռում է փորագրության հնարանքը, որը հարատևում և պարտադիր է դառնում XII – XIII դդ.: Փորագրումը խեցու վրա ծագումնաբանորեն մասնագետները կապում են գեղարվեստական մետաղի ընդօրինակման հետ: Գեղարվեստական խեցեղենում փորագրությունը հայտնի է դեռևս VII դարի չինական Տան դինաստիայի ժամանակներից, թեև Իրանում, Սիրիայում, Միջագետքում, Փոքր Ասիայում, Հարավային Կովկասում ու Բյուզանդիայում լայն տարածում է գտնում XI դարում՝ դառնալով հարդարման հիմնական ու ինքնուրույն ուղղությունը: Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում փորագրագարդն ուներ իր տեղական-ռճական առանձնահատկությունները:

Եթե IX – XI դդ. ջնարակած խեցեղենը կոչված էր բավարարելու մեծ մասամբ բարձրաշխարհիկ հասարակության պահանջները, ապա խեցեգործական արհեստի տեխնոլոգիական առաջընթացի և տեխնիկական նոր լուծումների շնորհիվ XII – XIII դդ. նկատվում է ջնարակած խեցեղենի ձևերի և հարդարատարրերի որոշակի միօրինականացում, որը հանգեցնում է զանգվածային արտադրության՝ բավարարելով արդեն լայն շուկայի պահանջարկը: Հայաստանի ջնարակած խեցեղենի զարգացումը սերտորեն կապված էր Իրանի, Բյուզանդիայի, Եգիպտոսի, Մերձավոր Արևելքի, Միջին Ասիայի երկրների խեցեգործական արտադրանքի զարգացման հետ: Ըստ էության, ջնարակած խեցեղենը, ընդգրկելով Միջերկրական, Սև ծովերի ափերը, Հարավային Կովկասը, Միջին Ասիան, ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքի երկրները, դիտարկվում է իբրև պատմա-գեղարվեստական երևույթ, որի օրինաչափ զարգացումը թեև ընդհանուր է հարդարման ու տեխնոլոգիական սկզբունքներով, սակայն տարբեր է տեղական ռճական առանձնահատկություններով³¹⁷:

Արդեն XI դ. վերջերին նկատվում են տեխնոլոգիական նոր միջոցների փնտրտուքներ, որոնք հանգեցնում են դրանց արմատավորմանը խեցեգործական արտադրության մեջ: Դա մեծապես կապված էր բարձրորակ խեցու, կապարային ջնարակի բարձրորակ տարբերակների (վառ թափանցիկ երկնագույն ջնարակ, անթափանց խիտ կապարաանագային ջնարակ՝ փիրուզագույն երանգով), գունավոր ներկանյութերի ստացման հետ: XII – XIII դդ. զանգվածաբար արտադրվում են միագույն կանաչ, դեղին ջնարակներով պատած անզարդ և փորագրագարդ խեցանոթներ: XII – XIII դդ. անոթների հարդարանքի հիմնական սկզբունքը փորագրման հնարանքի տարբերակներն են՝ ա. Ան-

³¹⁷ Նույն տեղում, էջ 149-150.

գործի վրա սուր գործիքով խոր զարդանկարների ստացում, բ. անգործի հեռացմամբ տարբեր պատկերների կերտում (ի դեպ, հենքը կամ բուն պատկերը հեռացնելու միջոցով, որով պատկերն ավելի խորքային է ստացվում): XII – XIII դդ. տարածված զարդաձևերից են բուսական ու երկրաչափական ոճավորված պատկերները, անկանոն եռանկյունին, որը երբեմն վերածվում է բուսական զարդի, ցանցազարդ, որը ծածկում է անոթների հատակները: Անոթները պատում էին կանաչ, դեղին, ինչպես նաև փիրուզագույն ջնարակներով: Անոթները բազմագույն ջնարակներով նկարազարդելու պարագայում գունային երանգներն ընտրվում էին ըստ զարդանկարի, իսկ պատկերը համապատասխանում էր փորագրությանը, որը ծառայում է իբրև նրա ուրվագիծ: Ի տարբերություն XI դարին բնորոշ թույլ փորագրազարդի, XII – XIII դդ. նկատվում է խորը փորագրություն: Հնագետ, արվեստի ու ճարտարապետության անվանի պատմաբան Ա. Յակոբսոնը այդ երևույթը կապում է ջնարակած խեցեղենի դեկորատիվ նշանակության այլ դրսևորման հետ: Այդ շրջանում ջնարակած անոթները գործածվում էին ոչ միայն որպես սեղանի շքեղ սպասք, այլև դառնում ճարտարապետական շինությունների ներքին ու արտաքին հարդարանքի մանրամասներ: Այդ իսկ պատճառով հեռվից դիտելի լինելու համար անհրաժեշտ էր զարդն ընդգծել խորը փորագրության միջոցով³¹⁸:

XII – XIII դդ. խեցանոթների կերտվածքում տարածվում են թռչնակերպ, կենդանակերպ, երևակայական կերպարներով „քանդակ-անոթներ”: Հարդարանքի տեսանկյունից խեցարվեստը սերտորեն աղերսվում է մանրանկարչության հետ (հատկապես իրանական): Զարդանկարի անքակտելի մասն են դառնում մարդկային և կենդանական պատկերաքանդակները՝ վերցված թե՛ իրական կյանքից, թե՛ էպիկական պոեմներից ու պատմվածքներից: Պատկերաքանդակի ներմուծումը խեցարվեստ առավել բնորոշ է Իրանին (նաև Բյուզանդիային), որտեղ իրական և դիցաբանական հերոսները միախառնվում են: Էպիկական հերոսները ստանում են իրական մարդկային կերպար, պատմական կերպարներին վերագրվում են լեգենդար արարքներ: XIV – XV դդ. գեղարվեստական խեցեղենում գերիշխող են դառնում դեկորատիվ զարդապատկերները՝ երկրորդ պլան մղելով պատկերաքանդակը³¹⁹:

XII դարում նկատելի վերելք է ապրում շողյուն խեցեղենը, արծնապակիով (эмаль) վերջնարակային նկարազարդման (մինաի) կիրառումը Իրանում և կոբալտի կրկին ներմուծումը գունային ներկապնակ:

³¹⁸ Նույն տեղում, էջ 154.

³¹⁹ Веймарн Б., Искусство арабских стран и Ирана VII-XVII вв., Москва, „Искусство“, 1974, с. 114-117.

Վերջնարակային շոդյունով նկարագարող խեցեղենը հայտնի էր դեռևս IX դարում, որի ծագման հայրենիքի, արտադրության անսպասելի ընդհատման ու վերստին հայտնվելու խնդիրների հետ կապված ուսումնասիրողները տարակարծիք են (Միջագետք, Եգիպտոս, Իրան)³²⁰: Շոդյունով նկարագարող խեցեղենը գործածվում էր իբրև տոնական սպասք և բավական թանկարժեք էր: Շոդյուն խեցեղենի ստացումը պահանջում էր թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների՝ ոսկու, արծաթի, պղնձի օքսիդների ու սուլֆատների կիրառում ջնարակի բաղադրության մեջ, տեխնիկական բարդ գործընթաց, որից հետո անոթի մակերեսը ծածկվում էր „մետաղական” թաղանթով: Լույսի բեկումը խեցատի մակերեսին անդրադարձնում էր յուրօրինակ փայլ, որի արդյունքում սույն խեցեղենը գիտական գրականություն մտավ „lustre” տերմինով: Մետաղական փայլը շնորհիվ ոսկեգույնի, շագանակագույնի, ձիթապտղի գույնի, մանուշակագույնի և այլ երանգների, ընդգծում ու գեղարվեստականություն էր հաղորդում զարդապատկերին: Բացի գեղարվեստական տպավորությունից, „lustre”-ն ուներ ևս մի կարևոր գործառույթ. „մետաղական” թաղանթն անոթի մակերեսը զերծ էր պահում քայքայումից (իռիզիացիա): XI դարում խեցեգործության ընդհանուր ճգնաժամի պայմաններում „lustre”-ն ասպարեզից դուրս եկավ ու նոր թափով վերարտադրվեց XII – XIII դդ.: Այդ շրջանում շոդյուն խեցեղենի մեջ տարբերակվում են կերպավորման երեք եղանակ՝ կոթողային, մանրանկարչական և քաշանյան:

Կոթողայինին բնորոշ են խոշոր արմավատերևները, գալարուն զարդերը, „քուֆի” գիրը, երբ ետնախորքը ծածկվում է շոդյունով, իսկ բուն պատկերը մնում սպիտակ: Թվագրվում է XII դ. վերջին քառորդով (Ռեյ³²¹):

Մանրանկարչականին տիպական են փոքր չափերի զարդանկարները, շոդյունով պատում էին երկրորդական նշանակության տարրերը: Կերպավորմանը հատուկ է „անփութությունը”, երկրորդական տարրերի ոչ ամբողջական պատկերումը: Այս ոճի վրա մեծ ազդեցություն է թողել իրանական միջնադարյան գրքարվեստը: Մանրանկարչական ոճով հարդարված շոդյուն խեցեղենը թվագրվում է XII դ. վերջին քառորդով և XIII դ. սկզբով:

³²⁰ Lane A., Islamic pottery from IX – XIV cc., p. 11; Pope A., The ceramic art in Islamic times. SPA, II, p. 1446; Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., էջ 91-92; Шелковников Б., Фаянсы, расписанные люстром по белой непрозрачной глазури из Орен-кала, Труды Азербайджанской (Орен-калинской) археологической экспедиции, том 1, МИА, N 67, Москва – Ленинград, Изд. АН СССР, 1959, с. 312.

³²¹ Pope A., Suggestion towards the identification of Medieval Iranian faience, p. 165-166; Шелковников Б., Фаянсы, расписанные люстром по белой непрозрачной глазури из Орен-кала, с. 314.

Քաշանյանին հատկանշական են ետնախորքը շողյունով լցնելը, կոբալտով նկարեն ժապավենազարդերն ու „նասխ“ գիրը: Թվագրվում է XIII դ. առաջին քառորդով:

Հայաստանի խեցեգործական երկու խոշոր կենտրոններում՝ Դվինում և Անիում, ծավալվել է շողյունով նկարազարդ խեցեղենի տեղական արտադրություն: Տեղական խեցեղենի կողքին պեղումներով հայտնաբերվել են և մեծ քանակության ներմուծած օրինակներ, որոնք ծագում են իրանական Ռեյ և Քաշան կենտրոններից, ինչը խոսում է վաղ-յություն է հայ-իրանական առևտրական աշխույժ հարաբերությունների վերաբերյալ³²²:

Շողյունով նկարազարդ խեցեղենը իլիսանական շրջանում էական փոփոխություններ է կրում, ինչպես արտադրության տեխնոլոգիայում, այնպես էլ կերպավորման մեջ: Իլիսանական շողյուն խեցեղենի հիմքը՝ քաշինը, որակապես զիջում է նախորդ շրջանի կարծրախեցի հիմքին, իսկ հարդարանքի առումով պատկերներն ավելի կոպիտ են դառնում:

Իլիսանական շրջանի կոբալտով ենթաջնարակային նկարազարդ շողյուն հախճապների բեկորներ հայտնաբերվել են Անիի պեղումներով: XIII – XIV դդ. իրանական շողյունով նկարազարդ խեցեղենի ներմուծումը զգալիորեն կրճատվում է՝ կապված առևտրական ճանապարհների ուղղությունների փոփոխության հետ: Այդ շրջանի շողյուն հախճապակե անոթների երկու բեկոր հայտնի են միայն Անիից: Վերաբերում են իրանական սուլթանաբաղյան դպրոցին, որը քննարկու շրջանում առաջատար էր շողյուն խեցեղենի արտադրության բնագավառում: Սուլթանաբաղյան խեցեղենին բնորոշ են թեմատիկ նույն տեսարանները, ինչ նախորդ ժամանակաշրջանում, միայն կատարման կերպի ու գույների ընտրության մեջ նկատվում են որոշակի տարբերություններ³²³: XV դարում շողյունով նկարազարդելու եղանակը անհետանում է և վերստին հայտնվում XVI – XVII դդ.:

XII – XIII դդ. Հայաստան թափանցեց և մինչև XIV դ. հարատևեց վերջնարակային նկարազարդմամբ խեցեղենի մի նոր տեսակ, որը հայտնի է „մինաի“ անվամբ: „Մինաի“ պարսկերենից թարգմանաբար նշանակում է արծնապակի, ջնարակ, կապույտ, խճանկար, զարդանկար: „Մինաի“ տերմինը շրջանառության մեջ մտավ XIX դարում՝ հնություններ վաճառող պարսիկ վաճառականների կողմից, բնորոշվելով որպես առանձնա-

³²² Ժամկոչյան Ա., Դվինի XII – XIII դարերի ներմուծված շողյուն հախճապակին, Հայագիտական հետազոտություններ, Պրակ Ա, Երևան, ԵՊՀ, 1974, էջ 123-129; նույնի՝ Դվինից հայտնաբերված պատկերազարդ մի անոթի մասին, ԼՀԳ, Երևան, 1978, N 8, 73-79:

³²³ Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., էջ 128, աղ. X 1, 3:

հատուկ զարդարուն խեցեղեն³²⁴: „Մինաի”-ն բազմագույն երանգներով հախճապակի է, որը իրանական խեցեգործական կենտրոնների մենաշնորհն էր: Այդ խեցեղենին բնորոշ է սպիտակ ետնախորքի վրա Շահ Նամեի տարբեր դրվագների բազմագույն պատկերումը: Կրկնում է պարսկական գրքային մանրանկարչության սկզբունքները: Հայաստանում „մինաի” խեցեղենի նմուշներ հայտնաբերվել են Դվինում և Անիում:

XII – XIII դդ. Հայաստանի խեցեգործական կենտրոններում տարածված էր շողյունով նկարազարդած խեցեղենի մեկ այլ տարբերակ, որը ուսումնասիրողների կարծիքով ծագել էր Մերձավոր Արևելքում (Եգիպտոս, Սիրիա) կամ Իրանում, սակայն է. Կվեթելդտի համոզմամբ այդ խեցեղենի հայրենիքը պետք է փնտրել նաև Հայաստանում³²⁵: Տվյալ խեցեղենին հատուկ է մուգ կապույտ ետնախորքի ոսկեգույնով վերջնարակային նկարազարդումը: Կոբալտի ու ոսկեգույնի համադրմամբ հախճապակու արտադրությունը Սիրիայում ու Հայաստանում սկսվել էր XII դարում և գոյատևել մինչև XIV դ., իսկ Իրանում՝ ընդհուպ մինչև XVII դ.:

XII դարը ջնարակած խեցեղենի արտադրության մեջ շրջադարձային էր, քանզի առաջին անգամ Իրանի և Միջին Ասիայի խեցեգործական կենտրոններում սկսում են կիրառել նոր բաղադրիչներով հագեցած երկնագույն ալկալիական ջնարակը, որն արագորեն տարածվում և գերիշխող է դառնում XIII – XIV դդ. խեցեգործության մեջ: Ալկալիական վաղագույն ջնարակը ստացել են Հին Եգիպտոսում դեռևս նախադինաստիական ժամանակներում (IV հազարամյակից վաղ)³²⁶: XI դարում այն կիրառվում էր Իրանում՝ հախճապակու արտադրության մեջ³²⁷: Թեև ալկալիական (մոխրաջրային, կալաքարային, հիմնային) ջնարակը ի տարբերություն կապարայինի պահանջում էր ավելի բարձր ջերմաստիճան, այնուամենայնիվ այն շահավետ էր, քանզի օգտագործվում էր ավելի էժան հումք, որը հենքին հարթ փովելով՝ առաջացնում էր ապակենման մակերես՝ ցուցադրելով գունային ներկապնակն իր ողջ հարստությամբ: Ներկանյութերը ալկալիական ջնարակի տակ այլ երանգավորում էին ստանում: Մեծ տարածում են ստանում երկնագույն, փիրուզագույն, կապույտ, սև, սպիտակ, մոխրագույն, մանուշակագույն, ձիթապտղի գույները, որոնք, ի տարբերություն նախորդ շրջանի չափազանց վառ գունապնակի, իրենց „համեստ” երանգավորմամբ նրբաճաշակ էին ու արտահայտիչ:

³²⁴ Коваль В., Керамика Востока на Руси IX – XVII вв., с. 48-49.

³²⁵ Кверфельдт Э., Керамика Ближнего Востока, с. 63.

³²⁶ Лукас А., Материалы и ремесленные производства древнего Египта, с. 96, 255, 275-276; Щапова Ю., Очерки истории древнего стеклоделия, с. 58.

³²⁷ Сайко Э., Среднеазиатская глазурованная керамика XII-XV вв., с. 21.

Խեցարվեստում նյութի ճիշտ ընկալմամբ պայմանավորվում է և գեղագիտությունը՝ շնորհիվ որի ֆունկցիոնալը դառնում է գեղեցիկ, իսկ հարդարումը՝ անհրաժեշտ³²⁸:

Այդ բոլոր նորարարությունները տեղի են ունենում որոշակի ժամանակահատվածում՝ XII – XIII դդ., երբ տեխնիկական արագ առաջընթացի պայմաններում մեծ թոփչք է կատարվում ջնարակած խեցեղենի արտադրության մեջ: Չնայած երկնագույն ալկալիական ջնարակը XII դ. նորամուծություն էր, սակայն մեծ ծավալներով գործածական է դառնում միայն XIII – XIV դդ. կենցաղային խեցեղենում և ճարտարապետական հարդարվեստում: Իրանական և առաջավորասիական խեցեգործական խոշոր կենտրոններում (Ռեյ, Քաշան, Սուլթանաբադ, Ռաքքա, Բաալբեկ և այլն) գերակա է դառնում երկնագույն ջնարակով և տեխնիկական տարբեր հնարներով ձևավորված խեցեղենը, այդ թվում և ենթաջնարակային նկարազարդումը տարբեր ներկերով: Նոր տարրեր են ներմուծվում և ավանդական դարձած խեցեղենի տեսականիում: Սկսվում է զարդաձևերի երկրաչափականացում, փորագիր զարդատարրերի նոր ու պարզ հորինվածքների մշակում: Փոփոխություն է կատարվում և գունային ներկապնակում:

Այսպիսով, XIII – XIV դդ. խեցեգործության մեջ նկատվում է երկու ուղղությունների համակցում՝ ա. նախորդ ժամանակաշրջանի ավանդույթների շարունակականություն, բ. նախորդ ժամանակաշրջանի ձեռքբերումների հիման վրա ջնարակած խեցեղենի որակական մեկ այլ տեսակի զարգացում, որն արդեն էապես տարբերվում էր նախորդից և աստիճանաբար դառնում գերիշխող խեցեգործության մեջ:

Քննարկվող ժամանակաշրջանում ջնարակած խեցեղենի հարուստ տեսականին տարբերակելու համար առաջին հերթին կարևորվում է նրանց ձևաբանական կերտվածքը, որով և պայմանավորվում է հարդարման կերպը: Ջնարակապատվում են հիմնականում սեղանի սպասքն ու ոչ մեծ տարողության անոթները (թասեր, քրեղաններ, պուլիկներ, պնակներ, մատուցարաններ, գավեր, փարչեր, փոքրիկ կճուճներ, փոքր տարողության սափորներ, կարասներ ու ճրագներ): XII – XIII դդ. խեցեղենի համեմատ, որտեղ նկատելի են ձևերի որոշակի երկրաչափականացում, կտրվածքների կտրուկ անցումներ, XIV դ. անոթներն, ընդհանուր առմամբ, պահպանելով XII – XIII դդ. կտրվածքների ուրվագծերը, ունեն ավելի սահուն կորագծեր ու անցումներ, ավելի կլոր ուրվագիծ, որը շատ հաճախ պայմանավորված էր խեցու բաղադրությամբ: Մեր տրամադրության տակ եղած խեցեղենը հնարավորություն է տալիս դասակարգելու թասերի ու քրե-

³²⁸ Веймарн Б., Искусство арабских стран и Ирана VII-XVII вв., с. 107.

դանների մի քանի տարբերակ. ա. ուղիղ պատերով, գրեթե գլանաձև թասեր, բ. ուղիղ պատերով, քիչ ներձկումով թասեր, գ. կանոնավոր կիսագնդաձև թասեր, դ. հատակից կտրուկ լայնացող պատերով և ուղղաձիգ կողերով քրեղաններ: Հատակները նույնպես տարբեր են. ա. ուղիղ կտրած քիչ խորությամբ, բ. կենտրոնում շեշտված խորությամբ, գ. տարբեր տիպի օղակաձև նստուկներով: Եզրերը (պռունկները) հաճախ ուղիղ կտրված են՝ շարունակելով պատերի կորագծերը կամ կտրուկ դուրս են թեքված՝ ձևավորելով մրճաձև պսակ (հայտնի են տակավին XII – XIII դդ.): XIII – XIV դդ. լայնորեն կիրառվում են ափսեներն ու մատուցարանները, որոնց պատերի հատվածքները գրեթե ուղիղից մինչև ամբողջովին կլոր են: Այդ շրջանից հայտնի են մեծ քանակության դեպի դուրս ճկված լայն, հորիզոնական պսակով սաղր քրեղանները (ափսեների, մատուցարանների տիպի): Անոթների հորինվածքն ու ձևերը թելադրում էին և զարդանկարման համակենտրոն կամ շառավղային կերպավորումը: Եթե խորը թասերի ու քրեղանների միագույն ետնախորքի վրա շեշտվում էր հատակամասը զարդարող ծաղկային հորինվածքը, ապա սաղր քրեղանների ու մատուցարանների զարդարումն ընթանում էր շառավղային սկզբունքով, զարդապատկերը տեղ էր գտնում լայն հորիզոնական պսակին և հատակից պսակ անցումային հատվածներում: Ավելի հաճախ հանդիպում են ուղղահայաց գծերի շարերը, որոնք հատվում են պսակն ընդգծող հորիզոնական գծերին:

Հանդիպում են նաև ամբողջովին զարդարուն անոթներ, որոնց բնորոշ են առավել քան բուսական հարդարատարրերը: Հարդարման նման կերպը բնորոշ է սևով նկարագարված և թափանցիկ երկնագույն ջնարակով պատած անոթներին:

Այժմ անդրադառնանք Հայաստանի ուշմիջնադարյան հուշարձաններից հայտնաբերված խեցեղենի դասակարգմանը ըստ տեխնիկական և զարդանախշման սկզբունքների: Առաջին հերթին պետք է ընդգծել, որ XIII – XIV դդ. խեցարվեստը զարգանում էր նախորդ շրջափուլի ձեռքբերումների հիման վրա:

Ջնարակած խեցեղենը XIII – XIV դդ.

ԽՈՒՄԲ I

Կապարային միագույն և բազմագույն ջնարակով պատած խեցեղեն

Հետազոտվող խեցեղենը նախորդ շրջանի համանման խեցեղենի անմիջական շարունակությունն է, սակայն որոշակի փոփոխություններով: Կապարային միագույն ջնարակով պատած խեցեղեն հայտնաբերվում է XIII – XIV դդ. թվագրվող միջնադարյան

գրեթե բոլոր հուշարձաններում: Դրանք հիմնականում մեծ ու փոքր չափերի քրեդաններ ու թասեր են: Խեցատը աղյուսագույն, շիկավուն և վարդագույն է:

1. *առանց լրացուցիչ հարդարանքի խեցեղեն*: Մեծամասնություն են կազմում անոթները, թեև հանդիպում են և շինարարական սալիկներ³²⁹:

Անոթներ – դրանց պահպանված բեկորների վրա հարդարանքի բացակայությունը չի կարող որոշակի պատկերացում տալ անոթի ամբողջական հարդարանքի վերաբերյալ: Այնուհանդերձ, *առանց լրացուցիչ հարդարանքի* ջնարակապատ անոթներն առանձին խումբ են կազմում և տարբերակվում են համաձայն գունային երանգավորման: Մեծ մասամբ հանդիպում են միագույն փիրուզագույնի, կապտականաչավունի, կանաչի, մանուշակա-շագանակագույնի բազմազան երանգներով, ինչպես նաև երկնագույն, գորշ դեղին կապարային ջնարակով պատած անոթները, որոնք լայն տարածում են գտնում սկսած XIII դ. II կեսից: Այդ շրջանում միագույն կապարային ջնարակով պատած անոթները երբեմն չեն անգործապատվում: Միագույն փիրուզագույն, մուգ կանաչ կապարային ջնարակով պատում էին նաև քթիկի մասում ներձկում ունեցող թասանման ճրագները³³⁰ (աղ. 14, նկ. 4):

Այդ անոթները տեղական արտադրանք են և իրենց համադրելի զուգահեռներն ունեն Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, Միջին Ասիայում, Ոսկե Հորդայում, Մերձսևծովյան շրջաններում:

Շինարարական խեցեղեն - Հայաստանի ուշմիջնադարյան հուշարձաններում տարածված էր սովորական կավից միագույն կանաչ, կապտականաչավուն, դեղին, շագանակագույն, սև ջնարակներով պատած պատերի և հատակների սալիկների կիրարկումը աշխարհիկ և պաշտամունքային շենքերի ներքին հարդարանքում³³¹: Ջնարակապատ ուղղանկյուն սալիկներով էին ծածկում բաղնիքների պատերն ու հատակները, որոնք զերծ էին պահում ավելորդ խոնավության կլանումից: Այդ է վկայում Լոռե բերդա-

³²⁹ Քանի որ ջնարակած խեցեղենի դասակարգումը առաջնահերթ կատարել ենք ըստ տեխնոլոգիական սկզբունքի, սովորական կավից պատրաստված շինարարական սալիկները քննարկում ենք այս բաժնում, իսկ հախճաասալերը համապատասխանաբար „XIII-XIV դդ. հախճապակի” բաժնում:

³³⁰ Kalantaryan A. etc., Armenia in the cultural context of East and West, pl. LIX-5.

³³¹ Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հատ. I, էջ 229; Եսայան Հ., Տավուշի միջնադարյան ջնարակած շինարարական խեցեղենը, ԼՀԳ, Երևան, 1999, N 1, 152-153, Բաբաջանյան Ա., Մեծամորը միջնադարում (ըստ խեցեղեն գտածոների), Մեծամոր. կեսդարյա պեղումների տարեգրություն, Մեծամոր հնավայրի պեղումների 50 և արգելոց-թանգարանի ստեղծման 45-ամյակներին նվիրված միջ. գիտ. հոդվածների ժողովածու, Երևան, 2015, էջ 229, աղ. 3, նկ. 10:

քաղաքի երկրորդ բաղնիքի և ամառային ջրավազանների տարածքների պեղումներով հայտնաբերված սալիկների բեկորների մեծ քանակությունը³³²:

Շինարարական խեցեղենում հանդիպում են միագույն ջնարակով պատած ջրատար փողրակներ և ծխնելույզի խողովակներ³³³: Հետաքրքիր են Տավուշի ամրոցի ստորին բերդի երկրորդ տեղամասում պեղված թոնիքներից մեկի ակի օդամուղ խողովակները՝ ծածկված կալիպտերով: Դրանք պատած են կապտականաչավուն ջնարակով³³⁴: Տավուշի ամրոցի պեղումներով հայտնի են նաև բաց կապտավուն ջնարակով պատած կղմինդրի բեկորներ, որոնց գլուխը եզակի է ուշմիջնադարյան շինարարական խեցեղենի ուսումնասիրման գործում: Տավուշ և Այգեձորի Աղջկա-բերդ ամրոցների պեղումներով հայտնաբերված ջնարակապատ շինարարական խեցեղենը թվագրվում է XIII – XIV դդ., որը հաստատում է նույն շերտերում գտնված Հուլավյան Աբուհ-Սայադինի պատկերով 1317 – 1335 թթ. Թավրիզում թողարկված արծաթե դրամը³³⁵:

2. միագույն կապարային ջնարակով պատած փորագրագարդ խեցեղեն: Նմանօրինակ խեցեղենում հաճախ է հանդիպում առանց անգոբի, անմիջապես խեցու վրա փորագիր զարդանկարը, որը բավական խորն է: Մեծ տարածում ունեն XIII – XIV դդ. և հաճախ է հանդիպում միջնադարյան հուշարձանների պեղածո գտածոներում: Փորագիր զարդը հիմնականում կազմված է զուգահեռ ակոսներից, որոնք գոտկում են անոթի եզրերը: Հանդիպում են կենտրոնից դուրս եկող ճառագայթաձև գոտիներից կազմված հորինվածք³³⁶, նաև բուսական ոճավորված զարդեր, գալարներ, զիգզագներ, անկանոն ոլորագարդեր, ուղիղ և ալիքաձև գծաքաշ ցանցազարդեր, որոնք ծածկում են անոթի հատակամասը: Ճառագայթների ներսում երբեմն կատարվում են լրացուցիչ փորագրագարդեր՝ ցանցի, երկրաչափական ու բուսական զարդապատկերների տեսքով (աղ. 19, նկ. 1-6)³³⁷: Վերոնշյալ խեցեղենում առանձնանում է Սելիմի քարավանատան 2012 թ. պեղումներով հայտնաբերված վարդագույն կապարային ջնարակով պատած քրեղանի բեկորը, որի

³³² Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, էջ 234-235, աղ. LIV:

³³³ Եսայան Հ., Իջևան – Տավուշի միջնադարյան շինարարական խեցեղենը, ՀԵՀ, 1996, N 2, էջ 61:

³³⁴ Եսայան Հ., Տավուշի միջնադարյան ջնարակած շինարարական խեցեղենը, ԼՀԳ, Երևան, 1999, N 1, էջ 152, 154-155; նույնի՝ Материальная культура бассейна реки Агстев в развитом средневековье, Ереван, 1992, Изд. ЕУ, с. 24, таб. XIV-3.

³³⁵ Եսայան Հ., Տավուշի միջնադարյան ջնարակած շինարարական խեցեղենը, ԼՀԳ, 1999, N 1, էջ 152, 154-156:

³³⁶ Kalantaryan A. etc., Armenia in the cultural context of East and West, pl. LX.

³³⁷ Հոստոունից գտնվել են բեկորներ, որոնք հար և նման են Հին Գանձակից գտնված օրինակներին: Левиатов В., Керамика Старой Ганджи, рис. 23, 13.

հատակի կենտրոնական մասը հարդարում է համակենտրոն գույգ շրջագծերի պարագծով տեղադրված գալարաձև խորը փորագրագարդը, որը ոճավորված բուսական մոտիվ է հիշեցնում: Խորը փորագրագարդի մեջ լցված ջնարակը ավելի մուգ և ռելիեֆային է: Փորագրագարդը, կիրարկություն ստանալով XI դարում, առավել տարածված է դառնում հատկապես XII – XIII դդ.: Շարունակում է գոյատևել և XIII – XIV դդ.՝ պահպանելով նախորդ շրջանից ժառանգած ավանդույթները, բացառությամբ փորագրման առավել բարդ հնարների գործադրման:

3. *միագույն կապարային ջնարակով պատած և սեղմումով ստացված զարդով խեցեղեն*: Նախորդ շրջանում՝ XII – XIII դդ., տարածված նմանատիպ խեցեղենի շարունակությունն է, թեև հետագայում լայն գործածություն չի գտնում՝ կապված տեխնիկական բարդ հնարների հետ³³⁸:

4. *երկգույն կապարային ջնարակով պատած փորագրագարդ խեցեղեն*: Ենթախումբը գրեթե ամբողջությամբ կրկնում է II ենթախումբում ընդգրկված խեցեղենը, միայն այն տարբերությամբ, որ անոթներն այս ենթախումբում ներքուստ և արտաքուստ պատած են տարբեր գույների ջնարակով: Հիմնականում կիրարկվել է ներքուստ բաց դեղնավուն, արտաքուստ՝ անոթի եզրին, բաց կանաչավուն երանգների համադրություն³³⁹:

5. *միագույն կապարային ջնարակով պատած և անգորի հեռացմամբ հարդարված խեցեղեն (champlevé կամ elaborate incised ware)*: Անգորի հեռացմամբ զարդանկար ստանալու հնարանքը երևան եկավ XII դ. և լայնորեն կիրառվեց XIII – XIV դդ.: Նման հնարանքով ստեղծված պատկերները ստացվում էին ըստ նախնական գծագրի՝ անգորի լայն շերտերը հեռացնելու միջոցով, որի հետևանքով դրանք ռելիեֆային տեսք ունեն: Ի տարբերություն XII – XIII դդ., XIII դ. II կեսին և XIV դարում զարդաձևերը հիմնականում երկրաչափական են՝ բաղկացած շեղանկյուններից, եռանկյուններից³⁴⁰: Անոթների հարդարումը շախմատաձև դասավորությամբ նմանակում է XII – XIII դդ. շենքերի ճակատների հարդարանքը³⁴¹: Թեղենյաց վանքի պեղումներով հայտնաբերված օղակաձև

³³⁸ Օրինակներ հանդիպում են Ոստինքի խեցեղեն հավաքածուում, որոնք աստենախոսության մեջ ներկայացված չեն:

³³⁹ Օրինակներ հանդիպում են Ոստինքի խեցեղեն հավաքածուում

³⁴⁰ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., աղ. XXXII-2, 3:

³⁴¹ Ճակատների հարդարումը շախմատաձև դասավորված երկգույն քարերով բնորոշ էր Անիի ճարտարապետական դպրոցին: Стен` Якобсон А., Очерк истории зодчества Армении V – XVIII вв., с. 98-101.

նատուկով քրեղանի ողջ դաշտը հարդարված է եռանկյուններով, որոնք շախմատաձև դասավորություն ունեն (աղ. 19, նկ. 7): Նմանօրինակ հարդարումով խեցեղեն հայտնի է Հայաստանի և հարևան երկրների բոլոր միջնադարյան հուշարձաններից³⁴²: Բ. Շելկով-նիկովը գտնում է, որ հարդարման այդ եղանակը բնորոշ է Կովկասին և դուրս չի գալիս նրա սահմաններից³⁴³: Անգորի հեռացման հնարանքով ստացված շախմատային դասավորությամբ երկրաչափական պատկերներով հարդարումը, կարծում ենք, առաջանալով Կովկասում, հետագայում, մեծ տարածում գտավ Բյուզանդիայում՝ Պալեոլոգոսների դինաստիայի ժամանակաշրջանում (1261 – 1453)³⁴⁴: XIV դարի առաջին կեսին այդ տիպի խեցեղենի արտադրության կենտրոններն էին Կոստանդնուպոլիսը, Թեսալոնիկեն, Սերեսն ու Նիկեան³⁴⁵: Շախմատաձև դասավորությամբ հարդարված խեցեղենը հանդիպում է սիրիական³⁴⁶, ոսկեհորդյան քաղաքների խեցեգործական կենտրոններում նույնպես³⁴⁷:

6. միագույն կապարային ջնարակով պատած և անգորով նկարազարդ խեցեղեն (աղ. 19, նկ. 10-13): XIII դ. վերջերին – XIV դ. սկզբներին վերստին գործածական է դառնում դեռևս X դարից հայտնի անգորով նկարազարդ խեցեղենը: Այդ եղանակով նկարազարդումն առավել բնորոշ է մահմեդական Եգիպտոսին և Բյուզանդիային³⁴⁸: Հայաստանում այն լայն կիրարկում չի գտնում: Անգորազարդ խեցեղեն հավաքածուներում առանձնանում է Շնող գյուղի համայնքային թանգարանում պահվող քրեղանը: Այն ներքուստ ծածկված է կապարային փիրուզագույն ջնարակով: Ջնարակի տակ սպիտակ անգորի լայն շերտերով անփույթ շրջաններ են նկարված: Ջնարակը ոչ անգորապատ հատվածներում թափված է: Համանման հարդարանքով, միայն մուգ շագանակագույն ջնարակով է պատած Դվինի հնագիտական հանգրվանում պահվող քրեղանը: Փիրուզագույն

³⁴² Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ II, Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները, էջ 34, տախտակ XL-1, 2; Мицишвили М., Производство поливной керамики в средневековом Тбилиси, Тбилиси, „Мецниереба“, 1979, таб. XXXVI-1, 2, XXXVII-1.

³⁴³ Шелковников Б., Художественная керамическая промышленность средневековой Армении, Известия АрмФАН, 1942, N 3-4 (17-18), с. 19-20.

³⁴⁴ Бочаров С., Группа византийских поливных чаш второй половины XIV в., Поливная керамика Средиземноморья и Причерноморья X – XVIII вв., под ред. С. Бочарова, В. Мыца, Киев, Изд. дом „Стилос“, 2005, с. 307, рис. 7-9: Առհասարակ, Բյուզանդիայի խեցեգործական կենտրոններում անգորի հեռացման հնարանքի կիրառումը անոթների հարդարման սիրված եղանակներից էր:

³⁴⁵ François V., Elaborate incised ware: Un témoin du rayonnement de la culture byzantine à l'époque Paléologue, Поливная керамика Средиземноморья и Причерноморья X – XVIII вв., p. 196, fig. 1.

³⁴⁶ Նույն տեղում, էջ 311, pl. 10-p.

³⁴⁷ Булатов Н., Классификация красноглиняной поливной керамики золотоордынских городов, Средневековые памятники Поволжья, Москва, изд. „Наука“, 1976, с. 80.

³⁴⁸ Кверфельдт Э., Керамика Ближнего Востока, с. 38, 80.

ջնարակով և կենտրոնից դեպի կողերը գնացող անգործի երիզներով է հարդարված Լոռեի պեղումներով հայտնաբերված քրեղանի բեկորը³⁴⁹։ Կապույտ ջնարակով և ներքուստ անգործի շառավղաձև շերտերով նկարագարված գրեթե ամբողջական մի թաս էլ հայտնի է Գառնիի պեղումներով (1967/154)³⁵⁰։ Դվինի միջնաբերդի պեղումներով հայտնաբերվել է XIII դարի II կեսով թվագրվող անգործով նկարագարող և դարչնագույն ջնարակով պատած լիարժեք և խոտանված քրեղանների ինքնատիպ մի հավաքածու, որը վկայում է XIII դարի վերջին տեղում նման խեցեղենի արտադրության մասին։

Նկարագարման ինքնատիպ լուծմամբ աչքի է ընկնում Մեծամորից հայտնի քրեղանը (ՄԹ 17/379), որի կենտրոնում ծաղկային հորինվածքն է՝ ամփոփված աստղաձև շրջանակի մեջ։ Աստղի թևերի միջև պատկերված են քառանկյան մեջ ներառված գալարներ։ Անոթը պատած է փիրուզագույն ջնարակով, որը վառ երանգավորմամբ երևում է զարդապատկերների վրա, իսկ ոչ անգործապատ հատվածները սև երանգ են ստացել³⁵¹։

Չնայած այդ եղանակով հարդարված խեցեղենը մեր տրամադրության տակ եղած գտածոներում սակավաթիվ է, սակայն նրա տարածման շրջանակները բավականին ընդգրկուն են։ Զուգահեռները տեսնում ենք Ղրիմի Ս. Խաչ եկեղեցու պեղումներով հայտնաբերված խեցեղեն հավաքածուում³⁵², Խերսոնեսի ուշբյուզանդական շրջանի շերտերում³⁵³, Ոսկե Հորդայի քաղաքների պեղումներով հայտնաբերված գտածոներում³⁵⁴, Բաալբեկի միջնադարյան խեցեղենում³⁵⁵։ Անոթների զարդապատկերը պարզ է՝ կազմված իրար հատվող ժապավեններից, որոնք խաչ-պատկեր են ձևավորում³⁵⁶։ Կապտականաչավուն ջնարակով և սպիտակ անգործի խայտերով է հարդարված 2014 թ. Էջմիածնի Մայր տաճարի հարևանությամբ իրականացված պեղումների արդյունքում հայտնաբերված քրեղանի հատվածը։

³⁴⁹ Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, աղ. LII/2:

³⁵⁰ Առաքելյան Բ., Կարախանյան Գ., Գառնի III, տախտակ IV; Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., աղ. XL/4:

³⁵¹ Բաբաջանյան Ա., Մեծամորը միջնադարում (ըստ խեցեղեն գտածոների), էջ 227, աղ. 3, նկ. 8:

³⁵² Бабаян Ф., Корхмазян Э., Армянские монастыри Сурб Хач и Св. Степаноса близ города Старый Крым, Ереван, „Гитутюн“ НАН РА, 2000, рис. 29; նույնի՝ Монастырь Сурб Хач как центр армянской культуры в Крыму, Ереван – Симферополь, Изд. Наапет, 2008, с. 31:

³⁵³ Ромачук А., Находки глазурованной керамики поздневизантийского времени в Херсонесе: местное производство и импорт, Поливная керамика Средиземноморья и Причерноморья X – XVIII вв., с. 97, 99, 102, рис. 8-1, 2.

³⁵⁴ Булатов Н., Классификация красноглиняной поливной керамики золотоордынских городов, с. 75-76.

³⁵⁵ Verena Daiber, The fine wares from Medieval Baalbek, Baalbek/Heliopolis, Results of archaeological and architectural research 2002 – 2005, BAAL, Hors-série IV, Berlin, 2006, p. 315, pl. 14-n.

³⁵⁶ Kalantaryan A. etc., Armenia in the cultural context of East and West, pl. XXVII-1.

Կապարային խիտ միագույն ջնարակով և տեխնիկական տարբեր միջոցներով հարդարված անոթները (փորագիր, սեղմում, անգոբի հեռացում, անգոբով նկարագարում) շարունակում են գործածվել մինչև XIV դ. կեսերը, սակայն նման խեցեղենի պատրաստման տեխնոլոգիան հնացել էր: Հանդիպում են օրինակներ, որոնց ջնարակի և անգոբի շերտերը հեշտությամբ պոկվում են, որոշ օրինակներ ընդհանրապես անգոբապատ չեն: Աստիճանաբար կապարային ջնարակով պատած խեցեղենը տեղը զիջում է ալկալիական ջնարակով պատած, միագույն ու բազմագույն նկարագարումով խեցեղենին:

ԽՈՒՄԲ II

Ալկալիական միագույն և բազմագույն ջնարակներով պատած խեցեղեն

Ինչպես արդեն վերը նշեցինք, ալկալիական ջնարակը կիրարկություն գտավ XI դարում, սակայն լայնորեն տարածվեց XIII դարի կեսերին: Այն ի տարբերություն կապարային ջնարակի, ավելի էժան էր և ձևավորելով առավել ողորկ մակերես, ի հայտ էր բերում խեցեղենի հարդարման նոր հնարներ: Ալկալիական ջնարակը, հարկավ, միանգամից դուրս չմղեց կապարայինը, քանզի խեցեղենի հարդարման մի քանի եղանակներ պահանջում էին կապարային խիտ անթափանց ջնարակապատ մակերես, ինչպես վերջնարակային նկարագարման պարագայում:

1. *Միագույն թափանցիկ ջնարակով պատած խեցեղենն* աչքի է ընկնում պարզությամբ: Խեցին կարմրավարդագույն է: Ջնարակումը կատարված է առանց անգոբի, անմիջապես խեցու վրա, որը յուրովի երանգավորում է ստանում թափանցիկ վարդագույն, դեղին, կանաչ, մուգ շագանակագույն ջնարակների տակ: Երբեմն անոթների միագույն մակերեսն աշխուժացնում են կիսակլոր մուգ կանաչավուն զարդապատկերները (աղ. 19, նկ. 14, 15, աղ. 20, նկ. 1):

2. *Անգոբով նկարագարող, թափանցիկ գունավոր ջնարակով պատած խեցեղեն:* Այս եղանակով հարդարված մեզ հայտնի միակ օրինակը Նորատուսի Ս. Աստվածածին եկեղեցու պեղումներից է: Գորշ դեղնավուն թափանցիկ ջնարակի տակ սպիտակ անգոբի բարակ ժապավեններով նկարեն պատկերն ավելի վառ ու գունեղ է երևում, քան ետնախորքը (աղ. 20, նկ. 2):

3. *Ալկալիական միագույն ջնարակով պատած փորագրազարդ խեցեղեն:* XIII դ. կեսերից Հայաստանում լայնորեն տարածում գտած խեցեղենի հարդարման միջոցներից է:

Փորագրագարողը բավական պարզ է: Թասերի և քրեղանների պռունկներն ու հատակներից դեպի պատերը բեկվող հատվածներն ընդգծվում են մեկ կամ զույգ փորագիր գծերով, ապա ջնարակապատվում: Ալկալիական ջնարակի հնարավորությունները հայ խեցեգործ վարպետները միանգամից չուրացրեցին: Եթե ջնարակի ընդարձակման գործակիցը մեծ է խեցու մակերեսի ընդարձակման գործակցից, ապա սառչելուց հետո ջնարակը լայն շերտերով պոկվում է խեցու մակերեսից: Հակառակ պարագայում, ջնարակը ծածկվում է մանր ճաքերով թրծվելուց անմիջապես հետո կամ էլ տարիներ անց՝ կախված միջավայրից³⁵⁷:

4. Բազմագույն ջնարակով պատած փորագրագարող խեցեղեն: Սա նախորդ ենթախմբի տարատեսակներից է, որտեղ գերակա են փորագիր ծաղկային տարբեր հորինվածքները՝ ոճավորված բուսական շիվեր, գալարներ, կիսաղեղներ: Սպիտակ կամ երկնագույն ետնախորքն աշխուժացնում են կապույտ, շագանակագույն, մանուշակագույն և կանաչ ցայտերը: Այդ կերպ է հարդարված Դվինի վերին շերտերում գտնված քրեղանի բեկորը³⁵⁸, որի հատակի սպիտակ ետնախորքի վրա փորագրությամբ ուրվագծված է ութաթերթ ծաղկային հորինվածք: Ծաղկաթերթերը ներկված են բազմագույն ջնարակով:

5. Ենթաջնարակային բազմագույն նկարագարումամբ, փորագրագարող խեցեղեն: XIII – XIV դդ. սահմանագլխին գործածական է դառնում խեցեղենի հարդարման մի նոր որակ, որում համատեղվում են փորագրագարողն ու նկարագարողը: Փորագիր զարդապատկերը պարզեցված է՝ զուգահեռ համակենտրոն գծերի կամ ոճավորված բուսական շիվերի տեսքով: Նկարագարումը կատարվում է բաց երկնագույն ետնախորքի վրա՝ առավելապես մանուշակագույն, սև-կապտավուն, ձիթապտղի գույներով: Խեցանոթների ընդհանուր հարդարանքը շատ հաճախ աշխուժացնում են գունավոր ցայտերը: Հարդարման տարբերակ է և անոթի միագույն ետնախորքի վրա զուգահեռ փորագիր գծերի մեջ գունավոր ներկերով լցնելը, որոնք ձևավորում են գունավոր ժապավեններ (աղ. 19, նկ. 9): Դվինի պեղումներով հայտնաբերվել են նաև քրեղաններ, որոնց փորագրությամբ ուրվագծած պարզ զարդապատկերները լցված են դարչնագույն ու կանաչ գույներով և պատած անգույն թափանցիկ ջնարակով (աղ. 19, նկ. 8):

³⁵⁷ Кверфельдт Э., Керамика Ближнего Востока, с. 25.

³⁵⁸ Ղաֆադարյան Կ., Քալանթարյան Ա., Դվին II, աղ. XLV-4:

Մյուս հայտնի տարբերակը անոթի երկնագույն մակերեսը փորագիր ցանցով պատելն էր, որի ցանցագծերը լրացուցիչ ներկվում էին մուգ գույնով, իսկ ձևավորված քառակուսիների դաշտը հարդարում կետագարդերով: Վանդակավոր ցանցագարդը տարածված էր XIII – XIV դդ. ջնարակած խեցեղենի հարդարանքում՝ ընդգրկելով աշխարհագրական լայն սահմաններ՝ Մերձվոլգյան շրջաններից մինչև Բալկաններ՝ ներառելով նաև Հարավային Կովկասը³⁵⁹: Հետաքրքիր են նաև պարզ փորագիր ուրվագծի մեջ ներկված պարզունակ ծաղկային հորինվածքները:

Հանձինս երկրորդ խմբի խեցեղենի՝ առաջին հինգ ենթախմբերով, խեցեգործ վարպետները յուրացնում էին հարդարման նոր հնարներ, ալկալիական ջնարակի հնարավորությունները՝ չիրաժարվելով դարավոր փորձից հինը համադրելով նոր ձեռքբերումների հետ:

6. թափանցիկ գունավոր ալկալիական ջնարակով պատած, ենթաջնարակային միագույն նկարագարդմամբ խեցեղեն: Այս ենթախմբի ջնարակած խեցեղենի ծագումը կապվում է իրանական խեցեգործական կենտրոնների հետ: Նման տեխնիկայով հարդարված խեցանոթների մեջ հանդիպում են թե՛ նուրբ, հստակ ուրվագծերով, թե՛ բավական հաստապատ ու կոպիտ անոթներ: Ենթախմբի լավագույն օրինակները գտնվել են Ռեյում, Քաշանում, Սուլթանաբադում, Առաջավոր Ասիայի, Միջին Ասիայի հայտնի խեցեգործական կենտրոններում³⁶⁰: Հայաստանում ևս լայն գործածություն են ունեցել: Մեծ քանակությամբ հայտնաբերվել են XIV – XV դդ. հուշարձաններում: Անոթների նկարագարդումը կատարված է կոբալտով, որը թրծելուց հետո ստանում էր սև, մանգանով՝ մուգ շագանակագույն, քրոմով՝ մուգ կանաչ երանգ: Ըստ ջնարակի գունային լուծումների տարբերակվում են.

³⁵⁹ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., աղ. XLI/3; Kalantaryan A. etc., Armenia in the cultural context of East and West, pl. LXIX-1; Բաբաջանյան Ա., Հայաստանի ԺԴ.-ԺԵ. դդ. ջնարակած խեցեղենը, Էջմիածին, 2014, է. աղ. 1, նկ. 7; Համեմատել՝ Белинский И., Масловский А., Импортная поливная керамика Азака (XIV в.), Поливная керамика Средиземноморья и Причерноморья X – XVIII вв., с.167, рис. 2/4; Белый А., Волошинов А., Карлов С., Поливная керамика золотоордынского времени из района Эски-Юрта, Поливная керамика Средиземноморья и Причерноморья X – XVIII вв., с. 184, рис. 1/1, 3, 4, 2/1, 3; Мицишвили М., Производство поливной керамики в средневековом Тбилиси, Тбилиси, „Мецниереба“, 1979, таб. XXXIX-1, 2; Левиатов В., Керамика Старой Ганджи, 1940, рис. 14.

³⁶⁰ Сайко Э., Среднеазиатская глазурованная керамика XII – XV вв., с. 45; Вактурская Н., Хронологическая классификация средневековой керамики Хорезма (IX-XVII вв.), рис. 34-1; Коваль В., Керамика Востока на Руси IX – XVII вв., ил. 31, 32.

ա. փիրուզագույն ետնախորքի վրա սևով նկարագարդ: Այս եղանակով աշխատելիս վարպետ-խեցեգործը ստացել է սևի և փիրուզագույնի ներդաշնակ ու գեղեցիկ համադրություն՝ ներկանյութ ունենալով կոբալտը³⁶¹: Կոբալտ առաջին անգամ օգտագործել են սամարրացի խեցեգործները՝ դեռևս IX դ.³⁶²: Առաջավոր Ասիայում լայն կիրառություն է ստացել միայն XI – XII դդ.: Հայաստանում ևս գտնվել են կոբալտով ջնարակապատած հախճապակե անոթներ Դվինի և Անիի պեղումներով, որոնք վերաբերում են IX – X դդ.³⁶³: Կոբալտը մեծ տարածում է գտնում ոչ միայն գեղարվեստական սպասքում, այլև XIII – XIV դդ. լայնորեն կիրառվում է ճարտարապետական հարդարանքում: Զննելով հայկական հուշարձաններում գտնված նմանատիպ խեցաբեկորները, կարող ենք առանձնացնել երկու տարատեսակ. *սևով նկարագարդված գալարվող շիվ*, երբեմն մեծ լայն տերևներով ու բացված ծաղիկներով՝ տարածված անոթի ողջ մակերեսով, ավելի փայլուն ու հյութեղ տեսքով (աղ. 20, նկ. 3, 4): Մյուս տարատեսակը ներկայացնում են լայնաբերան պնակները, որոնց փիրուզագույն ետնախորքը հարդարում են *խավրած պատկերները կամ լայն ժապավենները*՝ բոլորելով պնակների պտունկները, ծածկում հատակի գոգավոր դաշտը (աղ. 20, նկ. 5): Հանդիպում են նաև երկրաչափական և բուսական ոճավորված զարդանկարներ: Նորավանքի գտածո թասի պատերը ծածկված են ուղղահայաց սև ժապավենների հաջորդական շարերով, իսկ կենտրոնը՝ կետագարդերով ձևավորած ծաղկային հորինվածքով³⁶⁴ (աղ. 20, նկ. 6):

Այս տարբերակին բնորոշ են նաև կենտրոնից դուրս եկող ճառագայթաձև հորինվածքի միջակայքերում բուսական իրական պատկերները (նռնենի, կակաչ, շուշան): Բուսական հարդարատարրեր են կրում Գառնիի³⁶⁵, Անիի³⁶⁶, Թեղենյաց վանքի պեղումներով հայտնի օրինակները³⁶⁷ (աղ. 20, նկ. 8):

³⁶¹ Կոբալտը ջնարակած խեցեղենի հարդարանքում կիրառվում էր ա. ներկանյութ՝ թափանցիկ և անթափանց ջնարակների պարագայում, բ. ներկանյութ՝ անթափանց ջնարակի վրա վերջնարակային նկարագարդման համար, գ. ներկանյութ՝ ենթաջնարակային նկարագարդման պարագայում: Վերջինս, ի տարբերություն առաջին երկու տարբերակների, տարածվում և բնորոշ է դառնում միայն XIII դ. սկսած: Տես՝ Булатов Н., Кобальт в керамике Золотой Орды, СА, Москва, Изд. „Наука“, 1974, 4, с. 135.

³⁶² Sarre F., Die Keramik von Samarra, pp. 56-57.

³⁶³ Шелковников Б., Художественная керамика двинских раскопок, с. 194-195; նույնի՝ Китайская керамика из раскопок средневековых городов и поселений Закавказья, с. 368; Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., էջ 89-92, աղ. 1ա, 5:

³⁶⁴ Kalantaryan A. etc., Armenia in the cultural context of East and West, pl. LIX-4:

³⁶⁵ Առաքելյան Բ., Կարախանյան Գ., Գառնի III, տախտակ V; Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., աղ. XXXVIII-4, XXXIX-1-3; Kalantaryan A. etc., Armenia in the cultural context of East and West, pl. LXIX- 3, 4.

բ. երկնագույն ետնախորքի վրա սևով նկարագարող: Գույների ներդաշնակ համադրության շնորհիվ այս եղանակով հարդարումը բավական լայն տարածում ունեցավ XIII – XIV դդ. ջնարակած խեցեղենի մեջ: Այն մեծ քանակությամբ հայտնաբերվել է Հայաստանում, Միջին Ասիայի, Իրանի քաղաքներում և, առհասարակ, մահմեդական բոլոր երկրներում: Այդ տարատեսակի նախօրինակը XII դարում Հայաստանում, Սիրիայում, Եգիպտոսում ու Իրանում հայտնի *սիկուլո-արաբական* կոչվող շողյուն հախճապակին է, որի վերջնարակային շողյուն նկարագարողումը լաջվարդի ետնախորքի վրա լույսի բեկմամբ ստեղծում է սևի ու երկնագույնի ներդաշնակ խաղ ³⁶⁸:

Խմբի լավագույն օրինակը Արտաշատում գտնված խեցաբեկորն է (աղ. 20, նկ. 9), որի վճիտ երկնագույն ետնախորքի կենտրոնում ստորակետերից կազմված ծաղկային հորինվածք հիշեցնող պատկեր է: Ընդհանրապես, XIV դարում անոթների հարդարման ոճն ավելի պարզեցված է, քան նախորդ շրջանի օրինակներում: Հարդարվում են համակենտրոն լայն շրջագծերի մեջ ամփոփված ոճավորված զարդապատկերներով, ցանցազարդերով: Նմանատիպ հարդարանքով անոթներ հայտնի են Գառնիի³⁶⁹, Անիի³⁷⁰, Անբերդի³⁷¹ պեղումներով: Դրանք տարածված էին և առաջավորասիական, միջինասիական խեցեգործական կենտրոններում (Սարայ-Բերկե³⁷², Ուրգենչ)³⁷³: Այս կերպ հարդարված անոթների վրա հաճախ հանդիպում են կենդանիների պատկերներ³⁷⁴: Եթե փիրուզագույն ետնախորքի համադրությամբ կոբալտը ստանում է սև գույն, ապա երկնագույն ետնախորքի դեպքում այն արտահայտվում է կանաչ երանգով: Այդ համադրությունը յուրօրինակ գրավչություն է հաղորդում անոթներին (աղ. 20, նկ. 10-13):

³⁶⁶ Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., աղ. IX – 5, IXա – 8:

³⁶⁷ Համեմատել Матюхина Ю., Моржерин К., Золотоордынская поливная кашинная керамика из Укека, Поливная керамика Средиземноморья и Причерноморья X – XVIII вв., с. 112, рис. 5-7; Marilyn Jenkins-Madina, Raqqa revisited: Ceramics of Ayyubid Syria, The Metropolitan Museum of Art, New York, 2006, p. 84, 85.

³⁶⁸ Булатов Н., Классификация кашинной поливной керамики золотоордынских городов, СА, Москва-Ленинград, Изд. „Наука“, 1968, N 4, с. 103; Verena Daiber, The fine wares from Medieval Baalbek, p. 309, pl. 8-p.

³⁶⁹ Առաքելյան Բ., Կարախանյան Գ., Գառնի III, տախտակ IV; Պետրոսյան Հ., նշվ. աշխ., աղ. XXXIX – 4:

³⁷⁰ Ժամկոչյան Ա., նշվ. աշխ., աղ. IX – 3:

³⁷¹ Измайлова Т., Керамика из раскопок Анберда, с. 188.

³⁷² Սարայ-Բերկեյում դեռևս XIII դարում հայկական զաղութ էր ստեղծվել, որտեղ աշխատում էին հայ արհեստավորներ: Հիշատակվում է Սարգիս անունով հայ կավագործը: Տես՝ Караханян Г., Неполиванная орнаментированная керамика из раскопок Двина и Ани, Автореферат, Ереван, 1954, с. 17:

³⁷³ Якубовский А., К вопросу о происхождении ремесленной промышленности Сарая-Берке, ИГАИМК, 1931, т. VIII, в. 2-3, с. 39, рис. 17-20; Белый А., Волошинов А., Карлов С., Поливная керамика золотоордынского времени из района Эски-Юрта, с. 183-189, рис. 2/3; Danti M. D., The Ilkhanid heartland: Hasanlu tepe (Iran) period I, Philadelphia, University of Pennsylvania museum of Archaeology and Anthropology, 2004, pl. C, fig. 2, pl. E, fig. 3.

³⁷⁴ Измайлова Т., ук. соч., с. 187.

գ. դեղին ետնախորքի վրա սևով նկարագարդ: Ի հայտ են գալիս նաև գունային նոր համադրությամբ՝ սևով նկարագարդ, դեղին ջնարակով պատած անոթներ: Նորավանքի պեղումներով հայտնաբերված ոչ բարձր օղակաձև նստուկով թասի հատակին դեղին թափանցիկ ետնախորքի վրա կոբալտով նկարած թուփ է: Դեղինի և կոբալտային վճիտ կապույտի համադրությունը նկարին հաղորդել է մուգ շագանակագույն երանգ (աղ. 21, նկ. 1, 2): Ծաղիկներով ու շիվերով է պատած Կուրիսի Ս. Ամենափրկիչ եկեղեցու 2012 թ. պեղումներով հայտնաբերված քրեդանը³⁷⁵: Նմանատիպ զարդապատկերով անոթի բեկոր հայտնի է նաև Լոռե բերդաքաղաքի պեղումներով: Պահպանված բեկորի վրա նկատելի չեն բացված ծաղիկները, սակայն ներքնի հատվածում պահպանվել են ցողունից դուրս եկող նշաձև կոկոնները³⁷⁶: Դեղին ետնախորքի վրա հանդիպում են նաև բուսական ու երկրաչափական այլ զարդանկարներ³⁷⁷:

դ. սպիտակ ետնախորքի վրա սևով նկարագարդ: Հայտնի է Եղեգիսի պեղումներով, որտեղ անոթի ողջ դաշտը ծածկված է գալարվող սահող շիվով: Անոթի զարդապատկերման հորինվածքն ամբողջությամբ կրկնում է Արտաշատից հայտնաբերված անոթը այն տարբերությամբ, որ փիրուզագույնի փոխարեն ետնախորքը կաթնագույն է (աղ. 20, նկ. 7):

Կաթնագույն ետնախորքի վրա միագույն նկարագարդման ևս մի տարատեսակ լայնորեն տարածված էր XIII – XIV դդ. մերձավորարևելյան ու միջինասիական խեցեգործական կենտրոններում³⁷⁸: Դա անոթների հարդարումն էր շագանակագույն ուղղահայաց ժապավեններով թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ: Այդպիսի նկարագարդմամբ անոթներ Հայաստանում հայտնի են Գառնիի³⁷⁹, Անիի³⁸⁰, Լոռե բերդաքաղաքի³⁸¹ պեղումներով: Վերջինս ներքուստ կենտրոնում ունի իրար մեջ հյուսած քառաթև զարդանկար՝ ներառված բարակ ուրվագծով ելուստաձև եզրերով ռոմբաձև զարդի մեջ:

ե. կաթնագույն կամ բաց երկնագույն ետնախորքի վրա ձիթապտղի գույնով նկարագարդ: Կանաչ գույնը ստանում էին երկաթի կամ պղնձի օքսիդով: Նկարագարդման նման պարագայում գերակշռում են լայն ժապավեններով ստացված երկրաչափական

³⁷⁵ Նալբանդյան Ա., Վարդանյան Խ., Ազարակի Ամենափրկիչ եկեղեցու ուսումնասիրությունը, Հուշարձան տարեգիրք, N 9, 2014, աղ. 2:

³⁷⁶ Ղարիբյան Բ., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, աղ. XLVIII-1:

³⁷⁷ Նույն տեղում, աղ. L-4:

³⁷⁸ Lane A., Islamic pottery from IX – XIV cc., pic. 57.

³⁷⁹ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., էջ 70, աղ. XXXVII-5:

³⁸⁰ Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., աղ. VIIIա - 8:

³⁸¹ Ղարիբյան Բ., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, աղ. XLVIII-3, 4:

պատկերները, անոթների եզրերի գույգ ալիքազարդերը, անկանոն զիգզագները և գծաքաշ ոլորապտույտ գալարները³⁸² (աղ. 21, նկ. 4, 5): Կոբալտի փոխարինումը այլ օքսիդներով կապված էր հավանաբար կոբալտի հանքանյութի սղության հետ:

զ. կաթնագույն էտնախորքի վրա թանձր շագանակա-մանուշակագույնով նկարազարդ: Մանուշակագույնն իր տարատեսակ երանգներով պայմանավորված էր մանգանի օքսիդով: Նկարազարդման մեջ ամենից հաճախ հանդիպում է անոթների եզրերին „ծովային ալիք” հիշեցնող զարդամոտիվ-պատկերը (աղ. 21, նկ. 7):

7. թափանցիկ անգույն և գունավոր ալկալիական ջնարակով պատած, ենթաջնարակային բազմագույն նկարազարդմամբ խեցեղեն:

ա. երկնագույն էտնախորքի վրա բազմագույն նկարազարդ: Տեսակին բնորոշ է պարզ և զուսպ հարդարումը՝ բեկվող, ուղղաձիգ, թեք գծեր, հյուսքեր, ալիքազարդեր, գալարներ և այլն: Գերակա է շագանակագույն, մանուշակագույն, մոխրագույն, կապույտ պաստելային երանգների նուրբ համադրումը՝ լրացված փիրուզագույն ցայտերով (աղ. 21, նկ. 6, 8, 9)³⁸³: Փիրուզագույնը XII դարում ներմուծվելով խեցարվեստ, դառնում է նրա ներկապնակի անբաժան գունատարրը: Համաձայն մոնղոլական ժողովրդական հավատալիքների, երջանկություն էր բերում, և ինչը կարող էր պարգևել առավել ուրախություն ու անընդհատ հիշեցնել այդ մասին, եթե ոչ առօրյա գործածության սպասքի առարկաները:

Վճիտ կապույտի և սևի հիանալի համադրությամբ են պատրաստված Սելիմի քարավանատան պեղումներով գտնված քրեղանները (բեկորային վիճակում): Բարակ վրձնով պատկերված են սև կարճ կիսաղեղներ, կետեր, փոքրիկ ծաղկային հորինվածքներ, որոնք լրացված են կապույտի լայն շերտերով՝ ամբողջացնելով պատկերի ողջ հորինվածքը (աղ. 21, նկ. 12, 13): Նմանատիպ հարդարում ունի Լոռեից հայտնի անոթը՝ կենտրոնում ծաղկային հորինվածք հիշեցնող սխեմատիկ պատկերով³⁸⁴: Շրջանաձև վարսանդից դուրս եկող ութաթերթ ծաղկապսակը լցված է թանաքագույնով, իսկ ծաղկաթերթերի միջև տեղավորված են երկար գծաքաշ առեջքները (աղ. 22, նկ. 5):

³⁸² Marilyn Jenkins-Madina, Raqqa revisited: Ceramics of Ayyubid Syria, The Metropolitan Museum of Art, New York, 2006, p.112.

³⁸³ Նալբանդյան Ա., Վարդանյան Խ., Ագարակի Ամենափրկիչ եկեղեցու ուսումնասիրությունը, աղ. 1, նկ. 5-21:

³⁸⁴ Ղարիբյան Բ., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, աղ. L-7:

բ. կաթնագույն ետնախորքի վրա բազմագույն նկարազարդ: Հաճախ հանդիպող տեսակներից է: Անգոբապատ ետնախորքը նկարազարդված է շագանակագույն, մանուշակագույն, երկնագույն, մոխրագույն, սև, կապույտ, ձիթապտղի գունային մեղմ ու ներդաշնակ լուծումներով ստեղծված պատկերներով, պատած թափանցիկ կամ կիսաթափանցիկ ջնարակով: Այս տարբերակը բավական տարածված է Միջին Ասիայում դեռևս XII – XIII դդ.³⁸⁵: Հայաստանում այն զանգվածաբար կիրառվել է XIII – XIV և հետագա դարերում: Նմանատիպ խեցեղեն համատարած հայտնաբերվել է Ոսկե Հորդայում³⁸⁶, Իրանում³⁸⁷, Սիրիայում³⁸⁸: Բնորոշ են գծագիր պարզունակ երկրաչափական ու բուսական մոտիվները, սահուն գալարները: Այս կերպ նկարազարդվում էին պնակների լայն պսակները, հատակից դեպի իրան անցնող հատվածները, լայն ժապավենի տեսքով, մասամբ և հատակի կենտրոնը (աղ. 21, նկ. 3, 14, աղ. 22, նկ. 1-3): Կաթնագույն ետնախորքի կենտրոնում հաճախ պատկերվում էին համակենտրոն շրջաններ, թանձր կետեր կամ ծաղկանկարներ: Նորավանքից հայտնի ոչ բարձր օղակաձև նստուկով քրեղանի հատակի կենտրոնը հարդարում է բարակ վրձնով սևանկար ութաթերթ ծաղիկը: Թերթիկները լցված են թանաքագույնի և երկնագույնի ներդաշնակ համակցմամբ, որը լուսաստվերային պատրանք է ստեղծում (աղ. 22, նկ. 6):

Առավել հաճախ հանդիպող գտածոներից են սև, կապույտ և սպիտակ, ինչպես նաև մանուշակագույն, ձիթապտղի և սպիտակ գույների համադրությամբ նկարազարդված անոթները (աղ. 21, նկ. 10, 11):

Սև, կապույտ և սպիտակ գույների համակցմամբ է նկարազարդված Սպիտակավորից պատահական գտնված լայն եզրերով, ոչ բարձր օղակավոր նստուկով քրեղանը, որը նկարազարդված է ներքուստ, իսկ արտաքուստ միայն եզրերը: Ի դեպ, թասերի ու քրեղանների արտաքին եզրերը սևով նկարազարդելու և ամբողջովին ջնարակով չպատելու սկզբունքը տարածված էր Հայաստանի տարբեր տարածաշրջաններից հայտնաբերված ջնարակած խեցեղենում: Արտաքին զարդը կազմված էր հիմնականում խոշոր գալարների հաջորդական շարերից: Սպիտակավորի քրեղանը նկարազարդած է միայն

³⁸⁵ Сайко Э., Среднеазиатская глазурованная керамика XII – XV вв., с. 45.

³⁸⁶ Вактурская Н., Хронологическая классификация средневековой керамики Хорезма (IX-XVII вв.), с. 322; Коваль В., Керамика Востока на Руси IX – XVII вв., М., 2010, ил. 20-23.

³⁸⁷ Hobson R., A Guide to the Islamic pottery of the Near East; Lane A., Later Islamic pottery. Persia, Syria, Egypt, Turkey.

³⁸⁸ Sarre F., Die Keramik von Samarra.

լայն եզրերի ու հատակից իրան անցումային հատվածներում: Զարդապատկերը 6 ձևավոր կիսաղեղներից և նրանց միջև տեղակայված զույգ ելուստից կազմված շար է, որն անցնում է ողջ պարագծով: Կենտրոնում սևով նկարած 13 փոքրիկ կարճ գծերից կազմված ծաղկազարդ է³⁸⁹ (աղ. 22, նկ. 9): Նմանօրինակ հարդարանք ունի Երևանի պատմության թանգարանում պահվող հախճապակե ափսեն (ԵՊԹ N 1220-4), միայն ծաղկազարդի փոխարեն անոթի հատակի կենտրոնն ու եզրերը ծածկում է խիտ ցանցազարդը³⁹⁰:

Բազմագույն նկարազարդմամբ ստանում էին այնպիսի համադրություններ, որոնցում ետնախորքը գրեթե չի նշմարվում: Անոթների դաշտերը ծածկվում էին տարբեր երանգների աբստրակտ պատկերներով, բազմագույն խիտ ցանցերով: Անոթի ողջ դաշտը բազմագույն ցանցով զարդարելը տարածված էր Հայաստանի տարբեր տարածաշրջաններում: Այդպիսին է Ստեփանակերտի թանգարանում պահվող քրեղանը³⁹¹, որի կաթնագույն դաշտը ծածկված է շագանակագույն ցանցազարդով և կանաչ ու դեղին լայն ժապավեններով:

Առավել հաճախ հանդիպում է սպիտակի, շագանակա-մանուշակագույնի և կապույտի տարբեր երանգների համադրությունը (աղ. 22, նկ. 4, 7): Ուշագրավ օրինակներից է Նորավանքի պեղումներով հայտնաբերված ոչ բարձր օղակավոր նստուկով քրեղանի բեկորը, որի կաթնագույն ետնախորքը նկարազարդված է շագանակագույն ու փիրուզագույն լայն վրձնահարվածներով ստացված պատկերներով՝ հազեցած շագանակագույն մանր գծերով ու ստորակետերով:

Ապարանից պատահական գտնված գրեթե ամբողջական միականթ կճուճը ջնարակապատ է ներքուստ և արտաքուստ: Կճուճի կաթնագույն դաշտը զույգ մոխրագույն գծաքաշ գոտիներով բաժանված է երեք հատվածների, որոնցից յուրաքանչյուրը կրում է շագանակագույն և կապույտ երանգների հյուսքերից և կիսաղեղներից կազմված կրկնվող զարդեր (աղ. 22, նկ. 8):

Զնարակած խեցեղենի առաջին երկու խմբերը Արևելքի երկրներում ի հայտ են գալիս XII – XIII դդ. և լայնորեն կիրառվում մինչև XIV դարի վերջ: Դրանք, ընդհանուր

³⁸⁹ Նույն զարդի մոտիվը և անոթի արտաքին ձևավորումը կրկնվում է Գառնիի 2144/33 անոթի ձևավորման մեջ, միայն Սպիտակավորի անոթի հարդարումն ավելի հարուստ է: Համեմատել, Kalantaryan A. etc., Armenia in the cultural context of East and West, pl. LXVIII; Պետրոսյան Հ., Գառնի IX – XIV դդ., աղ. XXXIII-3:

³⁹⁰ Կատալոգ Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի, գիրք 1, կազմ. Ս. Եսայան, Երևան, 1964, աղ. XVII, նկ. 11:

³⁹¹ Kalantaryan A. etc., Armenia in the cultural context of East and West, pl. LVIII-1.

առմամբ, համատարած բնույթ են կրում Մերձավոր Արևելքի ու Միջին Ասիայի երկրներում՝ տարբերակվելով զուտ տեղական առանձնահատկություններով: Հայաստանում նմանօրինակ խեցեղենի գործածության ժամանակահատվածն ընդգրկում է XIII դարի կեսերից մինչև XV դարի առաջին քառորդը: Այդ շրջանի ջնարակած խեցեղենը բնակչության կենցաղային պահանջմունքները բավարարող զանգվածային արտադրության տեսակ է, որում գեղարվեստական բարձրաժեռ նմուշները քիչ են, այն էլ ներմուծված իրանական ու միջինասիական խեցեգործական հայտնի կենտրոններից: XIV դ. վերջերին արդեն վերոնշյալ խեցեղենը դուրս է մղվում Միջին Ասիայի ու Ոսկե Հորդայի մերձվոլգյան քաղաքների խեցեգործական արտադրությունից, որին փոխարինելու է գալիս „թեմուրյան” կոչվող խեցեղենը: XV դարի առաջին քառորդից այն հայտնվում է նաև Հայաստանում:

ԽՈՒՄԲ III

Վերադիր ջնարակած զարդերով խեցեղեն

Սա մի տարատեսակ է, որ մեզ հայտնի խեցեղեն հավաքածուներում հանդիպում է միայն Նորավանքում՝ երկու բեկոր (աղ. 22, նկ. 10), այդ իսկ պատճառով անոթի ձևաբանական կերտվածքի և հարդարման ընդհանուր սկզբունքների մասին որևէ խոսք ասել չենք կարող: Կարող ենք միայն փաստել, որ անոթն ունեցել է ուղղահայաց հարդարման համակարգ՝ ձևավորված լայն շերտագծերի շարքով, որոնք մեկընդմեջ ջնարակապատվել են և անջատվել ավելի մուգ, գրեթե սև բաժանաբար գծով: Ժապավենները, որոնք զուրկ են ջնարակից, ներկված են թանաքագույնով, իսկ ջնարակապատներն ունեն մուգ մանուշակագույն երանգ: Հավանաբար, այս կերպ է լուծված անոթի ներքին և արտաքին դաշտերի նկարագարումը: Անոթի հարդարանքի կարևոր տարրերից են վերադիր, բավական ռելիեֆային մանուշակագույն շուշանածաղիկները՝ ագուցված անոթի անջնարակ ժապավեններին: Դրանք, փաստորեն, առաջացել են ջնարակի թանձր շերտից՝ ոճավորված շուշանածաղիկի տեսքով (fleur-de-lis): Նման տեխնիկա հայտնի չէ ոչ միայն Հայաստանում, այլև իրանական ու միջինասիական խեցեգործական խոշոր կենտրոններում: Վերադիր զարդերով ձևավորված հախճապակին բավական տարածված էր Հայաստանում XII – XIII դդ., որի լավագույն օրինակները Անիի ու Դվինի պեղումներից են³⁹²: Մասնագետներն անդրադառնալով վերադիր հարդարանքով խեցեղենի արտադրության կենտրոնի խնդրին հանգել են այն եզրահանգման, որ XII դարից սկսած այդ

³⁹² Ժամկոչյան Ա., Դիմակազարդ անոթներ Դվինից և Անիից, ՊԲՀ, Երևան, 1981, N 4, էջ 201:

խեցեղենը պատրաստվել է Հարավային Կովկասում, չի բացառվում՝ Դվինում, որը խեցեգործության խոշորագույն կենտրոններից էր: Նմանատիպ խեցեղեն արտադրվել է և Անիում, Դմանխիում, Գանձակում³⁹³: Վերադիր զարդերը վարդյակներ են, ոլորուն, հյուսածո գծեր, դիմակներ: Դրանք պատրաստվում էին առանձին, նույն հախճապակե զանգվածից, հատուկ կաղապարի մեջ և թրծելուց առաջ ագուցվում անոթին, ապա ջնարակապատվում: Նորավանքի բեկորներն, ակներևաբար, վերը նշած տեխնիկայի ընդօրինակման փորձ են՝ միայն այն տարբերությամբ, որ վերադիր զարդերը ոչ թե հախճապակե զանգվածից են, այլ ջնարակից: Գուցե հետագա պեղումներով կհայտնաբերվեն նյութեր, որոնք կփաստեն սույն տեխնիկայի կիրառությունը Հայաստանի այլ վայրերում:

Վերադիր շուշանազարդով հախճապակե անոթի բեկոր հայտնաբերվել է և Էջմիածնի Հին վեհարանի հիմքերի ամրակայման աշխատանքների ժամանակ: Այն երկու կողմից կոբալտով ներկած փխրախեցի սափորի բեկոր է՝ վերադիր եռաթև շուշանազարդով: Ի տարբերություն Նորավանքի գտածոների, այն վերադիր զարդը հիմքին ագուցելու դասական օրինակ է: Թվագրվում է XIII – XIV դդ. (աղ. 22, նկ. 11):

XIII – XIV դդ. հախճապակի

Անոթներ – հախճապակե անոթների գյուտերը թեն մեծաքանակ չեն, սակայն առանձնանում են ինչպես տեղական, այնպես էլ մերձավորարևելյան, դրսեկ, հատկապես իրանական ծագման օրինակները: Տեղական ծագում ունեն շիկավուն փխրախեցի, երկու կողմից փիրուզագույն ջնարակով պատած թասերը, քրեղաններն ու ըմպանակները (աղ. 22, նկ. 12, 13): Սրանք ինչպես և սովորական կավից պատրաստած ջնարակապատ անոթները հարդարված են փորագիր, դրվագազարդ և վերադիր հարդարատարրերով: Փորագիր և վերադիր զարդերի ներդաշնակ համադրման օրինակ են Նորավանքում հայտնաբերված ըմպանակի բեկորները՝ պատած փիրուզագույն կապարային ջնարակով, արտաքուստ՝ միայն իրանը: Շուրթը ձևավորված է վերադիր հյուսածո զարդով, որը տարածվում է անոթի ողջ պարագծով: Հյուսածո զարդից ներքև զուգահեռ ակոսագոտիներ են, որոնց հետևում են թեք գծազարդերը (աղ. 23, նկ. 1): Հարդարանքն, իր էությանմբ, բնորոշ է Դվինի խեցեղենին: Չի բացառվում, որ Հայաստանի այլ շրջաններում

³⁹³ Шелковников Б., Художественная керамика двинских раскопок, с. 191; նույնի՝ Художественная керамическая промышленность средневековой Армении, с. 32; Ղաֆաղարյան Կ., Դվին քաղաքը..., հ. II, էջ 221-222:

գտնված նմանատիպ անոթները ներմուծվել են հենց Դվինից: Դվինյան հախճապակուն բնորոշ կողմերից է և վերադիր տարատեսակ զարդերի ագուցումը: Վերադիր զարդերով անոթներ հայտնաբերվել են Գառնիում, որոնք, ակներևաբար, ներմուծվել են Դվինից³⁹⁴:

XIV դարում տարածված փիրուզագույն ջնարակի տակ ենթաջնարակային կոբալտով նկարազարդումը հատկանշական էր նաև հախճապակե հիմքով խեցանոթներին: Դրանց գյուտերը Հայաստանում շատ չեն: ՇԵԹ-ում պահվում են փիրուզագույն ջնարակով պատած սևանկար պոչիկավոր ռոմբերով և նրանց միջև փոքրիկ խաչազարդերով նկարազարդած հախճապակե անոթի բեկորներ: Ռոմբերը ներքուստ հարդարում են մանր կետազարդերը: Խաչազարդերի շարքը թռչունների երամի տպավորություն է թողնում³⁹⁵՝ բնորոշ միջինասիական խեցեղենին³⁹⁶, որը և ընդօրինակել են հայ խեցեգործ վարպետները: Այդ զարդամոտիվը տիպական է նաև սիրիական ինչպես շոդյուն, այնպես էլ փիրուզագույն կիսահախճապակուն³⁹⁷:

XIV դարին վերաբերող շոդյուն հախճապակու ներմուծած օրինակները փոքրաքանակ են: Անիում գտնվել են երկու անոթի բեկորներ (ՀՊԹ-123/438, 123/780), որոնք ունեն իրանական ծագում³⁹⁸: Հարդարված են մուգ կապույտ ետնախորքի վրա բուսական զարդատարրերով, թվագրվում են XIV դարով և համարվում իրանական Սուլթանաբադ քաղաքի արտադրանք:

Հախճասալեր – համեմատաբար մեծաքանակ են շքադյուսների գյուտերը (Անի³⁹⁹, Գառնի⁴⁰⁰, Տիկնունի ամրոց⁴⁰¹, Աղջկա-բերդ ամրոց⁴⁰², Եղվարդ⁴⁰³, Կիրանց վանք⁴⁰⁴, մեկա-

³⁹⁴ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., էջ 68:

³⁹⁵ Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., աղ. IX-6; Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., աղ. XXXIX-5; Т. Измайлова, Керамика из раскопок в Анберде, с. 187.

³⁹⁶ Вактурская Н., Хронологическая классификация средневековой керамики Хорезма (IX-XVII вв.), рис. 34/1.

³⁹⁷ Коваль В., Керамика средневековой Сирии в Восточной Европе, Поливная керамика Средиземноморья и Причерноморья X – XVIII вв., под ред. С. Бочарова, В. Мыца, Киев, Изд. дом „Стилос“, 2005, с. 220.

³⁹⁸ Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., էջ 128, աղ. X-1, 3:

³⁹⁹ Նույն տեղում, էջ 132, աղ. Xա, 7:

⁴⁰⁰ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., էջ 80-81, աղ. XLVII:

⁴⁰¹ Քալանթարյան Ա., Դվինի արշավախմբի 1983 – 1984 թթ. աշխատանքների հիմնական արդյունքները, ՊԲՀ, Երևան, 1987, N 1, էջ 144-145; Ժամկոչյան Ա., Ճարտարապետական հարդարանքի նմուշներ Տիկնունի ամրոցից, ԼՀԳ, Երևան, 1990, N 12, էջ 66-75:

⁴⁰² Եսայան Հ., Տավուշի միջնադարյան ջնարակած շինարարական խեցեղենը, ԼՀԳ, Երևան, 1999, N 1, 152-157; նույնի՝ Եսայան Հ., Տավուշ և Այգեձոր ամրոցների պեղումները և շքադյուսների հարցը, ԲԵՀ, 1994, N 1, էջ 164-165:

⁴⁰³ Ժամկոչյան Ա., Քալանթարյան Ա., Եղվարդի Ս. Աստվածածին եկեղեցու սալերը, ՊԲՀ, Երևան, 1971, N 4, էջ 277-281; Гюзальян Л., Иранские средневековые изразцы на купольном барабане храма Богородицы в Егварде, ИФЖ, 1984, N 2, с. 153-174.

կան օրինակներ Թեղենյաց վանք⁴⁰⁵, Էջմիածնի 2014 թ., Հայկաձորի միջնադարյան բնակավայր): Շենքերի ճակատների հարդարումը գունավոր շքադրուսներով Հայաստանում օտարամուտ երևույթ էր և լայն տարածում չգտավ: Վաստակավոր հայագետ Հ. Օրբելին⁴⁰⁶, արվեստի ու ճարտարապետության պատմաբան Ա. Յակոբսոնը⁴⁰⁷ մահմեդական աշխարհում տարածված շենքերի ճակատները շքադրուսներով հարդարելու սովորույթը կապում են հայկական ճարտարապետության մեջ բազմագույն ու բազմաձև քարերով եկեղեցիների ճակատների խճանկար հարդարանքի հետ: Ջնարակած սալիկների կիրառումը ճարտարապետական հարդարանքում հայտնի էր դեռևս մ. թ. ա. XII դ.⁴⁰⁸, սակայն շքադրուսների արտադրության ծավալներն ընդլայնվեցին միայն մ.թ. XII – XIII դդ.: Քաղաքական ու մշակութային փոխազդեցություններով պայմանավորված XII – XIII դդ. Հայաստան ներմուծվեց աշխարհիկ ու պաշտամունքային շենքերի ճակատները խաչաձև, աստղաձև, բազմանկյուն ու քառակուսի շքադրուսներով հարդարելու սովորույթը: Շքադրուսները հարդարվում էին բուսական, երկրաչափական, կենդանական զարդերով, ինչպես և Ֆիրդուսու «Շահ Նամեի» տարբեր դրվագներով, որոնք ուղեկցվում էին համապատասխան բարեմադրանքներով⁴⁰⁹:

Հայաստանի տարբեր հուշարձաններից գտնված հախճաասալերի մեջ առանձնաճակատում են տեղական և ներմուծված օրինակները: Տեղական արտադրանք թերևս կարելի է համարել Տիկնունի ամրոցի 1984 թ. պեղումներով հայտնաբերված հախճաասալերի հավաքածուն, ինչպես և նույնանման օրինակները Անիից ու Գառնիից: Դրանք կրում են միջինասիական ազդեցություն, ունեն պարզ հարդարում, գուսպ գունային ներկապնակ (աղ. 23, նկ. 3, 4): Տիկնունի ամրոցի հախճաասալերը թվագրվում են XIV դ., որը հաստատում են նույն շերտագրական միջավայրում հայտնաբերված դրամները⁴¹⁰:

⁴⁰⁴ Եսայան Հ., Իջևան – Տավուշի միջնադարյան շինարարական խեցեղենը, ՀԵՀ, 1996, N 2, էջ 59; Есаян Г., Материальная культура бассейна реки Агстев в развитом средневековье, с. 128-129:

⁴⁰⁵ Բաբաջանյան Ա., Միրիջանյան Դ., Թեղենյաց վանքի խեցեղենը, էջ 147, աղ.VII:

⁴⁰⁶ Օրբելի И., Мусульманские изразцы. Очерк, ИТ, Ереван, Изд. АН АрмССР, 1963, с. 261-262.

⁴⁰⁷ Якобсон А., Очерк истории зодчества Армении V – XVIII вв., с. 99.

⁴⁰⁸ Сайко Э., Среднеазиатская глазурованная керамика XII – XV вв., с. 20.

⁴⁰⁹ Гюзальян Л., Надписи на местной керамике из Орен-Кала, Труды Азербайджанской (Орен-калинской) археологической экспедиции, том 1, МИА N 67, М.-Л., Изд. АН СССР, 1959, с. 324; Փոռմոնհամադի Փ., XIII – XIV դդ. հայ-իրանական մշակութային փոխհարաբերությունների պատմությունից, ԲՀ, 2014, N 1 (4), Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., էջ 136-148.:

⁴¹⁰ Տիկնունիից հայտնաբերված ՀՊԹ N 20026-10, N 20026-11, N 20026-12 դրամները վերաբերում են Թեմուրյան Մահմուդ խանին (1388-1398): Եւս մեկ դրամ՝ ՀՊԹ N 20026-9, Էլտկուզյան է, վերաբերում է Կըզլ Արսլանին (1186-1191):

Տեղական արտադրության հախճասալի օրինակ է Մեծամորի գտածոն (ՄԹ 4/19)⁴¹¹: Քառակուսի մակերեսն ամբողջությամբ ծածկված է մուգ կապույտ ետնախորքով, որի վրա ենթաջնարակային նկարազարդմամբ պատկերված են քառաթերթ փիրուզագույն ծաղիկներ: Սալիկի եզրով անցնում է սպիտակ գոտի՝ լցված բարակ եղնազարդով (աղ. 23, նկ. 8):

Հաջորդ խումբը ներկայացնում են վերջնարակային շողյունով նկարազարդ շքադյուսները, որոնց հարդարանքին բնորոշ էր քաշանյան դպրոցի զարդապատկերային ոճը: XIII – XIV դդ. կոբալտով նկարազարդման տարածմամբ փոխվում է նաև շքադյուսների հարդարումը: Կոբալտը հախճասալերի նկարազարդման մեջ կիրառվում էր որպես պատկերի եզրերն ընդգծող ուրվագիծ: Կոբալտով և վերջնարակային նկարազարդմամբ շինարարական խեցեղենը լայն կիրառություն գտավ Առաջավոր Ասիայի երկրների աշխարհիկ ու պաշտամունքային շինություններում: Ի տարբերություն նախորդ շրջանի բուսական ոճավորված զարդերի, XIII դ. վ. – XIV դ. դրանք իրական են: Գերիշխում են երկրաչափական պարզ զարդապատկերները՝ լրացված ոսկեգույն բուսական հարդարատարրերով:

Ենթաջնարակային կապույտ, փիրուզագույն և վերջնարակային շողյունով հարդարված քառակուսի հախճասալի բեկոր գտնվել է Էջմիածնի Մայր տաճարի հարևանությամբ 2014 թ. ձեռնարկված պեղումների միջոցին: Կոտրված լինելու պատճառով հնարավոր չէ վերականգնել ընդհանուր պատկերը: Պահպանված հատվածի վրա կոբալտով նկարած զուգահեռ եզրագծերի միջև բավական վառ ոսկեգույնով պարսկերեն բաբելադրանքն է, իսկ միջնամասի պահպանված հատվածում ոսկեգույն զարդ, լրացված սպիտակ կետազարդերով և փիրուզագույն ցայտերով (աղ. 23, նկ. 6):

Նույն կերպ է հարդարված Թեղենյաց վանքից հայտնի հախճասալի բեկորը⁴¹², որտեղ ոսկեգույն շողյունը ավելի խավրած է: Պահպանված բեկորի վրա նշմարելի է միջնամասում կոբալտով նկարած անկանոն ցանցային դաշտ, լցված ոսկեգույն գալարներով, սպիտակ կետազարդերով ու փիրուզագույն ցայտերով (աղ. 23, նկ. 7):

⁴¹¹ Բաբաջանյան Ա., Մեծամորը միջնադարում (ըստ խեցեղեն գտածոների), էջ 228, աղ. 3, նկ. 9:

⁴¹² Բաբաջանյան Ա., Միրիջանյան Դ., Թեղենյաց վանքի խեցեղենը, աղ. VII-1:

Ենթաջնարակային կապույտ, փիրուզագույն և վերջնարակային շողյունով հարված քառակուսի հախճաասալերի գլուխներ հայտնի են Անիից⁴¹³, Գառնիից⁴¹⁴, Հայկաձորի միջնադարյան բնակավայրից: Վերջինս կրում է կիսադեմ կանգնած թռչնի բարձրաքանդակ ոտք՝ ներկված կապույտով: Սալի մյուս հատվածները կրկնում են ոսկեգույնի մեջ սպիտակ կետագարդերով և փիրուզագույն ցայտերով զարդատարրերը (աղ. 23, նկ. 5):

Նկարագրված հախճաասալերի խեցին պարունակում է զգալի քանակության ավազի խառնուրդ, որից էլ ստացել է սպիտակամոխրագույն երանգ: Խեցին և նկարագարդման կերպը առավել բնորոշ են իրանական սուլթանաբաղյան հախճապակուն: Հավանաբար Հայաստան են ներմուծվել Սուլթանաբաղից, որը XIV դ. հախճաասալերի արտադրության առաջատարն էր տարածաշրջանում:

Հախճաասալերի մեկ այլ խումբ են ներկայացնում Երևանի Աբովյան փողոցում գտնվող շենքերից մեկի նկուղային հարկում բացված XIII – XIV դդ. մահմեդական դամբարանի գտածոները՝ ութաթև աստղերի տեսքով⁴¹⁵ (աղ. 23, նկ. 9): Նման հախճաասալեր հայտնաբերվել են և Անիում⁴¹⁶, Գառնիում⁴¹⁷, Օրեն-կալայում⁴¹⁸ և այլուր: Խմբին բնորոշ է ճոխ հարդարանքը: Սալերի դաշտը մուգ դարչնագույն ոսկեփայլ ծածկույթով է՝ հազեցած սպիտակ ճոխ արմավագարդերով, բազմաթերթ ծաղիկներով, շիվերով, տերևներով, թռչունների պատկերներով: Նկարագարդումը հարստացնում են փիրուզագույն ցայտերն ու կոբալտե վրձնահարվածները, որոնք լուսաստվերային խաղի միջոցով ռելիեֆայնություն են հաղորդում ընդհանուր պատկերին: Նկարագարդման յուրաքանչյուր տարր մշակված է ամենայն մանրամասնությամբ, բնորոշ իրանական քաշանյան խեցեգործական դպրոցին: Հախճաասալերի եզրերին պարսկերեն արձանագրություններ են, որոնք յուրօրինակ հարդարատարրեր են մուսուլմանական զարդարվեստում: Եզրերը երբեմն բոլորում են ուռուցիկ գոտիները՝ պատած մուգ կապույտով:

⁴¹³ Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., աղ. XIա-5, 7:

⁴¹⁴ Պետրոսյան Հ., Գառնի IX – XIV դդ., XLVII-1-4:

⁴¹⁵ Kalantaryan A. etc., Armenia in the cultural context of East and West, pl. LXX-2; Քալանթարյան Ա., Մելքոնյան Հ., Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ., Երևան, Մուղնի հրատ., 2005, էջ 121-122:

⁴¹⁶ Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., աղ. XI:

⁴¹⁷ Պետրոսյան Հ., Գառնի IX – XIV դդ., XLVII-1, 2:

⁴¹⁸ Гюзальян Л., Надписи на местной керамике из Орен-Кала, МИА N 67, с. 332.

Պերճանքի առարկաներ – պատրաստվում էին տեղական փիրուզագույն հախճապակուց հիմնականում տարբեր չափերի ու ձևերի ուլունքներ⁴¹⁹ (աղ. 23, նկ. 2): Գտնվել են տարբեր երանգների աչքի ուլունքներ, որոնց մոզական նշանակություն վերագրելով, մարդիկ կրում էին իրենց վրա: Այդ ուլունքներին (բացի հմայական պահպանակներ լինելուց) վերագրում էին հիվանդություններ բուժելու, բնության տարերքներից պաշտպանելու, հաջողություն ու երջանկություն բերելու հատկանիշներ⁴²⁰: Երբեմն անոթների միագույն կամ բազմագույն ետնախորքերի վրա փիրուզագույն երանգով պատկերներ էին ստեղծվում պահպանակ ուլունքների նմանողությամբ: Դա հատկապես տարածված էր մահմեդական աշխարհում, որտեղ ավանդույթի համաձայն, փիրուզագույնը ոչ միայն երջանկության խորհրդանիշն էր, այլև պահպանիչ նշանակություն ուներ անոթի տիրոջ համար⁴²¹:

Ցավոք, ուշմիջնադարյան մեզ հասանելի նյութը չափազանց բեկորային է, այդ պատճառով էլ ոչ միշտ է հնարավոր այն համեմատել Արևելքի խեցեգործական կենտրոնների համապատասխան տեսականիների հետ: Դա կարևորվում է հատկապես ներմուծված խեցեղենի տեղորոշման պարագայում: Հորինվածքների փոքր հատվածները հնարավորություն են ընձեռում դիտարկել միայն նկարագարդման այս կամ այն հնարանքի կիրառում:

XIII – XIV դդ. սելադոն և ճենապակի

Բացի իրանական ու միջինասիական խեցեգործական կենտրոններից ներմուծված արտադրանքից և դրանց ազդեցությամբ ստեղծված տեղական ընդօրինակություններից, հայկական խեցարվեստի վրա X դարից հայտնի է չինական Տան (618-906) և Սուն (980-1278) դինաստիաների ժամանակների ներմուծած խեցեղենի ազդեցությունը: Սուն դինաստիայի ժամանակին բնորոշ մարմնագույն ետնախորքի վրա սև-շագանակագույն բարակ վրձնազարդ բնանկարային տեսարանով ճենապակու փոքր բեկոր գտնվել է Սելիմի քարավանատան 2012 թ. պեղումներով (աղ. 23, նկ. 10):

Անիի⁴²², Գառնիի⁴²³, Լոռե բերդաքաղաքի⁴²⁴ պեղումներով հայտնի են նաև ներմուծված չինական սելադոններ, որոնց փոքրաթիվ հավաքածուն լրացնում են Եղեգիսի,

⁴¹⁹ Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, աղ. LVIII:

⁴²⁰ Բարայեյան Ա., «Բուժիչ» ուլունք-պահպանակներ, ԼՀԳ, Երևան, 1979, N 3, էջ 88:

⁴²¹ Marilyn Jenkins-Madina, Raqqa revisited: Ceramics of Ayyubid Syria, The Metropolitan Museum of Art, New York, 2006, p. 125, 128.

⁴²² Հայաստանից գտնված սելադոնների մեծ մասը Անիից է, որը բացի քանակությունից առանձնանում է նաև տեսականիով (հինգ տիպ՝ գերակշռում են „լունցյուան-յան“, „գե-յան“, „ին-ցին“ տիպերը): Տե՛ս՝ Шелковников Б., Китайская керамика из раскопок средневековых городов и поселений Закавказья, с. 372.

Փարպիի Թարգմանիչք եկեղեցու պեղումներով հայտնաբերված բեկորները⁴²⁵ (աղ. 23, նկ. 11): Նրանց նուրբ կանաչավուն դաշտն արտաքուստ հարդարված է հորիզոնական գուգահեռ փորագիր գծաշարերով և անկանոն ալիքներով: Սրանք թվագրվում են XIII դ. կես – XIV դ.: Առհասարակ, առանձնանում են սելադոնների փորագիր, վերադիր զարդերով, մակերեսի ռելիեֆային մշակմամբ (կաղապարի մեջ սեղմելու միջոցով) և հարթաքանդակ պատկերներով հարդարելու հնարները: Վերջինս ստացվում էր հատուկ գործիքով՝ շտիխելով (տափակ թիակ), ինչպես սովորական կավից պատրաստված անոթների մակերեսի հարդարումը անգործի հեռացման միջոցով: Սելադոնների պարագայում հեռացնում էին խեցու որոշ հատվածներ, ինչի շնորհիվ մակերեսին ռելիեֆայնություն էր հաղորդվում:

Սելադոնների զարդահարդարման պարագայում բացի երկրաչափական պարզ մոտիվներից (կարճ գծեր, ալիքներ), տարածված է չինական արվեստին բնորոշ վիշապաձկների, լոտոսի, ծաղիկների, տերևների ու ցողունների պատկերումը⁴²⁶:

Սելադոնների ներմուծումը Իրան ու մերձավորարևելյան երկրներ հանգեցրեց դրանց ընդօրինակմանը և տեղական ինքնատիպ խեցեղենի արտադրությանը: Միջինարևելյան ու չինական փոխազդեցություններն հատկապես աշխուժացան Չինաստանում իշխող մոնղոլական Յուան կայսրերի օրոք (1280-1368): Յուան շրջանի „ին-ցին” տիպի միակ օրինակը Հայաստանում հայտնաբերվել է Անիում: Այն հազվադեպ արտահանվող և բարձրարժեք նմուշներից է⁴²⁷: Միջին Արևելքում չինական խեցեղենի, հատկապես սելադոնների ընդօրինակման կենտրոնը Իրանի հյուսիսարևմտյան Զենջան գավառի Սուլթանիե քաղաքն էր, որը հիմնադրել էին մոնղոլները XIII դ. վ. – XIV դ. սկ.: „Կեղծ սելադոններ” արտադրում էին նաև Եգիպտոսում⁴²⁸, Ոսկե Հորդայի մայրաքաղաք Սարայ-Բերկեում: Դրանց խեցու հիմքը մոխրագույն փխրուն հախճապակին էր⁴²⁹: Արտաքուստ ավելի բնական կրկնօրինակ ստանալու նպատակով Ոսկե Հորդայի

⁴²³ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., էջ 82-85, աղ. XLVIII:

⁴²⁴ Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, էջ 233:

⁴²⁵ Հակոբյան Ն., Միրիջանյան Դ., Փարպիի Ս. Թարգմանիչք եկեղեցու պեղումները, „Էջմիածին”, մայիս, 2011, էջ 87:

⁴²⁶ Lane A. Later Islamic pottery, pic. 86-1, 2.

⁴²⁷ Шелковников Б., Китайская керамика из раскопок средневековых городов и поселений Закавказья, с. 376.

⁴²⁸ Коваль В., Волошинов А., Псевдоселадон из Бахчисарая, Поливная керамика Средиземноморья и Причерноморья X – XVIII вв., с. 458.

⁴²⁹ Губименко И., Китайский фарфор и глазурованная китайская керамика из раскопок золотоордынского Азака, Поливная керамика Средиземноморья и Причерноморья X – XVIII вв., с. 179.

խեցեգործական կենտրոններում հախճապակե անոթներն հարդարում էին խորը փորագրագարդով, ապա պատում կիսաթափանցիկ կանաչավուն ջնարակով⁴³⁰: Մելադոնի ընդօրինակած օրինակ հայտնի է Եղեգիսի պեղումներով⁴³¹, սակայն ո՞ր խեցեգործական կենտրոնի արտադրանք է այն, առայժմ պարզել հնարավոր չէ:

Մշակութային փոխառնչությունների շնորհիվ տարբեր խեցեգործական կենտրոնների լավագույն ավանդույթները XIV – XV դդ.առավել քան միախառնվում են, ինչը հանգեցնում է մշակութային ուրույն սինթեզի ձևավորմանը:

XV դ. վերջերից սելադոնների արտադրությունը կտրուկ կրճատվում է: XVI – XVII դդ. Զինաստանում մշակվում և լայնորեն արտադրվում է սպիտակ ճենապակե հիմքով և „սելադոնային ջնարակով” պատած խեցեղեն, որը հայտնի է պսեվդոսելադոն անվամբ:

XIII դարի կեսից մինչև XIV դարը, փաստորեն, շրջադարձային էր խեցեգործության բնագավառում, քանզի այդ փուլում ավարտվում էր ջնարակած խեցեղենի զարգացման որոշակի մի շրջան: Վերջնականապես ձևավորվում են ջնարակի հիմնական տեսակները, դրանց մշակման տեխնիկական հնարներն ու զարդապատկերման սկզբունքները: XIV – XV դդ. շարունակում են միաժամանակ կիրարկվել ջնարակի տարբեր բաղադրատեսակները՝ կապարային, ալկալիական և կապարա-ալկալիական: Որակապես առանձնանում են թափանցիկ անգույն, թափանցիկ գունավոր, խիտ և սպիտակ, խիտ ու գունավոր տեսակները: Ալկալիական ջնարակի լայն կիրառմամբ հեշտանում է խեցեղենի արտադրությունը, որը որոշում է ջնարակած խեցեղենի զարգացման ուղղությունը: XII – XIII դդ. տարածված կապարային ջնարակից, բարդ փորագրության, անգործի հեռացման և տարաբնույթ այլ հնարներից աստիճանաբար հրաժարվեցին՝ դրանք փոխարինելով տեխնիկապես ավելի դյուրին, բայց արագ իրականացվող և գեղարվեստական բարձրաճաշակ ձևավորմամբ:

Ջնարակած խեցեղենը XV դարում

XV դարը, շարունակելով նախորդ շրջանում արմատացած ավանդույթները, նշանավորվում է որպես տեխնոլոգիական նորությունների մի նոր փուլ՝ սահմանելով խեցեգործական արվեստի զարգացման սանդղակի վերին աստիճանը: Այդ շրջանում

⁴³⁰ Булатов Н., Классификация кашинной поливной керамики золотоордынских городов, с. 109.

⁴³¹ Մելքոնյան Հ., Հակոբյան Ն., Եղեգիսի 2001 թ. պեղումները, էջ 102:

ավարտվում է նոր հարդարատարրերի, տեխնիկական միջոցների, ձևավորման կերպի ու ոճի ներմուծումը՝ հիմք դառնալով հետագա դարերի խեցեգործական արվեստի զարգացմանը: Ջնարակած սովորական կավե հիմքով խեցեղենի և հախճապակու զանգվածային արտադրությունը հարատևում է մինչև XVII – XVIII դդ., երբ գործածության լայն շրջանակներ են նվաճում ճենապակե, ապակե անոթները: Եթե X – XIII դդ. արտադրության հիմնական ձևը արհեստագործությունն էր, որ կենտրոնացած էր քաղաքներում, մասամբ էլ խոշոր վանքերի բազմաբևեռ գործատներում, ապա XIV դարից սկսած զարգանում է մանուֆակտուրային արտադրությունը, որը տեխնիկական միջոցների կատարելագործմամբ ընդլայնում է արտադրության ծավալները:

XIV դ. վերջերին – XV դ. սկզբներին ձևավորվում և զանգվածային արտադրվում են *կաթնագույն ետնախորքի վրա կոբալտով նկարազարդ խեցանոթներ*: Այն երբեմն անվանում են „թեմուրյան խեցեղեն”, քանզի հայտնվում է Լենկ Թեմուրի տիրապետության սկզբնական շրջանում և տիրապետող դառնում Արևելքի բոլոր երկրներում⁴³²: Սպիտակ ետնախորքի վրա կոբալտով նկարազարդման տեխնիկան խեցեգործության մեջ սկզբնավորում է զարգացման նոր փուլը՝ մեծ տարածում գտնելով գեղարվեստական սպասքում և ճարտարապետական հարդարանքում: Այն խեցեգործության մեջ հանդես է գալիս չինական „սպիտակ և կապույտ” տիպի („blue and white”) ճենապակու նմանողությամբ, որն առանձնանում էր թեթևակի թափանցիկություն ունեցող հիմքով, պատած անգույն թափանցիկ ջնարակով: „Սպիտակ և կապույտ” ճենապակու ներմուծումը Առաջավոր Ասիայի երկրներ մեծ ազդեցություն ունեցավ տեղական խեցեգործական կենտրոնների հախճապակե արտադրանքի վրա: Տեղացի խեցեգործները սկսեցին ընդօրինակել կապույտով նկարազարդ չինական ճենապակին՝ տեխնիկապես ստանալով ոչ միայն ճենապակուն նմանվող հիմք և մակերես, այլև չինական զարդարվեստն հիշեցնող հարդարանք՝ լոտոսի ծաղիկներ, թեփուկավոր զարդեր և այլն⁴³³: Կոբալտով նկարազարդած խեցանոթների հարդարանքի նմանակումը չինական

⁴³² Вактурская Н., Хронологическая классификация средневековой керамики Хорезма (IX-XVII вв.), рис. 42-1; Коваль В., Керамика Востока на Руси IX – XVII вв., ил. 30, 55; Լեյնը նկատում է, որ այս սպիտակ ֆոնի վրա կոբալտով նկարազարդված խեցեղենը հայտնի է քիչ քանակությամբ Միրիայում դեռ XIV դ. վ., սակայն Առաջավոր Ասիայի և Միջին Արևելքի երկրների համար տիպական է XV դարում և դառնում է հստակ թվագրող նյութ: Lane A., Later Islamic pottery, p. 29; Verena Daiber, The fine wares from Medieval Baalbek, p. 317, pl. 16-a-j.

⁴³³ Шелковников Б., Китайская керамика из раскопок средневековых городов и поселений Закавказья, էջ 377.

բուսական տեսարանների ազդեցությամբ, պատճառ է դառնում, որ ուսումնասիրողներից շատերը Առաջավոր Ասիայում կոբալտի վերստին հայտնվելը կապեն չինական ազդեցության հետ⁴³⁴, այն պարագայում, երբ չինական կոբալտային խեցեղենի հիմքում իրանական ներմուծած հումքն էր⁴³⁵: Չինաստանում մոնղոլական մոտ մեկ-դարյա տիրապետությունից հետո միայն, ազգային Մին դինաստիայի (1368-1644) հաստատմամբ, սկսվում է տեղական կոբալտի հանքավայրերի շահագործումը: Արքունական ֆաբրիկաներում ծավալվում է կոբալտով նկարագարող ճենապակու զանգվածային արտադրություն, որը մեծ քանակությամբ արտահանվում էր Արևելքի և Արևմուտքի երկրներ:

Հայաստանի ուշմիջնադարյան հուշարձանների խեցեղեն գտածոներում առանձնանում է *սպիտակ ետնախորքի վրա կոբալտով նկարագարող խեցանոթների* երկու խումբ: Առաջին խումբը շարունակում է նախորդ շրջանում տարածված սպիտակ ետնախորքի վրա միագույն նկարագարդման տարբերակը՝ անգույն ջնարակով: Զարդամոտիվներից գերակշռում են անոթի մակերեսին անկանոն տեղաբաշխված լայն տերևները⁴³⁶ (աղ. 24, նկ. 1-4): Այդ խմբի խեցեղենում հանդիպում են նաև կոբալտով գծագրված երկրաչափական տարրերից ու բուսական շիվերից կազմված ոճավորված շղթայի պատկերներ (աղ. 24, նկ. 6, 7): Աղավնատուն գյուղի արևմտյան հատվածում իրականացված պեղումներով գտնվել է XIV դ. վ. – XV դ. սկզբով թվագրվող օղակավոր նստուկով քրեղանի բեկոր (աղ. 24, նկ. 8), որի դաշտը զարդարում են կոբալտով գծագրված ծաղկաթերթերը և նրանցում ներառած ռոմբաձև ցանցազարդը: Նույն ժամանակներին է վերաբերում և Մելիմի քարավանատան պեղումներով հայտնաբերված հախճապակե քրեղանը, որի հատակին ծաղկային սխեմատիկ պատկեր է: Արտաքուստ դաշտը հարդարում են հորիզոնական ժապավենները: Անոթը պատած է անգույն թափանցիկ ջնարակի բավական թանձր շերտով: Մակերեսը ճաքճքած է (աղ. 24, նկ. 9):

Նմանօրինակ խեցեղենը գործածվում է XV դարում, թեև աստիճանաբար տեղը զիջում է չինական զարդատարրերով նկարագարող „սպիտակ և կապույտ” խեցեղենին,

⁴³⁴ Wilkinson Ch., Fashion and technique in Persian pottery, Bulletin the Metropolitan Museum of Art, November, 1947, v.6, N 3, pp. 99-104.

⁴³⁵ Garner H., The use of imported and native cobalt in Chinese blue and white, Oriental Art, New series Summer 1956, v. II, N 2, pp. 48-50; Mason R., Tite M., Paynter S., Salter C., Advances in polychrome ceramics in the Islamic worlds of the 12th c. AD, Archaeometry, 2001, N 43-2, p. 207.

⁴³⁶ Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, աղ. L-6; Նալբանդյան Ա., Վարդանյան Խ., Ազարակի Ամենափրկիչ եկեղեցու ուսումնասիրությունը, աղ. 1, նկ. 1-3:

որը մեր ստորաբաժանման մեջ ներկայացնում է սպիտակ ետնախորքի վրա կոբալտով նկարագարոյ խեցեղենի երկրորդ խումբը: Նկարագարդմանը բնորոշ են դառնում կենդանակերպ պատկերները, հեռավորարևելյան բուսական տեսարանները: XIV դ. չինական մոտիվներով ճենապակու մերձավորարևելյան նմանակման նմուշներ Հայաստանի ուշմիջնադարյան հուշարձաններում հայտնի են Գառնիի պեղումներով⁴³⁷:

XV դարին վերագրվող չինական ճենապակե անոթներ (թվով հինգը), ամբողջական վիճակում, հայտնաբերվել են Գնդեվանքում 1981 թ. իրականացրած մաքրման աշխատանքների ժամանակ: Քննարկու անոթների նկարագարդման մեջ զուգակցված են երկրաչափական ու բուսական զարդամոտիվների խորքի վրա ռեալիստական կենդանիների ու թռչունների պատկերները: Առհասարակ, չինական խեցեղենի նկարագարդմանը բնորոշ է բնության իրական պատկերումը, որտեղ չնայած աշխույժ շարժմանը, հանգրստություն է տիրում: Միրված թեմաներից են ճահճուտների, անտառային խաղաղ տեսարանների դրվագները (աղ. 25, նկ. 1-4):

Անոթներից մեկի հատակի արձանագրությունը, պատրաստման ժամանակի ու տեղի վերաբերյալ, կասկած չի թողնում, որ անոթները վերաբերում են XV դարին, պատրաստված Չինաստանի Չինկթեշեն խեցեգործական կենտրոնում⁴³⁸ (աղ. 25, նկ. 3): Չինական խեցեղենի հավաքածուն ևս մեկ անգամ հավաստում է հայ-չինական առևտրական հարաբերությունների մասին, որն անընդմեջ շարունակվել է սկսած X դարից:

Հայաստանում XV դարի բուն չինական ճենապակու նմուշներ, բացի Գնդեվանքի հավաքածուից, առայժմ հայտնի չեն: Լոռեի պեղումներով հայտնաբերվել են չինական մոտիվներով ստեղծված հախճապակե և սովորական կավից պատրաստած մերձավորարևելյան օրինակներ: (աղ. 24, նկ. 5):

Լոռեի պեղումներով հայտնաբերված չինական մոտիվներով նկարագարդած անոթներից մեկի հատակին, զույգ շրջագծերից և կիսաղեղներից կազմված գոտու մեջ պատկերված է բավականին խոշոր վիշապ (աղ. 24, նկ. 10)⁴³⁹:

Չինական զարդամոտիվներից հաճախակի հանդիպում են գծանկար լուտոսի, աստղաձաղիկների, տերևների, ցողունների առանձին կամ միահյուսված շղթաների պատ-

⁴³⁷ Պետրոսյան Հ., Գառնին IX – XIV դդ., էջ 83, աղ. XLVIII-7, 8.

⁴³⁸ Ժամկոչյան Ա., Մեշինյան Ա., Չինական ճենապակու նմուշներ Գնդեվանքից, ՊԲՀ, Երևան, 1996, N 1-2, 382-385:

⁴³⁹ Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, աղ. XLIX-1:

կերներ⁴⁴⁰: Իրական թռչուն է պատկերված Լոռեի հախճապակե անոթի բեկորի վրա: Նկարն այնքան բնական է, թվում է, թե կարելի է շոշափել թռչնի փափուկ փետուրները⁴⁴¹:

Ջնարակած խեցեղենը XVI – XVII դդ.

XVI – XVII դդ. խեցեղենի գեղարվեստական հարդարումն ընթանում էր երեք հիմնական ուղղություններով՝

ա. կոբալտով նկարազարդում սալիտակ ետնախորքի վրա, որը XV դարում տարածված խեցեղենի շարունակությունն էր:

բ. վերջնարակային նկարազարդում (արծնապակիով կամ շողյունով),

գ. չինական Մին դինաստիայի (1368-1644) ժամանակի խեցեղենի նմանակում: Վերջինս տարածված էր ոչ միայն Արևելքի երկրներում, այլև բավականին հարգի էր և Արևմուտքում⁴⁴²: XVI – XVIII դդ. չինական ճենապակու նմանակումներում խեցին թեթևակի վարդագույն երանգ ունի: Հանդիպում են հիմնականում բնանկարային տեսարաններ, որտեղ խեցեգործ-նկարիչը, հմտորեն օգտագործելով անոթի դաշտը, յուրօրինակ հեռանկարային պատրանք է ստեղծում: Այդ շրջանում որոշակի փոփոխություն է նկատվում անոթների ձևաբանական կերտվածքում: Լայն տարածում են ստանում ցածր օղակավոր նստուկով պնակները, որոնց պատերը քիչ բարձրացված են, իսկ շուրթերն ընդգծված չեն: Այդպիսի միաձույլ կերտվածքի անոթները լայն դաշտ են ստեղծում խեցեգործ-նկարչի բազում մտահղացումները լավագույնս ներկայացնելու համար: Հանդիպում են մեծ ու փոքր չափերի փիալաներ, որոնք արտաքուստ ամբողջապես նկարազարդված են: Չինական նմանակումներով հարդարված անոթների նկարազարդման սիրված տարրերից են առանձին բուսատեսակները: Երբեմն ծաղկած ծառերի ու թփերի մեջ հայտնվում են սիրամարգերի, նապաստակների ու նույնիսկ թիթեռների ու մորեխների պատկերներ⁴⁴³: Ի տարբերություն XII – XIV դդ. տարածված բնապատկերների (առաջնային թեման որսի տեսարանն էր), որոնցում որոշակի լարվածություն է նկատվում (փախչող եղջերու, աղեղի լարը քաշելու պատրաստ որսորդ), XVI – XVIII դդ. բնա-

⁴⁴⁰ Նույն տեղում, աղ. XLIX-2, L-5-9:

⁴⁴¹ Նույն տեղում, աղ. XLIX-5:

⁴⁴² Carswell J., China and islam in the Maldiv islands, The oriental ceramic society, 1975-1977, vol. 41, p. 119-198.

⁴⁴³ Բաբայան Ֆ., Ուշիի Ս. Մարգիս վանքից հայտնաբերված հախճապակին, ՀՀմ XII, Երևան, 2002, էջ 106:

պատկերային տեսարաններում չնայած աշխույժ շարժմանը՝ հանգստություն է տիրում, (օդում թռչող թիթեռներ ու մեղուներ, թփերի տակ ճեմող փասիաններ): Նույնիսկ բույսերը ստատիկ դիրքում չեն:

XVI – XVII դդ. չինական ճենապակու հախճապակե նմանակումներով օրինակներ հայտնի են Էջմիածնի Ղազարաշեն վեհարանի 2010 թ. պեղումներով: Սաղր ավսեններից մեկի դաշտը զարդարող բնապատկերում աստղածաղիկների ու թփերի մեջ սավառնում են թիթեռներ ու մանր միջատներ (աղ. 26, նկ. 1, 2)⁴⁴⁴:

Չինական նմանակումներով ստեղծված անոթների խմբում առանձնանում է մի տարբերակ, որտեղ նկարազարդումը հասցված է նվագագույնի: Կոբալտով բարակ գծազարդ հատակի շրջագծի մեջ պատկերված է պարզունակ եռատերև մի ծաղիկ, որը կարծես կատարված է մանկական ձեռքով: Նույնպիսի պարզ հարդարում ունի և անոթի արտաքին երեսը: Անոթը գոտևորում է երկար ցողունով բազմաթերթ ծաղիկը (աղ. 26, նկ. 6):

Պարզ հարդարում ունեցող անոթների կողքին շատ հաճախ հանդիպում են և կոբալտով նկարազարդած ճոխ բազմամաս ծաղկային հորինվածքներ, որոնք պատում են անոթի ողջ մակերեսը (աղ. 26, նկ. 3ա, 5): Հարգի զարդաձևերից է աստղածաղիկի շուրջ շառավղաձև հավաքված հորինվածքը՝ կազմված բարակ ընձյուղներին շարված քիչ սուր տերևներով: Որոշ անոթներ արտաքին երեսներին ունեն հատուկ նշաններ, որոնք, թերևս, կարող են լինել որևէ ֆաբրիկայի կամ վարպետի ապրանքային նշանը (աղ. 26, նկ. 2-4)⁴⁴⁵:

XVI – XVII դդ. գեղարվեստական խեցեղենի հարդարանքում վերածնվում է վերջնարակային շոդյունով նկարազարդումը: Արևելքի բոլոր երկրներում XII – XIV դդ. այդ եղանակի կիրառությունը կապվում էր կապարային ջնարակի վրա շոդյունով նկարազարդելու հնարանքի հետ, որի հանրահայտ կենտրոններն էին Ռեյն ու Քաշանը: Շոդյունով նկարազարդումն ասպարեզից դուրս է գալիս XV դարում և կրկին վերածնվում XVI դ.՝ պայմանավորված կարծրախեցի հիմքի և թափանցիկ ջնարակի գործածությամբ: Այդ եղանակով հարդարված խեցեղենի մեզ հայտնի միակ օրինակը Լոռեի պեղումներից է ⁴⁴⁶: Փոքրիկ բեկորի վրա շոդյունի մուգ դարչնագույն երանգով նկարված եղնաձև

⁴⁴⁴ Համեմատել՝ Мамаишвили Н., Фаянс в средневековой Грузии, таб. XVIII-1, 2.

⁴⁴⁵ Мамаишвили Н., Фаянс в средневековой Грузии, таб. XXIII-3.

⁴⁴⁶ Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, աղ. LI-1:

գարդն է՝ ամփոփված սրածայր եռատերև շրջանակի մեջ: Չի բացառվում, որ հորինվածքը զարդարել է ողջ անոթի մակերեսը (աղ. 24, նկ. 11)⁴⁴⁷:

XVI – XVII դդ. ներմուծած խեցանոթներ հայտնաբերվել են Լոռե բերդաքաղաքի պեղումներով: Դրանք հիմնականում հախճապակե ըմպանակներ են՝ ներքուստ և արտաքուստ բազմագույն նկարազարդմամբ⁴⁴⁸ (աղ. 26, նկ. 7): Անոթների նուրբ կերտվածքն ընդգծվում է կաթնագույն ետնախորքի վրա սև գծաքաշ ուրվագծով ամփոփված բուսական հարուստ զարդամոտիվներով, ստացված կարմիր, կապույտ, դեղին, կանաչ գույներով: Թեև Լոռե բերդն ունենցել է հախճապակու տեղական արտադրություն⁴⁴⁹, սակայն վերոնշյալ գտածոները ներմուծված են առաջավորասիական խեցեգործական կենտրոններից: Նմանօրինակ հարդարումը տիպական է XVI – XVIII դդ. թուրքական խեցեգործական կենտրոններին (Բզնիկ (Նիկեա), Քյոթահիա (Կուտինա))⁴⁵⁰, որտեղ ի տարբերություն իրանական, չինական միագույն նկարազարդման, գերակշռում է սև բարակ ուրվագծով ընդգծված բազմագույն նկարազարդը (աղ. 26, նկ. 7-10): Նկարազարդումը կատարվում էր սպիտակ անգործի վրա, ապա պատվում կապարային ջնարակի բարակ շերտով, որը թեթևակի փայլ էր հաղորդում խեցանոթներին: Քյոթահիայի խեցեղենին հատուկ է մանրանկարչական նկարազարդումը: Տիպական զարդամոտիվը կարմիր կետազարդերով լցված սրածայր մեղալիոններն են և դրանց միջև տեղադրված եռաթերթ ծաղիկները: Նույն նկարազարդմամբ հախճապակե անոթի փոքրիկ բեկոր հայտնի է նաև

⁴⁴⁷ Համեմատել՝ Мамаиашвили Н., Фаянс Тбилисской цитадели, АПФГ- II, Тбилиси, „Мецниереба“, 1974, таб. III-1.

⁴⁴⁸ Ղարիբյան Բ., նշվ. աշխ., աղ. LII, LIII:

⁴⁴⁹ Նույն տեղում, էջ 232:

⁴⁵⁰ Քյոթահիան փոքրիկ քաղաք է Թուրքիայի արևմուտքում, Ստամբուլից մոտ 200 կմ հարավ-արևելք, որը հայտնի 500-ամյա խեցեգործական արտադրությամբ: Նրա շրջակայքը հարուստ է կավահանքերով, որոնք բավարարել են ջնարակած խեցեղենի արտադրության պահանջները: XV դարից Քյոթահիան հախճասալերի և ճենապակե անոթների մանուֆակտուրային արտադրության հայտնի կենտրոն էր, որտեղ XIV դարի վերջերից հաստատվել և անընդմեջ գործել են հայկական արհեստավորական թաղամասերը: Stewart J. and Dowsett C., Kütahya tiles and pottery from the Armenian cathedral of St. James, Jerusalem, vol. I 111 p., vol. II 106 p., Oxford, 1972; Миллер Ю., Художественная керамика Турции; Ժամկոչյան Ա., Գրախոսական, Ժ. Քարսվել և Ս. Դովսեթ, Երուսաղեմի Ս. Հակոբ վանքը զարդարող կուտինական հախճասալերն ու խեցեղենը, ԼՀԳ, Երևան, 1974, N 5, էջ 114-117; Ժամկոչյան Ա., Կուտինայի խեցեգործության պատմությունից, Պայքար, Երևան, 1995, թիվ 6-7, էջ 79-82; Jamkotchyan A., The Kütahya pottery in Armenian museums, Sanat Taarihi Dergisi VIII, Bornova – Izmir, 1996, p. 45-49; Սյվազեան Ա., Մշակութային արժեքների Գալֆաեան հավաքածոյի արձանագիր իրերը, Երևան, Հեղինակային հրատարակութիւն, 2013, 200 էջ; Migeon G., Bey-Sakisyany A., La céramique d'Asie-Mineure et de Constantinople, Paris, Librairie Orientaliste Paul Geuthner, 1923, p. 45-46; The Armenian pottery of Jerusalem, Exhibition Catalogue, Ceramics pavilion, Haaretz Museum, Tel Aviv, summer, 1986, p. 9.

Հայկաձորի միջնադարյան բնակավայրի պեղումներով (ադ. 26, նկ. 9)⁴⁵¹: Նման հարդարանքով խնկամաններից մեկի եզրին (Յինցինատի Արվեստի թանգարանի Կելեկյան հավաքածուից)⁴⁵², պահպանվել է երկտող արձանագրություն՝ անոթի պատվիրատուի և պատրաստման թվականի հիշատակությամբ. ՅԻՇ(Ա)Տ(Ա)Կ Է ԽՈԻՆԿԱՏՕՊՍ ՂԱԶԱԲԻՆ ԻԻԲ ՀՈԳԻՈՅՆ Ի ԴՈԻՌՆ ՍԲ ԱԾ(Ծ)ՆԱ ԹՎԻՆ ՌՃՀԶ (1727):

Ամփոփելով Հայաստանի ուշմիջնադարյան ջնարակած խեցեղենի վերլուծական բնութագրումը, նշենք, որ Հայաստանի միջնադարյան հուշարձաններում հայտնաբերված սակավաթիվ, ոչ ամբողջական խեցեղեն տեսականին բավարար չէ լիովին ներկայացնելու XIV – XVII դդ. ջնարակած խեցեղենի ամբողջական պատկերը, թեև այն թույլ է տալիս արձանագրել Հայաստանի այդ շրջանի խեցեգործական արտադրության բնականոն զարգացումը՝ անկախ քաղաքատնտեսական անկայուն իրավիճակի:

Ներկայացված ջնարակած խեցեղենը հնարավորություն է ընձեռում հստակեցնելու ժամանակագրական սանդղակը: Հայաստանի և Արևելքի այլ երկրների ուշմիջնադարյան հուշարձաններում հայտնաբերված ջնարակած խեցեղենի համեմատական վերլուծությամբ կարելի է տարանջատել XIV – XVII դդ. ջնարակի զարգացման ընդհանուր բնույթի, հարդարման սկզբունքների, գունապնակի փոփոխության ժամանակագրական երեք փուլ՝ XIII – XIV դդ., XIV դարի վերջ – XV դ. և XVI – XVII դդ.:

Միաժամանակ ջնարակած խեցեղենի ուսումնասիրությունը հնարավոր է դարձնում առաջադրել մի շարք խնդիրներ, ինչպես օրինակ՝ արտադրանքի ներմուծված և տեղական լինելու պարագան, որի բազմակողմանի հետազոտությունը կարող է լույս սփռել Հայաստանի և հարևան երկրների միջև առկա առևտրա-տնտեսական հարաբերությունների վրա:

Գտնվելով Հայկական ու Իրանական բարձրավանդակների, Հյուսիսային Միջագետքի և Կովկասի միջև, Հայաստանը շահեկան դիրք էր զբաղեցնում Արևելք – Արևմուտք և Հյուսիս – Հարավ առևտրա-տնտեսական ու մշակութային փոխհարաբերությունների համացանցում: Խեցեղեն արտադրանքի արտահանումն ու ներմուծումը մեր-

⁴⁵¹ Համեմատել՝ Այվազեան Ա., Մշակութային արժեքների Գալֆաեան հաւաքածոյի արձանագիր իրերը, էջ 190, նկ. 8, 12, էջ 191, նկ. 6, էջ 195, նկ. 4; Мамаиашвили Н., Фаянс Тбилисской цитадели, таб. IV-2,3; նույնի՝ Фаянс в средневековой Грузии, таб. XXXI-2-4.

⁴⁵² Carswell J. and Dowsett G., Kütahya tiles and pottery from the Armenian cathedral of St. James, Jerusalem, Antelias-Libanon, 2005, vol. I, p. 84-85, pl. 35, 24, 42.

ձավորարենյան, միջինասիական ու հեռավորարենյան երկրների քաղաքական, առևտրա-տնտեսական, մշակութային լայն կապերի արգասիք են: Ակտիվ առևտրա-տնտեսական ու մշակութային կապերի ապացույց են գեղարվեստական խեցեղենի ու ապակու ներմուծումը տակավին անտիկ ժամանակներից: Միջնադարում ներմուծման ճանապարհներն ավելի են ընդլայնվում՝ ներառելով Բյուզանդիան, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրները, ինչպես և Միջին Ասիան ու Չինաստանը: Սկզբնական շրջանում ներմուծվող խեցեղենը շքեղ սպասքն էր, որն ուներ անհատական պատվերի բնույթ:

XII – XIII դդ. ներմուծումը տեղի է ունենում զանգվածաբար՝ կապված ջնարակած խեցեղենի զանգվածայնության հետ: Այդ շրջանում լայնորեն տարածում են ստանում իրանական շողյունով նկարազարդ հախճապակին, իրանական „մինաի“ կոչվող հախճապակին, շքաղյուսները, ինչպես նաև չինական Տան և Սուն դինաստիաների շրջանի ճենապակին և սելադոնը, որոնք բավարար քանակությամբ հայտնաբերվել են Դվինում, Անիում, Անբերդում, Գառնիում, ինչը առևտրական լայն կապերի փաստացի վկայությունն է: Այսպիսով, XII – XIII դդ. նկատվում է առևտրի աճ, պայմանավորված երկրի տնտեսական վերելքով, ինչպես նաև քաղաքական և դրանից բխող մշակութային գործոններով: Մոնղոլական և հետմոնղոլական արշավանքների արդյունքում խեցեղենի ներմուծման ծավալները կրճատվում են: XIV – XV դդ. փոխվում են ներմուծման ուղղությունները: Ներմուծվում էր առավելապես միջինասիական, իրանական ջնարակած խեցեղեն:

Ներմուծվող խեցեղենը մեծ ազդեցություն ունեցավ տեղական խեցեղենի արտադրության վրա: Փորձեր են կատարվել ընդօրինակելու իրանական, չինական շքեղ սպասքի զարդաձևերը:

XVI – XVII դդ. Հայաստանի հնավայրերում հայտնաբերվում են թուրքական խեցեգործական կենտրոններից ներմուծված անոթներ, հիմնականում Քյոթահիայից: Վերոբերյալ խեցեղենը մեծ տարածում չունեցավ Հայաստանում և մեզ հայտնի է միայն հյուսիսային շրջանների հուշարձանների պեղումներով: XVI – XVII դդ. չինական ճենապակու իրանական ընդօրինակություններ հայտնի են Էջմիածնի Ղազարաշեն վեհարանի պեղումներով, և մեր համոզմամբ արդյունք են ոչ կանոնավոր առևտրական հարաբերությունների, չի բացառվում բարձր հոգևորականության կողմից պատվերի

գործոնը: Հնարավոր է, որ դրանք Հայաստան են ներթափանցել դեսպանների միջոցով իբրև նվիրատվություն:

Հայաստանի ջնարակած խեցեղենի քննությունը Արևելքի այլ երկրների խեցեգործական արտադրանքի հենքի վրա, առաջին հերթին թույլ է տալիս հայկական արտադրանքը դնել Արևելքի խեցեգործական արվեստների շարքում՝ բնորոշելով նրա և համընդհանուր բնույթը և ընդգծելով ներհակ առանձնահատկությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. XIV – XVII դդ. մոնղոլական, մոնղոլա-թուրքմենական (թեմուրյան), թուրքմենական (կարա-կոյունլու, ալ-կոյունլու), ապա և թուրքական ու իրանական անընդմեջ ավերիչ արշավանքների ու գերեվարությունների արդյունքում մեծապես տուժեցին Հայաստանի տնտեսությունն ու մշակութային կյանքը:

Նյութական մշակույթի զարգացման ընդհանուր վիճակն ու ընթացքը գնահատելիս, նկատելի է, որ անկման երևույթները, սակայն, հավասարաչափ չեն տարածվում մշակույթի բոլոր բնագավառների վրա: Անկում նկատվում է հատկապես նյութական մշակույթի այն ոլորտներում, որոնք նյութական մեծ միջոցներ էին պահանջում (ճարտարապետություն, քանդակագործություն), այնինչ որոշ բնագավառներում (գեղարվեստական մետաղի մշակություն, փայտի գեղարվեստական մշակում, մանրանկարչություն, կաշեգործություն, գործվածքների արտադրություն, գորգագործություն, ասեղնագործություն), ոչ միայն չի դադարում բնականոն զարգացումը, այլև քննարկու ժամանակահատվածում հասնում է բարձրագույն աստիճանի թե՛ բուն Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս:

2. XIV – XVII դդ. նյութական մշակույթն իբրև առանձին ուսումնասիրության առարկա, արդիական դարձավ միայն վերջին ժամանակներս, երբ սկսեցին պեղել այդ շրջանի հուշարձաններն ոչ թե իբրև բազմաշերտ հուշարձանի մշակութային վերին շերտ, այլ որպես առանձին հնագիտական միավոր, թեև ուշմիջնադարյան գտածո-հավաքածուները հրապարակում հայտնվել էին շատ ավելի վաղ:

3. Խեցեգործական արտադրանքը կարևոր տեղ է զբաղեցնում նյութական մշակույթի ընդհանուր համալիրում: Այն հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերված գտածոներում ամենազանգվածայինն է. թեև բեկորային վիճակում, հնարավորություն է ընձեռում հետևելու արտադրության այդ տեսակի զարգացման բոլոր փուլերին:

Ուսումնասիրելով ՀՀ ողջ տարածքով (նաև Անիի) սփռված մոտ երեք տասնյակ ուշմիջնադարյան հուշարձաններում հայտնաբերված խեցեղեն հավաքածուները, կարող ենք որոշ չափով ամբողջացնել խեցեգործության ընդհանուր մակարդակը՝ քննարկու ժամանակաշրջանում առանձնացնելով երեք փուլ՝

• XIII դարի վերջին քառորդ – XIV դարի կեսերը խեցեգործական արտադրության որոշ տեսակներ իներցիայով շարունակում են նախորդ դարաշրջանի ավանդույթները՝ աստիճանաբար ներմուծելով և տեխնիկական ու տեխնոլոգիական նոր հնարներ ու միջոցներ: Երևույթը բնորոշ է նյութական մշակույթի մյուս ոլորտներին ևս (ճարտարապետություն, խաչքարային արվեստ, մանրանկարչություն, մետաղագործություն և այլն):

• XV – XVI դդ. նկատվում է խեցեղենի անկման վատթարագույն շրջանը:

XVII դ. սկսում է ընդհատված ավանդույթների վերականգնում, աստիճանական վերելք (հատկապես ճարտարապետության մեջ և դրանով պայմանավորված խեցեղենի արտադրություն):

4. Խեցեղենի համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս քննվող ժամանակաշրջանում առանձնացնել տարբեր տարածաշրջանների միջև ընդհանրություններն ու լոկալ տարբերությունները: Հայաստանի տարբեր տարածաշրջաններում գոյություն ունեին որոշակիորեն առանձնացող մշակութային դպրոցներ, որոնք զգալի չափով տարբերվում էին մեկը մյուսից: Դա անդրադառնում է նաև խեցեգործական արհեստի զարգացման վրա: Հայտնի է, որ Սյունիքում Օրբելյանների հովանավորությամբ, ինչպես նաև քարավանային գլխավոր ճանապարհի ուղղություններից մեկի՝ այդ տարածաշրջանով անցնելու հանգամանքը նպաստում էր տնտեսական ու մշակութային կյանքի առաջադիմությանը, մինչդեռ կենտրոնական շրջաններում, հատկապես Դվին ու Անի քաղաքները գնում են դեպի անկում:

5. Դասվելով կիրառական արվեստների շարքում, խեցեգործական արտադրանքը բացի ֆունկցիոնալ գործառույթից ունի նաև գեղարվեստական արժեք: Առավել հատկանշական է ջնարակած խեցեղենը, որը բացառիկ հնարավորություններ է ընձեռում դարաշրջանի խեցեղենի ուսումնասիրության գործում: Այն վեր է հանում ոչ միայն տեխնոլոգիական գործընթացի առաջընթացը, այլև գեղարվեստական ձևավորման, հարդարման սկզբունքները:

Թեև որոշակիորեն կորցնելով իր գեղարվեստական արժեքը նախորդ ժամանակաշրջանի՝ XII – XIII դդ. բարձրարժեք տեսականու համեմատ, XIV – XVII դդ. խեցեղենն, այնուամենայնիվ, որպես սկզբնաղբյուր մեծ հետաքրքրություն է ներկայացնում՝ նոր

տվյալներով լրացնելով Հայաստանի այդ ժամանակաշրջանի հասարակական, տնտեսական, մշակութային կյանքի ընդհանուր բնութագիրը:

6. Խեցեղենը կարևոր սկզբնաղբյուր է նաև տարբեր երկրների միջև գոյություն ունեցող մշակութային ու առևտրական հարաբերությունների ուսումնասիրության գործում: Այն մատնանշում է տեխնիկական ու գեղարվեստական միևնույն հատկանիշներ ունեցող այս կամ այն տիպի խեցեղենի տարածվածության սահմանները, շեշտում պատկանելությունը հասարակության տարբեր խավերին: Այդ ամենն ավելի վառ արտահայտված է ջնարակապատ խեցեղենում:

7. XIV դարի վերջերից կտրուկ փոխվում է ջնարակած խեցեղենի գեղարվեստական հարդարանքը, որը մեծապես կապված էր քաղաքական գործոնի հետ: XIII դարում մոնղոլական կայսրությունը, բռնի ուժով միացնելով Մերձավոր ու Հեռավոր Արևելքի երկրները, բնականաբար նպաստում էր այդ երկրների միջև առևտրական ու մշակութային հարաբերությունների աշխուժացմանը: Տարբեր քաղաքակրթությունների միավորումը միասնական պետության կազմում մեծապես ազդեց նաև ճաշակի վրա, որը ցայտուն արտացոլվեց և ջնարակապատ խեցեղենում: Փոփոխություններն ակնառու էին ոչ միայն տեխնիկա-տեխնոլոգիական ոլորտներում, այլև զարդանկարման մեջ: Գերակա դարձան չինական մոտիվները, որոնք ժամանակի ընթացքում ամբողջովին ներգրավվեցին Արևելքի բոլոր երկրների, այդ թվում և Հայաստանի խեցեղենի հարդարանքում:

8. Խեցեղենի դասակարգումը, մանրամասն նկարագրությունն ու համեմատական վերլուծությունը թույլ են տալիս առանձնացնել տեղական և ներմուծած օրինակները: Անջնարակ՝ չհարդարված և զարդարուն խեցեղենը գերազանցապես տեղական արտադրություն է, որում, ինչպես վերը նշեցինք, նկատվում են լոկալ տարբերություններ, մասնավորապես հարդարանքի առումով: Ջնարակած խեցեղենում առանձնանում են ա. - զուտ տեղական, բ. - ներմուծած խեցեղենի տեխնիկական, տեխնոլոգիական հատկանիշները և զարդաձևերն ընդօրինակող նմուշներ և գ. - ներմուծած օրինակներ:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԱՀՊՊԹ – Աշխատություններ Հայաստանի պետական պատմական
թանգարանի
- ԲԵՀ – Բանբեր Երևանի համալսարանի
- ԲՀ – Բանբեր հայագիտության
- ԴՀԱԱՆԳՆ – Դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին
նվիրված գիտական նստաշրջան
- ԴՀՎ – Դիվան հայ վիմագրության
- ԵԹ – Եղեգնաձորի թանգարան
- ԵՀ – Երևանի համալսարան
- ԵՊԹ – Երևանի պատմության թանգարան
- ԵՊՀ – Երևանի պետական համալսարան
- ԷՊԱԹ – Էջմիածնի պատմա-ազգագրական թանգարան
- ԼՀԳ – Լրաբեր հասարակական գիտությունների
- ՀԱԲ – Հայ ազգագրություն և բանահյուսություն
- ՀԱԲ – Հայերենի արմատական բառարան
- ՀԱԻ – Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
- ՀԲԲ – Հայերենի բացատրական բառարան
- ՀԵՀ – Հանդես Երևանի համալսարանի
- ՀՀ – Հայաստանի հանրապետություն
- ՀՀ ԳԱ – Հայաստանի հանրապետություն գիտությունների ակադեմիա
- ՀՀ ԳԱԱ – Հայաստանի հանրապետություն գիտությունների ազգային
ակադեմիա
- ՀՀՀ – Հայաստանի հնագիտական հուշարձանները
- ՀՀՄ – Հայաստանի հնագույն մշակույթը
- ՀՀմ – Հին Հայաստանի մշակույթը
- ՀՊՀ – Հնագիտական պեղումները Հայաստանում

- ՀՍՀ – Հայկական սովետական հանրագիտարան
- ՀԽՍՀ ԳԱ – Հայկական խորհրդային սոցիալիստական հանրապետության գիտությունների ակադեմիա
- ՀՊԹ – Հայաստանի պատմության թանգարան
- ՀՍՍՀ ԳԱ – Հայկական սովետական սոցիալիստական հանրապետության գիտությունների ակադեմիա
- ՀՍՍՌ ԳԱ – Հայկական սովետական սոցիալիստական ռեսպուբլիկա գիտությունների ակադեմիա
- ՄԹ – Մեծամորի թանգարան
- ՆԲՀԼ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի
- ՇԵԹ – Շիրակի երկրագիտական թանգարան
- ՇՀՀԿ ԳԱ – Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն „Գիտական աշխատություններ”
- ՊԲՀ – Պատմա-բանասիրական հանդես
- ՏՀԳ – Տեղեկագիր հասարակական գիտությունների
- ՕՍՀՀՄ – Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին
- ԱզՖԱՆ – Азербайджанский филиал Академии наук
- ԱրմՖԱՆ – Армянский филиал Академии наук
- АН ԱՀՍՍՐ – Академия наук Азербайджанской советской социалистической республики
- АН ԱրմՍՍՐ – Академия наук Армянской советской социалистической республики
- АН ՍՍՍՐ – Академия наук Союз советских социалистических республик
- АН ՄՀՍՍՐ – Академия наук Узбекской советской социалистической республики
- ԱՓՖԴ – Архологические памятники феодальной Грузии
- ԱՐԱ – Археологические раскопки в Армении
- ВВ – Византийский временник
- ВОН – Вестник общественных наук
- ԵՄ – Ереванский университет

- ИГАИМК – Известия государственной академии истории материальной культуры
- ИТ – Избранные труды
- ИФЖ – Историко-филологический журнал
- МГУ – Московский государственный университет
- МИА – Материалы и исследования по археологии СССР
- МКА – Материальная культура Азербайджана
- НАН РА – Национальная академия наук Республики Армения
- СА – Советская археология
- ТГИМА – Труды государственного исторического музея Армении
- ТОВЭ – Труды Отдела Востока Эрмитажа
- ТХАЭЭ – Труды Хорезмской археолого-этнографической экспедиции
- ТЮТАКЭ – Труды Южно-Туркменистанской археологической комплексной экспедиции
- ХВ – Христианский Восток
- BAAL – Bulletin d'Archéologie et d'Architecture Libanaises
- JAS – Journal of Armenian studies
- SPA – Survey of Persian art

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Վ., Արհեստները Հայաստանում IV – XVIII դդ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956, 590 էջ:
2. Ազաթանգեղայ Պատմություն Հայոց, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, 551 էջ:
3. Ալեքսանյան Տ., Միրիջանյան Դ., Դաշտադեմի 2011 թ. պեղումները (նախնական հաղորդում), Էջմիածին, 2012, Ը, էջ 102-106:
4. Ալիշան Ղ., Այրարատ, Բնաշխարհի Հայաստանյաց, Վենետիկ, Ս. Ղազար, 1890, 590 էջ:
5. Ալիշան Ղ., Հայապատում, Պատմություն հայոց, հատ. Ա-Բ, Վենետիկ, Ս. Ղազար, 1901, հատ. Ա 560 էջ, հատ. Բ 559 էջ:
6. Ալիշան Ղ., Սիսական: Տեղագրություն Սիւնեաց աշխարհի, վերահրատարակված Վենետիկ 1893 հրատարակությունից, Երևան, Հայգիտակ, 2009, 562 էջ:
7. Ալիշան Ղ., Շիրակ: Տեղագրություն Պատկերացոյց, վերահրատարակված Վենետիկ 1881 հրատարակությունից, Երևան, Հայգիտակ, 2010, 192 էջ:
8. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հատ. Դ, Երևան, ԵՀ հրատ., 1979, 675 էջ:
9. Այվազեան Ա., Մշակութային արժեքների Գալֆաեան հավաքածոյի արձանագիր իրերը, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2013, 200 էջ:
10. Անի. Հազարամյա մայրաքաղաք հայոց, ալբոմ-կատալոգ, Երևան, Հայաստանի պատմության թանգարան, 2015, 188 էջ:
11. Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմ., առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, Երևան, „Սովետական գրող“, 1988, 592 էջ:
12. Առաքելյան Բ., Կարախանյան Գ., Գառնի III, 1949-1956 թթ. պեղումների արդյունքները (Միջին դարեր), ՀՊՀ N 10, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962, 118 էջ, 12 տախտակ:

13. Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX – XIII դդ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., հատ. I, 1958, 376 էջ:
14. Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX – XIII դդ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., հատ. II, 1964, 320 էջ:
15. Ասատրյան Ե., Դաշտադեմի ամրոցի 1989-1990թթ. պեղումների արդյունքները, ԴՀԱԱԳՆ 1989-1990, Երևան, 1991, էջ 113-114:
16. Արաբական աղբյուրներ, Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունները պ. գ. դ., պրոֆեսոր Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, ԵՊՀ, 2005, 703 էջ:
